

ՆՈՐ ԺՐԴԱՆ

Տ ՏԱՐԻ

ՄՈՒՐԻ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՅԵՐԱԿԱԿԱՆ ԵԽ ԳԱՂԵՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1901

—○—○—○—○—

Թ Ի Ց Լ Ի Ս

Տիպոգրաֆія Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան.
1901

№ 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- | | | |
|-----|--|-----|
| 1. | ՍԵՒ ՕՐԵՐ, պատմուածք Ա. Ահարոնեանի, | 5 |
| 2. | ԽՐԻՄԻ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, բանաստեղծ. Ալ. Ծա-
ռուեանի. | 48 |
| 3. | ՀԱԶԱՐ ԼՃԵՐԻ ԵՒ ԿՂՋԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ, ձանապ.
Նկար. Ք. Օհանեանի, | 50 |
| 4. | ՖՐՈՍՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ալֆ. Դօղէի, թարգմ. Տ. Յ., | 72 |
| 5. | ԲԱԽՏԻ ԶՈՀ, պատկեր իրական կեանքից, Յ. Բո-
զինեանի. | 97 |
| 6. | ՄԻ ԲՈՒՌԸ ՀԱՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆՆԵՐ, Ա. Ք. | 104 |
| 7. | ԲԱՄԲԵՐԸ, պատմուածք Գի դը Մօպասանի, թարգմ.
Լեւոն Մ.-Ա. | 112 |
| 8. | ԹՐՔԱԿՈՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ, Խաժակի | 117 |
| 9. | ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVI ԴԱՐՈՒՄ, Լեօփ | 134 |
| 10. | ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Օկտավ Միրրօ,
յօդ. Տիգրան Զ. | 174 |
| 11. | ՄԱՏԵՆԱԿՈՍՈՒԹԻՒՆ.—39) «Մաիթար», Լ.—40) Անաթոլ
Ֆրանս. «Եպիկորի պարտէղը», Լ. Ս.—41) Крениցынъ,
Восточный вопросъ на початкѣ его истории и политика», Ե. Թ.—42) Dr. Ernst Friedrich: «Handels
und Produktenkarte von Kleinasien». Ե. Թ. | 182 |
| 12. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, «Հողային տուրքը» և հարկերը
կովկասում. V. «Եխահարկի» սկզբունքի ազգեցու-
թինը գիշերի հարկի բաժանման արդարացի սովո-
րութիւնների քայլաբանն նկատմամբ: Հարկերի անհա-
ւասար ձանրանալը ունեղըների և չունեղըների վրայ:
Օրինակներ կովկասի զանագան շրջաններից: Դրա-
մական տուրքի թուլ կողմերը և ողմնակի տուրքերին
ուժեղանալը VI. որը հարկային սիստէմի բացասական
կողմերը. քաղաքների ուժեղանալը ի վաստ զիւղերի.
զիւղական սրբութարների առաջ գալը և շատանալը.
—Երեք Ախուա, Խաղուր ու Ճալա, Խաղեան և Քանաքեռ
զիւղերի օրինակները.—Տնտեսական անհաւասարու-
թեան հետևանքները, Ս. Զաւարեանց | 198 |
| 13. | ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վրաստանի միացման նշանակու-
թիւնը ամբողջ Կովկասի համար.—«Անձի, զուքի ապա-
հովութիւն և քրէնքի համահատառ պաշտպանութիւն».
—Համեմատութիւն Կովկասի և նրա հարկան մահմեղա-
կան երկրների մէջ.—Սատրապ և եւրոպականաձեւ կու- | |

Նոր շրջան 1 տարի

Հրատ. XIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԵԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1901

—♦♦♦♦—

ԹԻՖԼԻՍ

Տիպոգրիա Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան.
1901

Дозволено цензурою Тифлисъ, 21-го сентября 1901 г.

№ 9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- | | | | | | |
|-----|---|---|---|---|-----|
| 1. | ՍԵՒ ՕՐԵՐ, պատմուածք Ա. Ահարոնեանի, | . | . | . | 5 |
| 2. | ԽՐԻՄԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, բանաստեղծ. Ալ. Շա- | | | | |
| | ՏՈՒՐԵԱՆԻ. | . | . | . | 48 |
| 3. | ՀԱԶԱՐ ԼՃԵՐԻ ԵՒ ԿՊՉԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ, ճանապ. | | | | |
| | Նկար. Փ. Օհանեանի, | . | . | . | 50 |
| 4. | ՖՐՈՄԾՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ալֆ. Դոդեկի, թարգմ. Տ. Յ., . | | | | 72 |
| 5. | ԲԱԽՏԻ ԶՈՀ, պատկեր իրական կեանքից, Յ. Բո- | | | | |
| | զինեանի. | . | . | . | 97 |
| 6. | ՄԻ ԲՈՒՌԸ ՀԱՅ ԼՈՒՍԱԽՈՐՉԱԿԱՆՆԵՐ, Ա. Ք. | . | . | . | 104 |
| 7. | ԲԱՄԲԵՐԸ, պատմուածք Գի դը Մօպասանի, թարգմ. | | | | |
| | Լեռն Մ.-Ա. | . | . | . | 112 |
| 8. | ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ, Խաժակի | . | . | . | 117 |
| 9. | ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVI ԴԱՐՈՒՄ, Լեօի | . | . | . | 134 |
| 10. | ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԻՑ, Օկտավ Միրրօ, | | | | |
| | յօդ. Տիգրան Զ. | . | . | . | 174 |
| 11. | ՄԱՍԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—39) „Միհթար“, Լ.—40) Անաթոլ | | | | |
| | Ֆրանս. „Եպիկուրի պարտէզզը“, Լ. Ս.—41) Կրենիցինъ, | | | | |
| | Восточный вопросъ на почвѣ его истории и полити- | | | | |
| | тики“, Վ. Թ.—42) Dr. Ernst Friedrich: „Handels | | | | |
| | und Produktenkarte von Kleinasiens“. Վ. Թ. | . | . | . | 182 |
| 12. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, «Հողային տուրքը» և հարկերը | | | | |
| | Կովկասում. Վ. «Ծխահարկի» սկզբունքի ազդեցու- | | | | |
| | թինը զիւղերի հարկի բաժանման արդարացի սովո- | | | | |
| | րութիւնների քայլքալման նկատմամբ Հարկերի անհա- | | | | |
| | ասար ծանրանալը ունեղնների և չունեղնների վրայ: | | | | |
| | Օրինակներ Կովկասի զանազան շրջաններից: Դրա- | | | | |
| | մական տուրքի թուլ կողմերը: Կողմակի տուրքերից | | | | |
| | ուժեղանալը: VI. Նոր հարկային սիստէմի բացասական | | | | |
| | կողմերը. քաղաքների ուժեղանալը ի վնաս զիւղերի: | | | | |
| | գիւղական պրօլետարների տուած գալը և շատանալը: | | | | |
| | —Երեք Ախտա, Խաշուր ու Ճալա, Սաղեան և Գանաքեռ | | | | |
| | գիւղերի օրինակները: —Տնտեսական անհաւասարու- | | | | |
| | թեան հետեանքները, Ս. Զաւարեալից | . | . | . | 193 |
| 13. | ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վրաստանի միացման նշանակու- | | | | |
| | թինը ամբողջ Կովկասի համար.—«Ենձի, գոլքի ապա- | | | | |
| | հովութիւն և օլէնքի համահաւասար պաշտպանութիւն». | | | | |
| | —Համեմատութիւն Կովկասի և նրա հարեան մահմեղա- | | | | |
| | կան երկրների մէջ.—Սատրապ և եւրոպականաձև կու- | | | | |

սակալ. — Վ. օրոնցօվի և մեծ իշան Միհայիլի փոխարքայոթիւնը. — Եւրոպական քաղաքակրթութեան նուանած վայրեր Կովկասում. — Մոռացուած անկիւններ իրանց բնակիչներով. — Կովկասի յօրելեանական ցուցահանդէսի բնորոշ կողմը. — Դիւզատնտեսութիւն և գիւղացիական տնտեսութիւն. — Դիւզատնտեսութիւն սեփական աշխատանքով և տնաետութիւն վարձուած բանուորներով. — Սիրիոթիայում մասնաւոր անձանց արքունական հողեր տալու օրէնքը. — Положение объ усаженности охранны. — Զեմствоўների հրատարակչական իրաւունքի սահմանափակումը. — Մատակարարութեան գործը և անբերրիութիւնը Ծուսաստանում, Լ. Սարգսեան

218

14. ԿՈՎԿԱՍԵԱՆ, ՅՈՒԵԼԵԱՆԱԿՈՆ ՑՈՒՑԱՀԱՆԴէՍԸ. —
I. Ցուցահանդէսի նպատակը, կազմակերպութիւնը և
բաժինները. — Այլայլ բաժինների ընդհանուր տեսութիւնը. զիտական և պատմական տեսակչուների բացալազութիւնը. Նրա անհամապատասխան լինելը չուներ զասակարգի համար, Ա. Զ. 226
15. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Կովկասեան ցուցահանդէս. — Արդիւնագործական տագնաազ Բագրում. — Երեսանի թեմական դպրոցը. — Միթթարեանների տօնը գաւառներում, Ա. . 235
16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանս-ռուսական դաշնակցութիւն. — Նրա գերը թէ Հեռաւոր և թէ Մերձաւոր Արևելքում. — Թիւրքիայի և Ֆրանսիայի մէջ ծագած տարածալնութիւնները. — Մակ-Ախնլիի մահը, Լ. Ա. . 246
17. † ԳէՈՐԳ ԵՒԱՆԴՈՒԼԵԱՆ 251
18. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 252
19. ԳՐԱԿԱՆ ՍՈՓԵՍՍՈՒԹԻՒՆՆԵՐ, Լ. 258
20. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ 262
21. ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 267
22. ՅԱՒԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլստոյի, Թարգ. S. Ցովիաննիսեանի 257—288

ՍԵՒ ՕՐԵՐ

VI

Քնած է աշխարհը։ Սիպանայ սարի վրայ էլ խազազութիւն է տիրում։ այնտեղ էլ մարդիկ քնած են։ Գիշեր է. մէկ երկինքն է արթուն, նրա բիւրաւոր փայլուն աչքերն աստղերի ձևով թարթում են և սիրով նայում քնած երկրին։ Գիշերային հօվը խազում է խոտերի և ծաղիկների վրայ այնքան մեղմութեամբ, այնպէս քնազութեամբ, որ ասես նրանց ականջներին փափառվ օրօններ է ասում՝ որ խազաղ ու հանգիստ քնեն զով գիշերուայ դրկում։ Այս ու այն խոռոչից, այս ու այն սարալանջից լսում է լեռնային ջրերի կարկաչիւնը, միշտ միակերպ, միշտ դուրեկան։ Հեռուից՝ գիշերային հօվի թեռերի վրայով քրդական սրնգի մեւլամազնու, վշառու ձայնն է գալիս. ով գիտէ, որ ձորում, որ դարի վրայ հովիւը հսկում է մակաղած ոչ խարներին և իր քունն ու միայնութեան ձանձրոյթը փարատելու համար ածում է իր աղուաձայն շուխն։ Եւ գիշերային հօվիկը, և՛ ջրերի անընդհատ կարկաչիւնը, և՛ սրնգի տիսուր հնչիւններն այնքան ներդաշնակ են իրար հետ, այնքան պատշաճ լեռնային գիշերին. դրանք բուլորն էլ վայրենի բնութեան, լեռնային աշխարհի զաւակները, նրա անբաժան մասերն են։

Հիւսնիւբէգի օրան էլ քնած է։ Խաւարի մէջ, ինչպէս մութ կէտեր, հազիւ ծրագրուող սևսևե վրաններից ձայն-ձպտուն չի լսում, նրանց մէջ իշխում է խաւարն ու խոր քնի լուսութիւնը։ Վրանների առաջ շընսերում, 1901.

թըռկած ահագին դամիփոներից ոմանք մրաված են դունչները թաթերի մէջ առած, ոմանք էլ ուշադիր ականջ են դնում ամեն մի շուկի, ամեն մի ձայնի, և երբ իրանց տիրասիրական զգացմունքները վիրաւորող որևէ կասկածաւոր ձայն են լսում, միահամուռ հաջոցով վեր են ցատկում և կորչում խաւարի մէջ՝ աղմկելով լեռնային գիշերուայ խազաղութիւնը. այդ ժամանակ վրանների առաջ հանգարատ ու անշարժ կանգնած կամ պառկած ձիաներն ու միւս անասունները բարձրացնում են իրանց գլուխները, որում են ականջները, որևէ կասկածաւոր ձայն կամ շշուկ որսալու համար, չուում են աչքները՝ աշխատելով խաւարի մէջ որևէ սոտեր որոշել, որևէ շարժուն, վասնգաւոր կէտ նշմարել:

Նրանց անհանգստութիւնն ի զուր չէ, բնազգը նըրանց չի դաւաճանում. ահաւոր է լեռնային գիշերը: Ո՞վ գիտէ, այնտեղ ծորում, դէպի ուր վազեցին դգոյշ չները, կամ այն ժայռերի մէջ, այն լեռան կատարին ինչ գազան է թափառում՝ յարմար ժամանակի սպասելով իր որսը ճանկելու համար:

Մազէ վրանը գիշերային չարիքի դէմ կռուելու միջոց չունի, նա հազիւ է կարողանում իր տիրոջը պաշտամնել անձրեսից. մարդն այդտեղ իր ու իւրայինների կեանքը ճակատագրի խնամքին և իր չների զգաստութեանն է յանձնում: Բայց Հիւսնի-բէգն աւելի զգաստ է և աւելի զգոյշ, քան սովորական մահկանացօնները, և ահա խաւարն իշնելուն պէս, բացի բազմաթիւ չներից, նրա թանկագին կեանքի վրայ հսկում են նաև երկու մարդ պահպաններ: Նրանցից մինը դանդաղաքայլ պըտոյտներ է գործում դէպի վրանի շուրջը, մերթ ընդմերթ պոռալով՝ «հայհօյ». դա Մստօն է: Վրանի առաջ՝ բէգի ննջարանին բոլորովին մօտիկ նստած է մի վայելչահասակ քիւրդ, որ ոտքից ցգլուխ զինուած է. նա երգում է քաղցր ձայնով, որպէսզի իր տէրը և նրա քնքոյշ խանումները հանգիստ քուն առնեն վրանի տակ. այդ երգիչ պահպանը Աւդօ-Մուսօն է: Նա ժամանակ

առժամանակ ընդհատում է իր երգն ու ցած ձայնով
հարցնում

—Աղա, տիւ ուազայի՞ (տէր, դու քնած ես)։

—Նա, լաօ, նա. բեժա, բեժա—(նչ, զաւակս, նչ
ասն, ասն)։

Եւ Մուսօն շարունակում է իր երգը. անցնում է
դարձեալ մի քառորդ և աւելի ժամ, պահապանը կրկին
ընդհատում է իր երգը և հարցնում.

—Աղա, տիւ ուազայի?։

Բայց այս անգամ պատասխանի փոխարէն երդիչը
լսում է վրանի խորքից իր տիրոջ խումիոյցը։ Եւ արդա-
րեւ բէդը քնեց ախորժելի երգերի աղդեցութեան տակ։
Երգիչ պահապանը վերկացաւ դէպի իր ընկերը դիմեց։
Նրանք սկսեցին միասին գանդաղ քայլերով պտոյտներ
գործել վրանի շուրջը։ Լուռ էին. լուռ էր և շրջակայքը։
Յանկարծ ընդհանուր խաղաղութիւնը վրդովուեց մի
սուր, երկար ու անխորժ ձայնից. դա մի դայլ էր,
որի չարագուշակ, սարսեցուցիչ ոռնոցը անցաւ քնած
լեռների և ձորերի վրայօվ. չների ամբողջ մի բանակ կա-
տաղի հաջոցով դէպի նոյն կողմը դիմեց. «Հայհօյ» ձայն
տուեց Մուսօն։ Կրկին լոեցին ամենքը, կրկին խաղա-
ղութիւն տիրեց. պահապանները շարունակեցին իրանց
միակերպ պայոյտները։ Մուսօն սկսեց ինչոր ուրախ ե-
ղանակ մռմռալ. Մուսօն լուռ էր։ Ընկերը նրա երեսին
նայեց փորձող հայեացքով, խաւարը չէր թողնում տես-
նել ընկերոջ դէմքը, բայց համոզուած էր որ նա չափա-
ղանց տիսուր է. այդքան վշտոտ, տխուր երգեր, ան-
շուշտ նա մի շատ մեծ ցաւ ունի։ Բարի քիւրդը ցաւակ-
ցաբար էր նայում իր ընկերոջը։ Նա վճռեց խօսեցնել
և այդպիսով հանել նրան ծանր մտատանջութիւնից.

—Լոեցի՞ր այն ձայնը, բրա՞, ասաց Մուսօն։

—Ի՞նչ ձայն, Մուսօն։

—Այն՝ որ քիչ առաջ լսուեց դիմացի լեռան վրայից։

—Գայլի ոռնոցը։

—Այն, դայլի ոռնոցը. դա մի զարմանալի դայլ է,

շարունակեց Մստօն, մի շաբաթ առաջ նրա ընկերոջը մենք գնկակահար արինք հէնց պյնտեղ, և ահա այդ անիծածը ամեն գիշեր որոշ ժամին գալիս, կանգնում է ընկերոջ սպանուած տեղը և ոռնում այդպէս զարհուրելի ձայնով։ Ուզիղն ասեմ՝ ես վախ ասած բանը չը դիտեմ, դայլից, դազանից որ ամենեին երկիւղ չունեմ, բայց այդ դայլի ոռնոցը ուարսափեցնում է ինձ. ինչ է ուզում մեզանից այդ դազանը։

—Վրէժ։

—Վրէժ։

—Այն, վրէժ, իր ընկերոջ վրէժը։

—Ի՞նչ ես ասում, Աւգո. դայլ ու վրէժ, ով է լոել այդպիսի բան. նա խօմ մարդ չէ։

—Նա մարդից լաւ է, Մստօ. դայլը մարդից լաւ է, ասաց Աւգօն յուզուած ձայնով և լռեց։

Մստօն էլ լռեց։ Ընկերը տարօրինակ էր։ Այն ինչ ասաց. «Դայլը մարդից լաւ է». ինչու... Դարձեալ նրանք շարունակեցին պտոյտներ գործել, դարձեալ լսուեց դայլի ոռնոցն ու նրան յաջորդեց չների միահամուռ հաջոցը, ապա կրկին լուսթիւն տիրեց։ Լուռ էին ընկերները, առաջինը նորէն խօսեց Մստօն.

—Լսիր, Աւգո. ինչու դու այդքան տխուը ես, բրա, այդ ինչ զարմանալի, ինչ ծանր վիշտ է քրքրում քո սիրուը։

—Բրա, ինչու ես զարմանում. միթէ մարդ կարող է ուրախ լինել, երբ իր տնից տեղից փախստական լինի և օտար աշխարհ ընկնի։ Ինչիս վրայ ուրախ լինեմ. տեսար ինչպէս էր ոռնում դայլը. սրտի ցաւը կրտկ է, Մստօ, թռն Աստուած թշնամուս չը տայ։

—Բայց քո վիշտն աւելի մեծ է թւում ինձ, բան թէ կարող է պատճառել մարդիս զարիբութիւնը. դու սիրած ունես։

—Հապա չունեմ. արունքը նրա համար եմ արեւ, Մստօ. ընկերներիս հետ նրան փախցնելու գնացի, կոռի բռնուեցանք նրա ազգականների հետ և իմ

գնդակը նրա եղբօրը սպանեց։ Կոտրուէր ձեռքս, որ այդ գնդակը չարձակէի, այդ գնդակն եղաւ իմ դժբախտութեան պատճառը, ծփ, ծփ...»

— Օ՛, Աւդօ, ցաւում եմ քեզ վրայ, բրա, սիրածից բաժանուելը ծանր, շատ ծանր բան է։ Խեղճ Մարօ. տեսնէիր ինչ էր անում, երբ նրան մենք փախցրինք։

— Ո՞ւմը, Մստօ, ինչ Մարօ։

— Մարօին, ումը, չես իմանում։ չը տեսա՞ր բէզ զի սիրուն ջահէլ կնոջը, որ ուշաթափուեց երբ դու երդում էիր «Սարէ-Սիպանէն». ալսր նա ֆլայ է։ Անիծուի ձագօն, նա եկաւ լուր բերեց բէդին, թէ մի շատ սիրուն աղջկայ տեղ գիտէ։ Ալս, Աւդօ, ես ինչ բան ցաւեցի, երբ փախցնելու օրը ձագօն գնդակով տուեց մի երիտասարդի վայր ձգեց. ասում էին որ Մարօի նշանաձն էր, գժի պէս անդէն վազում էր մեզ վրայ։ Խեղճ աղջիկն ինչպէս էր լալիս։ Օ՛, առաջ այնքան սիրուն էր, այնքան սիրուն էր, հիմա շատ է մաշուել, գիշեր ցերեկ արտաս...»

Մստօն խօսքը չը վերջացրեց և լոեց. նա նկատեց որ ընկերն սկսեց հեկեկալով լաց լինել, նա զգաց, որ իր նկարագրութեամբ ցաւեցրեց ընկերոջ սիրաը, ուստի փորձեց միտթարել նրան.

— Գիտեմ, բրա, դու էլ քո սիրածին յիշեցիր. ինչ արած, երեկ Աստծոու կամքն է այդպէս եղել. ով դիտէ, դուցէ նա նորէն ողորմի քեզ և դու կրկին տեսնես քո սրտի սիրածին։ Բաւական է արտասուես, եղբայր, լաւն այն է պառկիր դու քնիր, մի փոքր հանգստացիր, ես մենակ կը հսկեմ; յետոյ կէս գիշերին քեզ կը զարթեցնեմ և ես կը պառկեմ հանգստանալու։

Առաջարկութիւնը վատ չէր։

Մուսօն գլուխը մի քարի վրայ դրեց և աչքերը փակեց. բայց քունը չէր մօտենում։ Ի՞նչպէս քնել... նրանից այնքան մօտիկ, միայն մի թափանցիկ պատի յետեսում դահնուում էր նրա սիրոյ առարկան, այն սիրոյ, որի անարգանքն այժմ տեսնում էր իր աշքերով։ Նրա

սրտում եռում էր վրէժիսնդրութեան զայրոյթը: Նա առաջ միայն երևակայում էր իր սիրելուն հասած անծայր թշուառութիւնը, նա երևակայում էր նրան որևէ գաղանի պիղծ գրկի մէջ և այդ երևակայութիւնն անդամ նրա սիրտը կտոր-կտոր էր անում. իսկ այժմ... այժմ նա իր աչքերով տեսնում էր նախկին երևակայական սարսափելին: Այնտեղ՝ այն վրանի մէջ այժմ տանջլում է իր Մարօն, իսկ ինքն ստիպուած է նրան չօդնել և տանել այս բոլորը... Այդ մոփերը նրա հոգին ցաւեցնում էին, նրա գլուխը վառւում էր, փակած աչքերի կոպերն այրում էին իրար, նա օձից խայթուածի պէս թաւալում էր սառն գետնի վրայ: Անցան յաւիտենականութեան չափ երկար ժամերը Մուտօն բաղմաթիւ պտոյտներ գործեց և ամեն անդամ պառկած Մուսօի մօտից անցնելիս զգուշութեամբ ականջ էր դնում նրա շնչառութեանը, ասես համոզուելու համար՝ քնած է նա արդեօք, թէ արթուն: Մուտօն իր ընկերոջ այդ հետաքրքրութիւնը նկատեց. նա զգաց որ ընկերն ինչոր անելիք ունի, ուստի վճռեց քնած ձևանալ և գաղտագողի կերպով հետեւել նրան: Բայց կամաց-կամաց թըմքութեան նման մի բան եկաւ վրան, կոպերը ծանրացան. նա հազիւ էր լսում իր ընկերոջ՝ «Հայհօյլ» և ոտնաձայնը. Մուտօն կէս քուն՝ կէս արթուն էր: Ահա նա լըսում է վրանից մի խորհրդաւոր փսփսոցի ձայն, ահա ձայնը կամաց-կամաց սաստկանում է. մէկն ինչոր աղերսում, աղաչում է, արտասաւում, դիմագրում: օ, Մուտօն նոյնիսկ տեսնում է, թէ ինչպէս զղուելի բէդը իր աղտեղի շրթունքները մօտեցնում է Մարօի գունատայտերին, մինչդեռ վերջինս Մուսօին կանչում է և ինչպէս է կանչում. ապա Մուտօն տեսնում է, թէ ինչպէս բէդը ձեռքը մեկնում և գրկում է Մարօին, իր գարշելի կրծքին սեղմում այնպէս պինդ, այնպէս սաստիկ, որ թշուառ Մարօն թուլանում; ուշաթափում է: Սակայն այդքանով չի բաւականանում գաղան բէդը. Մուտօն տեսնում է թէ նա ինչպէս... բայց նա այլեւ չը

կարողացաւ իրան զսպել և յանկարծ վեր ցատկեց տեղից կատաղած։

Նրա կիսաքուն աչքերին մի զարմանալի երեսյթ հանդիսացաւ, ինչպէս իր երաղի շարունակութիւն. խաւարի մէջ նա նկատեց երկու մարդկային սառւերներ, որոնցից մէկը կին էր. նրան թուաց որ այդ զոյգը ոչ այլ ոք է, բայց եթէ բէդն ու Մարօն. ուստի մերկացրեց իր սուրը և վազեց դէպի այն երկու ստո ընելը, որոնք մի փոքր խոյս տալով վրաններից կանչ առան նրա առաջ հէնց այն բոպէին, երբ Մուսօն պատրաստուեց հզօր ձեռքով իր սուրն իջեցնել նրանցից մէկի՝ տղամարդի գլխին։ Բայց նրա ձեռքը թուլացաւ ցածընկաւ, երբ յանկարծ լսեց սարսափած Մստօի հաղիւ լսելի ձայնը.

—Եաման, Աւդօ, ի սէր Աստուծոյ, քո բախտն եմ ընկել. ես եմ, Մստօն եմ։

Ապշած Մուսօն իր սոտքերի տակ տեսաւ աղերսող Մստօին և մէկ էլ մի ուրիշն՝ մի կնոջ։

—Դու ես, Մստօ. այս ինչ է նշանակում, ով է այս կինը, հարցրեց Մուսօն։

—Չեմ ասի, Աւդօ. նախ երդուիր քո բախտով, երդուիր քո սիրուհու արևով, որ դու ծածուկ կը պահես լսածդ, այն ժամանակ ես քեզ կ'ասեմ, թէ ով է այս կինը, առա թէ ոչ, հարիւր սուր էլ սիրտս միսես, մի բառ չես լսի։

Մուսօն երդուեց։

Այն ժամանակ Մստօն ցած ձայնով նրան յայտնեց, թէ այդ կինը բէդի կանանցից մէկն է, որ վազուց է, ինչ իրան է պատկանում, բէդին ատելով ատում է, և որ ամեն գիշեր այդ կնոջ հետ ինքը երանութեամբ լի ժամեր է անցկացնում և աւելացրեց։

—Աւդօ, ես էլ գիտեմ, որ շատ վտանգաւոր բան է, բայց ինչ անեմ, չեմ կարողանում կտրուել։ Ինչ էլ պատահելու լինի, ես իմ Խաղալին չեմ թողնի։ Դու էլ սէր ունես և իմ սրաի ցաւը հասկանում ես։ Աւդօ,

վստահ եղիր ինձ վրայ և հաւատու ինձ, շարունակեց Մուսօն, երբ կինը դադագողի կրկին վրանը մտաւ: Քո լոռութեան փոխարէն ամենածանր պարագաներում յնյս դիր իմ կատարեալ անճնուիրութեան վրայ. ես այսուհետեւ գլուխս անդամ չեմ ինայի քո հաւատարմութեան համար, եթէ ծածկես իմ դադունիքը:

Մուսօն կրկին և կրկին հանդիսաւոր խոստումն տուեց: Լուսանում էր:

Անցան այնուհետեւ դարձեալ միքանի օրեր ու գիշերներ, երկիւղի և անհանգստութեան, յուսոյ և վստահութեան երկար ու ձիգ ժամեր: Մուսօն ու Մարօն տեսնուելու և փախուստի ծրագիր կազմելու ոչ մի հնար չունեցան: Երկումն էլ դիշերներն անքուն, ցերեկները մտատանջութեամբ էին անցկացնում: Յանկարծ մի անսպասելի և յաջող դիպուած պատահեց—Մուսօն հիւանդացաւ և տուն գնաց: Մուսօն մնաց մենակ վրանի պահապան: Այս հանգամանքը գործի յաջողութեան համար յուսոյ մի նշոյլ փայլեցրեց Մուսօնի սրտում: այժմ գոնէ առանց վկայի կարող էր գուցէ Մարօին տեսնել գիշերը: Այդ դէպքի յաջորդ գիշերը Մուսօն երկար մտածեց: Ուշ գիշեր էր, երբ նա հրացանին յենուած՝ նիրհեց: Նրան արթնացրեց մի ձայն, որ իր իսկական անունն էր տալիս Մուսօն բոլոր մարմնով դողաց. ովկ կարող էր նրան կանչել իր իսկական անունով, եթէ ոչ Մարօն: Նա ցատկեց և խելազարի պէս առաջ վազեց ձեռները տարածած, երբ տեսաւ իր առաջ մի կանացի կերպարանք:

—Մարօ...

—Սնւս, խիստ կերպով շշնջաց խորհրդաւոր անձը, ես Մարօն չեմ, Խաղան եմ: Լսիր, Մուսօ, աւելորդ է ինձանից ծածկել, շարունակեց Խաղալը, տեսնելով թէ ինչպէս Մուսօն շփոթուեց և յետ-յետ քաշուեց. ես ամեն ինչ դիսեմ: Մարօն պատմեց ինձ. մեր դադանիքը դու և Մարօն գիտէք, ձերն էլ՝ ես ու Մուսօն. Մարօն իմ քոյլն է, Մուսօն՝ քո եղբայրը: Մի վախենար, վստահ

եղիք մեզ վրայց Մստօն դիտմամբ է հիւանդ ձեւացել ու հեռացել այստեղից. նա կամեցել է քեզ մենակ թող նել. վաղը գիշեր պատրաստ եղիք Մստօի հետ վախչելու համար, Մստօն այս ստրի յետևում ձեզ սպասելիս կը լինի. նա ձեզ կը տանի մեր սահմաններից գուրս կը հեռացնի և կը վերադառնայ:

Խազալն այս բոլորը շուտկով ասաց ու շտապով անշայտացաւ: Մուսօն մնաց ապշած ու շուարած. նա չը դիտէր հաւատատակ իր աչքերին ու ականջներին, թէ այս բոլորը համարել մի խաբուսիկ երազ: Բայց կամաց-կամաց նրա շիոթուած միտքը խաղաղուեց, իրերն ու պատահարները իրանց սովորական կերպարանքով ներկայացան նրան, կատարուածն իրողութիւն էր: Ապա նա սկսեց նայել երկնքին, դիտել աստղերի ընթացքը անհանգստութեամբ ու անհամբելութեամբ: Միակ բանը, որ այժմ նրան զբաղեցնում էր, դա այն էր, թէ երբ կը լուսանայ, որպէսզի հասնի վերջապէս յաջորդ գիշերը:

Հասաւ վերջապէս ցանկալի և սարսափելի գիշերը: Մուսօն հէնց նոր քնացրեց բէդին, վերկացաւ և սկսեց դանդաղ շրջաններ կատարել վրանի շուրջը: Ժամանակ առժամանակ նա կանդ էր առնում և ուշադրութեամբ ականջ դնում: խոտերի խշխոցը, քամու սօսափիւնը, անասունների փնչոցը, չների մռմռոցը, ձիերի դոփիւնը՝ բոլորը, բոլորը նրան ոտնածայն էին թւում. նա սպասում էր Մարօին: Նրա սիրան այնպէս էր բարախում որ կարծես ուզում էր կրծքից գուրս թռչել. յուզմունքից ու անհամբերութիւնից հօգին այրում էր: Երկար սպասեց. յանկարծ նրա մէջ մի ծանր կասկած առաջ եկաւ, թէ մի գուցէ բէգը գիտէ իր գիտաւորութիւնը և գիտմամբ է քնած ձեւանում, որ աւելի սարսափելի լինի պատրաստուած թակարդը, թէ Խաղալը մի նենդաւոր գաւաճան է, որ խաբել է Մարօին և մի զարհուրելի գաւադրութիւն կազմել: Գայլը լեռան վրայ կրկն ոռնաց. Մուսօն ցնցուեց. «վրէժ», մտածեց նա, ինչ որ

Երեկ ասել էր Մատօխն. վրեժ է կանչում գայլը. չը
մտնել արդեօք քրանը, միւմի հարուածով խողխողել և՛
բէդին, և՛ դաւաճան Խաղալին, և՛ Մարօխն, որ ազա-
տուի այս գժոխային վիճակից, և ապա վերջ տալ նաև
իր սեփական կեանքին... նա համարեա մօտ էր իրա-
գործելու իր սարսափելի մոտագրութիւնը, նա նոյնիսկ
մօտեցաւ վրանի գռանը, բայց կանդ առաւ, սարսու-
անցաւ մարմնով. խոխողել Մարօխն... ձեռքը կը բարձ-
րանայ... նա մի փոքր մտածեց, մէկ էլ ուշագրութեամբ
ականջ դրեց, բէդի խոմիոցը շարունակում էր. ոչ մի
կասկած չը կար որ նա քնած էր Ոչ, դաւագրութիւն
լինել չի կարող, իր երկարակութիւնն է վախեցնում ի-
րան։ Եւ Մուսօն վճռեց էլի սպասել... Նրան թուում էր,
թէ գիշերուայ շատ մասն անցկացաւ, թէ այլեւ հաղիւ
կարելի լինի հեռանալ վտանգաւոր վայրերից մինչեւ
լուսաբաց, նա կարծում էր թէ տանեակ ժամեր անց-
կացան. անհամբերութեամբ երկնքին նայեց, յայտնի
աստղերն ու աստեղախմբերը դեռ արևելքումն էին։ Մի
բոպէ նա նոյնիսկ մտածեց, թէ մի գուցէ Մարօի բունը
տանի և թանկագին ժամանակն անցնի. բայց իսկոյն
զգաց այդ ենթագրութեան բոլոր անհեթեթութիւնը.
աղատութեան սպասող թռչնակը բաց վանդակի դռան
առաջ կը քնի... Մարօն այդ գիշեր քնել չեր կարող։

Մինչ այդ մաքերը պաշարել էին նրան, յանկարծ
վրանի մի եզրը բարձրացաւ, երկու ստուեր գուրս սո-
ղացին այնտեղից օձի զգուշութեամբ։ Շատ ժամանակ
հարկաւոր չեղաւ, որ Մուսօն ճանաչէր Խաղալին ու
Մարօխն։ Երկու սիրահարները անկարող եղան նոյնիսկ
մի բառ արտասանել. չափազանց յուզմունքը նրանց լե-
զուները կաշկանդեց, նրանք միայն զրկախառնուեցին
և մաշեցին. Եթէ մօտները կանգնած Խաղալը նրանց
ուշքի շը բերէր, ով գիտէ, որպան ժամանակ այդպէս
պիտի մնային։

— Եհւու արէք, առաց բարի քրդուհին, իրար սի-
րելու ժամանակ կ'ունենաք, այժմ՝ շտապել է հարկաւոր։

Մարօն թողեց Մուսօին, Խաղալի գիրկն ընկաւ.
Նրանք համբուրուեցին քոյրերի պէս. նրանք որքան
միխթարել, սփոփել էին իրար փոխադարձաբար: Եր-
կու սիրահարները փորձեցին շարժուել, յանկարծ լսուեց
գայլի ոռնոցը, Մուսօն կանգ առաւ. «վրէժ» անցաւ նրա
գլխով:

—Խաղալ, ասաց նա, բայց իմ այօքան անարդանքը
ես թողնում եմ առանց վրէժինդրութեան և այդ մի-
միայն քեզ համար:

—Վրէժը սուրբ է և տղամարդի գործ, գու տղա-
մարդ ես, պատասխանեց Խաղալը և նրա աչքերը վառ-
ուեցին խաւարի մէջ կատաղութեան կրակով:

—Բայց նա քո ամուսինն է և ես քեզ սլարտա-
կան եմ:

—Նա մուսուլման է, իսկ ես եղիդի. նա իմ հօրն ու
եղբօրս սպանեց, նա խլեց ինձ իմ սիրականից, նա իմ
ամուսինը չէ, իմ դահիճն է. իմ ամուսինը Մուսօն է,
իսկ բէդը իմ արնալարտն է. օ, եթէ իմ այս ձեռքը ըլ
դողար...

Մուսօին էլ հէնց այդ խոստովանութիւնն էր հար-
կաւոր, բէդը Խաղալի արնալարտն էր, չէ որ նա իր էլ
արնալարտն էր, չէ որ նոյնիսկ գայլը ահաւոր ոռնոցով
վրէժ է գոռում. մի՞թէ ինքն աւելի վատ է, քան գայլը
որ այս գաղանին հանգիստ թողնի, իր կրած անար-
դանքը՝ անապատի: Այս մոքերը վայրկենապէս անցան
նրա գլխով և նա մերկացրած սուրբ ձեռքին վրանը
մտաւ: Բէդը շարունակում էր խռմիոցով քնել: Վրա-
նում թեթև, հազիւ լսելի շուռկ բարձրացաւ, պաղ եր-
կաթի քսոց լսուեց, կարուած կոկորդը խռռաց, բէդը
միքանի ցնցում գործեց, թրպրտաց իր արեան մէջ և
ամեն ինչ վերջացաւ:

—Վերջացաւ, հարցրեց Խաղալը, երբ Մուսօն
դուրս եկաւ:

—Վերջացաւ, կարճ կերպով պատասխանեց Մու-
սօն:

Վայրենի քրդուհին մօտեցաւ և համբուրեց այն
ձեռքը, որով լուծուեց իր վրէժը:

—Գնանք, ասաց Խաղալը, այժմ մենք էլ ձեզ հետ.
մենք էլ չենք կարող այստեղ մնալ, Մստօն էլ ինձ հետ
կը փախչի:

Փախստականներն անյայտացան խաւարի մէջ: Մըս-
տօն ու Խաղալը գէպի Բարդողեան լեռները, գէպի Ռու-
սաստան դիմեցին, իսկ Մարօն ու Մուսօն գէպի Գ...
գիւղը:

Լուսացաւ: Իրարանցումն ընկաւ ամբողջ էլիաթի
մէջ. այսպիսի յանդգնութիւն մինչեւ այժմ ոչ ոք չէր
լսել, բէզի երկու պահապանները փախցրել էին նրա
երկու կանանցը՝ սպանելով բէզին: Ամբողջ էլիաթը մի
մարդի պէս ոտքի կանգնեց, ասես թէ ամենի ընտա-
նեկան պատիւն էր անարդուած: Աւարի գնացած ձիա-
ւորները ամենքն էլ յետ եկան. հասաւ նաեւ բէզի եղ-
բայրը՝ Բահլուլ-բէզը: Ամենքն էլ զինուեցին և որսկան
չների պէս յեռներն ընկան իրանց աղայի վրէժը լուծե-
լու. համար: Էլիաթի պատիւը պէտք էր փրկել և այդ՝
միայն և եթ յանդուղն փախստականների արիւնով: Ամենքն էլ համոզուած էին որ նրանք գէպի Ռուսաստան
են դիմել, քանի որ անձանօթ երդիչը իրան անուանել
էր Մոսկովի երկրից, ուստի բոլորն էլ գէպի սահմանը,
գէպի Բարդողեան լեռները դիմեցին: Այս հանգաման-
քը փրկիչ հանդիսացաւ Մուսօնի և Մարօնի համար, բայց
Խաղալի և Մարօնի կորստեան պատճառ դարձաւ: Հա-
լածողները մի օր յետոյ կարողացան վերջիններին հաս-
նել Բարդողեան լեռների ստորոտներում, Զար-Մալա
սարից ոչ հեռու: Մստօն յետ նայեց և տեսաւ թշնա-
միների բազմութիւնը, կանգ առաւ, փախչելն անօդուտ
համարելով: Այժմ հարկաւոր էր կեանըը թանդ ծախել,
որքան հնարաւոր է: Եւ նա ճանապարհից դուրս դա-
լով Խաղալի հետ միասին մի ժայռի յետեւում կանգնեց:
Սկսուեց մի անհաւասար կոխւ: Մի կողմից թափւում
էին տասնեակ գնդակներ և միւս կողմից միայն միւմի

հատ։ Խազալը տալիս էր փամփուշը և Մստօն անդադար կրակում էր։ Յանկարծ Մստօն գունատուեց, հրացանը ձեռքից վայր թողեց և կախուեց Խազալի ուսից թշնամու մի գնդակն նրան կրծքից մահացու հարուած տուեց։ Խազալը գրկեց նրան, հանդարտ պառկեցը իր ոտների առաջ, հրացանը վերցրեց և առանց արիութիւնը կորցնելու՝ շարունակեց կրակել։ Վայրենի ըըրդուհին իր կատաղութեան մէջ կուռում էր սիրածի դիակի վրայ ինչպէս ընկերը կորցրած էդ վագր։ Նրա դընդակները զուր չէին անցնում։ Թշնամիները, երկում էր, նրան ողջ բռնելու ցանկութիւն ունէին, որովհետև ինայում էին։ Իսկ Խազալն անողոք էր։ Վերջապէս նրա ձեռքում մնաց միայն մի փամփուշտ։ Հը կամենալով ողջողը թշնամու ձեռքն ընկել, նա վերջին փափուշտով լըցուած հրացանն իր կրծքին ուզզեց, հրացանը պայթեց և նա ընկաւ իր սիրածի դիակի վրայ անկենդան...

Այսուեղ, մենաւոր լեռների մէջ մինչև այժմ էլ անցւորականը կարող է տեսնել երկու հողաթումբ, որոնց վրայ բուսել են վայրի վարդենու անպաճոյն թփեր։ Ամայի է տեղը, մոռացուած, վայրենի, կանաչը քիչ է, աղբիւրներ չը կան։ Գարնան անձրւեները միայն շըջակայքում բուսցնում են քանիմի խղջուկ խոտերի ծիցեր և վազանցուկ ծաղիկներ։ Այդ ժամանակ հողաթը-փերի վարդենիներն էլ կանաչում, կոկոնում են և առաջին արեւի հետ բաց են անում միքանի գունատ վարդեր, որոնք սակայն ամռան առաջին չոդ օրերին թառամում են, կախում և երեկոյեան թեթև հովլ խըլում է նրանց թերթիկները և քշում ցանում լեռներում ու ձորերում, ինչպէս մի անյայտ կեանքի տխուր պատմութիւն, կամ մոռացուած մի աւանդութիւն։ Մենաւոր վարդենիները մնում են դարձեալ անզարդ, դարձեալ սգաւոր ամայութեան մէջ՝ սպասելով յաջորդ գարնանը, որ նորից միքանի խղճուկ կոկոններով զարդարեն իրանց ոստերը։ Այդ թփերի ամեն մի ծիլը, ամեն մի ոստիկը, սակայն, ծածկուած է հնոտիների փաթոյթ-

ներով. ամեն մի անցուորական սրբազն պարտք է համարում իր զգեստի որևէ մասը պոկել և աւելացնել այդ փաթոյթների վրայ:

Ո՞վքեր են պառկած այդ մոռացուած հողաթմբերի տակ, այդ տիսուր, սգաւոր վարդենիների ստուերում, այդ չը գիտէ անցուորականը, նրան այդ հարկաւոր էլ չէ. նա գիտէ միայն, որ սիրահարուած և իրանց ըուռն սիրուն դոհ դնացած երկու վատաբախտների գերեզմաններ են դրանք, որոնց պատմութիւնը ծածկուել է ժամանակի հնութեան մէջ... Ի՞նչ փոյթ, նրանց սիրոյ յիշատակը ապրում է տակաւին և այդ սիրոյ պաշտամունքն է, որ կատարում է անցուորականը՝ իր զգեստի մի կտորը երկիւղածութեամբ վարդի թփի մի ոստին կապելով:

Այնտեղ են պառկած Մստօն ու Խազալը:

VII

Գիշեր էր Գ... գիւղը վազուց ընկղմուել էր խոր քնի մէջ, խրճիթներում թագաւորում էր անթափանցիկ խաւարը: Աստծուն միայն ապաւինած այդ ժողովուրդը մի կարծ հանգիստ էր վայելում, բայց վախեցած մանկան պէս կծկուած, կուչ եկած: Միայն մի խրճիթում տակաւին պլալում էր ձեթի ճրագը, աղօտ լոյս սփուելով իր չորս կողմը: Այնտեղ մարդիկ էին երկում ուրուականների պէս:

Ծերունի Սհօն պառկած էր անկողնում գլուխը անդայ կերպով բարձին ձգած, պաղած աչքերը դռանը յառած, առես թէ սպասելով մէկին: Նա հազիւ էր շունչ առնում: Նրա դլխավերելը նստած էր պառաւ նուբայը և ժամանակ առժամանակ կանացի խնամոտ ձեռքով ուղղում էր հիւանդի վերմակը: Սհօն կուում էր մահուան հետ. ինչ որ Մուսօն դնացել էր, կարծես թէ նրա սրտում յուսոյ մի չնչին նշոյլ էր ծագել, որ պահպանում էր նրա կեանքի վերջին դարկերը: Ծանր

Էր բաժանուել այս աշխարհից՝ առանց վերջին անդամ տեսնելու նրան, որ իր ամբողջ կեանքի խորհուրդը, էութիւնն էր կազմում:

Հեռու, գիւղի մի ծայրից լսուեց շան չարագուշակ ոռնուցը, նուբարը երկիւղած նախապաշարմունքով խաչակնքեց իր երեսն ու հիւանդին. նա համողուած էր որ այդ ժամին գրողները թոշում են կտրի վրայ և ըները տեսնում են նրանց և ոռնում: Նա անհանգստութեամբ և երկիւղով նայեց հերդկին և ապա հիւանդին, կարծես կամենալով որոշել, թէ որքան մօտ է վախճանը: Հիւանդն առաջուայ պէս անշարժ էր և աչքերն անթարժ յառել էր դռանը: Հաւը խօսեց. բակում ինչ-որ ոտնաձայներ լսուեցին. շուտով դուռը ճռուալով բացուեց և շէմքի վրայ յայտնուեցին երկու մարդկային կերպարանքներ. պառաւը սաստիկ վախեցաւ: Ներս մտնողները մի փոքր էլ առաջացան. ճրագի լոյսը որքան և առօտ էր, բայց և այնպէս պառաւը կարողացաւ ճանաչել Մուսօին և Մարօին: Նա վեր կացաւ և ճչալով գիմեց գէպի նրանց, շիմանալով նախ որին գրկի, որին համբուրի: Մարօն շտապով ազատուեց նուբարի գրկից և ընկաւ հօր անկողնի վրայ. լացը, սուգն ու աղմուկը լցրեց խրճիթը:

—Կուրանան աչքերս, դոչում էր Մարօն հօրը համբուրելով և ծնկներն ու կուրծքը ծեծելով, այս ինչ օրում եմ տեսնում բեղ. ու լինէր իմ ծնունդը. ես արեցի, ես...

Հիւանդն այս աղմուկից ու իրարանցումից մի փոքր ուշի եկաւ, քնից արթնացածի պէս աչքերն այս ու այն կողմը դարձրեց, ապա յառեց Մարօի գէմքին, յետոյ Մուսօին նայեց երկար, երկար, ասես աշխատելով իր թուլացած յիշողութեան մէջ զարթեցնել հին, թանկագին պատկերներ: Ճանաչեց նա արդեօք իր սիրելիներին, զգաց նրանց ներկայութիւնը թէ ոչ, այդ դըժուար էր իմանալ, միայն նրա խոր ընկած աչքերը խոնաւացան, շրթունքները խաղացին. օրհնութիւն, թէ աղօթք էր մրմնջում իր սիրելիների համար, դուցէ և

նղովք՝ իր դահիճներին, որ թռաւ նրա այրուած որակց դէպի երկինք, յետոյ նա աչքերը փակեց և մնաց անշարժ:

— Զեր ոտներին մատազ, ասում էր Նուբարն արտասուելով. եկաք էլիի՛. էս ջրատար հալիւորը վաղուց մեռած կը լինէր, եթէ աչքը ճանապարհին չը լինէր: Քանի՛ քանի անդամ հոգեդարձ եղաւ: Փառք Քեզ, Աստուած. եկաք հասաք, էս ջրատարն էլ իր փափազն առաւ, եկաք, որ իմ չորացած գլուխն էլ ձեր ձեռքով հողի մէջ գնէք:

Մարօն շարունակում էր անիծել իր օրը, շարունակում էր արտասուել և համբուրել հօր ճակատը:

Բայց Սհօն էլ չէր զգում: Նրա վշտահար հոդին թռաւ դէպի երկինք՝ Ամենակալի աթոռի մօտ դնելու մարդկային վայրագութեան դէմ իր բողոքն ու սրտի ցաւերը:

Մուսօն այդ ժամին բոլորովին այլ հոդսով էր ըլռանուած. շուտով կը լուսանար, հարեւանները կը դան իշրանց յարդանքը մատուցանելու հանգուցեալ Սհօն, Մարօն կը տեսնեն, նրա փախստեան լուրը կը տարածուի և կը հասնի քրդերի ականջին: Պէտք էր այդքանի առաջն առնել: Նուբարը հանգամանքներին անծանօթ էր, ուստի անհոգ էր, իսկ Մարօն այնպէս էր բոնուած սգով, որ նրա սրտում ուրիշ ոչ մի զգացմունքի տեղ չէր մնացել: Այդ ժամին եթէ նոյնիսկ նրան գային խողխողելու, նա դարձեալ մի ճիշ չէր արձակի և սիրով կը մեռնէր հօր թանկագին դիակի վրայ: Ի՞նչ յոյսերով էր դալիս. հօրը ժամ առաջ տեսնելու ցանկութիւնը նրա մէջ այնքան հզօր էր, որ ամբողջ ճանապարհին այդ ընքոյշ էակը լոռութեամբ տարաւ բոլոր դժուարութիւնները, վախ չզգաց, չը դողաց այն մտքից, թէ իրանց յետևից անշուշտ ընկած կը լինեն և կարող են հասնել խողխողել: Այժմ հազիւ հասած, նա հօր սառը դիակն էր գրկում: Նրա վիշտն ահագին էր:

Երկնակամարը պատող խաւարը կամաց-կամաց քաշ-

ւում էր, արշալոյսը մօտենում էր, նրա հետ միասին աճում էր նաև Մուսօի անհանդստութիւնը։ Արդէն հովիւները դուրս քշեցին իրանց հօտերը դէպի դաշտ և սրինգների ձայներով թնդացրին շրջակայքը. ահա աքաղաղների ձայներն աղմկալի ու յաճախակի դարձան։ Այսօր՝ սովորականին հակառակ, լոյս աւետող այդ ձայները Մուսօին սարսափ էին պատճառում։ Նա կամացուկ դուրս եկաւ բակը. արեւելքը մօտ էր շառագնելու, լուսոյ աստղը բարձրացել էր միքանի հարիւր կանդուն, արշալոյսի հազիւ նկատելի նուրբ շողերը քնքոյշ գոյներով նոր ներկում էին արեւելքը, էլի միքանի բոպէ և կը հնչուէին գիւղի եկեղեցու զանգակների ձայնը և բարեպաշտ դիւլացիք կը դիմէին Աստծու տունը։

Պէտք էր շտապել Մարօին մի տեղ թագցնել, մինչև որ Սհօի թազումը կատարուէր. այնուհետև երկսով միասին պիտի սահմանն անցնէին և Ռուսաստան գիմէին։ Ծրագիրը կազմուած էր դեռ ճանապարհին։ Մուսօն կամացուկ ներս մտաւ, մօրը դուրս կանչեց. նրան յայտնեց իր անհանգստութիւնը և Մարօին թագցնելու անհրաժեշտութիւնը։ Մօրը կարելի է ամեն ինչ հաւատալ։ Նրանք ներս գնացին։

—Մարօ, ասաց պառաւը, նրա ուսին դիւպչելով, լացով բան չի դառնայ, զաւակս, Աստծու կամքն էր, եղաւ անցաւ։ Վեր կաց մեր տուն գնանք, լոյսը բացւում է. այստեղ ախր մարդիկ կը դան...

Պառաւը միայն ակնարկեց վտանգի մասին։ Մարօն բարձրացրեց դլուխը, նայեց երկար ու անորոշ հայեացը քով իր արտասուածոր աչքերով, կարծես չէր հասկանում թէ բանն ինչումն է. յանկարծ ծանր իրականութիւնն ըմբռնելով՝ նա իր հայեացը դարձրեց դէպի Մուսօն հարցական եղանակով, նրանից էր սպասում վճռական խօսքը։

—Վեր կաց, Մարօ, ուրիշ ճար չը կայ, վրայ բերեց Մուսօն վճռական ձեռվ։

Մարօն համբուրեց հօրը, վերկացաւ և արտասուելով հետևեց Մուսօխն»

Լոյսը բացուեց: Հարեանները հաւաքուեցին Սհօենց տուն. ցաւակցութիւնն ընդհանուր էր: Ամենքը գիտէին որ խեղճ ծերունին ազջկայ կսկծից մեռաւ, բայց և այնպէս նրանց այդ համոզմունքը զայրոյթի արտայայտութեան պատճառ չէր դառնում:

—Ի՞նչ ու օրեր քաշեց խեղճ ջրատարը, ասաց մի ծերունի:

—Ջրատանր... եանի նամ էր ջրատար, որ մեռաւ ոլըրծաւ, թէ մենք, որ շարունակում ենք ապրել, վրայ բերեց մի ուրիշ ծերունի:

—Մեր ճակատագիրն է, մի տրտնջացէք. Աստուածկամեցել է, որ մենք սեղվ ծնուենք, լացով ապրենք, սգով գերեզման իջնենք, ասաց քահանան. ինչ անենք, թէ բեռը ծանը է. աւելի կը կռանանք որ չընկնենք, հարուածը խիստ է՝ կը կծկենք մեր մարմինները, կը ձգձգենք մեր ջղերը, որ դիմանանք: Մենք չենք բողոքի, այլ կ'արտասուենք, չենք նզովի, այլ կ'ազօթենք: Ինչ որ այնտեղ վերևում վճռուած է, այստեղ ներքեռում փոխել չի կարելի:

«Հաղար երանի քեզ», ասացին յուզարկաւորները մի-մի բուռը հող ձգելով Սհօի վրայ: Ապա տուն վերագրձան, հոգու հացը կերան, ողորմին տուին. տէրտէրն էլ խօսեց հանդերձեալ կեանքի մասին, յորդորեց իր հօտին համբերել, տանել՝ վարձը, հատուցումը երկնքում ստանալու համար:

«Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին. երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից», ասաց տէրտէրը, և մարդիկ ցրուեցին այս ու աշխարհում, ու երկնքի տակ իրանց ու օրերը քաշելու համար՝ որ հանդերձեալ կեանքում վարձատրուեն:

VIII

Երեկոյ էր, արեւը ծածկուեց. մի սովորական օր էր, այդ էլ անցաւ, միայն առաջին մատախուղի հետ Գ... գիւղի արևմտաքում մի հատիկ ամպ խտացաւ և մնաց կանգնած։ Գիւղացիք այդպիսի ամպեր շատ էին տեսել, նոյնիսկ աւելի ահաւորներն ու մռայները շատ էին պատել նրանց երկնակամարը, բայց և այնպէս այդ օրուայ ամպն ընդհանուրի ուշագրութիւնը գրաւեց։ Դա սարմափելի էր, և այն ոչ թէ իր մեծութեամբ կամ անօրինակութեամբ, այլ մի այնպիսի բանով, որ մարդիկ իրանց սրտերի խորքերում զգում, հասկանում էին, բայց բացատրել չէին կարող. «այդ ամպը չարագուշակ է», ահա թէ ինչ կարող էին ասել նրա մասին։

Եւ յիրաւի դա մի շանթալից ամպ էր, որ բնութեան մի մօտալուտ և ահաւոր խաղի համբաւն էր բերում. փոթորկի նշաններ կային։

Կենդանական բնազդը փրկարար է։ Բնութեան սպառնալից պատրաստութիւնները մարդիկ շուտով հասկացան. այդ երեկոյ գիւղացիք սովորականից աւելի շուտ տուն քշեցին իրանց հօտերն ու նախիրները։ Հովվիւները վաճանդաւոր համօրեցին բացօթեայ գիշերել, դաշտը վաղ դատարկուեց և ամենքն շտապեցին թըռչունների ոկտ ժամ առաջ ծուարել իրանց խղճուկ խըրճիթներում։

Այդ օրը երեկոն վերջալոյս չունեցաւ, խուարը շատ շուտ կոխեց երկերը, կարծես բնութիւնն շտապում էր։ Փութկոտ խուարի հետ եկաւ նաև մի սպասողական դրութիւն։ Ամեն մի արարած, ամեն մի տերև, ծաղկի իւրաքանչիւր թերթիկ, փոքրիկ միջատից ոկսած մինչեւ մեծ կենդանիները, մինչի մարդը, նոյնիսկ աղբիւր ու առուակ, դաշտեր ու ձորեր, լեռներ, բլուրներ, ամենքը, ամենքը կարծես շունչները բռնած լուռ սպասում էին, թէ ինչ է լինելու, և ինչ որ լինելու

էր, սովորական չէր, ահաւոր էր։ Մութը բոլորովին իշաւ, վրայ հասաւ այն խաւար, շատ խաւար գիշերներից մէկը, որ բնութիւնն առանձին սիրով ընտրում է, որպէս իր անսանձ ոյժերի, իր սասանեցուցիչ տարերքների խօսական մրցութիւնների համար յարմարագոյն ժամանակ։

Համատարած լութիւն էր, ոչ մի ազմուկ չէր խռովում բնութեան հանդիսաւոր խաղաղութիւնը, միայն հետզհետէ սաստկացող քամին էր, որ կարծես լեռների կուսական կատարներից շղթայագերծ եղած՝ փշում էր գիւղի խրճիթների վրայ, աւելում, լիզում էր նրանց կոնաձև կտուրները, ցրիւ էր բերում նրա վրայ շարուած խոտերի գէղերը, և առաջ արշուում մերթ կատաղի գազանի պէս մռնչալով, մերթ ցաւից տանջուող հսկայի պէս ահաւոր հառաջներ արձակելով և մերթ լալով ինչպէս անճար, անտիրական սգաւոր։

Ողջ երկնակամարը ծածկուեց, ոչ մի սատղ չէր սլլպում, կարծես նրանք էլ սարսափած խոյս տուին անհունութեան խորքերը. մրապաղաղ խաւարը ամպային քողի տակ անհասկանալի խնամքով ծածկում էր այն ամենը, ինչ որ լուսոյ մի չնչին նշոյլ կարող էր կաթեցնել խաւար երկրի վրայ։ Միակ լոյսը՝ որ երբեմն մի վայրկենով յետ էր քաշում խաւարի մռայլ քողը, կայծակն էր. ամբողջ բնութիւնը լցուած էր ինչոր անորոշ, սիրտ պատառող մռմռոցով, որից լեռներն իրանց ժայռերով գողում, սասանւում էին։

Գ... գիւղի փողոցներում ոչ ոք չէր երեսում. չներն անգամ լուել, կուշ էին եկել այս ու այն գէղի տակ, այս ու այն գոռան շէմքում։ Դրսում կենդանի շունչ ձկայ բացի երկու հոգուց, որոնք անձայն ու վշտաբեկ, թափառում են Գ... գիւղի գերեզմանատանը։ Ո՞վքեր են նրանք, և այդ սարսափելի ժամին ինչ են փնտրում մեռելների աշխարհում. արդեօք ուշացած ճանապարհորդներ են, թէ անտուն, անապաստան թշուառներ, ուրոնք կենդանի մարդկանցից մերժուած, մեռելների մէջ

են ապաստան վնարում բնութեան արհաւիրքից. մի դուցէ զայրացած ուրուականներ են, որոնք կենդանի ժամանակ անիրաւ աշխարհում իրանց նմանների ձեռքից խմել են դառնութեան բաժակը և վշտահար ու չարատանջ փշել են իրանց վերջին շունչը՝ նզովը Մը թունքներին, իսկ այժմ վրէժինդիր հոգով դուրս են սողացել իրանց յաւլտենական բնակարանից՝ չար աշխարհի սարսափն ու աւերածը հրճուանքով դիտելու համար։ Ոչ այս և ոչ այն, երկու կենդանի թշուառներ են նրանք, Մարօն ու Մուսօն, որոնք այդ զարհուրելի գիշերը փախչում են իրանց հայրենի աշխարհից՝ օտար երկնքի տակ ժամանակաւոր հանդիստ վնարելու համար։

Նրանք դուրս եկան գիւղից խաւարն իջնելուն պէս, փոթորիկը նոր էր սկսուած. ճար չը կար, տէտք էր շտապել։ Նախորդ գիշեր Մարօն կտրի վրայ ոտնաձայներ էր լոել. ով գիտէր, թէ ով էր և ինչե՞ր կարող էին պատահել։ Նրանք չէին էլ վախենում փոթորկից, չէ որ թշուառները բնութեան արհաւիրք չը գիտեն։ Նրանք մարդկանցից էին վախենում; մարդկային չարութիւնը միշտ աւելի սոսկալի է, քան բնութեան արհաւիրքը։ Այսպիսի գիշերը ամենայարմարն էր մարդի չը հանդիպելու համար։ Եւ ի՞նչ կար սարսափելու. երկնքի սեռութիւնը, քամու կատաղութիւնը մի տխուր զուգագիպութիւն էր միայն նրանց սրտերի վիճակի հետ։ Աւելի հեշտ է տարւում ցաւն ու վիշտը, երբ բնութիւնն էլ է սև հաղնում; երբ նա էլ է սուդ անում։ Խաւարն էլ չարգելեց նրանց. Մուսօն ճանաչում էր ամեն մի քարը, ամեն մի թուփը, ամեն մի փոսն ու ժայռը. կայծակն էլ երբեմն լուսաւորում էր փախստականների ուղին, այդքանը բաւական էր Մուսօն։

Նրանք գերեզմանատուն մտան վերջին անդամ համբուրելու Սհօի գերեզմանը։ Խաւարի մէջ իր հեծկլտանքներն ու հառաչանքը քամու կատաղի ոռնոցին խառնելով՝ երկար արտասւում էր Մարօն, մինչդուե

Մուսօն նրա կողքին նստած, մէկ նրան էր նայում և մէկ սե երկնքին՝ սպասելով փոթորկի մեղմանալուն որ ճանապարհ ընկնեն։ Բայց փոթորկիկը հէնց այսօր ասես դիտմամբ գաղարելու միտք չունէր, բնութեան քաօսը շարունակում էր. կատաղի քամին փչում էր անասելի թափով ու մանչիւնով, իսկ սե երկնքը պատառապատառ էր լինում անընդհատ կայծակներով և ամպրոպի որոտը խլացնում էր տիեզերքը։

Դերեզմանատնից մի փոքր այն կողմը ձգւում էր վ... ծովակլ իր ժայռոտ ափերի մէջ, որոնք յայտնի էին «Արնքար» անունով։ Ծովի էլ էր կատաղած, դոզում էին Արնքարի ժայռերը։ Խուռարի մէջ լուսւմ էր ալիքների գոռոցը։ Ոչինչ չէր երեսւմ, բայց կարծես բիւրաւոր գև հոկաներ ծովի արձակ տարածութեան վրայ մրցութիւն էին սկսել, խեղդուում էին իրար օրհասական այնպիսի հոնչիւն արձակելով, որից լեռներն իրանց ժայռերով քիչ էր մնում պատառուէին, փուլ գային։

Մուսօն բնութեան այս բոլոր սարսափների տակ ճնշուած, մոռացել էր թէ ինչ է կատարւում իր շուրջը։ Յանկարծ անընդհատ որսոտ ու կայծակի հետ սկսուեց անձրել։ Մուսօն նայեց Մարօին, որ հօր հողաթումը գրկած, վեր չէր բարձրացնում գլուխը և կարծես փոյթը չէր ոչ փոթորկիկը և ոչ անձրել։

—Վեր կաց, Մարօ ջան, ասաց Մուսօն անհանդիսա ձայնով, անձրել թափուում է, գնանք այ այն ժայռերի տակ պատսպարուենք, թող անցնի անձրել, ճանապարհ ընկնենք։

Մարօն լուռ էր և անշարժ։ Մուսօն մօտեցաւ, բռնեց Մարօի ձեռքից, բարձրացրեց նրան և համարեա քաշ տուեց իր հետ Անձրել սաստկանում էր։

Հաղիւ միքանի քայլ արած, նրանք երկառվ էլ սարսափած կանդ առան. նրանց թուաց, որ քամու ոռնոցի, ծովի շառաչի հետ միասին նաև մարդկային ձայներ են լսւում։ Ոչինչ չէր երեսւմ, բայց և՛ փոթորկիկը, և՛ կայծակներն ու թափուող անձրել, և՛ իրանց ծանր

կացութիւնը մոռացած, նրանք մնացին սառած լրանց տեղերում, աշխատելով թանձր խաւարի մէջ որևէ ստուեր որոշել, կամ որևէ հասկանալի ձայն լսել. բայց լուսով աղաղակներն անորոշ և խաւարն անթափանցիկ էր: Մարօն թրջուած ու գողարզ՝ կպաւ Մուսօին: Անցան էլի միքանի սարսափելի լոռիներ և ահա ձայներն աւելի որոշ և աւելի հասկանալի գարձան—վայի և յուսահաս ողբի աղաղակներ էին դրանք: Շուտով բոլորովին մօտիկ երեւացին բազմաթիւ սառերներ և քիչ յետոյ փախստականները տեսան իրանց շուրջը հարեանների խաւանիճաղանճ մի բազմութիւն՝ որը մերկ, որը ոտարբոքիկ, որը դլխաբայ, որն իր զաւակների հետ, որն առանց զաւակների, որն իր ամուսնուն կոչելիս, որն իր քրոջը, որը եղբօրը և ամենն էլ միասին անհնարին սարսափից խելադար վիճակի մէջ, առանց արածները քննելու վազում էին գէպի ծովը:

—Փախէք, եկան, գոռում էին այս ու այն կողմից:

—Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, հարցրեց զարհուրած Մուսօն:

—Գեղը կտրեցին:

Մուսօն ամեն ինչ հասկացաւ, ուրիշ հարցեր աւելուրդ էին:

Գաղտնիքներ կան, որոնց ծածկելու համար ծովի անդունդներն անգամ քիչ են. եթէ սարերը փուլ բերես նրանց վրայ, ժայռերը չը ճշան, կը յայտնեն: Հիւսնիւրէգի սպանութեան և Մարօի ու Մուսօի փախստեան գաղտնիքն այդպիսիներից էր: Թափուած արիւնն այնքան թանգ. էր Սիպանայ վրանաբնակ վայրենիների համար, որ նրանք դադար առնել չէին կարող, մինչեւ որ նրա ամեն մի կաթիլի փոխարէն տասնեակ անձինք զոհ չը բերէին, փոյթ չէր նոյնիսկ, եթէ զոհուողները անմեղներ էին. արիւն էր հարկաւոր, տաք, կարմիր արիւն, առատ արիւն... Բէգն էր սպանուած... ինչ ասել էր Խաղալի և Մուտօի մահը բէգի արեան թէկուզ մի կաթիլի առաջ: Էլիաթը չէր սպում, այլ մումուսում էր

ինչպէս վիրաւոր դաղան։ Բէդի եղբայր Բահլուլը բէդը,
որ այժմ էլիաթի պետն էր, մտածում էր Մարօխն և
Աւգօխն գտնել։ Նա կատաղած էր նաև ձազօի դէմ։
այն անպիտանն էր սկիզբ դրել այդ արիւնոտ գործին
և բէդը հրամայեց կանչել ձազօին։

— Լսիր, ձազօ, քո բերած ֆլայ աղջիկը իմ եղբօր
մահուան պատճառ դարձաւ. եթէ շուտով չը գտնես
Մարօխն և Աւգօխն և իմ ձեռքը չը յանձնես, քո արիւ-
նը պիտի թափուի. ուղիղն ասած՝ ես հէնց այժմ կը
հրամայէի քեզ շանսատակ անել, բայց դու դեռ ինձ
հարկաւոր ես, դու պէտք է գտնես նրանց։

— Տէր, Մարօն ֆլայ էր, միթէ նրանց ամբողջ գիւ-
ղը մի Մարօ չարժէ...

Ակնարկը հասկանալի էր. բայց այդ բանը բէդն
արդէն մտածել էր, վրէժինդրութեան ծրագրի մի մասն
էր այդ։

— Դա իմ բանն է, որոտաց բէդը, նախ Մարօն ու
Աւգօն։

Եւ ձազօն դողալով հեռացաւ, որ կամ կատարի
բէդի պահանջը կամ, հակառակ գէպքում, գլուխն առնի
կորչի և էլ երբէք յետ չը դառնայ։

Բէդը որոշեց մինչեւ ձազօի վերադարձը անձամբ
գնալ և պատժել Գ... գիւղի ֆլաներին այն պարզ,
հասկանալի պատճառով՝ որ Մարօն, բէդի սպանութեան
այդ պատճառը ֆլայ էր և Գ... գիւղացի. նա այնտեղ
ազգականներ կ'ունենար։

Մարօի և Մուսօի դուրս գնալուց անմիջապէս յե-
տոյ Գ... գիւղը յարձակման ենթարկուեց։ Բահլուլը բէ-
դի հրօսակային խումբը յատկապէս այսպիսի դիշեր
էր ընտրել իր յարձակման համար, որ բնակիչները փա-
խուստ տալ չը կարողանան։ Աւազակները չորս կողմից
գիւղը շրջապատեցին և կրակ տուին։ Փոթորիկն օդնեց
նրանց արագ կատարելու պժգալի գործը. մինչեւ որ անձ-
րեւ վրայ կը հասնէր, բոցերը քամու շնչով բորբոքուած՝
կարճ ժամանակում լավեցին գիւղի տների մեծ մասը,

բնակիչները մասամբ կոտորուեցին և մասամբ՝ իրանց քնաթաթախ, մերկ զաւակների ձեռքից բռնած փախան լեռները. մի խումբ էլ գետի ծովակը վազեց։ Ահա այդ խմբին պատահեցին Մուսօն ու Մարօն։

Դէպի ծովը վազող փախստականները յոյս ունէին նաւակներով խոյս տալ, մի աղաստարար անկիւն հասնել. նրանց սարսափած միտքն անկարող էր եղել հասկանալ որ այս սարսափելի փոթորկի ժամանակ անհնարին է ծով իջնել։ Բայց նաւակներ էլ չը կային, քամին նրանց խլել էր ափերից։ Բազմութիւնը հաւաքուելով կանգ առաւ Արնքարի վրայ սաստիկ անձրեսի տակ։ Իսկ նըրանց առաջ շարունակում էին շառաչել ծովի ալիքները որոնք լեռնանում, բարձրանում էին վեր, ասես կամենալով երկնքին համնել, ապա փուլ գալով վազում էին դէպի Արնքարի վրայ կծկուած թշուառները։ Եթէ էլի մի կէս ժամ երկարէր այդ սարսափելի կայութիւնը, երեք բազմութիւնը կամաւ ծովը կը թափուէր, բաւական էր միայն որ մի յուսահատ՝ առաջին օրինակը տար, կամ թշնամու ձիու առաջին դոփիւնը լսուէր։ Յանկարծ լսուեց մի զարմանալի ձայն այս բոլոր հառաջանքների, այս բոլոր վայերի մէջ, և այդ ձայնն ասում էր՝

—Մի վախեցէք։

Ամենքն էլ լսեցին, բայց ով կը հաւատար իր ականջներին. այդպիսի ձայն այդ սարսափելի ժամին... Ախը ինչպէս չը վախենան, փրկութիւն կայ, ով է փըրկիչը. երկինքը նրանց համար վազուց է ամուլ, ողորմութիւն չը կայ. միթէ որեւէ մահկանացու կարող էր փըրկել նրանց, երբ բնութիւնն անդամ նրանց դէմ էր։ Ծովը և միմիայն ծովը կարող էր այդպէս որոտալ, միայն նա կարող էր ասել՝ «մի վախեցէք», որովհետև միայն նա բոլորի համար տեղ ունէր իր սառը ծոցում։ Այսպէս էին մտածում փախստականները. սակայն ձայնը կրկը նուեց և այս անգամ աւելի համարձակ, աւելի բարձր։

—Մի վախեցէք, չուան շինեցէք, չուան տուէք,

գուռում էր Մուսօն, այ մարդիկ, գուք ինչ էր սաւել, տղամարդ չ'ը. կապեցէք իրար՝ ինչ որ ունէք վրաներդ և մի չուան տուեք, ի ոէլ Աստուծոյ, համարեա յուսահատ կատազութեամբ գուռում էր Մուսօն, տեսնելով որ թանկադին ժամանակն անցնում է, իսկ շնկլուած ու սարսափած բազմութիւնը չի էլ մտածում իր փրկութեան համար որեւէ բան ձեւնարկել։ Մուսօն համզուած էր որ քրդերը ուր որ է՝ վրայ կը հասնեն, իսկ փախչել անհնարին է, ուստի ազերսում էր մի չուան տալ իրան։

Բարեբախտաբար Մուսօնի վերջին կանչն այնպէս հզօր էր ու համոզիչ, որ տղամարդիկ առանց նրա նըսպատակն իմանալու սկսեցին իրանց զգեստներից ու գումիներից մի պարան կազմել։ Մուսօն ինչ պիտի առնէր պարանը։

Ծովափնեայ ժայռերի մէջ խաչերով ու յիշատակարաններով քանդակուած բազմաթիւ այրեր կային։ Դրանք նախնի դարերի ըրիստոնէութեան հալածանքների ժամանակ ծառայել էին իրեւ քրիստոնեաների ապաստարաններ և աղօթատեղեր, ուր Փրկչի առաքեալների առաջին հետևողները պաշտել էին իրանց Յիսուսին և նրա խաչը, իսկ այնուհետեւ աւելի աղատ դարերում աշխարհից խոյս տուած կուսակրօնները այդտեղ էին ապաստանել և այդտեղից դէպի երկինք ուղղել աշխարհի խաղաղութեան և շինութեան համար իրանց աղօթքներն ու մրմունչները։ Դարերի ընթացքում ծովի ջուրը կամաց-կամաց սրանցից շատը իսպառ ծածկել էր, շատերն էլ գեռ երեսում էին ջրին մօտիկ, կամ կիսով չափ ջրով լցուած։ Այսպիսի մի այր էլ գտնւում էր հէնց Արնքարի տակ, որի վրայ խմբուել էին փախստականները. այդ դիտէին համարեա ամենքը, բայց Մուսօն յիշեց առաջինը։ Մի ժայռ ծովափի ընդհանուր մակերևոյթից դուրս ցցուելով կազմել էր մի հսկայական պատշգամբ հէնց այրի անցքի վրայ, այնպէս որ վերից անցքը չէր երեսում և անհնարին էր կարծել անդամ

թէ այնտեղ ժայռի տակ այրի մուտք կայ։ Զուրը հաւասարուել էր համարեա այրի բերանին և այնտեղ ներս մտնելու համար անհրաժեշտ էր գոնէ միքանի քայլ ջրի մէջ գնալ։ Այրի ներսն աւելի բարձր էր, բան թէ անցքը, զուրն այնտեղ թափանցելէր կարողանում։ Նաւակով միայն կարելի էր մօտենալ այդ այրին, բայց անծանօթ մարդը հեռուից կը դժուարանար որոշել այրի մուտքը, իսկ վերի ժայռերի միջից իջնել համարեա անհնարին էր։ Գ...եցի երիտասարդները բաղմաթիւ փորձեր էին արել, և միայն ճարպիկ ու գիւրաշարժ Մուսօնն էր յաջողուել ժայռերը չանգուելով իջնել և այրին համնել։ Եւ ահա այժմ Մուսօն յիշեց նոյն այրը և որոշեց փախստականներին այնտեղ պատողարել։

Փոթորիկը դեռ շարունակուամ էր. ծովն ու երկինքը իրար հետ միացան անձրեի ջրով։ Բայց Մուսօն չը կար, միայն Մարօն նկատեց, թէ նա ինչպէս ծածկուեց ժայռերի մէջ։ Քիչ յետոյ Արնքարի տակից լսուեց Մուսօնի հզօր ձայնը.

—Պարանով կախեցէք մէկին։

Այժմ միայն ամենըն էլ հասկացան, թէ ինչու էր Մուսօն պարան ուղում։ Ամենըն էլ սրտապնդուեցին, երբ առաջինը մօտեցաւ Մարօն և ցած կախուեց։ Այնուհետեւ սկսեցին կախուել և ուրիշները, աշխատելով նոյնիսկ մէկը միւսից առաջ ընկնել. պարանը փրկում էր նրանց։ Եւ այսպէս մէկիկ-մէկիկ կախուեցին մինչեւ վերջին մարդը, ապա Մուսօն վեր բարձրանալով ցած իջեցրեց վերջինին և ինըն էլ պարանը հաւաքելով նոյն ճանապարհով ցած դնաց այրը։

Արշալոյուը մօտ էր. վոթօրիկը դադարում էր։

IX

Լուսացաւ. ծովը խաղաղուեց. երկինքը ոլարզուեց. արեգակը կրկին հաշտ կերպով թափեց երկրի վրայ երկենսատու շողերը, գրանցից միքանիսն էլ ջրի խաղաղ

մակերևոյթի վրայից անդրադառնալով, կարծես կարեկցութիւնից դրդուած, այրի նեղ անցքից մտան և լուսաւորեցին այրը։ Այնտեղ ապաստանածները միայն այժմ իրար նայեցին, իրար ճանաչեցին։ Այստեղ էր Մուսօն, Մարօն, Կուզիկենց Մխօն, Զրատարենց Գալօն, Զուլհակենց Մարտօն, Խողկոտենց Մանօն, Տողօենց Շաւէշը, Մխիկենց Յովակը, այստեղ էր և քաշալ Սըրքէն։ Ումանք իրանց ամբով ընտանիքով, ոմանք ընտանիքի մի մասով միայն, մանք ու մեծ ընդամենը երեսուն հոդի։ Բոլորի հառաջանքներից ու լացից այրն առես տնքում էր ժայռերի տակ։ Մարօն այժմ վիճակակից էր բոլորին. նա պատմեց իր գլխի անցքը։ Սըրքէն գաղտագողի հայեացքներ էր գցում Մարօնի վրայ, նրան թւում էր, թէ զոհը գիտէ, թէ ով էր իր գահիճը։ Այժմ Սըրքէն հասկացաւ, թէ ինչու այնքան ժամանակ Մուսօն բացակայ էր գիւղից. բայց ինչպէս էր յաջողեցրել նրան խլել բէգի ձեռքից, այդ էր նրան անյայտ։ Մարօն մանրամասնութիւնները չը հաղորդեց, նա տասց միայն, որ ինքը փախաւ։

Պաշարուածները դրսից ոչ մի տեղեկութիւն չունեին, նրանք զուրկ էին նաև պաշարից։ Մուսօնի առաջարկութեամբ տղամարդիկ մի կարճ խորհրդակցութիւն կատարեցին և վճռեցին գիշերը հասնելուն պէս երկու հոգի վիճակով ընտրել, որ այրից դուրս գան և թէկուզ մահու գնով դրսից պաշար և տեղեկութիւն բերեն։ Հաց ճարելու մասին մտածելն անդամ աւելորդ էր, գնացողները սլիտի աշխատէին հորերից ցորեն կամ նոյնիսկ դարի, կորեկ հանել բերել, որպէսզի պաշարուածները մի կերպ դոյութիւնները քաշ տան, մինչեւ որ թշնամինները հեռանան շրջակայքից և նրանք կարողանան գուրս գալ։ Պաշարի գնալու պարագից աղատ սլիտի մնար միայն Մուսօն, որովհետեւ եթէ նրան որևէ վտանգ պատահելու լինէր, պաշարուածներն անկարող սլիտի լինէին այրից դուրս գալ։

Հասաւ գիշերը։ Վիճակը ձգուեց և ընկաւ Զրա-

տարենց Գալօին և քաջալ Սրբէին։ Մուսօն մօտեցաւ և ձեռքը Սրբէի ուսին գնելով՝ ասաց.

—Հը՛, Սրբէ, պատրաստուիր որ շուտով պաշարի պիտի գնաս:

—Պաշարի... ասաց Սրբէն ծործորակը քորելով, երթալում՝ կ'երթամ; բայց երբ վերադառնամ; ինչպէս իշխեմ այրը։

—Ես կը բարձրանամ և ձեզ ցած կը կախեմ; հէնց որ դուք երեք քար ձգէք ծովլը։

—Ախր ես գիւղում ցորնի հորի տեղ չը գիտեմ, շարունակեց պատճառաբանել Սրբէն։

—Գալօն գիտէ, նա ցոյց կը տայ, պատասխանեցին այս ու այն կողմից։

—Աստուած է վկայ, թէ փախչելու լինենք, ես չեմ ազատուի, ոտքս ցաւում է։

—Հը՛, մեռի համ, քաջալ նզոված, որոտաց այս անդամ Գալօն այրի մի մութ անկիւնից. երևում էր որ նա հետեւում էր այս խօսակցութեանը առանձին որբունեղութեամբ, որ յատուկ է վշտերի տէր մարդկանց։

Սրբէն զգաց, որ եթէ էի մի բովէ շարունակի իր երկոտ պատճառաբանութիւնները, այդ մռայլ Գալօն նրան ծովը կը գցի, ուստի լռեց։ Երբ Մուսօն ժայռի կատարից ցած կախեց պարանը, Սրբէն մահու դատապարտուածի պէս կախ ընկաւ պարանից և վեր բարձրացաւ։ Բարձրացաւ նաև Գալօն։ Մուսօն ցած իջաւ, իսկ նրանք գնացին։

Սկզբում նրանք արագ-արագ էին գնում, բայց երբ մօտեցան գիւղին, աւելի ծանրացրին իրանց քայլերը և վերջապէս կանդ առան։ Հեռու երևում էր մի լուսաւորուած վրան, երեխ Բահլուլբէգի վրանն էր. բարբարոսաները դեռ չեին վերջացրել թալանը։ Գալօն ու Սրբէն դդուշութեամբ ականջ գնելով՝ մի փոքր էլ առաջ անցան և այս անդամ կանդ առան կալերի մէջ։ Նորից ականջ դրին։ Մօտերքում ոտնաձայներ չը կալին։ Մի փոքր էլ առաջացան և այս անդամ Խողկոտենց տան առաջն էին։

Գալօն գիտէր՝ ուր պիտի լինի ցորնի հորը. նա սկսեց փորել, Սրբէին խստիւ պատուիրելով՝ ի հարկին անպայման քրդերէն խօսել: Հաղիւ հորը բացել էին, երբ մօտեցան չորս ձիաւորներ:

—Ո՞վ էք, կոչեց գլխաւորը:

—Մենք ենք, գարի ենք հանում ձիերի համար, պատասխանեց Գալօն առհարկի վստահութեամբ: Սրբէն փորձեց փախչել, Գալօն զգուշութեամբ բռնեց նրա փէշը:

Զիաւորներն անցան, բայց միքանի քայլ արած, նրանք յանկարծ կանգ՝ առան, ինչոր վսփսացին. Երեւում էր որ նրանք իրանց խարուած զգացին, կամ դուցէ հայ մարդի քրդերէն խօսելլ նրանց կասկածելու տեղիք տուեց. Նրանք շտապով յետ գարձան:

Գալօն զգաց վտանգը, ուստի վճռեց օգտուել խաւարից և խոյս տալ առանց սակայն փախուստ ձեւացնելու, բայց Սրբէն քանի ոտներում ոյժ կար, փախաւ. միքանի հրացաններ մի անդամից ճայթեցին իրար յետելից և Գալօն գետին գլորուեց սպանուած, մինչդեռ Սրբէն հրացանների ձայնից սարսափած ճչաց և գետին ընկաւ առանց վիրաւորուելու անդամ: Զիաւորները մօտեցան. Սրբէն ճնկների վրայ նրանց առաջը դուրս եկաւ:

—Խնայեցէք, ի սէր Աստուծոյ, աղերսում էր նա ձիերի ոտներին փարելով: Նրան բռնեցին Քիչ յետոյ Բահլուլքէգի վրանի առաջ կանգնած էր նա քրդերով շրջապատուած: Բէգը հրամայեց նրան իր առաջ բերել:

—Ո՞վ ես դու, ֆլայ, հարցրեց բէգը:

Սրբէն լուռ էր:

—Խնչո՞ւ չես խօսում, մուռռառ, որոտոց բէգը կտաղած:

—Խնայի՛ր, տէր, հաղիւ հաղ շշնջաց Սրբէն:

—Խնայե՛լ, մոնչաց բէգը, մի ֆլայ քածի համար սարի նման եղբօրս սպանեցիք, դեռ խնայե՛լ... Ո՞ւր է Մարօն, շնո՞ւ ֆլայ. ուր փախցրիք նրան, ուր է նրան փախցնողը... Սպասեցէք... տեսէք թէ ինչ կը նշանա-

կէ բէդին սպանել և կինը փախցնել։ Կուռօներ, ճանապարհը դրէք։

Այդ հրամանը սպանել էր նշանակում։ Քրդերը քաշ տուին Սրբէին դէպի մի կողմ և առաջը խարսյկ վառեցին որ հեռուից դէմքը երևայ։ Դա էլ մի առանձին զուարճութիւն էր. նրանք ուղում էին նշան բռնել հեռու խաւարի միջից։ Սրբէն կանգնած էր հաղիւ կենդանի, ինչոր բան սաստիկ աղմում էր նրա կոկորդը, չնչել չէր կարողանում, բերանը չորանում էր անդադար, լեզուն քմբին էր կպչում։ Ամեն անդամ երբ նրա առաջը խարոյկի բոյը բորբոքում էր և լուսաւորում նրան, այն ժամանակ հեռուից երևում էր անհնարին սարսափից ծամածուած դէմքը, բայց նրա հայեացըն անորոշ չէր, այլ ուղղուած էր կրակի բոցերին, ուր կարդում էր կարծես իր դատավճիուը, փոքրիկ ճակատը կնճոռած էր, յօնքերը կիտուած. պարզ էր թէ մի ինչոր միտք այդ օրհասական ժամին նրան զբաղեցրել էր։ Նա համոզուած էր որ եթէ Մարօին ու Մուսօին մատնի, ինքը կը փրկուի, բաց հաստատ չը դիտէր՝ կը փրկուին արդեօք նաև այլի մնացած փախստականները. չէ որ շատ հեշտութեամբ այս կատաղած բէդը նրանց էլ կարող է ծովն ածել։ Ահա այդ մասին էր մտածում։ Մարօին և Մուսօին մատնելը նրա համար շատ հեշտ դործ էր, չէ որ նրանց պատճառով էր դիւղը թալանի և կոտորածի մատնուել։ Բայց Սրբէն ամեննեին չէր մտածում որ այդ չարիքի սկիզբն ինքն էր դրել։ Նա մտածում էր մնացածների մասին. զօհել նրանց էլ՝ իր կեանքը փրկելու համար, թէ ոչ Բայց չէ որ վերևում Աստուած կայ. ասում էն, որ այդ Աստուածը պատժումէ չարադործութիւնը։ Եթէ այդպէս է, ինչու համար Աստուած թոյլ տուեց, որ Մուսօն երէկ նրան էլ, ամենքի հետ միասին փրկի, այլն իջեցնի, ինչու նա թոյլ տուեց, որ զօհն իր դահճին կեանք չնորհի. միթէ դժուար էր այնպէս անել, որ պարանը կտրուի և չարագործը անդունդներին կու գնայ։ Զէ, Աստուած չի խառնւում մարդկային

գործերին. Նա թողել է, որ մարդիկ ապրեն, ինչպէս կարող են. ով զօրեղ է, թող ջարդի, դռփի, կեղեքի, ով թոյլ է, անկարող է, թող ոչնչանայ: Զէ որ դիւզը կրակ տուին. բանի մարդ սպանուեց... իսկ սպանողները՝... ինչ եղաւ նրանց. պատժուեցին... ուր էր Աստուած: Ուրեմն էլ ինչու համար չը փրկուել՝ ինչ գնով և լինի:

Սրբէի համար խիստ ծանր էր աշխարհից բաժանուել թէկուզ մի շատ լաւ գործ կատարած լինելու երջանիկ գիտակցութեամբ. վիշացած, ապականուած հոգիները ղոհի լնդունակ չեն: «Ես մեղաւոր չեմ: շարունակում էր դատել Սրբէն, ասացի ինձ մի ուղարկէք, ես փախէլ չեմ կարող, ես պաշարի զնալու անընդունակ եմ: Նրանք ինձ չը լսեցին, անմենքն էլ ուղում էին որ անպատճառ ես դնամ, նրանք իմ մահն էին կամենում, թող այժմ տուժեն»... «Դաւաճանութիւն», լուեց ներքին ձայնը:

—Իսկ Դալծն, պատասխանեց Սրբէն. նաև էլ դաւաճանեց... Հապա ինչու սպանուեց:

Հինց այդ ժամանակ հրացանաւորները տեղ բռնեցին նրա հանդէպ յիսուն քայլի վրայ: Բէգը գուրս եկաւ վրանից նայելու: Էլի մի րոպէ և Սրբէն այլիս չէր լինի աշխարհում: Նա այդ հասկացաւ երբ բրդերը հրացաններն ուղղեցին, նա մի յուսահատ աղաղակ բարձրացրեց, ինդրելով մի խօսք, միայն մի խօսք ասել: Բէգը նշան արեց որ սպասեն:

—Տէր, Մարօին քո ձեռքը կը յանձնեմ, խնայիր կեանքս, ասաց Սրբէն:

—Ինչպէս, զարմացած կոչեց բէգը. Եթէ տսածդ ճիշտ լինի, Փլայ, ես ոչ միայն կեանքդ, այլև շատ բան կը պարդեմ բեզ:

—Տէր, ծառադ չի համարձակուի իր տիրոջը խաբել. ես Մարօի տեղը կ'ասեմ, մնացածը դու դիտես:

Եւ Սրբէն յայտնեց Արնքարի այրում պատսպարուածների դաղտնիքը:

Սեւ դաւաճանութիւնը կատարուեց. վրանի շուրջը մի վայրենի շարժողութիւն սկսուեց և շուտով մի ստուար բանակ, առաջնորդ ունենալով Սրբէին, Աղնքարի վրայ կանդ առաւ։ Սրբէին կախեցին որ պաշարուածներին համոզի դուրս գալ։ Այրում սարսափը տիրեց ամենքին, երբ կարողացան որոշել խաւարի մէջ Սրբէին, անյայտ ձեռներով կախուած։ Մուսօն առաջանալով դէպի դուռը, առանց կախածին բռնելու, հարցրեց կատաղած։

—Քաչալ, այդ ով կախեց քեզ։

—«Նրանք», ասաց Սրբէն։

«Նրանք» բառը լսելով՝ այրի ներսում կանայք ու երեխաներն ընդհանուր ճիշ բարձրացրին. աւելի հասկանալի և աւելի զարհուրելի բառ լինել չէր կարող։

—Բայց նրանք ի՞նչպէս իմացան մեր տեղու։

—Չը գիտեմ. հաւատան, չը գիտեմ, ես չեմ ասել. իրանք գիտէին, ինձ բռնեցին հետները բերին. կարող էի չը գալ։

—Մուտ է խօսում, դաւաճան է, ձայն տուին այս ու այն կողմից. պարանը կտրեցէր, թհաղ վայր գլուխու. . . կտրեցէր, կտրեցէր. Մի խօսիր, Մուսօ, դաւաճան է։

—Չեղ մատաղ, մի արէք, ես անմեղ եմ, խեղճ եմ, աղերսում էր Սրբէն. հաւատացէր, նրանք գիտէին մեր տեղը, իրանք եկան։

—Ո՞ւր է Գալօն, հարցրեց Մուսօն։

—Ինչու քեզ էլ չսպանեցին, անզգամ; կրկին ձայն տուին այս ու այն կողմից։

—Դաւաճան է, կտրենք պարանը, և միքանի ձեռներ միանդամից մեկնուեցին դէպի պարանը. Սրբէն ճօնուեց, անդունդների վրայ զարհուրելի պտոյտներ գործեց և կրկին առաջուայ տեղում կանդ առաւ։ Վերից կախողները պահում էին նրան, յուսալով որ նա բանակցութիւններ է անում։

—Լսեցէր, գոչեց վերջապէս յուսակտուր ձայնով
Սեպուհը, 1901.

Սրբէն. լսեցէք իմ վերջին խօսքը: Ես ասում եմ, որ նրանք մեր տեղը գիտէին, դուք չէք հաւատում ինձ, բայց բանն այժմ այլևս դրանում չէ. կ'ուզէք կտրեցէք պարանը, թող ես ընկնեմ շանսատակ լինեմ: այժմ ձեզ եմ հարցնում; իմ մահով կարծղ էք դուք փրկուել: Ի հարկէ ոչ: Նրանք ձեր տեղը գիտեն արդէն, կը պաշարեն ձեզ և դուք ստիպուած կը լինէք սովից անձնատուր լինել և այն ժամանակ աւելի վատ կը լինի ձեզ համար, որովհետև դուք ձեր յամառութեամբ նրանց աւելի կը զայրացնէք: Իսկ այժմ նրանք խօսք են տալիս որ մեզ անմխաս կը թողնեն: Նրանք ժամի զարդանօթեղէններն են վնարում և կարծում են որ այս տեղ թագցրել ենք: Դուրս եկէք, թող իջնեն տեսնեն որ այստեղ ոչինչ չը կայ, և մենք կը փրկուենք: Լսեցէք ինձ ի սէր Աստուծոյ. մի յամառէք, իմ մահը ձեզ չի փրկի:

Ներքեռում այրի մէջ մի փոքր լոռութիւն տիրեց, մարդիկ խօսում էին փափսալով: Սրբէի պատճառաբանութիւնն ըստ երևոյթին հզօր հաստատուն հիմքեր ունէր. արդարե նա էր մատնել թէ մի ուրիշը, այդ այլ խնդիր էր, բաւական էր որ գաղտնիքը բացուած էր և անհնարին էր առանց պաշարի գիմանալ պաշարմանք:

Մնում էր կամայ ակամայ գուրս գալ և անձնատուր լինել՝ դահիճներից գթութիւն հայցելով. ով գիտէ, գուցէ այժմ նրանք այնքան անդթաբար չը վարուեն, գուցէ խղճան, գուցէ... Անել վիճակի մէջ ամեն մի «գուցէն» մի փրկութիւն է թւում. դա յոյս է, իսկ յոյսը՝ կեանք:

Մուսօն այս բոլորից անջատ իր առանձին հոգսերն ու մտմտուքն ունէր. իսկ եթէ վերի կանդնողները չիւնի-բէզի մարդիկը լինեն: Թալանի և կոտորածի ժամանակ սարսափած գիւղացիք ոչ ոքի չեն ճանաչել խաւարի մէջ, իսկ Մուսօն համար դա իսկապէս կեանքի և մահու խնդիր էր: Նա մօտեցաւ Սրբէին:

— Լոիր, Սրբէ, ասաց Մուսօն խորհուրդը վերջանաւ-
լուց յետոյ. երդուիր Աստծու անունով, երդուիր այս
այրի մէջ տքնած ճգնաւորների սուրբ աղօթքով, որ
վերի կանգնողները Հիւսնի-բէգի մարդիկը չեն:

Սրբէն և միայն Սրբէն հասկացաւ Մուսօնի անհան-
գսառութիւնը: Սրբէն այն մարդկանցից չէր, որ ոճրի
կիսում կանգ առնէր թուլացած:

— Երդում եմ Աստծու անունով, ասաց նա խա-
բերայի անսիրտ վճռականութեամբ, երդում եմ բոլոր
ճգնաւորների սուրբ աղօթքով՝ որ վերի կանգնողները
Հիւսնի-բէգի մարդիկը չեն, որանք Բռուկցի են:

Խաւարը ծածկեց այս զարհուրելի կեղծիքը. եթէ
այդ բոլէին դոնէ երկու հակառակորդների դէմքերը
լուսաւորուած լինէին, եթէ Մուսօն կարողանար գէթ-
մի անդամ նայել դաւաճանի աչքերին, գուցէ ստու-
թեան սովոր շրթունքներն անդամ անկարող լինէին
արտասանել այդ զագիր երդումը:

Բայց զարհուրելի երդումն արտասանուեց խաւարի
մէջ և դաւաճանի շրթունքները չայրուեցին:

Հաւատամց արդեօք Մուսօն, դժուար էր իմանալ,
նա դեռ մտածում էր: Ապա նա գլուխը բարձրացրեց և
ասաց.

— Դէհ, Սրբէ, այս բոլորի մեղքը քո վզին, ահաւոր
դատաստանին պարտական մնաս, նզովուած լինիս Յու-
դայի պէս, եթէ խաբում ես մեզ: Մենք դուրս կը գանք:
Այրը դատարկում էր:

Արնքարի վրայ վառուեց մի մեծ խարոյկ՝ դուրս
եկողներին դիտելու համար: Գլխաւորն իսկոյն մօտե-
նում էր նայում, հէնց որ մէկը բարձրանում էր: Բոլորը
դուրս եկան, մնացին Մարօն ու Մուսօն: Պարանը մէկ
էլ կախեցին, երկար ժամանակ ոչ ոք չը կար. վերեւում
անհանգստութիւն տիրեց, իսկ ներքեսում, այրի մէջ
դեռ տատանւում էին: Մարսափելի վայրկեան էր: Վեր-
ջապէս պարանը շարժուեց, բարձրացողն այս անդամ
Մարօն էր. վայրենիների մէջ փսփսուկ ընկաւ: Ամենքը

կռացան դէպի ծովը։ Քանի բարձրանում էր, այնքան
նրա դէմքն աւելի էր լուսաւորում։ արդէն մօտ էր
ժայռերի շրթունքին, երբ Մարօն գլուխը բարձրացնե-
լով տեսաւ կրակի լուսով լուսաւորուած միքանի ծա-
նօթ դէմքեր։ Հիւմնի-բէդի մարդիկն էին, նոյն գա-
զանները որ իրան փախցրին։ Նա լաւ ճանաչեց։ Եւ
այն վայրկենին՝ երբ նա ճանաչեց այդ զարհուրելի
դէմքերը, մի սրտամնիկ ճիչ արձակեց։ «Նզնվք քեզ,
Սրբէ», գոչեց և օրհասական ցնցումով ոտները դէմ
տուեց ժայռին։ քաշողի ձեռքից պարանը յանկարծ
դուրս պլծաւ և մինչև որ վերի կանգնողները կը կա-
րողանային նոյնիսկ մի փոքր հաշիւ տալ իրանց այդ
անակնկալ և զարմանալի դիպուածի մասին, Մարօն
անդունդների վրայ զարհուրելի պտոյտներ կազմելով՝
ծովս ընկաւ սարսեցուցիչ ճղփիւն առաջ բերելով։ Վե-
րեռում սկսուեց գոռում-գոչում, հայհոյանք, աղաղակ.
բայց այդ անասելի ոռնոցները անկարող եղան խլացնել
այն սպանիչ ճիչը, որ լսուեց այրի առաջից եւ ջրերի
երկրորդ ճղփիւն եւ ցոյց տուեց մի երկրորդ մարմնի
ծովս ընկնելլը։ Արդեօք Մարօն փրկելու, թէ նրա հետ
միասին ալիքների սառն ծոցում գերեզման գտնելու
համար էր որ Մուսօն իրան ծովը նետեց, այդ ոչ ոք
չիմացաւ, միայն մի առժամանակ ներքեւից դեռ լրս-
ում էին երկու խեղդուղների օրհասական հռնդիւն-
ները ջրերի աղմկին խառնուած։ շուտով այդ էլ դա-
դարեց։

Դահիճների կատաղութեանը չափ չը մնաց։ Գլխա-
ւոր որսերը նրանց ձեռքից ճողովը էին, ի՞նչ փոյթ
թէ մահու գնով։ ուստի նրանք իրանց վրէժինդրու-
թիւնը մնացածների վրայ թափեցին։ Խաւարի մէջ Արըն-
քարի վրայ սկսուեց մի պժգալի գործ։ արիւն էր հո-
սում։ Կիսակենդան վիրաւորները ծովս էին նետում
«Նզնվք քեզ, գաւաճան» գոռալով։ Ներքեւում, խաւարի
մէջ ոչինչ չէր երեւում, միայն ջրերն աղմկում էին
խեղդուղների օրհասական շարժումներից եւ լսում

էին՝ «Նղովը քեզ, դաւաճան» աղաղակները։ Ոչ ոք չը կարողացաւ խաւարից օգտուել եւ խոյս տալ աղաւուել։ Չը կար նաեւ Սրբէն։ Իր սեւ դաւաճանութեան այսպիսի ելքը սոսկումով պատեց նոյնիսկ դաւաճանին, եւ նա ժամ առաջ փախաւ, կորաւ խաւարի մէջ։

X

Անցան տարիներ։ Հարը չը հեռացաւ այն աշխարհից։ Նա այն աշխարհի մասն էր, նրա հարաղատ զաւակն էր, նրա միմն ու արիւնն էր։ Թշուառների և խեղճերի աշխարհ էր գո, որոնք չարիքի հետ, խեղճութեան հետ վաղուց, շատ վաղուց եղբայրացած ապրում էին։ Բայց չարը գոհ չէր, նա արեան ծարաւ ուներ։ Խեղճերն այդ էլ տուին, յուսազով թէ երբ ծարաւը յագենայ, կը հեռանայ իրանցից։ Բայց ոչ, չարիքը կուշտ խմեց և մնաց նոյն աշխարհում։ Նա հանգիստ էր առնում միայն Վայրենի մարդի մէջ նստած դապանը յոգնեց, ինչ զարմանք, երբ դաշտի գաղաններն էլ մարդի մսով յղփացան։

Սարերի և այրերի ծածկուածներից սմանք չեկան այլեւ, յաւիտենական քնով քնեցին ձիւների սառցէ ծոցի մէջ, ուրիշներն էլ գնացին պատմելու աշխարհին իրանց ցաւերը։ Խոկ մի խումբ խեղճեր էլ, որոնց համար մահու հաւասար էր հեռանալ իրանց պապերի հողից, իրանց հայրերի գերեզմաններից, վճռեցին չարիքի և խեղճութեան կրկին գաշն կապել՝ որ իրանք ապրելու, օդ չնչելու իրաւունք ունենան, խոկ նրանք էլ կուշտ լինեն։ Պայմանն ընդունուեց, խեղճերին ներուեց՝ մահից խոյս տալու իրանց յանդգնութիւնը և նրանք կրկին մտան իրանց տակաւին ծխտցող աւերակները։ պէտք էր ամեն բան նորից սկսել...

Դ... գիւղն էլ իջան միքանի հոգի, այդ գիւղի աւերակների մէջ էլ բահեր և մուրճեր երեացին։ Խըրճիթներ էին շինւում, կամաց-կամաց գիւղում ձայն ու

աղաղակ էլ լոռւեց, դաշտերն էլ հետզհետէ մշակուեցին, Աստծու տունն էլ նորոգուեց։ Հրաշքով փրկուած ծերունի հովիւը իր հօտի մնացորդն անտէր, անմխիթար չը թողեց, նա էլ եկաւ, Աստծու խօսքով պէտք էր զովացնել մխիթարութեան կարօտ սրտերը։ Եւ մարդիկ աղօթում և աշխատում էին, աշխատում և աղօթում էին։

Ո՞ւր էր մինչեւ այդ ժամանակ քաշալ Սրբէն, այդ ոչ ոք չը դիտէր, միայն նա էլ յայտնուեց մաշուած, ծերացած, խոր ընկած աչքերով, մռայլ ու անհանգիստ հոգով։ Անտէր տներ, անմշակ արտեր շատ կային. ինչո՞ւ մի խրճիթ էլ նա չը նորոգի, արտի տէր դառնայ, ապրի։ Եւ սկսեց. բայց բահի առաջին հարուածի հետ մոխրակոյտի տակից դուրս ցցուեց մի խանձուած դիակ, աչքերը ճոթուուած, շրթունքները քաշքշուած եւ ատամների սղմուած շարքերը բաց. զարհուրելի էր... Սրբէն թուաց թէ նոյն ինքը վրէժինդրութիւնն է այդպէս մարմին առել. վաղուց էր ինչ այդ պատկերը գիշեր ցերեկ հալածում էր նրան։ Նա բահը սոսկումնվ վայր գցեց ձեռքից եւ փախաւ։ Նրա ականջներում հնչում էր՝ «Նըզնվք քեզ» բառը։ Նա փախչում էր առանց յետ նայելու, փախենալով՝ մի գուցէ յետեւում տեսնի դիակի դէմքը, փախչում էր առանց հաշիւ տալու, միայն մի անյաղթելի պահանջից գրդուած։ Վերջապէս նա դուրս եկաւ դաշտը, թափառեց սար ու ձոր, թափառեց ամբողջ գիշեր։ Այդ ժամանակ նա միայն մի բան էր մտածում։ փախէլ որքան կարելի է հեռու ծովափի ժայռերից, հեռու արիւնոտ Արնքարից։ Բայց որքան մեծ եղաւ նրա սարսափը, երբ յանկարծ իրան դտաւ հէնց Արլնքարի ժայռերի վրայ։ Ինչո՞ւ էր եկել այստեղ, այդ ինչ պէս էր պատահել, նա չը դիտէր. միայն խաւարի մէջ ցցուած ժայռերը սարսափելի էին. դիակներ, դիակներ, շարանշարան կանգնած, մէկը միւսից աւելի մեծ, մէկը միւսից աւելի զարհուրելի, դարձեալ ճոթուուած աչքեր, բաց ատամներ, այրուած, խանձուած դէմքեր, բո-

լորն էլ սարսափելի, բոլորն էլ ահաւոր։ Սրբէն շտապով ծածկեց աչքերը, շուռ եկաւ, շտապեց հեռանալ. բայց հէնց նոյն բոպէին ալիքները զարկուեցին ժայռերին եւ բոլորը միասին քարերն ու ջրերը մի հսկայական հառաջանքի հետ՝ «Նզովք քեզ» ասացին։ Սրբէն գողաց, նա այժմ փակեց նաեւ ականջները, ի զաւր. ձայնը չէր դադարում, ուստի նա փախաւ կրկին, փախաւ դէպի հեռաւոր դաշտերը, հեռու, հեռու ծովափից, որպէս զի մոլորուելով ակամայ կրկին ծովափը դառնայ, Արքնաքարի ժայռի վրայ յայտնուի, ծովին նայի, ալիքների «Նզովքը» լսի, գողաց, սարսով և կրկին, քանի ոյժ ունի, փախչի դէպի դաշտերը։ Քանի քանի անդամ նա փախաւ այդ սարսափելի տեղերից, բայց ամեն անդամ մի աներեւոյթ զօրութիւն, հակառակ իր կամքին, անդիւտակցաբար, նրան դէպի ծովափը ըշեց. նա կրկին ու կրկին լսեց ալիքների «Նզովքը» եւ զարհուրելի ճիչ արձակելով՝ աչքերն ու ականջները փակած, դիզացած մազերով յետ դարձու ու փախաւ անյայտացաւ խաւարի մէջ։

Մօտ էր լուսաբացը, երբ տանջուած եւ ուժասպառ Սրբէն բաղիսեց ծերունի քահանայի գուռը։ Քահանան դուրս եկաւ. իր աւաշ կանգնած էր Սրբէն գողգողալով. նրա ատամներն իրար էին զարկուում. նա երերում էր, լուռ էր։ Զարմացած քահանան կասկածով նրան նայեց եւ հարցրեց.

—Ի՞նչ կայ, որդի։

—Տէր հայր, առաւօտեան ժամը չը պիտի՝ ասես, լուսաբացը մօտ է, դնանք ժամ։

—Կ'ասեմ, ապա չեմ ասի։ Բայց ինչու ես դողում. ինչը քեզ ստիպեց այսօր դալ ինձ արթնացնել։

—Ազօթել եմ ուզում, տէր հայր։ Արթուն էի, եկայ դուռը թակեցի. ազօթել եմ ուզում, գնանք... ժամ ասելու ժամանակ չէ. գնանք էլլիի։

Քահանան շուարած էր. Սրբէն ու այսպիսի բան. ի՞նչ էր պատահել Բայց եւ այնպէս նա դուրս եկաւ, թէեւ

դեռ առաւտօտեան ժամերդութեան համար վաղ էր երբ եկեղեցուն հասան, Սրբէն չը թողեց քահանային դուռը բանալ:

—Կեցիր, տէրտէր, ասաց նա, քահանայի աջը բըռնելով, ժամ ասելու դեռ ժամանակ կ'ունենաս, միքիչ վաղ է, այնպէս չէ... Գնանք հանգստարան, գերեզման ունեմ օրհնել տալու:

Սրբէի դէմքը սարսափելի էր, աչքերը խաւարի մէջ վառում էին, պահանջը տարօրինակ էր. գիշերուայ այդ ժամին գերեզման չեն օրհնում: Քահանան երկչուներից չէր, բայց այս մարդի վարմունքը չափից դուրս կառկածելի թուաց նրան. Սրբէն նրան ոչ թէ երկիւղ, այլ արգահատանք էր ներշնչում: քահանան զգում էր որ մի ինչոր ծանր վիշտ կրծում է նրա սիրտը:

—Որդիս, Սրբէ, ասա ինձ, ինչ է պատահել քեզ. դու տանջում ես, քո հոգին իւսովուած է, ախր ինչ գերեզման օրհնելու ժամանակ է. թող մնայ ցերեկով, իսկ այժմ ներս մտնենք եկեղեցի եւ պատմիր ինձ քո ցաւերը:

—Մեռնեմ քո աջին, տէրտէր ջան, աղաչում եմ, օգնիր, փրկիր ինձ, փրկիր... Ուր փախչեմ, ինձ ուտում են, խեղդում են, հալածում են, ես չեմ կաբող այլ եւս, դա իմ ուժից վեր է. հայր, դու գոնէ մի թող ինձ: գնանք, գնանք օրհնիր գերեզմանները, ուաքերդ ընկած աղերսում եմ:

Սրբէն ծունկ չոքեց, գրկեց քահանայի ոտները եւ սկսեց դառնագին արտասուել: Քահանան ապշած էր զարմանքից, բայց եւ սաստիկ զգացուեց: Այս մարդի անծանօթ վիշտը նրան ահագին թուաց եւ նա վճռեց գնալ նրա հետ՝ ինչ և պատահելու լինի: Հասան գերեզմանատուն, բայց Սրբէն շարունակում էր գնալ:

—Ուր ես գնում, ուր ես տանում ինձ այսպէս կէս գիշերով, կոչեց այս անգամ սարսափած քահանան, կանգ առնելով գերեզմանատանը:

—Այնտեղ, տէրտէր ջան, այնտեղ է գերեզմանը. արի աղաչում եմ, արի, դու չը գիտես, դու չես տեսել այդ գերեզմանները։ 0՝, ոչ ոք, ոչ ոք չի տեսել բացի ինձանից, արի կը տեսնես քանի՞ոն են...

Քահանան դարձեալ գնաց Հասան ծովափին եւ կանդ առան Արնքարի վրայ։ Դարձեալ քամի էր, դարձեալ ալիքները զարկուում էին ափերին, գոռում, որուտում, ոռնում ու հառաչելով ներքեւ գլորւում։ «Նզնվք, նզնվք քեզ» լսեց Արքէն ալիքների օրոտի միջից։ Նրա դողը սաստկացաւ, երերաց ու սարսափով բռնեց քահանայի այլ եւ միւս ձեռքը դէպի ծովը մեկնելով ասաց.

—Լսում ես, տէրտէր, այ նրանք են, գոռում են. այստեղ բոլորը գերեզման է, նա ցոյց տուեց Արնքարի տակ աղմկուող ալիքները. լսում ես... 0օ, դիշերն այսպէս միշտ դուրս են գալիս և «Նզնվք» են գոռում։ Ախր առանց քահանայի են թաղուել, սուրբ աղօթք չեն լսել... ես թաղեցի, մենակ ես... նրանք էլ դուրս են գալիս... նրանք էլ...

Բայց այդ ըսպէին կրկին եկան դիզացած ալիքները, կրկին զարկուեցին ափերին ահուելի շրփուցով։

—0՝, էլի գոռացին, լսեցիր, տէրտէր. գոռում են, գոռում են, լախիս են, լալիս. աղօթք են ուզում, սուրբ աղօթք, քահանայի աղօթք,—ասաց Արքէն սիրտ պատառող ձայնով և ականջներն ու աչքերը ծածկեց վերարկուի ծալքերի մէջ։ Քահանան սկսում էր վախենալ. նա չը գիտէր ինչ անել այս խելագարութեան հասած մարդի հետ. իսկ ալիքները շարունակում էին աղմկուել, շարունակում էին «Նզնվք» գոռալ։

—Աղօթիր, ճշում էր Արքէն, թաղման աղօթք ասա, թող լուեն, թող չը գոռան, չը նզնվեն, այնպէս չէ. ախր որ թաղես, էլ չեն գոռայ, խօսիր էէ... վայ, աղօթիր, աղօթիր էէ... դէ աղօթք ասա, թող հանդըստանան, յուսահատ կերպով գոչում էր Արքէն։

Քահանան այս անդամ սարսափեց. նա ոչինչ չէր

հասկանում, բայց զգում էր, որ մի դարհուրելի դաղա-
նիք կար այս մարդի խօսքերի մէջ:

—Որդիս, Սրբէ, տուն դառնանք, գու հիւանդ ես,
դնանք քնիր հանգստացիր...

Դարձեալ ալիքները զարկուեցին, դարձեալ Սրբէն
լսեց՝ «Նղնվը քեզ, նղնվը»:

—Ազօթիր, ճշաց Սրբէն... հոգւոց ասա, հոգւոց
ասա:

—Ում համար հոգւոց ասեմ, որդի, չէ որ այստեղ
գերեզման չը կայ:

—Գերեզմաններ կան, շատ կան այստեղ, այ հէնց
այստեղ... Դու չես իմանում, դէհ լսիր, ես ասեմ էհ, որ
ասեմ կը ներթան... Տէրտէր, Յուղային չը ներեցին, համ...

—Զէ, որդի, Յուղային ինչպէս կարելի էր ներել.
նա մատնիչ էր:

—Իսկ ինձ կը ներես, այնպէս չէ...

—Կը ներեմ, զաւակս, թողութիւն կը տամ. ասա,
պատմիր յանցանքդ:

—Հապա եկաք տեղաւորուեցիք, շնչաք, նստե-
ցիք, հէչ չը հարցըիք, թէ ուր են Զօքանենց Մուսօն,
Սհօփ Մարօն, Կուզիկենց Մխօն, Զուլհակենց Մարտօն,
Խողկոտենց Մանօն, ուրիշ մանր ու պետ, ուր են, գի-
տես... Ա՛յ, այս քարի տակ այր կայ, այն օրը նրանք
այստեղ էին ծածկուած, ես իմացայ, ես տեղերը յայտ-
նեցի, ես մատնեցի՝, խաբեցի... դուրս եկան այրից եւ
նրանք կոտորեցին բոլորին, ծովս ածեցին, այստեղ, այս
քարի տակ ձգեցին. թողութիւն կը տան, տէրտէր...
Յուղային կը ներթան, թողութիւն կայ մատնիչին...

—Ո՛չ, մատնիչին թողութիւն չը կայ, ասաց քահա-
նան վշտացած:

—Զը կայ...

—Զը կայ:

Ալիքները նորից զարկուեցին, «Նղնվը քեզ, նղնվը»
գոռացին. Սրբէն լսեց, էլ չսպասեց, նա մի գերմարդկա-
յին ճիչ արձակեց եւ ահագին թափով ժայռի կատարից

վայր նետուեց ծովի անդունդների մէջ։ Զոհերին ընդունող ալիքները դահճին էլ ընդունեցին իրանց ցուրտ ծոցում։

Քահանան այս անգամ մօտեցաւ ծովափի շրթունքին, վշտացած հոգով բարձրացրեց դողդոջուն ձեռքը, խաչակինքեց ալիքների տակ թաղուած նահատակների մարմինները եւ «հոգւոց» ասաց։ Միքանի կաթիլ արցունքներ թափուեցին նրա ծեր աչքերից ալեզարդ միրուքի վրայ, ապա նա յետ դարձաւ եւ առաւտեան ժամը սկսեց։ Նրա ձայնն այդ առաւտօտ աւելի էր գոզում եւ բառերը դուրս էին գալիս բերանից վշտոտ հնչիւններով։

Առում են որ մինչեւ այժմ էլ ծովում, այնտեղ ուր ընկած է դաւաճանի մարմինը, ջրերի խաղաղ թէ խոռված ժամանակ, ալիքներն անդադար տակն ու վրայ են լինում, պտոյտ են գալիս, եռում, ազմկւում, ասես թէ դժգոհ են որ իրանց սուրբ ծոցի մէջ թաղուած է դաւաճանի մարմինը նահատակներին մօտիկ։

Եւ մինչև այժմ էլ նրանց ահաւոր գոռոցի մէջ լսում են՝ «Նզ՞վը քեզ, նզ՞վը» աղաղակները։

Ա. ԱՀԱԲՈՆԵԱՆ

ԽՐԻՍԻ ՑԽՇՈՂՈՒԹԻՒՆԵՐԻՑ

I

Դ է Պ Ի Վ Ե Ր

Ես սիրում էի քարձանալ վերեւ,
Դեպի սարալանց վաղորդեան զովին.
Այնտեղից դիմել երկինք ու արեւ,
Այնտեղից նայել ընդարձակ ծովին։

Այնտեղ իմ սիրած ընկուզենու տակ,
Թաւիս դալարում քարմ օդ ըբնչելով,
Ես զմայլում էի, խոկում համարձակ,
Հոգով բնութիւնն համայն զրկելով։

Այնտեղ ե'ւ սիրեն էր երազում ազատ,
Ե'ւ ազատ օրհնում լոյս-երկնակամար.
Խանդը էր մափո՞ւր, տենչըս— անարա՞ս,
Որպէս լեռների կուսական դալար։

Այնտեղ իմ միհմբ—արծիւ սրբաթե՛ւ,
Իմ զգայմունիք—նման խո՞ր ծովին...
Ախ, ո՞րքան խաղը էր քարձանալ վերեւ,
Դեպի սարալանց վաղորդեան զովին։

II

Ա Ս Տ Հ Ի Կ

Հարավի լազուր երկնակամարում
Գիշերն հասնելիս՝ աչս էր գըրաւում
Մի սիրուն աստղիկ... Նորան նայելիս,
Քե՛զ էի յիշում, ա՛յ իմ նազելիս*

Եւ դո՞ւ էլ սըրտիս երկներում գաղտիկ
Վառ շողում էիր, որպէս այն աստղիկ.
Ե՛ւ գիշերային անդորր հովանում
Քե՛զ հետ էր հոգիս անյագ գրոյց անում...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՀԱԶԱՐ ԼՃԵՐԻ ԵՒ ԿՂՋԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ *)

IV

Ազգային ինքնաճանաչութեան և երկրի զարդացման՝ ուսումնարաններից պակաս չի նալաստել և տեղական մամուլը:

Ինչպէս յայտնի է, անցեալ երեսնական թուականներին ազգայնական շարժումը, որ ուժգին ալիքներով անցաւ եւրոպայի վրայից, գործունէութեան զարկ տուեց և Ֆինլանդիայում: Այստեղ այդ շարժումը, ինչպէս և ամենուրեք, կայանում էր նրանում՝ որ ձգտում էին գրել և կարդալ մայրենի լեզուով, ուսումնասիրել իրանց անցեալը և ներկան, ժողովուրդը, որի աւանդութիւնները զրի էին առնում և հրատարակում: Ի. եթէ այժմ ֆինական զիտութիւնը կանգնած է համարեա մի մակերեսոյթի վրայ եւրոպականի հետ և արդէն որոշ հետեանքների է եկել պատմութեան և լեզուագիտութեան ասպարիցում, այդ բոլորին նա պարտական է երեսնական թուականների համեստ գործիչներին: Բացի պատմութիւնից և լեզուագիտութիւնից լաւ ուսումնասիրուած է և ֆին ժողովրդական բանաստեղծութիւնը: Ֆինլանդական սուու կուլտուրական այդ գեղեցիկ ձգտումները բգիսում են միևնույն ազբիւրից՝ ազգային ինքնաճանաչութիւնից: Հրապարակախօս Սնելման, «Կալէփալա» երգերի ժողովող լենրօտ և յայտնի բանաստեղծ Ռունէրէրգ եղել են ժողովրդի առաջին զեկավարներ այդ շարժման մէջ:

Ֆինլանդիայում այդ ժամանակ ազգաբնակութիւնը բաժնուած էր երկու միմնանցից տարբեր գասակարգերի՝ վերին, որ ընդունել էր շվեդական քաղաքակրթութիւնը և միշտ խօսուում էր շվեդերէն լեզուով, սոորին, բուն ֆին ժողովուրդը, որ խարիսխութեամ էր տգիտութեան ու խաւարի մէջ և որի լեզուն գոեհիկ էր, գրականապէս անզարգացած:

Սակայն ֆին ազգասէրներն աշխատում էին ժողովրդական լեզուն բարձրացնել, ուստի հրաւիրում էին այն ժամանակուայ ինտելիգենցիային՝ ուսումնասիրել ֆինական լեզուն և ժողովր-

*) «Մուրճ» № 8.

դին մօտենալ: Այդ հրաւէրին շվեդախօս Փինլանդացիներն առարկում էին, թէ «ժողովրդին մօտենալ» կարելի կը լինի հեշտութեամբ ոչ թէ «բարբարոս» Գին լեզուի, այլ արդէն կուլտուրական դարձած շվեդական լեզուի միջոցով: Ֆին ազգասէրները պատասխանում էին, թէ առանց իմանալու ժողովրդի լեզուն, անկարելի է ժողովուրդն ուսումնասիրել և նրան մօտենալ: —«Ժողովրդի լեզուն,—ասում էր Սնելման,—նրա ոգու անդրադարձումն է: Անկարելի է մի ժողովուրդ քաղաքանապէս կրթել, քանի որ նրա ուսումնարաններում և դատարաններում իշխում է օտար լեզուն»:

Ի հարկէ ֆիները լաւ էին հասկանում որ անկարելի է միանգամից քաղաքացիական իրաւունքներ տալ իրանց լեզուն, երբ նա գեռ չէ զարգացած և մշակուած: Նախօրօք պէտք է նրա վրայ շատ աշխատել լեզուաբանական և գրականական աեսակէտից: Ֆինական լեզուի զարգացման ըիչ չէ նպաստել և մամուլը:

Իսկական մամուլի հիմնադիրը, Փինական Արծրունին, Սնելմանն է: Մինչեւ այդ՝ զանազան ժամանակներում գոյութիւն են ունեցել միքանի թերթեր, բայց դրանք իսկական մամուլի գեր չէին կատարում: Օրինակ, Լիսերիուսի հրատարակած թերթում լոյս էին տեսնում միմիշայն գիւղատնտեսութեան և անանապահութեան վերաբերեալ յօդուածներ. մէկ-մէկ զետեղում էին դասախոսութիւններ աշխարհագրութեան մասին և բժշկական խորհրդածութիւններ:

Սնելման 1844 թուականից Կուօպիօ քաղաքում սկսում է հրատարակել միաժամանակ երկու լրագիր. «Հողագործի բարեկամ» ֆին լեզուով և «Սայմա»—շվեդերէն: Առաջինը յատկացրած էր հասարակ ժողովրդի համար, իսկ երկրորդն ի նկատի ունէր ինտելիգէնտ հասարակութիւնը, որին ժամանակներում ֆին լեզուն անծանօթ էր: «Սայմա թերթի դրօշակի վրայ գրած էր՝ «Ֆին ազգի վերածնութիւն»: Այդ նշանաբանն իրագործելու նպատակով Սնելման, ինչպէս և իր ընկերները, ցանկանում էր ամենից առաջ ֆին լեզուի նշանակութիւնը բարձրացնել: Նա պահանջում էր, որ այդ գուեհիկ լեզուն դառնայ կրթուած դասակարգի խօսակցութեան լեզուն, որ նրան մտցնեն դպրոցները, համալսարանը, դատարանները: Բացի դրանից նա իր թերթում արծարծում էր և այլ բազմաթիւ խնդիրներ: Ժողովրդական և միջնակարգ կրթութիւնը, համալսարանը, մամուլի գրութիւնը, վաճառականութիւնը, արդիւնաբերութիւնը, գիւղատնտեսութիւնը, աղքատների հողատարութիւնը, հողագուրկ գիւղացիների ցաւերը, օրէնսդրութիւնը, նայն, նայլն,

—ահա նիւթեր, որոնց մասին միշտ գրում էր Սնելման:

Սնելմանի բարի օրինակին են հետեւում ուրիշները, և առաջ մէկը միւսի ևտեսից երևան են գալիս բազմաթիւ թերթեր, որոնցից ամենանշանաւորն են եղել և են՝ «Դազբալար», «Նիւա Պրէսէն» «Ուզի Սուոմէտար», «Պէյզվալէտիւ: Վերջին լրագիրն ամենից առաջադիմական և գենուրատական ուղղութիւն ունի. Նրան աշխատակցում են երիտասարդ ֆին գրողները:

Ֆինլանդիայում 1898 թուականին գուրս էին գալիս 186 հատ պարբերական հրատարակութիւններ, այսինքն մի հրատարակութիւն 13 հազար բնակչի համար: Այդ հրատարակութիւններից 20 ամենօրեայ են, 21 շաբաթը երեք անգամ են գուրս գալիս, 32՝ երկու անգամ և 32՝ մի անգամ:

Տարեց տարի շատանում է ոչ միայն հրատարակութիւնների թիւը, այլև ընթերցողների քանակութիւնը: Հէլսինգֆորսում երկու լրագիր ամեն մէկն օրական ցրւում է 12 հազար օրինակ. ուրիշները՝ 7 հազարից մինչև 8 հազար: Գաւառական թերթերի թւում կան այնպիսինները, որոնք հրատարակում են 5—7 հազար օրինակ: Պարբերական հրատարակութիւնների այդպիսի տարածուած լինելը մինլանդիայի պէս ոչ-հարուստ մի երկրում կարելի է միայն չնորհիւ բաժանորդագնի էժանութեան: Մայրաքաղաքի ամենօրեայ մեծ լրագիրների տարեկան գինն է 9—6 ոռոբլի. գաւառական թերթերինը՝ 5—4 ոռոբլի:

Տեղական թերթը կարող էք գանել համարեա ամեն մի խրճիթում: Աւելի ունենոր գիւղացինները բերել են տալիս և մայրաքաղաքի մի թերթ. երբեմն միքանի հոգի հաւաքական ոյժերով են բաժանորդ գրւում այդպիսի լրագրին:

Լրագրի ազգեցութիւնը մտել է ժողովրդի ամենաստորին խաւերը, որոնցից լրագիրները յետ են ստանում ոչ միայն գրամական միջոցներ, այլև համակրանք գէպի իրանց հայեացքները: Դրան ապացոյց է այն փաստը, որ 1898 թուականին զանազան քաղաքներ Սէյմի պատգամաւորները ընտրեցին Հէլսինգֆորսի ամենօրեայ լրագիրների բոլոր խմբագիրներին:

Առանձին ժողովրդական լրագիրներ այստեղ չը կան, այլ հասարակ ժողովուրդը կարդում է նոյն լրագիրները, ինչ որ և ինտելիգենցիան:

Թէ որ աստիճան լրագիրն անհրաժեշտ պահանջ է դարձել ֆին ժողովրդի համար, չոյց է տալիս այն գրութիւնը, որ գիւղական ներկայացուցիչները մատուցին ֆինլանդական կառավարութեան «Viipuriin Sanomat» թերթի գաղարման առիթով: Այդ գրութեան բովանդակութիւնը մօսաւորապէս հետեւալն է.

«Օգուտ քաղելով այն իրաւունքից, որով մեզ թոյլա-

արուած է ամեն անդամ դիմելու Ձեզ՝ ժողովրդի կենսական օգուտները պաշտպանելու նպատակով, մենք Կարելիայի նահանգի գիւղացիներս համարձակուում ենք խոնարհաբար ներկայացնել այս գուութիւնը։ Մեր սրբազն պարուն ենք համարում հաղորդելու Ձեզ այն խորին վիշար, որ հասաւ ոչ միայն մեզ, այլև Կարելիայի ամբողջ աղջաբնակութեան՝ չնորհիւ «Վ. Տ.» լրագրի չորսամսեայ գոտարեցման։

«Այդ լրագիրը 9,500 օրինակով մուտք էր գործել ժողովրդի ամենախոր շերտերը և իսկական հոգնոր մնունդ էր մատակարարում ընթերցողներին։ Աւելի ցաւալի կերպով ազգեց մեզ՝ վիրուրդ նահանգի գիւղացիներիս վրայ, որ անյայտ պատճառներով տանում ենք անարժան պատժի ծանրութիւնը։ Լրագիրները, մասնաւորապէս «Վ. Տ.»-ը, չնորհիւ իրանց տարածած զիտութեան, մեզ համար գարձել են անհրաժեշտ պահանջ և որոնց բացակայութեամբ մենք անկարող կը լինենք հետեւել ճշշմարտութեան և անդիտակ կը մնանք մեզ անմիջապէս հետաքրքրող հասարակական գործերի մասին։ Այդ բոլորն իմանալը անհրաժեշտ է ամսն մի օրինապահ քաղաքացուն, որպէսզի ևա, իբրև հասարակութեան մի անդամ, կարողանայ իր պարտականութիւնները կատարել։ Հակառակ գէպքում կարող են շատ սիւլ հասկացողութիւններ առաջանալ։

«Մեզ կ'առարկեն, թէ գաղարած թերթի փոխարէն ձեռք բերէք ուրիշները։ Բայց այդ շատ դժուար է, որովհետև գաղարած լրագրի բաժանորդները զիսաւորապէս չքաւորներ են և անկարող են նորից վճարել, ար արդէն տարուայ բաժանորդացինը սկզբում տուած են։ Այդպիսով՝ պատժելով թերթը, գլխաւոր ծանրութիւնն ընկնում է աղքատ գիւղացիների վրայ։ Այդ պատիժը մեզ համար աւելի է զգալի, որովհետև միմիայն այդ լրադրից ենք տեղեկութիւններ ստանում մեր համայնական և հասարակական գործերի մասին։ Նրա մէջ զետեղուած են լինում նաև յայտարարութիւններ՝ դէպի համայնքն ունեցած մեր պարտականութիւնների մասին։ Արդ՝ եթէ մենք մնանք առանց այդ հաղորդութիւնների և յայտարարութիւնների, — զրանից կարող է ծագել վնաս՝ չնորհիւ մեր ակամայ զանցառութեան, որին կը հետեի և պատիժը։

«Ի նկատի առնելով այդ բոլորը, մենք ներքեւ սառարապրող ներս համարձակւում ենք ոչ միայն մեր կողմից, այլև Կարելիայի ամբողջ աղջաբնակութեան բերանից խնդրել միջամտելու, որ «Վ. Տ.» լրագրի պատիժը վերացնուի կամ զոնէ թեթեացնուի։ Մենք լիայոց ենք, որ դո՞ք կը յարգէք մեր խնդիրքը, որովհե-

տե՛ համոզուած ենք, թէ լրագրի մէջ սպրտած մի անգոյշ խօսքի համար նրան այնպէս չէք պատժի որ այդ պատիճն արտայայտուի նրա ընթերցողների կենսական պայմանների և կարիքների վրայ»:

Մի ուրիշ դէպք: Երբ «Պէյվալէհտի» ֆինական լրագրի խմբագիր կրկօն թողնում էր իր պաշտօնը, միքանի հարիւր հոգի, որոնց թուռմ և շատ տիկիններ, նրմն պատուեցին մի ճաշկերոյթով: Ճաշի ժամանակ ասացին շատ ճաւեր, ի միջի այլոց և Սէյմի պատգամաւոր Առւլէն՝ «Պարբերական մամուլը և ժողովուրդը իրարից այնքան մօտ են, —ասաց նա, —որ առաջինը արտայայտում է միայն այն, ինչ մտածում է վերջինը: Այն, աշխարհումն ոչ մի տեղ, կարծեմ, լրագիրների և ժողովը դի միջն յարաբերութիւնն այնքան լաւ չէ, որքան մեղ մօտ Զէ որ մեր լրագիրներին, փառք Աստուծոյ, անկարելի է կաշառել»:

Ամեն տարի Ֆինլանդիայում կայանում է հրապարակախօսների կօնգրէս: Այս տարի նա կայացաւ. Արօ քաղաքում, ուր հաւաքուած են եղել մօտ քառասուն հոգի, որոնց թուռմ կային շվեդախօս և ֆինախօս լրագիրների ներկայացուցիչներ տարբեր ուղղութեամբ: Այս փաստը պերճօրէն ցոյց է տալիս որ բոլոր ֆինլանդական հրապարակախօսները, առաւել ևս այս վերջին ժամանակները, ունեն միատեսակ թանկագին շահեր: Կօնգրէսում քննուում էին 9 հարց, ինչպէս օրինակ, թոշակ նշանակել միքանի հրապարակախօսներին արտասահման ուղարկելու, չորհակալութիւն յայնել ազգի այն համակրանքի համար, որ վերջին ժամանակներն ամբողջ ֆին ժողովուրդը ցոյց էր տալիս նրանց. Ներկայացուցիչներ ընտրել ֆինլանդական մամուլի կողմից՝ մամնակցելու: Պարիզի ցուցահանդէսին, ևայն, ևայն: Նոյն ժողովում յայնի եղաւ, որ անցեալ տարուայ ընթացքում հաւաքուել է յօդուտ «Մամուլի Փօնդի» մօտ 145 հազար մարկ: Այդ գումարն ահազին է, ի նկատի առնելով երկրի չքաւորութիւնը և ազգի փաքրութիւնը:

Մամուլի հետ զուգընթացաբ զարդանում է և ֆինլանդական գրականութիւնը, մի զրականութիւն, որ ապրում է երկու լեզուի հիւթերով՝ ֆիներէնի և շվեդերէնի:

Բուն ֆինական զրականութեան նախահայրը համարւում է եպիսկոպոս Ազրիկօլա, որ թարգմանում է և 1548 թուականին հրատարակում ֆին լեզուով աւետարանը: Յետոյ մինչև անցեալ դարի սկիզբները այդ դրականութիւնը համարեա ոչինչ չէ արտազրում, մինչև որ առաջին ֆին պատմաբան Պօրտան իր աշխատութիւններով չէ զարթեցնում ազգային թմրած զգաց-

մունքը։ Այդ վառլոռն աղջասէրը մեծ աղդեցութիւն ունէր համալսարանական երիտասարդութեան վրայ. նա ունեցաւ իրան հետևողներ, որոնց մասին ժամանակակից շվեդախօս ֆինլանդացիներն ասում էին, թէ նրանք ենթարկուած են ինչոր «մանիայի» դէպի այն ամենը, ինչ ֆինական է։ Այդպիսի ֆինամոններն ամենայն ջանասիրութեամբ ուսումնասիրում էին ֆինական լեզուն, հաւաքում էին ժողովրդական երդեր և նախնեաց յիշատակարանները, պարապում էին երկրի աղջագրութեամբ, ևայլն, ևայլն։

Երգեր հաւաքուզներից մէկն էլ ելիաս Լենրոսոն էր, Փին նոր գրականութեան հիմնադիրը։ Որովհետև այդ գործիչը մեծ մասնակցութիւն է ունեցել Գին լեզուի և գրականութեան զարգացման գործում, ուստի աւելորդ չմնք համարում միքիչ երկար գրել նրա գործունէութեան մասին։

Լենրոսը ծնուել է 1802 թուականին մի աղքատ ընտանիքի մէջ, Նիւլանդիայում։ 1822 թ. նա մանում է Արօ քաղաքի համալսարանը, որի բժշկական ֆակուլտէտը վերջացնելուց յետոյ, իբրև գաւառական բժիշկ, բնակութիւն է հաստատում հիւսիսային Ֆինլանդիայում, իսկ 1853 թ. դասնում է Փին լեզուի պրօֆէսօր Հէլսինգֆորսի համալսարանում։ 1862 թ. նա թողնում է այդ գործունէութիւնը և տեղափոխուում է հայրենի Սամատի գիւղը, ուր և մեռնում է 1884 թուականին։

Լենրոսոն առաջին անգամ նկատում է որ Փին ժողովրդական երգերի մէջ կայ մի ինչոր ընդհանուր կապ։ Նա անդըրդուելի հաստատամտութեամբ, երկար տարիների ընթացքում, հասարակ զիւղացու չորեք հագած, պարկը մէջքին չափչփում է ամբողջ Ֆինլանդիան, հաւաքում է բոլոր երգերը, որոնցից և կազմում է ներքին կապ ունեցող մի հերոսական պօէմա «Կալէվալա» անուան տակ (Կալէվալա՝ Կալէվայի երկիր. Կալէվան Փին նախահայր գիւղազն է)։

Ամրող երկը կազմուած է 22,800 տողից։ Կալէվալայի բանաստեղծական գեղեցկութիւնն ընդհանուր զարմանք յարուցեց ընթերցող հասարակութեան մէջ։ Գերմանայի յայտնի լեզուագէտ Գրիմմ հետազօտել է այդ պօէման և երեակացութեան հարստութեան ու բնութեան ճշգրիտ նկարագրութեան տեսակէտից։ Նրան մի շարքում է զրել Հոմերոսի Ողիսականի հետ։ Պօէմայի զլսաւոր զարափարը՝ թշնամութիւնն է Փիների և լոպարների միջն, ինչպէս Հոմերոսի մէջ՝ յոյների և տրովատացիների թշնամութիւնն է։ Թշնամութեան կոռւածաղիկը և զեկը է հիւսիսի մի զեղեցկուհի, որի ձեռքը իննդրելիս են եղել շատ

Փին հերոսներ: Բերենք այդ պօէմայի կարճառօտ բովանդակութիւնը:

Յայտնի ծեր երգիչ իմաստուն Վէյնէմէյնէն աշխատում է պսակուել Ային երիտասարդ գեղեցկուհու հետ, բայց վերջինս յուսահատութիւնից ընկնում է ջուրը, չուզենալով ծեր ամուսին ունենալ: Այն ժամանակ Վէյնէմէյնէն իր ընկերներ իլմարինէնի և Լէմիկէյնէնի հետ զնում են Պոյոլա (Լապլանդիա) կոտիարդական աշխարհը, ուր ապրելիս է լինում մի չնաշխարհիկ գեղեցկուհի և ի ինդրում են նրա ձեռքը: Գեղեցկուհին համաձայն է ամուսնանալ եկուորներից նրա հետ, որ կը կատարէ յաջողութեամբ իր առաջարկած գժուար քաջագործութիւնները, գըլիաւորապէս՝ ձեռք ընթել Սամզօ թալիսմանը (թէ ինչ էին հասկանում հին ֆինկրը Սամզօ անուան տակ, որա մասին մինչև այժմ զիտնականները վիճում են, բայց առհասարակ են թաղրում են, որ Սամզօ նշանաբան է բախտի և բարեկեցութեան): Վէյնէմէյնէն անյաջողութեան է հանդիպում, Լէմիկէյնէն սպանուում է և գեղեցկուհուն տիրանում է բախտաւոր իլմարինէն: Սպանուածի մայրը դուրս է գալիս տնից և իր որդուն փնտրում:

«...Նորից վաղեց մայրը՝ իր կորած որդուն վճարելու Շրջագայում էր միջին անտառները, նայում էր ճահիճները, բարձրացնում էր ահապին քարեր, փնտրում էր ջրի մէջ, փորում էր հողը, հարցուփորձ էր անում ժայռերից, լեռնային կածաններից, հարցնում էր լուսնից, սակայն ոչ ոք չէր կարողանում ասել, թէ ինչ պատահեց որդու հետ: Հածարկենին ասաց, որ ինքն էլ չափաղանց վիշտ տնի, ուսար ժամանակ չունի ուրիշների մասին մտածելու, և որ ինքը չէ իմանում ոչ օրը, ոչ ժամը, երբ չար մարդիկ կը դան և իրան կը կտրեն վառելափայտի համար: Կածանն ասաց, որ իրան խիստ ծանր է գալիս մարդկանց ու կենդանիների քայլերը: Նոյնիսկ լուսնեակը գանգատուում էր, որ իրան վիճակուած էր մենմենակ սաւառնել երկնակամարի վրայ, փայլել ցուրտ ժամանակ, իսկ ամառուայ տաք ու լոյս գիշերներին թագ կենալ: Միմիայն արեգակը, որի պայծառ հայեացքից ոչինչ չէ խուսափում երկրի երեսին, միայն նա, ճաճմնչափայլը, խղճաց թշուառ ու կրակ մօրը: Արեգակից նա իմացաւ, որ իր սիրած որդին դաժան մահ է ստացել կատաղի ջրվէժի խորքերում»:

Մօր արցունքները կենդանացնում են Լէմիկէյնէնին, որ համառ է հարսանիքի խնճոյքին, վէճ է սկսում տանափրոշ հետ և նրան սպանում: Վախենալով սպանուածի ազգակամանների վրէժինդրութիւնից, նա Վէյնէմէյնէնի հետ փախչում է դէպի

իրանց երկիրը, նախօրօք հետները վերցնելով Սամազօն։ Ճանապարհին Վէյնէմէյնէն ձկան ծնօտից պատրաստում է Շկանտելէ։ և նրա լարերից այնպիսի սրտառուչ ձայներ է հանում, որ արտասուել է տուիս շրջապատողներին։ Դեռ իրանց երկիրը չը հասած, Լօդի աշխարհի բնակիչները ընկնում են նրանց ետևից, հասնում են և սկսում է կռիւր, որի ժամանակ թալիսմանը ընկնում է և կտոր-կտոր փշրւում։ Մի կտոր ընկնում է ծովը, որի ալիքները տանում հասցնում են Կալէվալայի, այսինքն՝ Ֆինլանդիայի տիկնրը։ Այսուհետեւ երկիրը սկսում է ծաղկել և հարըստանալ, որին քիչ չեն նպաստում և Վէյնէմէյնէնի իմաստութիւնը և ոյմը։ Մի անգամ Վէյնէմէյնէն կորցնում է իր կանուելէն։ Երկար վնարելուց յետոյ նա յուսախաբ վերադառնում է տուն։

«...Անցնում է անսառը, հասնում է մարգագետնին և տեսնում—կանգնած է մի մատաղահաս, վայելչահասակ, կանանչասազարթ հաճարկենի. տնքում է խեղձը, լալիս է չար բախտը։

—Ի՞նչ է պատճառը քո վշտի, սիրելի հաճարկենի, —հարցնում է Վէյնէմէյնէն։ Ո՞վ կարող էր քեզ վիրաւորել, քեզ նման երիտասարդ գեղեցիկուհուն։

Հաճարկենին պատասխանում է։

—Դառն է իմ վիճակը՝ տանջանքներից մաշուել եմ ես։ Կը գայ գարունը, ամենքին զուարձութիւն, ամենքին ուրախութիւն կը քերէ, իսկ ինձ՝ վիշտ։ Կը գան աղջիկները՝ կը քաղեն իմ ճիւղերը։ Մօտ կը վազեն երկւաները՝ կը վիրաւորեն իմ մարմինը սուր դանակներով, կը խմեն իմ անոյշ արիւնը։ Հովիւները կը գան՝ կը պոկեն ինձնից իմ կեղեր, կը հիւսեն, անխիզ մարդիկ, տրեխներ և կողովներ։ Ամառը նրքան աւելներ կը կապեն իմ ճիւղերից... Ո՞հ, միշտ դողում եմ։ Զմենը, երբ երկիրը կը ծածկուի սպիտակ սաւանով, կանգնած կը լինեմ ես մենմենակ այս մարգագետնի վրայ, մերկացած հողմի տարափից, դողալու եմ ցրափից և ամօթխածութիւնից։ Ոչ ոք չէ իմանում իմ տանջանքների մասին, իսկ ես չառ կը տուժեմ, մինչև որ կը գան մարդիկ, ինձ կը կտրեն սուր կացնով և իբրև վառելափայտ կը տանեն այրելու իրանց օջաղներում։

—Մեծ է քո վիշտը, սիրելի հաճարկենի։ Այս անգամ քեզ չին այրի։ Ես քեզ կը տամ մի այլ կեանք, —ասաց Վէյնէմէյնէն և երգնց. «Դարդ մի անի, հաճարկենի. մի կողմ զցիր քո աըխրութիւնը։ Ես ուզում եմ լինել բարի և քեզ սիրով տանել մեր տուն։ Կը սարքեմ քեզնից մի կանուել։ Թող ամենքն ուրախանան, միշտ-հանսապաղ քո ձայներից մարդիկ խնդան և զուարձանան։ Դէն կը քշես թախիծ ու վիշտ, հոգի կը տաս տկար մարդուն

և քաջութիւն՝ ընկճուածներին. կ'անդրագառնան կնոջ սրտում
քո ձայները միշտ հմայուն»:

Եերունին շինեց բազմաչարչար հաճարկենուց մի նոր կան-
տելէ: Պակասում էին միայն լարերը: Դուրս եկաւ տնից Վէյ-
նէմէյնէն, ճանապարհին հանդիպեց մի երջանիկ հարսնացուի.
Խնդրեց նրանից միքանի մազ նրա գանգուրներից, որոնցից և
պատրաստեց լարեր: Երբ տաւիղը բոլորովին շինած էր և լա-
րած, նստեց ծերունի երգիչը քարի վրայ, դրեց տաւիղը ծնկնե-
րին և սկսեց փորձել իր նոր կանտելէն: Հրաշալի, աննման ձայ-
ներ լսուեցան այդ խաղաղ երեկոյն կալէվալայի ափերին:
Նրանք արտայայտում էին և՛ ուրախութիւն, և՛ տիրութիւն: Հա-
ւաքուեց ժողովուրդը՝ մեծ և փոքր, տղամարդ և կին, կայտառ
երեխաներ, ամենափոքրիկ աղջկերք: Շրջապատեցին նրանք ծեր
երգչին—ուրախութիւնից քարացածի պէս կանգնած, ժպտում
էին արտասուզն աշքներին: Զը կար մի կենդանի արարած, որ
չը գրաւուէր այդ ձայներով՝ ամեն ինչ լսում էր, նոյնիսկ ա-
պառաժները, մութ ծմակները—զրանք էլ մասնակցում էին
ընդհանուր ուրախութեան: Հաճարկենիները կորացրին իրանց
գանգրազարդ գլուխները՝ վախենալով մի թեթև ձայն բաց
թողնել. մեծապանձ սօճիները և վայելչակազմ եղենիները հա-
ւանութեամբ շարժում էին մութ կատարները, լոեցին թոշուն-
ներն անտառում, իսկ դաշտերում միմեանց գրկախառնում էին
ծաղիկները»:

Զը նայած հերոսական քաջագործութիւններին, Վէյնէմէյ-
նէն ստիպուած է լինում, սակայն, զիջանել Մարիամի որդուն
(Քրիստոսին)` չուզենալով իշխանութիւնը նրա հետ բաժանել.
իմաստուն երգիչը նաւակի մէջ նստած հեռանում է երկրից:
Նա խաղաղ սրտով է թողնում կալէվալան, մասածելով որ նրա
համար արել է ամենը, ինչ որ կարողացել է, այսինքն՝ սովո-
րեցրել է իր ժողովրդին երկրագործութիւն և զանազան ար-
հեստներ, որոնցով առաջ են գալիս երջանկութիւն և բարեկե-
ցութիւն. սովովեցրել է կանտելէ նուագել և երգել: Իր սեփա-
կան կանտելէն և քաղցրահնչիւն երգերը նա կտակում է սիրե-
ցեալ ազգին:

«Կալէվալա» պօէմայի հրատարակութեամբ հաստատ հիմք
է դրւում ֆինական նոր գրականութեան:

Այն ժամանակ, երբ լենրօտը ֆիներին ծանօթացնում էր
իրանց ժողովրդական բանաստեղծութեան հետ, նրա ժամանա-
կակից լունէրէրգը հոչակ էր ստանում իրրեն աղքային բանաս-
տեղծ: Լունէրէրգը քնարով էր արթացնում ֆինլանդացիների
նիրհող ազգասիրութիւնը: Նրա ժողովրդականութիւնը գլխաւո-

բապէս հիմնուած է «Ենթասպայ Ստօլի պատմուածքը» վերնագիր կրող պօէմայի վրայ։ Սա՝ ազգասիրական երգերի մի շարք է, որ դրուատում է 1808—1809 թուականների կատարած հայրենիքի պաշտպանութիւնը։ Այդ երգերից շատերը ձայնագրուած են երգեցողութեան և երաժշտութեան համար, իսկ նրա նախերգաննքը՝ «Վօրտ-Լանդ» (հայրենիք), դարձել է Գինլանդական ազգային օրհներգ։

Բունէրէրգի միւս գրուածքների մէջ նշանաւոր է «Եղիերուների որսորդներ» պօէման, որ գեղարուեստորէն նկարագրում է Ֆինլանդիայի խաղաղ կենաքն ու բնութիւնը։

Համարեա ամբողջ Բունէրէրգը թարգմանուած է Գիներէն։ Նա ինքը գրում էր միայն շվեդերէն, սակայն այդ արգելք չի դառնում նրան լինել այն գրօշակը, որի շուրջը հաւաքուած են երկրի իրար հակառակորդ երկու կուսակցութիւնները՝ շվեդամոլները և Գինամոլները։ Իրանց սիրեցեալ բանաստեղծի գրուածքների մէջ ֆինլանդացիները գտնում են այն ընդհանուր շաղկապը, որ միշտ նրանց մոռացնել է տալիս կուսակցական պայքարը։

Բունէրէրգի տունը Բօրգո քաղաքում դարձած է այժմ ազգային սեփականութիւն, և ամեն տարի մի յայտնի օր Գինլանդացիները ուխտ են գնում այնտեղ։ Ֆինլանդիան պատուեցիր մեծ բանաստեղծին՝ մահից յետոյ արձան կանգնեցնելով, իսկ կենդան ժամանակ ընծայեց 74 հազար մարկ՝ իրեն ազգային պարգև, հաւաքած ամբողջ ազգաբնակութիւնից։

Այդ փառքը Բունէրէրգը մի յայտնի չափով բաժանում է Ֆինլանդիայի առաջին ընարերդ Զ. Տօպկիլուսի հետ։ Սրա «Դաշտային ծաղիկներ» բանաստեղծութիւնների ժողովածուն կարևոր է գտնել ամեն մի՝ շատ թէ քիչ կրթուած ընտանիքի մէջ։ Տօպկիլուսը զիստորապէս յայտնի է իր հէքիաթներով։ «Տրոլդի ծընունդը», «Պիկու Մատի», «Սամազ Լապէլիէ», «Եղիր բարի դէպի աղքատները», «Ճշմարտութեան մարգարիտը», — ահա հէքիաթներ, որոնք անհրաժեշտութիւն են ներկայացնում Ֆինլանդիայի և Սկանդինավիայի բոլոր ուսումնարանների համար։

Տօպկիլուսը վախճանուեց 1898 թուականին։ Նրա յուղարկաւորութեան մասնակցում էին Ֆինլանդիան և Սկանդինավիան։ Այդ երկիրները լու էին հասկանում, թէ ինչով են երախտապարտ «Քեռի Տօպկիլուսին», որ ամեն օր 5—7 մանկական նամակներ էր ստանում։ Նա ուսուցանում էր հիւսիսային երկիրների երեխաներին սիրել ու յարգել գաղափարներ և իրանց հայրենիքը։ Տօպկիլուսը նրանց սէր էր ներշնչում դէպի ճշմարտութիւնն ու ազնուութիւնը։

Երեխաներն առհասարակ Տօպելիուսին գերադասում են Անգերսէնից: Վերջինիս հումորը երբմնակի նրանց համար շատ նուրբ է, իսկ հեքիաթի էռթիւնը յաճախ մնում է անհասկանալի: Տօպէլիուսը երիտասարդ աղքերի բանաստեղծ է. նա միամիտ է, ինչպէս բնութեան մօտիկ մի ժողովուրդ:

Ռումէրէրդ և Տօպէլիուս՝ ահա երկու ներկայացուցիչ այն բարի սերմերի, ինչ որ գցել է զրականական հողի մէջ շվեդական քաղաքակրթութիւնը Ֆինլանդիայում: Ֆինլանդիայի համար նրանք այն են, ինչ որ են համեմատաբար Գեօթէն և Շիլլէրը Գերմանիայի համար:

Բացի վերոյիշեալ բանաստեղծներից, շվեդէն լիզուով գրողների մէջ նշանաւոր են Ֆրանցէն, Ստենբէկ, Կվանտէն, Տավասչէրնա: Սակայն վերջին ժամանակները շվեդախօս հեղինակները մանրանում են Ֆինլանդիայում և տեղ են տալիս Փին գրողներին:

Վաթմանական թուականներին ասպարէզ է դալիս առաջին Փին վիպասանը: Դա Ալեքսիս Կիվին է (ծնունց 1834 թ., մեռաւ 1872 թ.): Կիվիի իսկական անուն է Ստենվալ (Ֆինլանդիայում օրինքը թոյլ է տալիս շվեդական անունները դարձնել ֆինականի. օրինակ, այնպէս, ինչպէս եթէ մենք ուզենանք Ասլանեան ազգանունը դարձնել Ասիւծեան): Լենրոտի նման նա շվեդական հասարակ ձագում ունի, սակայն մեծացել էր Փիների շրջանում: Ինչպէս և Լենրոտ, Կիվին արհեստաւորի զաւակ էր և մանկութեան հասակում ոչ մի կրթութիւն չէ սուանում: Միայն 17 տարեկան դարձած, նա սկսում է կարդալ-գրել սովորել: Տենդային ջանասիրութեամբ Ալեքսիսը շարունակ ուսումնասիրում է Աստուածաշունչը, Հոմերոսը, Շեքսպիրը, Դօն-Քի շօտը և Կալէվալան: Վերջապէս, առանց որնէ կողմնակի օգնութեան, նա այնքան պատրաստ է լինում որ կարողանում է համալսարան մտնել: Ուսանող ժամանակ նա շարունակում է ագահութեամբ իւրացնել նոր զիտութիւններ, միաժամանակ փորձում է իր ոյժերը գրականական ասպարիզում և շուտով հոչակ է վաստակում:

Տկարութեան և վաղաժամ մահուան պատճառով Կիվին անկարող է գտնուում շատ զրել, բայց ինչ որ նա զրել է, այդ էլ բաւական է լինում հիմք զնելու ֆինական պրօզայի: Նրա գրած դրամաներից «Կուլէրվօ»-ն ամենայայտնին է. իսկ «Եօթը ողբայր» վիպասանութիւնը (գրած 1870 թ.) մինչև այժմ հաշւում է ֆիներէն լեզուով գրած ամենալաւ գեղարուեստական երկը: Նոյն 1870 թուականին նա խելագարուում է և երկու տարուց յետոյ վախճանուում հիւանդանոցի մէջ:

«Եօթը եղբայր» վէպի բովանդակութիւնը վերցրած է ժողովրդի կեանքից։ Գործողութիւնը կատարւում է երկրի խորքում, Տավաստլանդում, միքանի տասնեակ տարի սրանից առաջ։

Կիվին այդ վէպով նպատակ ունէր ցոյց տալու, թէ ինչպէս եօթը կիսավայրենի մարդիկ դառը դասեր առնելով կեանքից, դառնում են քաղաքակրթութեան հետևողներ՝ չնորհիւ իրանց ստացած հարուածների և գիւղական առողջ խելքի։

Երիտասարդական սանձարձակ տարիներում այդ եօթը եղբայրները գնահատում էին միմիայն ֆիզիքական ոյժը և քաշութիւնը։ Բայց ահա վախճանւում են նրանց ծնողները, և եղբայրները ստիպուած են լինում տնտեսութեամբ պարապել և առհասարակ կեանքի մասին մտածել։ Նկատում են որ իրանց տանտիկին է հարկաւոր։ Հարցը միայն նրանումն է, թէ եղբայրներից որը պասկուի։ Վերջիվերջոյ հինգ աւագ եղբայրները որոշում են հարմանցու ճարել Բայց օրէնքը թոյլ չի տալիս անզրագէտներին ամուսնանալ, իսկ եղբայրներից ոչ մէկը կարդալ չը զիտէ։ Այժմ պարզ տեսնում են, թէ որքան օգտակար է դրագիտութիւնը, ուստի բոլորը միասին զիմում են իրանց զիւղի տիրացուին և խնդրում որ նա կարդալ-զրել սովորեցնէ իրանց։ Ուսումնարանում այդ նոր աշակերտաները վատ են սովորում, ուստի դասնում են ընկերների ծաղրի առարկայ։ Բանը վերջանում է տուրութմիոցով, որին մասնակցում է ամբողջ զիւղը։ Այն ժամանակ եղբայրները իրանց բաժին նողը կապալով տալուց յետոյ, հեռանում են անտառները, որ կարուղանան բնութեան ծոցում ազատ կեանք վարել։—Այդ վայրենի կեանքի նկարագրութիւնը ամենագեղեցիկ էջերն են ոչ միայն կիվիի գրուածքների, այլև ամբողջ Փինլանդական գրականութեան։—Անտառաբնակ եղբայրները կամաց-կամաց ստիպուած են լինում որսորդութիւնը թողնել և զիմել երկրագործութեան։ Կրտսեր եղբայրը կարդալ-զրել է սովորեցնում իր եղբայրներին։ Վերջն այն է լինում, որ նրանք թողնում են իրանց վայրենի կեանքը, վերադասնում են զիւղ և ապրում իրրի քաղաքակրթ մարդիկ։

Կիվիի հետ միաժամանակ ասսպարէզ է գալիս մի ուրիշ վիպասան։ Դա Պիետարի Պէյմարինտան է, որ հիմնում է զիւղի-զրողների շկոլան^{*)}։

Կիվիի մահից տաս տարուց յետոյ Փին գրականական աշխարհում երեան են դալիս նրա երկու տաղանդաւոր հետևող-

*) Սրանց մասին տե՛ս «Մուլճ» № 2.

ները՝ մէկն իբրև դրամատուրգ, միւսը՝ վիպասան։ Հետաքրքիրն այն է, որ այդ դրամատուրգը նօթը երեխայ ունեցող 40 տարեկան մի այրի կին է։ Միննա կանան է այդ, մի հեղինակ, որ հաւասարապէս յարգանք է վայելում թէ իր հայրենիքում և թէ ամբողջ Սկանդինավիայում^{**})։

Միւս գրողը՝ Խւանի Ահօն է (ծն. 1861 թ.), որ ներկայ ֆին վիպասանների մէջ ամենազլիաւոր տեղն է բռնում։ Զը նայած որ Ահօն գեռ երիտասարդ մարդ է և գրում է մի լեզուով, որ քիչ է ծանօթ Եւրոպայում, ինչպիսին է ֆիններէնը, սակայն նրա անունն արդէն յայտնի է դարձել նմանապէս Շվեյշայում, Գերմանիայում և մասամբ Ռուսաստանում։

Ահօն ստացել է լաւ կրթութիւն։ իր ուսումը նա վերջացրել է Հէլսինգֆորսի համալսարանում։ Վաղ հասակից նա սկսեց գրել և արդէն ուսանող ժամանակ աշխատակիցում էր ֆիննական լրագիրներին, «Պէյվալէհատի» թերթին հիմնադիրներից մէկն էր, իսկ այժմ խմբագրում է «Ուղի Կուվալէհատի» լրագիրը։

Երիտասարդական տարիքում Ահօն դժնւում էր Կիվիի բարերար ազգեցութեան տակ, սակայն յետոյ նա զարգանալով շուտով գուրս է գալիս այդ ազգեցութիւնից և այժմ բոլորովին ինքնորոյն գրող է։ Ահօն լեզուն այնքան լաւ է և գրականական, այնքան տարբեր է բուռը նախորդների լեզուից, որ իրաւամբ նրան կարելի է հաշուել արդի ֆին գրականական լեզուի հիմնադիր։ Նա ինքն իր գրուածքները թարգմանում է շվեդէրէն, այնպէս որ միաժամանակ երկու լեզուով են գուրս գալիս նրա գրքերը։ Թէ նրբան շվեդախօս ֆինլանդիները ևս յարգանքով մն վերաբերում ֆին զրողին, զրան ապացոյց է այն որ Ահօն թարգմանութիւնները արագութեամբ սպառում են։ «Euris» ժողովածուի լոյս տեսնելուց երրորդ օրը մենք չը կարողացանք գտնել ոչ մի օրինակ այդ գրքից Հէլսինգֆորսի բուռը գրախանութներում։

Ահօն գուրս եկաւ զրականական ասպարէզ եօթանասնական թուականներին երկու պատմուածքով՝ «Երբ հայրը գնեց լամպա» և «Երկաթուղի»։ Այս անզրանիկ գրուածքների մէջ նա անօրինակելի հումօրով պատկերացնում է այն շփոթութիւնը, որ քաղաքակրթութիւնը մատցեց աշխարհից կտրուած մարդկանց կեանքը մէջ։ Այդ պատմուածքները մեծ աջողութիւն ունեցան ֆին ընթերցողների շրջաններում և իսկոյն ենթ թարգմանուեցին շվեդէրէն։ Յետոյ Ահօն գրում է մեծ վիպասանու-

*) Միննա կանատի մամին տե՛ս տ. Մ. 0.-ի լուսածը, «Ծուրճ» № 4.

թիւն, որի առաջի հատորը կրում է «Քահանայի աղջիկը» վերնադիրը, իսկ երկրորդը՝ «Քահանայի կինը»։ Այս վէպի մէջ Ահօն զարպետօրէն պատկերացնում է ֆին աղջկայ և կնոջ կեանքը։ Դա մի գրուածք է, որ կարող է պարծանք համարուել Եւրոպայի ամեն մի գրականութեան համար, իսկ մի այնպիսի երիտասարդ գրականութեան համար, որպիսին է Փինականը, — մի նշանաւոր երևոյթ է։

Ահօի մանր պատմուածքները չօշափում են ժողովրդի կեանքը։ Մեծացած լինելով գիւղական շրջանում եօթանասնական թուականների ժողովրդասիրական շարժումների ժամանակ, հեղինակը բազմակողմանի ուսումնասիրեն է գիւղացու կեանքը, ուստի նա կարողանում է զարմանալի ծառութեամբ վերլուծել հասարակ մարդկանց զգացմունքները, որ առհասարակ այնքան դժուարութեամբ են հասկանում արտօնեալ դաւակարգերին պատկանող անձնաւորութիւնները։ Ահօն նոյն ճշտութեամբ պատկերացնում է և միւս զասակարգերը։ Նրա բոլոր գրուածքներում չեք գտնի բարդ բոլանդակութիւն կամ արկածներ։ Ահօն սիրում է նկարագրել հասարակ մարդկանց ամենահասարակ հանդամանքներում՝ երբեմն մեծ հումօրով և միշտ զգացմունքների նուրբ վերլուծութեամբ։

Եթէ Միննա կանոք մերկացնող է և միենոյն ժամանակ գեղարուեստգէտ, Ահօն բացառապէս գեղարուեստէտ է և դիտող, առաւել ևս վերջին գրուածքների մէջ, ինչպէս են՝ «Տաշնդին» և «Էնրիս» վերնագրի տակ չորս հատոր մանր պատմուածքները *), «Քահանայի աղջիկը» և «Կինը» և «Պանու» մեծ վէպը։ Վերջին աշխատութիւնն արժանացել է «Ֆին գրականական ընկերութեան» ամենաբարձր պարգևն։ Այդ վէպի բոլանդակութիւնը վերաբերում է այն ժամանակներին, երբ վերջին օրերում հեթանոսութիւնը կոռուկիս է եղել քրիստոնէութեան դէմ Ֆինլանդիայի խորքերում։ Հեղինակն աշխատում է պարզել թէ ինչու յաղթանակը քրիստոնէութիւնը տարաւ, չը նայած նրան որ ֆինական հեթանոսութիւնը, գոնէ իդէալական դարեցաններում, ընդհանուր զծեր է ունեցել քրիստոնէութեան, հետո Ահօն գալիս է այն եղբակացութեան որ քրիստոնէութիւնը, — մի կողմ թողած կառավարութեան պատպանութիւնը, — յաղթեց հեթանոսութեան նաև այն պատճառով, որ նկարագրած դէսքերի ժամանակ այս վերջինը կերպարանափոխուել էր դէպի վատը։ հեթանոսութեան նախկին պարզ ձեր և նրա սէրը

*.) «Ենրիս»-ից մի փոքրիկ պատմուածքի թարգմանութիւնը լոյս է տեսել «Մշակում»։

դէպի բնութիւնն ու մարդիկ տեղի էին տուել կախարդութեան ու զոհարերութեան պաշտամունքին: Վէպի մէջ քրիստոնէութեան կողմնակիցն է եռանդուն Մարտինուս Օլայ, իսկ հեթանոսութեան՝ վէպի հերոս Պանու, որին ժողովուրդը վերջիվերջոյ մատնում է կառավարութեան ձեռքը: Երկրորդական անձնաւորութիւններից յիշենք Խօրմու և Կարի՛ մագուր հեթանոսութեան կողմնակիցները, որոնք չէին համակրում Պանուի գործադրած կախարդական ձևերին: Տեսնելով քրիստոնէութեան յաղթանակը, Նրանք հեռանում են անապատ որ այնտեղ անարգել կերպով պաշտեն բնութիւնը և ապրեն իմաստուն Վէյնէմէյնէնի վարդապետութեան համաձայն:

«Պանու» վիպասանութեամբ Ահօն դասւում է այժմ Եւրոպայի նշակաւոր հեղինակների շարքում:

Ահօն հետեւղներից նշանաւոր են Պակալա և Ինգման:

Բոլորովին առանձին տեղ է բռնում Փինլանդական գրականութեան մէջ յայտնի վիպասան Սրվիդ Էրնֆէլդ (Ծն. 1861), զաւակ մի ընտանիքի, որ տուել է Ֆինլանդիային տաղանդաւոր նկարիչ Էրո Է.-ին և նշանաւոր կօմազօղիաօր Սրման Է.-ին: Էրնֆէլդը շատ ուշ է զրականական ասպարէզ մանում, բայց հէնց իր առաջին գրուածքով՝ «Հայրենիք» վիպասանութեամբ իսկոյն ևեթ զրաւում է ընթերցող հասարակութեան ուշագրութիւնը: Սյդ վէպում հեղինակը հոգեբանօրէն ճշգրտութեամբ նկարում է արդի ուսանողութեան կեանքը: Գրքի առաջի մասում նա դուրս է բերում զիւղական շրջանից առաջացած ուսանողի պատկերը, նրա աջողութիւնը և զարգացողութեան աստիճանը: Երկրորդ մասում Էրնֆէլդը ցոյց է տալիս, թէ ինչպէս հերոսի հոգեելան երկուորութիւնն ու մեծամասութիւնը—հետեւնք կիսակրթութեան—ձուլում են մի զգացմունքի մէջ, մի զգացմունքի, որ առաջ է զալիս դէպի հայրենի երկիրն ունեցած սիրուց, դէպի ժողովուրդը տածած համակրանքից, դէպի հայրենիքի համար աշխատելու ցանկութիւնից:

Էրնֆէլդի վրայ մեծ ազդեցութիւն ունի Լև Տօլստոյ, որի վարդապետութիւնը Փին վիպասանն աշխատում է կեանքի մէջ իրազործել. ասած նա աշխատում էր Կօշկակարի մօտ, յետոյ դարբնի մօտ, իսկ այժմ քաշուել է զիւղը և երկրադութեամբ է պարապում:

Ֆինլանդական զրականութեան այս համառօտ տեսութիւնը վերջացնելիս, չի կարելի չը յիշել և փին բանաստեղծներին, որոնք թուով շատ չեն և որակութեամբ էլ ցածր են կանգնած արձակ գրողներից: Նշանաւորները հետեւալիներն են.

Պաւո Կօրօնէն՝ իր ժամանակ, քառասնական թուականնե-

րին, միծ հոչակ էր վայելում: Աշուղի նման նա մի զիւղից միւս գիւղն էր շըագայում և երգում էր իր յօրինած երգերը, որոնք դրուատում էին զանազան նշանաւոր անցքեր:

Վաթմանական թուականներին աջողութիւն էր վայելում կոյր երգիչ կալիօ, որի ոտանաւորները ձայնագրուած են և մինչև այժմ երգւում է Ֆինլանդիայում:

Կենդան բանաստեղծների մէջ յայտնի են կայանդէր, կրամառու, լէյնո և էրկօ: Առաջինը նշանաւոր է իբրև լաւ թարգմանիչ անգլիացի, շվեդացի և գերմանացի բանաստեղծների, իսկ երկրորդը՝ բալլադայի ձեռվ տարրականացնում է ժողովրդի համար ազգային պատմութիւնը. Կերչին բանաստեղծը գլխաւորապէս գրում է բաւականին յաջող թատերական պիէսներ:

Ֆինլանդիայի զրականութիւնը ուսումնասիրելու նպատակով մնաք մտնում էինք Հէլսինգֆորսի գրախանութիւնները և գրադարանները՝ մեր ցանկացած գիրքը ձեռվ բերելու կամ կարդալու: Այստեղի գրախանութիւններում վաճառուում են բացի շվեդերէն և ֆիններէն գրքերից նաև եւրոպական լեզուներով գրուած բոլոր այն հրատարակութիւնները, որոնց բովանդակութիւնը վերաբերում է Ֆինլանդիային: Դուք կը գտնէք այստեղ և՛ ֆրանսերէն, և՛ գերմաններէն, և՛ անգլիերէն, և՛ ուսմներէն զրքերայդ ուղղութեամբ:

Ժողովրդական գրադարանները (կան 800 գիւղական գրադարան-ընթերցարաններ) մեր ուշադրութիւնը գրաւեցին մի առանձնայատկութեամբ, որ երեէք տեսած չեմ ոչ մի ուրիշ երկրում: Դա՝ երեխաններին յատկացրած առանձին ընթերցարանն է: Քաղաքիս ամենամեծ ժողովրդական գրադարանը (գտնուում է Rikardsgatan փողոցում), բացի ընդհանուր դահլիճից, ունի մի ուրիշ աւելի փոքրը, որ տեղաւորում է մօտ 100 հոգի երեխաններ: Մեր այցելու օրը սենեկալը լիքն էր երեխաններով 15 տարեկան պատմնիներից սկսած մինչև 3 տարեկան երեխաններ: Փոքրիկները կարող են դրադարան այցելել միմիայն մեծերի ուղղեկցութեամբ: Ի հարկէ այդ պատվիկները չեն կարդում, այլ նայում են պատկերազարդ գրքերը: Պէտք է տեսնել թէ որպիսի համարձակութեամբ նրանք դիմում են զրադարապետ օրիորդին՝ իննդրելով տալ «Խօրինսգօնը», «Քեռի Տօպելիուսի հէքիաթները» կամ մի այլ գիրք, որ միայն թէ պատկերազարդ լինի: Մանկական այդ ընթերցարանն ունեցել է 1898 թուականին մօտ 80 հազար այցելողներ, միջին թուով օրական 220 այցելութիւն: Ի Հարկէ 3 տարեկանից գրադարանին ընտելացած մարդը կը շարունակէ միշտ սիրել զրքերի տաճարը, և ոչ թէ մեղ նման... կանաչ սեղանը:

Երկրիս ուսումնասիրութեան քիչ չեն նպաստել մեզ և թանգարանները, որոնց միքանիսի մէջ հաւաքուած են ֆին-լանդական նկարիչների և քանդակագործների ձեռակերտները։ Քանդակագործութեան մէջ հոչակ են ստացել Ռուսէրէրգը (բանաստեղծի որդին, որ շնորհ է իր հօր, Ալեքսանդր Բ-ի և համալսարանի հիմնադիր Բրագէի արձանները), Տականէն, Վալդիքն, Ստիգէլ, իսկ Էդէլֆէլդ և Հալլէն նկարիչները արդէն համաշխարհային հոչակ են վայելում։

Քաղաքիս թանգարաններից ինձ ամենից շատ հետաքրքրեց ուսանողների սարքած ազգագրական թանգարանը։ Թէև այս օրը, երբ առաջին անգամ մենք գնացինք տեսնելու այդ հետաքրքիր հիմնարկութիւնը, այցելութեան օր չէր, սակայն թանգարանապետը ամենայն սիրով մեզ թոյլ առւեց նայելու, ինքն էլ մեզ ուղեկցում էր և բացատրութիւններ տալիս եւ միայն այս մարդը չէր, որ այդքան սիրալիր կերպով էր վարւում մեզ հետ, —և ամեն մէկի հետ ի հարկէ. ամեն տեղ ևս մենք հսնդիպում էինք քաղաքավարի ուշագրութեան։ Մի օրինակ ևս, երբ այս գարնանը Վիբուրգ քաղաքումն էինք, ի միջի այլոց ուղեցինք այցելել և թանգարանը։ Խիստ հիսամթափուեցանք, երբ մեզ ասացին, թէ նոր կառուցած թանգարանը պիտի բացուի մի ամսից յետոյ։ Բայց երբ թանգարանապետն իմացաւ, որ մենք տուրիստներ ենք և այդքան երկար սպասել չենք կարող, առանց տատանուելու նա ինքը բաց արաւ. սենեակների կողպած դոները և մեզ հետ երկու ժամուայ լնթացքում լրջում էր ամբողջ թանգարանը և յաճախ մեր ուշագրութիւնը հրաւիրում այս կամ այն հետաքրքիր իրերի վրայ, նոյնիսկ ներուզութիւն էր խնդրում, որ հին թանգարանից բերած առարկաների մի մասը դեռ թափիթիուած են յատակի վրայ, ուստի լաւ տեսնել զժուար էր։ Ի հարկէ այդ բոլորը կատարւում էր առանց որևէ վարձատրութեան։

«Ազգագրական թանգարանը» գոյացել է շատ հասարակ կերպով։ Ամեն մի ուսանող ամառուայ արձակուրիդներին առւն վերագրած ժամանակ հաւաքել է կամ չնչին գումարով զնել է տեղական հետաքրքիր իրերը և իր հետ բերել Հելսինգֆորս։ Միքանի տարուց յետոյ հաւաքուել է այնքան նիւթ որ կարելի է եղել թանգարանի սկիզբը զնել։ Իրանց միջոցներով ուսանողական ընկերութիւնները վարձել են մի մասնաւոր տուն թանգարանի համար։ Այժմ, երբ այդ թանգարանն արդէն ուշագրութիւն է զրաւել, մտադրութիւն կայ քաղաքի հաշուով առանձին շինութիւն կառուցանել։ Զը կարծէք թէ այդ թանգարանում, ինչպէս առհասարակ լինում է, հաւաքուած են մի-

միայն հազուադիւտ և թանկագին իրեր. հչ, դուք այդտեղ կը տեսնէք և ամենահասարակ լրեր, որ մեզ մօտ նոյնանոմանները չեն արժանանալ որեւ ուշագրութեան Ռւանողները հաւաքել են Ֆինլանդիայի ամեն ծայրերից իրեր, կահ-կարասիք, հագուստ, գործիքներ, զէնքեր, նաւակներ, ձգնորսական զանազան պարագաներ, սալիեր, ձիու արդուլարդներ, տնայնազործական իրեր, գործուածքներ, գորգեր, ասղնեգործած երեսաբբիչներ, սուլիրաններ, վարագոյրներ, ևայլն, ևայլն. չեն մոռացուած ամենաաննշան իրերն անգամ, օրինակ, փոքրիկ քարեր, որոնցով աղքատ տեղերում աղ են կրծում, զամբիւղներ և ծառի կեղևից պատրաստած «զօգ»եր, որոնց մէջ միրգ են պահում: Այս բոլորը խնամքով հաւաքուած է, նպատակ ունենալով կարելոյն չափ լրիւ գաղափար տալ երկրի մասին: Միքանի սենեակներ բննուած են փոքրիկ տնակներով, որոնք պատկերացնում են փին գիւղացու խրճիթի ներսը. այստեղ դուք կարող էք տեսնել Փինլանդիայի զանազան նահանջների գիւղացիների նիստ ու կացը, շորերի տարագի տարրերութիւնը, նահապետական և արդի գործիքները, ևայլն: Նոյն խրճիթներում կան և մոմից շինած ֆիգուրաններ բնական մեծութեամբ, որոնք ներկայացնում են երկրիս զանազան տիպերը:

Այդ թանգարանում կայ նաև ասղնեգործութեան և առհասարակ ձեռագործների հարուստ ժողովածու: Արդէն վաղուց մարդիկ նկատում էին որ Փինական ասղնեգործների նախշերը խիստ օրիգինալ և գեղեցիկ են, որոնք ցոյց են տալիս գիւղացու բնութիւնից օժտուած գեղարդուեստական ճաշակը: Զը նայած զբան, հարուստ և ինտելիգէնտ զասակարգերը, ինչպէս և մեզ մօտ, գերադասում էին օտարերկրնեայ գործարանական կտորների անճաշակ և շարլօն նախշերը, և միմիայն ազգայնական շարժման ընթացքում պահանջ զգացուեց փին տնայնազործական գործուածքների: 1879 թուականին կազմուեց մի ընկերութիւն, որ նպատակ դարձրեց՝ զարգացնել փին տնայնազործական արդիւնաբերութիւնը, սովորեցնել ցանկացողներին ասղնեգործութիւն և հասարակութեան մէջ տարածել այդ տեսակ գործուածքները: Այժմ ընկերութեան ուսումնարանն ունի առանձին բնակարան, ուր բազմաթիւ աղջիկներ և կամսացք սովորում են այդ արհեստը: Միենոյն տեղից կարելի է գնել կամ վարդով վերցնել՝ ընդօրինակելու համար, զանազան տեսակ նախշերի նմուշներ: Մենք ընդօրինակել ենք այդ նախշերից շատերը, որոնց մեծ մասը խիստ նմանութիւն ունի կովկասեան, առաւել ևս թարաքամաների, գործուածքների նախշերին: Ծնորհիւ ընկերութեան ջանքերին, փին ձեռագործ իրենքը մօդա է դառնում

և տնայնագործական արդիւնաբերութիւնը սկսում է զարգանալ: Գործարանի աղջեցութիւնից դուրս մղուած անային «զագգահը» նորից լոյս աշխարհ է զալիս զիւղացու խրճիթում և այդպիսով սրա վաստակած պարէնի վրայ մի բան աւելացնում ձմեռուայ անդորր օրերին: Կառավարութիւնն իր կողմից նոյնպէս նպաստում է տնայնագործական արդիւնաբերական այն բաներում, որի մէջ իրանք տնայնագործներն անձեռնաս են լինում իրագործել: Նկարչական ուսումնարանների վերջին գասարանների աշակերտներն ուղարկւում են երկրի խորքերը, ուր նրանք պարապում են զիւղացիների հետ, նրանց ծանօթացնում են վերջին նորութիւնների, նկարների, զործկվների հետ: Սակայն աշխատում են, որքան հնարաւոր է, պահպանել զործուածքներում նահանգի առանձնայատելութիւնը, որով և ձեռագործք հետաքրքիր և օրիգինալ է զառնում:

—Զ՞ որ վերջիվերջոյ տնայնական արդիւնաբերութիւնը կ'ընկնուի զործարանականի առաջ,—դիմեցի ծանօթիս, յիշելով կարլ Մարքսի վարդապետութիւնը:

—Մեծ պեղանտութիւն կը լինի մեր կողմից, եթէ արդի գիւղացուն չը նպաստենք մի պատառ հաց ճարելու, ի նկատի ունենալով, թէ ապադայում ինչ-ինչ փոփոխութիւններ են լինելու, —իրաւացի կերպով նկատեց ֆինլանդացին:

Մեր խօսակցութիւնը դարձաւ զործարանական արդիւնաբերութեան և ֆինլանդացի բանուորների վրայ:

Վերջին ժամանակներն արագութեամբ զարգանում է ֆինլանդիայում գործարանական արդիւնաբերութիւնը: Երկու ու կէս միլիոն ազգաբնակութեան վրայ գալիս են այժմ 58 հազար գործարանական բանուորներ. և 1896 թուականին այդ արդիւնաբերութիւնն արտարադրել է մօտ 200 միլիոն մարկի ապրանք:

—Սակայն բանուորական հարցը մեր երկրում չունի այն կերպարանքը, ինչպէս է Եւրոպայի շատ երկիրներում, —շարունակեց ֆինլանդացին: Դրա պատճառները զանազան են: Նախ՝ որ մեր ազգաբնակութիւնը նոր է և քաղաքների թիւը սակաւ կապիտալիզմը մեր երկրում անկարող է ինքնակամ գործեր: Այսուեղ իշխում են օրէնքը, հաւասարութիւնը և ազնուութիւնը: Ոչ ոք, որքան էլ հարուստ ու հզօր լինի նա, անկարող է վրաւորել բանուորի պատուասիրութիւնը, նրան խարել և ճնշել Ընդհակառակը՝ գործարանատէրերն աշխատում են բարւոքներ, հիւանդանոցներ և հիմնելով բանուորական ընկերութիւններ: Մեր բանուորներն ել են զործադուլ սարքում, բայց երբէք

բռնութիւն չի կատարւում թէ նրանց և թէ կառավարութեան կողմից: Բանուորներն ունեն իրանց առանձին թերթը՝ «Տիւօմիէս»: Բնակարանային բարդ հարցն աջող կերպով է լուծուած Ֆինլանդիայում: Բանուորներն աշխատում են իրանց սեփական ոյժերով կոռուել այդ չարքի դէմ: Նրանք իրանցից կազմակերպում են ակցիօներական ընկերութիւններ, փոխառութիւններ են անում և կառուցանում են շատ յարմար բնակարաններ, ուր առհասարակ իրանք՝ բանուորներն են ապրում: 1875 թուականից կառավարութիւնը նպաստ է տուել կէս միլիոն մարկից աւել այդ ձեռնարկութիւններին:

Աշխատանքն այստեղ առհասարակ լաւ է վարձատրւում. օրինակ, Հէլսինգֆորսում օրավարձը հաւասար է 4—6 մարկի: Սովորաբար բանուորի վարձատրութիւնը հաշտում են աշխատած ժամերի համեմատ, ժամը 50 պէնի (20 կոպ.), որ միջին թուով օրական անում է մօտ վեց մարկ (2 ո. 50 կոպ.): Ի հարկէ վոքքը գումար չէ այդ, բայց պէտք է ի նկատի ունենալ որ ֆին բանուորի պահանջներն էլ աւելի շատ են. նա, օրինակ, անկարող է եօլաւգնալ առանց լրագրի, թատրոնի, առանց նըրան՝ որ տօն օրերին ընտանիքով ընստօրանում չը ճաշէ կամ ամառ ժամանակ քաղաքից գուրս չը դնայ, ևայլն:

Աշխատանքի սղութիւնն է պատճառը որ շատ գործեր այստեղ կատարում են երեխաններ և կանայք, որոնց վարձատրութիւնն ի հարկէ աւելի փոքր է. օրինակ, մակոյկավարների մեծ մասը և բաղանիքներում բոլոր ծառայողները կանայք են, նոյնիսկ տղամարդկանց բաժանմունքների «Քիսաչիներ» նոյնպէս կանայք են, այն էլ ոչ պառաւ կանայք: Շատ օտարութիւնն է թուում այդ վերջին սովորութիւնը, և երկրիս անծանօթ մարդն ուրիշ կերպ կը մեկնէ այդ ու կը կասկածէ ֆիների բարոյականութեան վրայ: Սական չը կայ անշուշտ մի երկիր, որ այնքան խստապահանջ լինէր բարոյականութեան վերաբերեալ, որքան ֆինլանդացիք են: Բաւականանք միմիացն իրաւաբան Հանրի Թոլիի՝ «A travers l'Europe» գրքից միքանի տեղեկութիւններ բերելով այդ մասին.

«Հասարակական բարոյականութեան սպաշտանութիւնը Ֆինլանդիայում յենուած է խիստ օրէնսդրութեան վրայ, որի XX դլուխը հետեւեալ վերնագիրն ունի՝ «Անօրինական կենակցութիւն և անբարոյական վարմունք»: Այս երկրում օրէնքը խիստ պատժում է այնալիսի գործողութիւններ, որոնք ուրիշ երկիրներում անուշագիր են թողնուում: Օրինակ, եթէ մի մարդ կենակցել է իր աղախնի հետ և յետոյ հետը չէ ամուսնացել,

այդպիսին խիստ պատժի է ենթարկւում: Իսկ պրօստիտուցիան համարւում է յանցանք: Ահա թէ ինչ է ասում օրէնքը. «Եթէ մի ոքմին համբերութեան տուն կը պահի կամ թէ կը յորդորէ մի կնոջ անառականութիւն անելու, կ'ենթարկուի երեք տարուայ կամ աւել բանտարկութեան և կը դրկուի բոլոր քաղաքացիական իրաւունքներից»: Մի այլ աեղ օրէնքը խելազրում է. «Եթէ մի ոքմին իմանալով որ ինքը վեներական ախտ ունի, սեռական յարաբերութեամբ կը վարակէ մի ուրիշ սնձնաւորութիւն, կ'ենթարկուի բանտարկութեան երեք տարով կամ աւել»:

Ամառուայ ամենաշոք ժամանակն է,—հիւսիսում էլ չգքեր են անում,—ուստի քաղաքիս բնակիչների. մի մասը կամաց-կամաց յրուում է: Ոմանք ճանապարհորդում են երկրի գեղանկար վայրերում, շատերը ամարանոց են դնում: Մենք էլ վճռեցինք մի առժամանակ կղզիների վրայ ապրել: Շոգնաւը տանում է մեզ դէպի Սիբիր կղզիները: Ահա կամաց-կամաց անհետանում է մեր աշքից Ֆինլանդիայի մույրաքաղաքը: Ամփոփելով տեսածներս ու լսածներս, ակամայ յիշողութեանս մէջ նորոգւում են մի ուսւ ճանապարհորդի իրաւացի խօսքերը.

«Անշուշտ Հէլսինգֆօրս քաղաքն այն կենտրոնն է, ուր արտացոլում է ամբողջ երկրի հոգեկան կեանքը իր բոլոր արտայայտութիւններով, —զրում է ուսւ ճանապարհորդը: Այստեղ կան և դիտնական, և արուեստգիտական ընկերութիւններ, հիանալի թատրոն, համալսարան, գպրոցական հիմնարկութիւնների ամբողջ ցանց: Այստեղ միջոցների են զիմում կոռեկուախտերի և արբեցողութեան դէմ, այստեղ լայն կերպով զարգացած է և գործնական հրմք ունի բարեգործութիւնը. այստեղ, վերջնապէս, զարգանում է մի ահազին գրականութիւն, հրատարակուում են տաննեակ լրագիրներ, գրախանութիւնները լիքն են նոր գրքերով, միքանի տասնեակ ուուբիով կարելի է օգտուել աելէֆօնով. կան հրաշալի ձիաքաշ, օրինակելի կառապաններ, որոնք խստութեամբ հպատակուած են տակամայի: Փողոցներում չը կան վասոր ու ցեխ, տրօտուարները հաւասար են և լայն, սալայատակները լաւ քարած են, քաղաքն առատ է բուսականութեամբ և մաքուր օդով: Բնակարանները բարեկեցիկ են, արդի պահանջների համեմատ, տանստէրերը չեն ձնշում տընկեցներին և վերջիններս ծորտ չեն գրուած առաջինների մօտ: Խանութիւններում ձեղ չեն խաբում գանազան ձևերով, այլ ուզում են այն, ինչ որ ապրանքն իսկապէս արժէ՝ վերցնելով մի թեթև տոկոս—շահ: Մարդիկ փողոցներում իրար չեն հրհրում, չեն հայ-

հոյում, այլ գնում են հաճգիստ և խաղաղ, զգալով որ ամեն
մարդ իրաւունք ունի արօտուարով գնալու...

«Եւ այդպիսի շատ հարցեր անցնում էին մտքովս, Յիշե-
ցի ես որ այդ բոլորը գտնուում է միքանի ժամուայ ճանապար-
հի վրայ Նովգորոդից, Պոկովից և Ռուսաստանի ուրիշ այլ նա-
հանգական քաղաքներից, և ես, խոստովանում եմ, նախանձ
զգացի, նոյնիսկ զայրոյթ»:

Ք. ՕՀԱՆԵԱՆ

ՖՐՈՄՈՆ ԿՐՏՈԵԲ

ԵՒ

ՌԻՍԼԵԲ ԱԿԱԳ

VI

Նա խոսացել է չը կրկնել այլ եւս:

Օ՞հ, ոչ, նա այլ ևս այդպիսի բան չի անիլ: Պ. թաղական ոստիկանը կարող է հանգիստ լինել: Երկիրդ չը կայ, որ նա կրկնի իր արածը: Ամենից առաջ, բնչպէս պէտք է նա գնայ մինչև գետը, քանի որ այժմ այլ ևս չի կարողանում վեր կենալ անկողնից: Եթէ պ. թաղական ոստիկանը նրան տեսնէր այժմ, այլ ևս կասկածով չէր վմբարերուիլ նրա խոստման: Ճիշտ է, այն՝ մեռնելու կամքը, փափազը, որ այնքան օրհասական կերպով գրուած էր նրա գունաստ կերպարանքի վրայ այն առաւօտ, գեռ ևս երևում է նրա ամբողջ էռութեան մէջ, բայց այժմ նա աւելի մեղմ, աւելի հեղ արտայայտութիւն է ստացել: «Մի ոմն Դըլօքէլը» գիտի, որ մի քիչ, շատ քիչ անցած ինքը այլ ևս ոչինչ չի ունենալ բաղձալու:

Բժիշկները կարծում են, թէ թոքերի բորբոքումից է նա մեռնում. իբր թէ շորերը թաց մնալուց մրսել է: Բժիշկները սխալում են. թոքերի բորբոքում չէ այդ: Ուրեմն սէրն է նրան սպանողը... Ոչ Այն սարսափելի զիշերից յետոյ նա այլ ևս չի մտածում ֆրանցի մասին, նա այլ ևս իրան արժանի չի համարում ոչ սիրելու, ոչ էլ սիրուելու: Նրա անարատ կեանքի մէջ այսուհետեւ մի բիծ կայ, և ահա թէ ինչու է նա մեռնում:

Այն սարսափելի գրամայի յեղյեղումներից իւրաքանչիւրը մի տեսակ արատ է նրա մաքի համար, — ջրից գուրս գալը այն տեղի բոլոր մարդկանց առաջ, յողնած քունը թաղական ոստի-

կանատանը, այնտեղ լսած անվայել երգերը, վառարանի առաջը տաքացող խենթ կինը, այն բոլոր անառակ, ախտաւոր և զարհուրելի բաները, որոնց կողքով նա մնցաւ զլիսաւոր ոստիկանատան սանդուխի վրայ, և յետոյ՝ մի քանի հայեայքների արհամարհանքը, միւսների լպիրչութիւնը, իր ազատողի կատակեները, ոստիկանի սիրախօսութիւնները, իր կանացի ամօթիաժութիւնը ընդ միշտ խախտուած, անունը յայնելու անհրաժեշտութիւնը, վերջապէս իր կազութիւնը, որ նրան ճնշում էր իր երկար նահատակադրութեան բոլոր շրջաններում, իբրև մի հանգամանք, որ աւելի ևս ծիծաղելի էր դարձնում նրա սիրապատճառ ինքնասպանութիւնը...

Ես ձեղ ասում եմ, որ նա մեռնում է ամօթից: Գիշերային զառանցամկըների ժամանակ նա կրկնում է շարունակ, —«Ամաչում եմ... Ամաչում եմ...», —իսկ հանգստութեան ըստէներին խրւում է անկողնի մէջ, վերմակները քաշում է երեսին, կարծես թէ ուղում է ծածկուել կամ թաղուել նրանց մէջ:

Դէզիրէյի անկողնի կողքին, պատուանի լոյսի առաջ, ափեին Դըլօբէլը աշխատում է և միենոյն ժամանակ իննամում իր հիւանդ աղջկան: Երբեմն-երբեմն նա բարձրացնում է աշքերը, զննում է աղջկայ համբ յուսահատութիւնը, այդ անբացարելի հիւանդութիւնը, յետոյ իսկոյն սկսում է նորից աշխատել: Ի՞նչ արած: Հքաւոր մարդկանց ամենամեծ ցաւերից մէկն էլ այն է, որ ազատ ժամանակ չունեն իրանց վշտին անձնատուր լինելու: Պէտք է շարունակ աշխատել, պէտք է մտածել անյևտաձգելի կարիքների, կեանքի գժուարութիւնների մասին նոյն իսկ այն ժամանակ, երբ մահը սաւառնում է մարդու շուրջը:

Հարուստը կարող է խորասուզուել իր վշտի մէջ, անձնատուր լինել նրան, ապրել նրանով, ոչինչ չանել բացի վշտանալուց ու լալուց:

Զքաւորը ոչ հնարաւորութիւն ունի, ոչ իրաւունք՝ այդպէս անելու: Իմ հայրենի գաւառում, մի գիւղում, ես ճանաչում էի մի պառաւ կնոջ, որի աղջիկը և ամուսինը մեռել էին մի տարուայ ընթացքում, իբար յետուից երկու սարսափելի աղէտ բերելով նրա զլիսին, բայց նա զաւակներ ունէր մեծացնելու, ազարան ունէր կառավարելու: Լուսաբացից սկսած պէտք էր զբաղուել, ամեն բանի հասնել, զեկավարել զանազան տեսակ աշխատանքներ, սրոնք յըրուած էին հանգում մի քանի մզոն հեռու իրարից: Վշտահար այրին ասում էր ինձ: «Եթ օրերը մի ազատ րոպէ չունեմ լալու համար, բայց կիրակիները, օ՛, կիրակիները ես տեղը հանում եմ...» Եւ յիրաւի, կիրակի օրերը, մինչ երե-

խաները խաղում կամ զրօնում էին զրսեում, նա կէս օրից յետոյ պինդ կողավում էր իր սենեակում և մինչև երեկոյ առայի տան մէջ գոռգոռում, հեկեկում էր ու կանչում իր ամուսնուն ու աղջկան:

Տիկին Դըլօբէլը նոյն իսկ կիրակի օրերը ազատութիւն չւնէր: Զէ որ այժմ նա մէն-մենակ ալէտք է աշխատէր, չէ որ նրա մատները չունէին Դէղիրէյի նուրբ մատների չնաշխարհիկ ճարտարութիւնը, չէ որ գեղերը թանգ արժէին, և, թէկուզ աշխարհը կործանուէր, նա չէր ուզիլ զրկել «ճայրիկն» նրա սիրելի սովորութիւններից մէկից: Ուստի որ ժամին էլ հիւանդը բանար աչքերը, և՛ առաւօտեան ազօտ ցոլքով, և՛ տքնութեան լամպի լոյսով, նա տեսնում էր մօրը աշխատելիս, անվերջ աշխատելիս:

Երբ անկողնի առագաստները ծածկուած էին լինում, նա լսում էր սեղանի վրայ զրուող մկրատի չոր ու մետալային հընչւնը:

Մօր այդ յոգնատանջ աշխատանքը, այդ մշտական անքնութիւնը, որ անբաժան էր իր տենդից, մի նոր տանջանք էր խեղճ հիւանդի համար: Երբեմն այդ ցաւը մոռայնել էր տալիս միւս բոլոր ցաւերը:

—Եշխատանքս տուր ինձ տեսնենք, —ասում էր նա փորձելով նստել անկողնում:

Այդ՝ լուսաւոր բոպէներ էին օրէցօր թանձրացող խաւարի մէջ: Տիկին Դըլօբէլը, որին՝ հիւանդի այդ ցանկութիւնը վերակենցանալու բաղձանք էր թւում, ամենայն հոգածութեամբ նստեցնում էր նրան ու մօտեցնում սեղանը: Բայց ասեղը շատ ծանր էր, աչքերը շատ թոյլ էին, և սալայատակի վրայով անցնող կառքերի ամեն մի դղրդոց, փողոցից բարձրացող բոլոր աղաղակները՝ յիշեցնում էին Դէղիրէյին, որ փողոցը, լիրը փողոցը բոլորովին մօտ է նրանից: Զէ, անկասկած էր, որ նա այլ ևս ոյժ չունէր ապրելու: Ա՛խ, եթէ նա կարողանար մեռնել ու յետոյ վերածնուել... Բայց այդ անհնար էր, և նա հանգչում էր կամաց-կամաց, համակուելով գերագոյն անձնուրացութեամբ Մայրը շուտոշուտ նայում էր աղջկան և տեսնելով, որ քանի զնում՝ աւելի ու աւելի է գունատուում, հարցնում էր:

—Ի՞նչպէս ես:

—Շատ լաւ... պատասխանում էր հիւանդը կսկծալից ժպիտով, որ մի բոպէով փայլեցնում էր նրա ցաւատանջ դէմքը, ցոյց տալով նրա բոլոր աւերումները, ի՞նչպէս որ աղքատի բնակարանը ընկած արելը, փոխանակ ուրախ տեսք տալու նրան, ընդհակառակը, աւելի ևս որոշակի է ցոյց տալիս նրա մոայլու-

թիւնն ու լերկութիւնը։ Այսուհետեւ երկուսն էլ լոռում էին երկար ժամանակ. մայրը՝ լալու ահից, աղջիկը՝ բռնուած տենդից ու արդէն պարտվուած այն անտեսամնելի քօղերով, որսնցավ մահը մի տեսակ զթասասութեամբ պատում է մեռնողներին, որպէս զի կարողանայ ընկճել նրանց ոյժերի վերջին մնացորդները և որքան կարելի է հանգիստ տանի նրանց, առանց որ և է դիմադրութեամն։

Հռչակաւոր Դըլօրէլը երբէք տանը չէր նստում։ Նա ոչ մի փոփոխութիւն չէր մոցրել այն՝ անպաշտօն դերասանի կեանքի մէջ, որ վարում էր միշտ։ Եւ սակայն նա զիտէր, որ իր աղջիկը մեռնում է. բժիշկը նախազգուշացրել էր նրան։ Այդ նոյն իսկ սաստիկ յուզել էր նրան, որովհետեւ, իսկապէս ասած, նա սաստիկ սիրում էր իր զաւակին. բայց այդ օտարութի բնաւորութեան մէջ ամենախսկական, ամենաանկեղծ զգացմունքները կեղծ ու անբնական կերպարանք էին ընդունում, այն բնական օրէնքով, որի համաձայն՝ թէք տախտակի վրայ դրուած բանեւրը չեն կարող երբէք ուղիղ դիրք ունենալ։

Դըլօրէլի համար ամենազլիսաւորը այն էր, որ ամեն աեղ ցոյց տար իր վիշտը։ Բուլգարի մի ծայրից մինչև միւսը նա դժբախտ հօր զեր էր ներկայացնում։ Նրան հանդիպում էին թատրոնների մօտերքում և գերասանների սրճարաններում կարմըրած աշքերով և գունատ դէմքով։ Նա շատ սիրում էր այնպէս անել, որ հարցնեն. «Հ՞ը, ծերուկս, ինչպէս է աղջիկդ»։ Եւ այն ժամանակ նա թափ էր տալիս զլուխը ջզային շարժումով, կնճուում էր դէմքը ու սղմում բերանը, իբր թէ արցունքն ու անձքները զսպելով, և լուս հայեացքով ու լի ցասումով շանթահարում էր երկնքը, ինչպէս «Երեխանների բժիշկը» խաղալիս։ Բայց այդ բոլորը չէր խանզարումնրան ամենասիրալիր ուշադրութեամբ ու կամակատարութեամբ վերաբերուել իր աղջկան։

Այդպէս, նա սովորութիւն էր դարձել նրա հիւանդանալու օրից ի վեր ծաղիկներ բերել նրան իր զքօսանքներից յետոյ. և նա չէր բաւականանում սովորական ծաղիկներով, համեստ մանիշակներով, որ ծախում են փողոցի բոլոր անկիւններում աղքատիկ քսակների համար։ Այդ աշնանային տխուր օրերին նա վնտուում էր վարդեր, մեխակներ, մանաւանդ սպիտակ եղբեանիներ, այն ջերմոցային եղբեանիներից, որոնց ցողունն ու տերենները միւնոյն կանաչաւուն սպիտակութիւնն ունեն, կարծիս թէ բնութիւնը շտապելու պատճառով գործ է գրել միայն մի տեսակ գոյն։

— Օ՞հ, այդ չափազանց է... չափազանց... տեսէք, կը

բարկանամ,—ամեն անգամ ասում էր հիւանդը, տեսնելով, թէ ինչպէս է նա յաղթական կերպով ներս մանում փռնջը ձեռքին. բայց հայրը անսպիսի մեծ-աղայական կերպարանքով էր ասում «Թող տուր... թող տուր...», որ նա այլ ես չէր կարողանում պնդել իր ասածի վրայ:

Եւ սակայն ահազին ծախս էր պահանջում այդ, իսկ խեղճ մայրը սարսափելի տանջւում էր, որ կարողանայ բոլորի համար հաց վաստակել:

Բայց ախիքին Դըլօբէլը ոչ միայն չէր տրանջում այդ բանից, այլ, ընդհակառակը, գտնում էր, որ այդ շատ հիանալի բան է իր մեծ մարդու կողմից:

Նա զմայլում էր այդ արհամարհանքից դէպի փողը, այդ գերազանց անհոգութիւնից, և աւելի քան երեք հաւատում էր իր ամուսնու հանձարին և գերասանական ապագային:

Մի գիշեր Դէզիրէն քնից վեր թռաւ սաստիկ տարօրինակ վիճակի մէջ: Պէտք է ասել, որ նախընթաց օրը բժիշկը, այսելութեան գալով, սաստիկ զարմացած էր մնացել՝ տեսնելով նրան յանկարծ կենդանացած ու աւելի հանգստացած և ջերմը բոլորովին իջած: Առանց հասկանալու այդ անակնիալ վիրակենդանութեան պատճառը, նա հեռացել էր, ասելով «Սպասենք», յոյսը զնելով երիտասարդութեան արագ կազդուրումների, նմրքին հիւթերի այդ հրաշալի-ոյժի վրայ, որ յանախ նոր կեանք է պատուաստում նոյն իսկ մահուան նշանների վրայ: Եթէ նա նայէր Դէզիրէյի բարձի տակը, այնտեղ կը գտնէր Գահիրէյի դրոշմով մի նամակ, որ միակ պատճառն էր այդ ուրախասոփիթ փոփոխութեան: Մի նամակ, բազկացած չորս էջից և ֆրանցի ստորագրութեամբ, որ բացատրում էր ու խոստավանում իր սիրելի Զիզիին իր ամբողջ վարժունքը:

Հէնց այդպիսի նամակ էր երազում հիւանդը: Եթէ նոյն իսկ ինքը թելազրած լինէր նամակը, այդքան լիովին արտայատուած չէին լինի այն խօսքերը, որոնք պէտք է շարժէին նրա սիրտը, և այն բոլոր քննոյչ ներողութիւնները, որոնք պէտք է սպեղանի լինէին նրա վէրքերին: Ֆրանցը զղջումն էր յայտնում, ներողութիւն էր խնդրում, և, առանց ոչինչ խոստանալու նրան, առանց մանաւանդ որ և է բան խնդրելու նրանից, պատմում էր իր հաւատարիմ մտերմին իր մաքառումները, խղճի խայթոյցները, քաշած տանջանքները: Նա զայրոյթով էր խօսում Սիրօնիի մասին, խնդրում էր Դէզիրէյին չը հաւատալ նրան, և ոխակալութեամբ, որ սրատես և ահուելի էր չնորհիւ հին կրքոտ սէրին, նա զգուշացնում էր նրան այդ փչացած ու վայր ի վերոյ բնաւորութիւնից, այդ անշեշտ ձայնից, որ կարծես ստեղծուած

Էր սաելու համար և որի մէջ երբէք չէր լսուել սրտից բղխած մի հնչիւն, որովհետեւ նա գլխից էր զուրս զայխ, ինչպէս այդ պարիզեան տիկնիկի բոլոր մոլեգին ձգտումները:

Ո՞րքան ցաւալի բան էր, որ այդ նամակը մի քանի օր չուտ չէր ստացուել: Այժմ այդ բոլոր քաղցր խօսքերը նոյնն էին Դէզիրէյի համար, ինչ որ հիանալի կերակուրները, երբ շատ ուշ են հասցնում սովորական եղողին: Նա հոտոտում է կերակուրները, փափաղում է ուտել, բայց այլ ես ոյժ չունի ուտելու: Ամբողջ օրը հիւանդը կարդում էր ու նորից կարդում նամակը: Նա հանում էր նամակը ծրաբից, յետոյ սիրազին ծալում, և փակած աչքերով տեսնում էր ամբողջապէս, մինչև իսկ նամականիշի գոյնը: Ֆրանցը մտածել էր նրա մասին: Այդ բաւական էր նրան ներչնչելու քաղցր անդորրութիւն, որի չնորհիւ նա վերջապէս քուն եղաւ՝ այնպիսի տպաւորութեամբ, որպէս թէ մի մտերիմ բազուկ յենարան էր գարձել նրա թոյլ գլխին:

Յանկարծ նա զարթնեց, ինչպէս ասացինք մի քիչ առաջ, տարօրինակ վիճակի մէջ: Մի տեսակ թուլութիւն, անձկութիւն, ինչոր անբացատրելի բան էր զգում նա իր ամբողջ էութեան մէջ: Նրան թւում էր, թէ ինքը կապուած է կեանքի հետ միայն մի մաղանման թելով, որը այնքան ձգուած է, որ քիչ է մնում կտրուի, և որի ջղային երերումները նրա բոլոր զգայարանքներին տալիս էին գերբնական նրբութիւն ու սրութիւն: Դեռ դիշեր էր նրա պառկած սենեակը—նրան տուել էին իր ծնողների անեակը, որ աւելի օդաւէտ էր, աւելի ընդարձակ, քան իր փոքրիկ ննջախորշը—կիսով չափ ստուերի մէջ էր: Գիշերային լամպը ցոլացնում էր առաստաղի վրայ իր լուսաւոր շրջանները, այդ իւրատեսակ մելամազմէկ Մեծ-Արջի համաստեղութիւնը, որ զբաղեցնում է հիւանդներին անգուն զիշերները, իսկ աշխատութեան սեղանի վրայ՝ ցածացրած և լուսամիոփիսվ սահմանափակուած լամպը լուսաւորում էր միմիայն ցիր ու ցան ձեռագործ և բազկաթուում նըզըզած տիկին Դըլօբէլի կերպարանաստուերը:

Դէզիրէյի գլխում, որ այժմ իրան սովորականից թեթե էր թւում, յանկարծ մտերի ու յիշողութիւնների մի սաստիկ իրարանցում սկսուեց: Իր կեանքի ամենահեռաւոր կէտերը կարծես մօտեցել էին նրան: Մանկութեան ամենաչնչին դէզիրէրը, այնպիսի իրազութիւններ, որ այն ժամանակ չէր կարողացել հասկանալ, կարծես երազում լսուած խօսքեր՝ հանդէս էին եկի այժմ նրա մաքի առաջ:

Խեղճ աղջիկը մնացել էր ապշած ու սարսափած: Նա չը զիտէր, որ մահուան պատճառած վերջնական չքացումից առաջ,

մարդիկ յաճախ ունենում են տարօրինակ զերազրգուման այդպիսի մի բողէ, որպէս թէ մարդուս ամբողջ էռլիթիւնը յուսահատօրէն լարում է իր բոլոր ընդունակութիւնները և ոյժերը օրհասական և անգիտակից մաքառման մէջ:

Իր անկողնից նա տեսնում էր հօրն ու մօրը, մէկին՝ իր կողքին, միւսին՝ արհեստանոցում, որի գուռը բայց էին թողել: Տիկին Դըլօբէլը մնենուել էր իր բազկաթոռում՝ վերջապէս ուշադրութեան արժանացած երկարաւու յոգնածութեան լքումով. այն բոլոր սպիները, սրի հարուածների այն բոլոր հետքերը, որ ժամանակը ու տառապանքը թողնում են պառաւած դէմքերի վրայ, տիրագին ու անջինջ երեսում էին քնի մնողկութեան մէջ: Ցերեկուայ ընթացքում՝ մարդուս կամքը և հոգսերը մի տեսակ դիմակ են դնում դէմքի խսկական արտայայտութեան վրայ. բայց գիշերը տալիս է դէմքերին նրանց խսկական տեսքը: Այդ բոպէին՝ պարզ երեսում էին այդ կորովի կնոջ խոր կնճիռները, կարմրած կոպերը, քունքերի մօտ ցանցառացած ու սպիտակած մազերը և կծկուած յոգնատանջ ձեռքերը: Եւ Դէզիրէն տեսաւ այդ բոլորը: Ո՛րքան կ'ուղէր նա ոյժ ունենալ վեր կենալու և համբուրելու մօր սիրուն ու անդորր ճակատը, որ ակօսուած էր կնճիռներով, բայց մնում էր յստակ:

Իբր կատարեալ հակասպատկեր, կիսաբաց դուան միջով երեսում էր հոչակաւոր Դըլօբէլը, որ նստած էր իր սիրած զիրքերից մէկը ընդունած: Երեք քառորդի չափով դարձած դէպի սեղանը ծածկող սպիտակ սփոռոցը, նա ընթրիք էր անում և միւնոյն ժամանակ աչքի անցնում մի գրքոյկ, որ դէմ էր տուել ջրի շին: Մեծ մարդը նոր էր վերագրածել,—երեի, հչնց նրա ոտնածայնն էր զարթեցրել հիւանդին,—և, գեռ բոլորովին յուղուած մի գեղեցիկ ներկայացման շարժումից ու ազբուկից, մէն-մնակ ընթրում էր լրջօրէն ու հանդիսաւոր կերպով, սըղմուած իր նոր սիւրտուկի մէջ, անձեռոցիկը կզակի տակից ամրացրած, մազերը ունելիքով խուճուծ զրած:

Առաջին անգամ իր կեանքում Դէզիրէն նկատեց այդ զարմանալի ներհակութիւնը իր ուժասպատ մօր մէջ, որի անչնորդ սև շորերը կախ էին ընկնում վրայից, աւելի ևս նիհար ու մաշուած ցոյց տալով նրան, և իր երջանիկ, մսում կորած, անդործ, հանգիստ ու անհոգ հօր մէջ: Մի հայեացքով նա հասկացաւ այդ երկուսի կեանքի տարբերութիւնը: Այն սովորութիւնների շրջանակը, որի առանձնայատուկ լոյսին, վերջ ի վերջոյ, ընտելանում են երեխաների աչքերը, այնպէս որ նրանք դազարում են այլ ևս շատ պարզ տեսնելուց, չքացել էր նրա համար: Այժմ նա որոշ տարածութիւնից էր դատում իր ծնողների մասին, կար-

ծես թէ սնդգալի կերպով հեռանալով նրանցից։ Վերջին ժամուայ այդ պարզատեսութիւնն էլ մի նոր տանջանք էր նրա համար։ Ի՞նչ էր լինելու նրանց վիճակը իր մահից յետոյ։ Կամ մայրը աշխատելու է ուժից վեր ու մեռնելու ուժասպառութիւնից, կամ թէ խեղճ կինը ստիպուած է լինելու հրաժարուել որ և է աշխատանքից և նրա եսական կողակիցը, որ միշտ զբաղուած է իր թատրոնական մնափառութեամբ, թալնելու է, որ նրանք երկուսով փոքր առ փոքր խրուեն ծայրայեղ աղքատութեան մէջ, այդ սև գուբի մէջ, որ՝ որքան մարդ աւելի է իջնում։ այնքան աւելի լայնանում է ու խորանում։

Եւ սակայն նա չարասիրտ մարդ չէր, նա այդ ապացուցել էր նրանց շատ անգամ։ Միայն թէ նա բոլորովին կուրացած էր և ոչ մի բան չէր կարողացել փարատել այդ կուրութիւնը... Խակ եթէ ինքը փորձէր։ Եթէ նախ քան շունչը փչելը, —սիրաը վկայում էր, որ այդ շուտով կը լինի, —եթէ նախ քան շունչը փշելը ինքը պոկէր այն հաստ ակնակապը, որ այդ խեղճ մարդը կամաւ և զօրով պահում էր իր աշքերի վրայ։

Միմիայն իր ձեռքի նման թեթե, սիրագին ձեռք կարող էր փորձել պոկել այդ կամպը։

Ինքը միայն իրաւունք ունէր ասելու հօրը.

—Հաց վաստակիր... Զեռք քաշիր թատրոնից։

Եւ որովհետեւ պէտք էր շտապել, Դէղիրէ Դըլօրէլը զինուեց իր ամբողջ քաջութեամբ և մեղմ ձայնով կանչեց։

—Հայրիկ... հայրիկ...

Աղջկայ ձայնը լսելուն պէս մեծ մարդը վազէվազ եկաւ։ Նրա մօտ։ Այդ երեկոյ մի առաջնեկի ներկայացում էր եղել Ամբիգիւ թատրոնում և նու վերադարձել էր այնտեղից բորբոքուում, էլեքտրացած։ Զահերը, ծափհարները, խօսակցութիւնները միջանցքներում, այն բոլոր դրգորիչ մանրամասնութիւնները, որոնցով մնունդ էր առնում նրա մոլութիւնը, այդ օրը աւելի էին յափշտակել նրան, քան երբ և իցէ։

Նա մտաւ Դէղիրէյի սենեեկը, ճաճանչափայլ ու վեհ կերպարանքով, լամպը ձեռքին ուղիղ բռնած և մի կամելիա խրած կոճակի մէրքին։

—Բարի երեկոյ, Զիղի։ Քնած չես ուրեմն։

Եւ նրա խօսքերի ուրախ եղանակը տարօրինակ կերպով հնչեց այդ տիսուր շրջապատի մէջ։

Դէղիրէն ձեռքով նշան արեց նրան, որ լոի, ցոյց տալով, որ մայրը քննած է։

—Վայր դրէք լամպը... խօսելիք ունեմ ձեղ հետ։

Նրա ձայնը, որ խոլուում էր յուզմունքից, զարմացրեց հօրը,

նոյնպէս և աչքերը, որոնք լայն բացուած էին և խնչոր սրա-թափանց հայեացքով էին նայում, հայեացք, որ նա երբէք չէր տեսել աղջկայ աչքերում:

Մի քիչ շփոթուած այդ բանից, նա մօտեցաւ հիւանդին, կամելիան պատրաստ բռնած նրան տալու համար, բերանը կլոր կուչ ածած և նոր կօչիկների ճոճոցով, որ նա շատ արխատօ-կրատական բան էր համարում: Նրա գիրքը ակներեաբար բռնազբօսիկ էր, և այդ առաջնուում էր անշուշտ այն չափա-զանց մեծ հակապատկերից, որ կազմում էին փայլուն և ազմը-կալից թատրոնական դահլիճը, որտեղից նա նոր եկել էր, և հիւանդի այդ փոքրիկ սենեակը, ուր խլացրած ձայները և ցա-ծացրած լամպերի լոյսը չքանուում էին տենդու մթնոլորտի մէջ:

—Ի՞նչ է պատահել, հոգեակս... Վատ ես զգում քեզ:

Դէզիրէն իր փոքրիկ ու գունատ զլխի թեթև շարժումով պատասխանեց, որ յիրաւի վատ է զգում իրան և կ'ուզէր խօ-սել նրա հետ բոլորովին մօտիկից: Երբ որ հայրը մօտեցաւ նրա զլխավերիին, նա գրեց իր կրակի պէս վառուող ձեզը մեծ մարդու բաղուկին և շնչաց նրա ականջին... Նա շատ վատ էր զգում իրան, չափազանց վատ: Նա շատ լաւ հասկանում էր, որ այլ ես երկար չէ ապրելու:

—Այն ժամանակ, հայրիկ, դուք բոլորովին մենակ կը մնաք մայրիկի հետ... Ինչո՞ւ էք դողում այլպէս... Դուք գի-տէիք, որ այսպէս պէտք է լինի, որ նոյն իսկ շուտով է լինելու այսպէս... Միայն թէ ես ուզում եմ ձեզ ասել... Իմ մահից յետոյ, վախենում եմ, որ մայրիկը չը կարողանայ մենակ սրահել տունը... Տեսէք, ինչպէս գունատ ու յոզնած է նա:

Դերասանը նայեց իր «սուրբ կնոջ» վրայ և կարծես սաս-տիկ զարմացաւ, տեսնելով, որ յիրաւի գէմքը շատ անառողջ էր Յետոյ նա միսիթարեց ինքն իրան նկատելով եսականորէն.

—Նա շուտ էլ առողջ չի եղել երբէք...

Այդ նկատողութիւնը և այն եղանակը, որով նա արեց այդ նկատողութիւնը, զայրացրին Դէզիրէյին և նրան ամրապն-դեցին իր վճռի մէջ: Նա շարունակեց, առանց աշխատելու իննայ-ել գերասանի մտապատրանքներին.

—Ի՞նչ է լինելու ձեր երկուսիդ վիճակը իմ մահից յետոյ... Այո, ես գիտեմ, որ դուք մեծ յոյսեր էք տածում, բայց ահա որքան տարի է նրանք չեն իրազործուում: Այն, ինչ որ դուք այդքան երկար ժամանակ սպասում էք, կարող է էլի ուշանալ, իսկ ի՞նչ պէտք է անէք դուք մինչև այն ժամանակ... Լսէք, սի-րելի հայրիկ, ես չէի ուզի ձեզ ցաւ պատճառել, բայց ինձ թը-ւում է, որ ձեր հասակում և ձեր խելքով դուք հեշտութեամբ

կարող էիք... Պ. Ռիսլէր աւագը, վատահ եմ, ամեն կերպ կաշակցէր...

Նա խօսում էր դանդաղ կերպով, ճիգ գործ դնելով, բառներ վինտուելով, երկար լոելով ամեն մի նախադասութիւնից յետոյ, յուսալով, որ իր կիսատ թողածը կը լրացնի հայրը մի շարժումով, մի բացականչութեամբ: Բայց զերասանը չէր հասկանում նրա միտքը: Նա ականջ էր դնում, նայում էր նրան կոկոն աչքերը լայն բացած, անորոշ կերպով զգալով, որ այդ անմեղ ու անողոք մանուկի խղճից ինչ որ մեղադրանք է բարձրանում իր դէմ: Սակայն նա չը գիտէր, թէ ինչ մեղադրանք է այդ:

—Ինձ թւում է, որ գուք լաւ կ'անէիք, —անհամարձակ շարունակեց Դէզիրէն, —ինձ թւում է, որ գուք լաւ կ'անէիք, եթէ հրաժարուէիք...

—Հօք... ի՞նչ... ի՞նչպէս...

Հիւանդը կանգ առաւ տեսնելով, թէ ինչ տպաւորութիւն գործեցին հօր վրայ իր խօսքերը: Ծեր զերասանի շարժուն դէմքը յանկարծ կծկուեց սաստիկ յուսահատութիւնից, և կսկիծը այն աստիճան սղմում էր կոկորդը, որ աչքերը լցուեցին արցունքներով, իսկական արցունքներով, որ նա նոյն իսկ չէր աշխատում ծածկել ձեռքի կոնակով, ինչպէս անում են բեմում: Թշուառականը սկսում էր հասկանալ... Այդպէս ուրիմն նրա փառքից երես էր թերում մէկը այն երկու անձնաւորութիւններից, որոնք նրա տաղանդի միակ հաւատարիմ երկրպագուներն էին մնացել: Իր աղջիկը այլ հս չէր հաւատում նրա տաղանդին: Բայց չէ, այդ անկարելի բան էր: Նա, անշուշտ, լաւ չէր լսել, լաւ չէր հասկացել... Ինչից լաւ կը լինի որ նա հրաժարուի, թող ասի տեսնենք... Բայց Դէզիրէն սիրտ չարեց վերջացնել իր ասելիքը, տեսնելով հօր համր հայեացքը, որ խնդրում էր խնայել իրան: Բացի այդ, խեղճիկի ոյժերը և շունչը սպառում էին արդէն:

Նա շնչաց երկու, երկք անգամ.

—Եթէ հրաժարուէիք... հրաժարուէիք...

Յետոյ նրա փոքրիկ գլուխը վայր ընկաւ բարձի վրայ, և նա մեռաւ, առանց սիրտ անել հօրը, թէ ինչից լաւ կը լինէր որ նա հրաժարուէր...

Մի ոմն Դըլօբէլը մեռաւ, պ. թաղապետ: Ես որ ասում էի, թէ նա այլ հս չի կրկնի: Այս անգամ մահը ազատեց նրան փողոցներով գնալու նեղութիւնից: Ինքը եկաւ նրան տանելու: Եւ ահա, թերահաւատ մարդ, սոճիի չորս տախտակներ, մեխե-

բով պինդ ամրացրած, գրաւական են ձեր առաջ նրա խոստման համար: Նա խոստացաւ չը կրկնել այլ ես, և չի կրկնի:

Կաղիկը մեռաւ: Այդ էր ամենամոր լուրը ֆրան-Բուրժուա թաղում, ուր իրարանցում էր ընկել այդ ախուր գեպքի չնորդիւ: Ի հարկէ, Դէզիրէն չէր կարող շատ ժողովրդական լինել այնտեղ, քանի որ երեք տաճից գուրս չէր գալիս և շատ ուշուց էր երեսում տիրատես պատուհանում իր ճգնաւորական գունատութեամբ և անխոնջ աշխատաւորներին յատուկ կապտածիր աչքերով: Բայց հոչակաւոր Դըլօրէլի աղջկայ թաղմանը անշուշտ շատ գերասաններ կը լինէին, իսկ Պարիզը պաշտում է գերասաններին: Նա սիրում է տեսնել զերեկը, արհով, փողոցների մէջ անցնելիս՝ իր երեկոյեան կուռքերին. ուզում է դժուել նրանց իսկական կերպարանքները, աղատ՝ բեմի գերբնական պայմանների ազգեցութիւնից: Եւ յիրաւի, այդ առաւօտ, մինչ Բոաք փողոցի փոքրիկ ու նեղ դռան վերին մասը պատում էին սպիտակ պաստաններով, մուրճի ուժդին հարուածներով ամրացնելով մեխսները, հետաքրքիր բազմութիւնը լցուել էր մայթերի և սալայատակի վրայ:

Պէտք է արդարն ասել, գերասանները սիրում են միմեանց, կամ գոյնէ արհեստակցութեան կապ, համերաշխութիւն կայ մէջները, որ նրանց համախմբում է ամեն անզամ, երբ ովէսք է լինում մի ցայց անել,—երեկոյթների, նուագահանդէսների, ընկերակցական ճաշերի, թաղումների ժամանակի:

Թէպէտ և հոչակաւոր Դըլօրէլը այլ ես տեղ չունէր թատրոնում, թէպէտ և նրա անունը աւելի քան տասնըհինգ տարուց ի վեր բոլորպիլն անհետացել էր թատրոնական քննադատութիւններից: և յայտարարութիւններից, բայց բաւական էր, որ մի երկտող յայտարարութիւն տպուէր մի աննշան թատրոնական թերթում, թէ՛ Մէգի եւ Ալանունների նախկին դերասան Դըլօրէլը վետահար սրտով եւ այլն... Համախմբուելու են եւ այլն, որպէս զի Պարիզի բոլոր անկիւններից և հեռաւոր ծայրերից գերասանները խումբ-խումբ շտապէին այդ կոչին:

Յայտնի ու անյայտ, հոչակաւոր ու անհոչակ, բոլորը այդտեղ էին, նրանք, որոնք խաղացել էին Դըլօրէլի հետ գաւառներում, նրանք, որոնք հանդիպում էին նրան թատրոնական սրճարաններում, ուր նա մէկն էր այնտեղ միշտ տեսնուող այն գէմքերից, որ դժուար է կապել մի անուան հետ, բայց որոնք միշտ յիշուում են չնորհիւ այդ միջավայրի, որի մէջ միշտ տեսնում են նրանց և որի մի մասն են նրանք կարծես կաղմում. վերջապէս, անցողակի Պարիզում գտնուող գաւառական գերա-

սահններ, որոնք և կել էին այնտեղ մի թատրոնապետ ճարելու, նպաստաւոր հրաւեր ստանալու համար:

Եւ ամենքը, թէ անյայտները, թէ հոչակաւորները, թէ պարիզեցիները, թէ գաւառայիները, մի հոգս ունէին միայն, — մի որ և է լրագրում կարդալ իրանց անունը թաղման տեղեկագրութեան մէջ: Որովհետեւ այդ սնափառ արարածների համար բաղձալի են յայտնի դառնալու բոլոր ձևերը: Նրանք այնքան վախենում են, թէ հասարակութիւնը սկսում է մոռանալ իրանց, որ այն միջոցին, երբ նրանք բնմ չեն գուրս գալիս, պահանջ են գուրում խօսեցնել տալ իրանց մասին, յիշեցնել տալ իրանց գոյութիւնը ամեն տեսակ միջոցներով! Պարիզի յեղյեղուկ և վաղանցուկ ժողովրդական կարծիքին:

Ժամի իննից ի վեր, Մառէի բոլոր մանր թաղականները, — այդ՝ գաւառացիներին յիշեցնող բամբաւասէր բազմութիւնը, — պասուհաններում, գոներում, փողոցում խոնուած սպասում էին գերասանների անյնելուն: Արհեստանոցներում բանողները գիտում էին իրանց լուսամուտների փոշոտ ապակիների միջով, մանր բուրժուանները իրանց խաչմերուկ գցած վարագոյրների բացուածքից, տանտիրութիւնները՝ զամբիւղները կոներին, արհեստաւոր աշակերտները՝ ծրաբները գլուխներին:

Վերջապէս նրանք եկան՝ որը ոտով, որը կառքով, ոմանք մենակ, ոմանք խմբով: Նրանց հեշտ էր ճանաչել նրանց ածիւլած, կղակի ու թշերի կողմը կապտաժեռ՝ դէմքերից, նրանց անբնական, չափազանց փքոցուռոյց կամ չափազանց պարզ ձեւերից, արհեստական շարժումներից, և մանաւանդ այն ծայրայեղ սանտիմէնտալութիւնից, որ նրանց մէջ զարգանում է չնորհիւ այն չափազանցեցման, որ անհրաժեշտ է բեմական տպաւորութեան համար: Ճիշտ որ շատ հետաքրքրական էր գիտել այն տարրեր ձեւերը, որով այդ պարունները արտայայտում էին իրանց յուղմունքները այդ տիսուր դէպքի առիթով: Իւրաքանչիւր գերասանի մուտքը մեռելատան խճաքարած ու մութ բակը կարծես բեմելք լինէր, և տարբերւում էր նայելով գերասանի ամպլուային: Առաջնակարդ ուժեղ դեր խաղացողները, չարագոյժ դէմքով, խոժուած յօնքերով, բոլորն էլ, բակը մանելիս, ձեռնոցի ծայրով սրբում էին աչքերի անկիւնից կախ ընկած արցունքը, որ այլ ևս անկարող էին պահել, յետոյ հառաչում էին, նայում էին երկնքին, և մնում էին կանգնած բեմի, այսինքն բակի մէջաւեղում, գլխարկները դէմ տուած ազդրներին, թեթևակի խիթելով գետնին ձախ ոտները, որ նպաստում էր նրանց զսպել իրանց վիշտը: «Առիք, լոիք, սիրտ իմ»: Կոմիկները, ընդհակառակը, բեմելքը կատարում էին բոլորովին հասարակ կերպով:

Նրանք մօտենում էին իրար խղճուկ ու բարեհովի կերպարանքով, միմևանց «հալեսոր» էին անուանում, բարեելիս ուժգին կերպով թափահարում էին իրար ձեռք, մինչ այտատակերը թուլամորթ կերպով դողդողում էին, աչքերի անկիւնները ու շրթունքների ջնակները կախ էին ընկնում, որ ֆարսի տափակութիւն էր տալիս նրանց խանդաղատանքին:

Բոլորն էլ սեթեեթ և բոլորն էլ անկեղծ...

Բակը մտնելուն պէս այդ պարոնները բաժանուեցին երկու բանակի: Հոչակաւոր, բախտաւոր գերասանները արհամարհանքով էին նայում անյայտ ու վնթի Ռօբրիկարներին, որոնց նախանձուութիւնը պատասխանում էր այդ արհամարհանքին հաղար ու մի կծու նկատողութիւններով.—«Տեսել էք, ինչպէս է այս ինչը ծերացել, ոյժից ընկել... Այլ հո չի կարող երկար ժամանակ պահել իր ամպուան»:

Հոչակաւոր Դըլօբէլը ոտից զլուխ սկազգեստ ու սե ձեռնոցներով, գնում գալիս էր մի խմբից միւսը, կարմրատակած աչքերով, հուսկ տուած ատամներով և լուս սղմելով սրա նրա ձեռքը: Տնաւերի սիրալ լիքն էր արցունքներով, բայց այդ չէր խանդարել նրան դէպքի առիթով խուճում գնել տալ մազերը և յետելից էլ բախտ բաց անել տալ ա la Capoule: Օտարոտի բնաւորութիւն: Ոչ ոք չէր կարող, նրա հոգու խորքը թափանցերով, ասել, թէ որտեղ է այն կէտը, ուր վերջանում է իսկական վիշտը և սկսում ցուցամոլութիւնը,—այն աստիճանն նրանք խառնուած էին իրար հետ... Դերասանների խմբի մէջ էին նաև մեր ծանօթներից մի քանիսը. պ. Շէքը, որ աւելի քան երբէք վեհ կերպարանք էր ընդունել և զբաղկոտ շտապողութեամբ պտոյտապոյտ էր գալիս համբաւաւոր գերասանների շուրջը, մինչ տիկին Շէքը մնացել էր վերևում վշտահար տիկին Դըլօբէլի մօտ: Սիրօնին չէր կարողացել գալ, բայց այնտեղ էր Ռիսէքը աւազը գրեթէ նոյնքան յուզուած, որքան պ. Դըլօբէլը, բարի Ռիսէքը, վերջին ժամուայ բարեկամը, որ յանձն էր առել տիսուր ծէսի ամբողջ ծախսը: Այդ էր պատճառը, որ սպակառքերը հիանալի էին, պաստառները՝ արծաթածով և զիազտրդը ծածկուած սպիտակ մանշակներով ու վարդերով: Բոսք փողոցի այդ խղճուկ ու մութ գաւիթում՝ մոմերի լոյսով դուլացող այդ համեստ սպիտակ փունջերը, այդ դողդոջուն և օրհնուած ջրով սրսկած ծաղիկները՝ շատ նմանում էին այդ խեղճիկի բախտին, որի ամենաչնչին ժպիտները միշտ ողողուած էին եղել արցունքներով:

Ցուղարկաւորութիւնը շարժուեց, քայլ առ քայլ, դանդաղորէն, Մառէյի ծուռ ու մուռ փողոցներով:

Ամենից առաջ գնում էր Դըլօբէլը, որ ցնցւում էր հեկե-

կանքներից, զրեթէ նոյնքան խանդաղատուելով ինքն իր վրայ, իր զաւակը թաղող անբախտ հօր վրայ, որքան իր մեռած աղջկայ վրայ, և իր անկեղծ վշտի խորքում պահպանելով իր մշտական սնափառ բնաւորութիւնը, որ մնում էր այնտեղ, ինչպէս մի քար առուակի յատակում, անշարժ յեղյեղուկ ալիքների տակ: Ծէսի հանդիսաւորութիւնը, յուղարկաւորութեան սև շարքը, որ անցնելիս կանգնեցնում էր փողոցային երթեւեկութիւնը, սեասքօղ կառքերը, Ռիսէքների փոքրիկ կառքը, որ Սիդնէն ուղարկել էր հանգէսին շուք տալու համար, այդ բոլորը շայում էր նրա ինքնամիրութիւնը, զմայլեցնում էր նրան, չը նայելով նրա անկեղծ վշտին: Վերջապէս, չը կարողանալով այլ ևս զիմանալ, նու կոացաւ դէպի Ռօբրիկարը, որ գնում էր նրա կողքով, և ասաց:

—Տեսար:

—Ի՞նչ:

Եւ մեռելի դժբախտ հայրը, աչքերը սրբելով, չնչաց ոչ առանց հապարտութեան:

—Երկու սեփական կառք կայ...

Խեղձիկ Զիզի, որ ամնքան բարի էր միշտ ու այնքան պարզասիրտ: Նրան չէր սազում ամենսին այդ մարդկանց ցուցամալ վիշտը, այդ հանդիսաւոր լալկանների շքախումը:

Բարեբախտաբար, վերեռում, արհեստանոցի պատուհանի առաջ, փակուած վանդակափեղկերի յետեռում, կանգնած էր տիկին Դըլօբէլը, որին չէին կարողացել խանդարել նայելու իր աղջկայ յուղարկաւորութեանը:

—Մնաս բարե՛... մնաս բարե՛... չնչալով ասում էր խեղճ մայրը, գրեթէ ինքն իր հետ խօսելով և թափ տալով ձեռքը ծերունու կամ խենթի անդիտակից շարժումով:

Բայց որքան էլ մեղմ ձայնով ասէր նա այդ հրաժեշտի ողջոյնը, Դէզիրէ Դըլօբէլը չէր կարող չը լսել:

Չ Ո Ր Ր Ո Ր Դ Գ Ի Բ Ք

I

Փոքրիկ կապուտակ մարդու ֆանտասիկական առասպելլ:

Չեր գործն է, կարող էք չը հաւատալ, բայց ես հաստատ հաւատում եմ փոքրիկ կապուտակ մարդու գոյութեանը: Ասէք տեսած լինեմ նրան, չէ, չեմ տեսել երբէք, բայց իմ բարեկամ-
Սեպտեմբեր, 1901.

ներից մէկը, մի բանաստեղծ, որին ես վերաբերւում եմ ամենայն վստահութեամբ, ինձ շատ անգամ պատմել է, որ ինքը մի գիշեր գէմ առ գէմ հանդիպել է այդ տարօրինակ փոքրիկ գեռւկին, և ահա թէ ինչ հանգամանքներում:

Իմ բարեկամը սխալուել էր ու իր գերճակին մուրհակ էր տուել և ինչպէս բոլոր վառ երևակայութեան տէր մարդիկ, թուղթը ստորագրելուն պէս՝ իրան պարագից ազատուած էր համարել ու բոլորովին մուսացել մուրհակի մասին: Արդ, մի գիշեր մեր բանաստեղծը վեր է թոչում քնած տեղից մի տարօրինակ աղմուկ լսելով իր ծինելոյզի մէջ: Նա կարծում է սկզբում, թէ այդ մի սառած ճնճղուկ կը լինի, որ ուզում է տաքանալ հանգած կրակի գոլ շոգիում, կամ թէ հողմացոյցը կը լինի, որ ճնճղում է փոփոխական քամուց: Բայց մի քիչ անց աղմուկը սաստկանում է և նա պարզ ջոկում է փողերի քսակի ճրշնգ-ճրշնգոց ու ինչ որ շղթայի չըխչըխկոց: Միևնույն ժամանակ նա լսում է, որ մի բարակ ու սուր ձայն, նման շոգեկառքի հեռաւոր սուրոցի, և պարզ, ինչպէս աքրորականչը, գոռում է իրան կտուրի վերելից: «Պայմանաժամը... պայմանաժամը»:

—Օխ, Տէր իմ Աստուած... մուրհակս,—ասում է ինքն իրան խեղճ բանաստեղծը, յիշելով յանկարծ, որ գերճակի պարտքի ժամանակը լրանում է մը շաբաթից յիսոյ, և մինչև առաւօտ մի կողքից միւսն է դառնում, քուն վնասուելով իր անկողնի բոլոր խորշերում և քնի տեղ դանելով միմիայն այդ անիծած մուրհակի պատճառած մտատանջութիւնը:

Միւս օրը, երկրորդ օրը, հետեւեալ բոլոր գիշերները նա զարթնում էր նոյն ժամին և նոյն ձևով. դարձեալ փողերի զըրընգոցը, շղթայի չըխչըխկոցը և բարակ ու սուր ձայնը, որ աղղակում էր, քմծիծաղ տալով. «Պայմանաժամը... պայմանաժամը»: Ամենասարսափելին այն էր, որ քանի պայմանաժամի օրը մօտենում էր, ձայնը աւելի սուր ու ահեղ էր դառնում, իր սպառնալիքներով, որ գոյքը կը դրեն և դատարանի կը դիմեն:

Խեղճ բանաստեղծ. բաւական չէին ցերեկուայ յոգնութիւնները, ամբողջ քաղաքը ոտնատակ տալը մի քիչ փող ճարելու համար. այժմ էլ պէտք է այդ անգութ ձայնը գար նրան քնից ու հանգստից զրկելու: Բայց ումը կարող էր լինել այդ փանտաստիկական ձայնը: Ո՞ր չարսնենգ էակը կարող էր այդպէս զուարճանալ նրան նահատակելով: Նա ուզում էր պարզել այդ հարցը: Եւ ահա, մի երեկոյ, փոխանակ պառկելու, նա հանգնում է ճրագը, բանում է պատուհանը և նստած սպառում:

կարիք չը կայ ձեզ ասելու, որ իբր քնարերգակ բանաստեղծ, իմ բարեկամը ապրում էր շատ բարձր սինեակում, կը տուրների բարձրութեամբ Մի քանի ժամ շարունակ նա ոչինչ չէր տեսնում բացի այդ իրար սղմուած, իրար կոթնած տանիքների գեղանկար տարածութիւնից, որ ամեն ուղղութեամբ կարասուած էր վիթխարի անդունդների նման փողոցներով և որին քմահած զանազանակերպութիւն էին տալիս լուսնի շողքից ցուքին տուող ծխնելոյդներն ու կատարները: Նիրհած ու խաւարամած Պարիզի վերնում այդ տարածութիւնը կարծես մի երկրորդ քաղաք լինէր, մի օդային քաղաք, առկախ ու սաւառուն՝ խաւարի դատարկութեան և լուսնի շացուցիչ շողքի արանքին:

Իմ բարեկամը երկար սպասում է: Վերջապէս, առաւօտուայ զէմ, ժամի երկուսին կամ երկին, երբ խաւարի մէջ ցըցուած ըոլոր դանգակատները սկսեցին իրար հազորդել ժամը, մի թեթև քայլ սլացաւ նրա մօտով տանիքների կղմինդրների ու հերձաքարերի վրայով, և մի բարակ ու սուր ձայն սուլեց նրա ծխնելոյդի խողովակով «Պայմանաժամը, պայմանաժամը...» Այս ժամանակ մեր բանաստեղծը, մի քիչ կուսալով, տեսաւ անհծոած սատանաճուտին, որ տանջումէ մարդկանց և մի շաբաթից ի վեր չէր թողնում, որ նաքնի: Նա չը կարողացաւ ինձ հաստատասել, թէ ինչ հասակ ունէր այդ սատանաճուտը, —լուսնի բաները ովէ հասկանում, երբեմն այնպիսի ֆանտաստիկական չափսեր է տալիս առարկաներին ու նրանց ստուերներին, որ մարդ մնում է ապշած: Նա այնքանն էր նկատել միայն, որ այդ տարօրինակ գեռուկը հազնուած էր բանկի փոքրաւորների նման, —կասպոյս ֆրակ արծաթէ կոճակներով, ծալովի գլխարկ, երիզաւոր թեքեր, —և որ նա կռնատակին ունէր գրեթէ իր մեծութեամբ կաշուէ թղթակալ, որի բանալին, որ կախուած էր մի երկար շղթայից, սաստիկ զրնգում էր ամեն քայլափոխին, ինչպէս և փողի տոպրակը, որ նա թափահարում էր միւս ձեռքով: Այդպէս է ահա երևացել իմ բարեկամի աչքին փոքրիկ կապուտակ հոգեսրը, այն միջոցին, երբ արագ անցնելիս է եղել լուսնի շողքի միջով: Բարեկամս ասում էր, որ նա շատ վագ ու զբաղկուած տեսք ունէր և մի անգամից լուր էր տալիս փողոցի այս կողմից այն կողմը ու սլանում էր մի ծխնելոյդից միւսը սլալով տանիքների կատարների վրայով:

Շատ մարդ ունէր այցելելու այդ անիծած սատանաճուտը: Այնքան վաճառականներ կան Պարիզում, այնքան զանազան մարդիկ, որոնք ամսավերջի վճարումներ ունեն, այնքան դժգախտաներ, որոնք պարտամուրհակ են տուել կամ իրանց ստո-

րազրութիւնը գրել մի որ և է փոխանակապրի վրայ։ Այդ ամենքին կապուտակ մարդուկը անցողակի նախազգուշացնում էր իր չարագոյժ աղաղակով։ Նա ուղղում էր այդ աղաղակը գործարաններին, որոնք մութ ու համր էին այդ ժամին, ֆինանստների մեծ ապարանքներին, որոնք նիրհում էին իրանց շքեղ պարտէզդների խաղաղութեան մէջ, և աղքատ թաղերի խորբերում իրար վրայ կուտակուած անհաւասար ու պէսպէս տանիքներով հինգ ու վեց յարկանի տներին։ «Պայմանաժամը... պայմանաժամը»։ Քաղաքի մի ծայրից միւսը անողորմ կերպով հնչում էր այդ բարակ ու զիշ ձայնը բիւրեղանման մթնոլորտի մէջ, որ առաջանում է բարձունքներում սաստիկ յոտից ու լուսնի շողքից։ Եւ որտեղով անցնում էր անիծածը, ամեն տեղ փախցնում էր մարդկանց քունը, անհանգստութիւն էր ցցում մարդկանց սիրտը, յոգնեցնում էր մտքերն ու աչքերը, անքնութեան ու սրտնեղութեան անորոշ սարսուռ էր աղդում Պարփղի տներին։ Ներքեի յարկից սկսած մինչև ամենավերին յարկը։

Ինչ ուղղում էք մտածեցէք այդ առասպելի մասին, բայց յամենայն դէպս, ի հաստատութիւն իմ բարեկամի պատմածին, ևս կարող եմ հաւաստիցնել ձեզ, որ մի զիշեր, յունուար ամսի վերջերքին, Ֆրօմօն կրտսեր և Ռիսլէր աւտգ առևտրատան ծերունի գանձապահ Սիզիզմունզը քնիո վեր թռաւ Մօնութում, իր փոքրիկ բնակլարանում, նոյն քմծիծաղ ձայնից, նոյն շղթայի չըխչիսկոցից և նոյն չարագոյժ աղաղակից։

«Պայմանաժամը»...

—Իրաւ որ,—մտածեց հալեորը դիք նստելով անկողնում, —վաղը չէ միւս օր ամսի վերջն է... Եւ ևս դեռ սիրտ ունեմ քնելու...

Արդարեւ, մեծ գումար էր հարկաւոր ամսավերջին։ պէտք էր վճարել հարիւր հաղար ֆրանկ երկու մուրհակով և այն էլ այնպիսի ժամանակ, երբ առաջին անգամ երեսուն տարուց ի վեր Ֆրօմօնների առևտրատան սնդուկը անպայման դատարկ էր։ Ի՞նչ պէտք է ամէին։ Սիզիզմունզը մի քանի անգամ փորձել էր խօսել այդ բանի մասին Ֆրօմօն կրտսերի հետ, բայց նա կարծես փախուստ էր տալիս գործերի ծանր պատասխանատութիւնց, և գրասենեակով անցնում էր միշտ վոազ-վոազ, միշտ տենդու, առանց տեսնելու և լսելու, թէ ինչ է կատարւում իր շուրջը։ Գանձապահի անհանգիստ հարցերին, նա պատասխանում էր, բարակ բեղերը կրծելով։

—Լաւ, լաւ, սիրելի Պլանիւս... Մի անհանգստացէք... Ես կը կարգադրեմ...

Բայց այդ ասելիս նրա կերպարանքը պարզ ցոյց էր տա-

լիս, որ նրա միտքը բոլորովին ուրիշ բանով է զբաղուած և հազարաւոր մղոն հեռու է այդ գործերից։ Գործարանում, ուր նրա սիրային կապը տիկին Ռիսլէրի հետ այլ ես զաղտնիք չէր ոչ ոքի համար, շշուկ էր տիրում, թէ Սիդօնին դաւաճանում է նրան և բոլորովին անբախտ մարդ է գարձնում, և, յիրաւի, սիրուհու խենթութիւնները նրան շատ աւելի էին զբաղեցնում, քան իրանց դանձապահի անհանգստութիւնը։ Ինչ վերաբերում է Ռիսլէրին, նրան երբէք չէին տեսնում, նա ամբողջ ժամանակը վակուում էր լինում վերնատանը, ուր հակում էր իր մեքենայի խորհրդաւոր և անվերջանալի պատրաստութեանը։

Տէրերի այդ անտարրերութիւնը գործարանի գործերի նկատմամբ, հսկողութեան այդ կատարեալ բայցակայութիւնը՝ փոքր առ փոքր կազմալուծութեան էին հասցրել ամեն ինչ։ Բանուորներն ու ծառայողները ինչ ուղղում էին՝ անում էին, ու էին զալիս աշխատելու, շուտ էին ծլկում, առանց ուշք դարձնելու հինաւուրց զանգակին, որ, այնքան տարիներ աշխատումքը զեկավարելուց յատոյ, այժմ կարծես արհաւիրքի ու խորտակման կոչ էր հնչեցնում։ Դեռ գործերը լաւ էին զնում, ուրախնուե մի անգամ կարգի զցած առետրատունը ինքն ըստ ինքեան կարող է շարունակել մի քանի տարի իր ընթացքը առաջին մղման ոյժի հսորհիւ, բայց ինչ քայլքայումն ու խառնաշփոթութիւն էր տիրում այդ առերեոյթ բարգաւաճութեան տակ։

Սիդիդմունդին այդ աւելի լաւ էր յայտնի, քան ում և իցէ, և ահա թէ ինչու էր նրան քնից վեր թոցրել կապուտակ մարդունկի աղաղակը, Գանձապահը մոմը վասել էր, կարծես թէ տւելի հետո գլուխ հանելու համար իր ուղեղում խննուող, իրար անցնող ու մրրկուող ցաւոս մաքերից, և այդպէս անկողնում նսաած խորհում էր... Ո՞րտեղից կարող էր գտնել այդ հարիւր հազար ֆրանկը։ Անկասկած իրանց առետրատանը այդ զումարից աւելի պարագ կը լինէին ուրիշները։ Էին հաշիւներ էին մնում ընկած յաձախորդների մօս, Պրօշասօնների և ուրիշների ընթացքի հաշուից էլ մի բան մնում էր. բայց ինչպէս կարող էր նա այնքան ստորանալ, որ գնար հաւաքելու այդ հին պարաքերը։ Բարձր առետրի մէջ այդպիսի բաներ ընդունուած չեն. չարչի հօ չեն։ Եւ ստիւայն այդ աւելի լաւ էր, քան եթէ բողքի տային նրանց մուրհակները... Օ՛հ, այն միտքը, թէ բանկի փոքրաւորը, վստահ ու ապահով կերպարանքով, կը մօտենայ նրա ցանցապատին ու հանգիստ կերպով կը զնի մուրհակները դարակի վրայ, իսկ ինքը, Պլանիւաը, Սիդիդմունդ Պլանիւաը, ստիւալուած կը լինի ասելու.

— Յետ վերցրէք ձեր մուրհակները... Փող չունեմ վճարելու...

Ո՞չ, ոչ! Այդ անկարեկի բան էր: Բոլոր ուրիշ ստորացումները գերազանցելի էին գրանից:

— Վճռուած պրծած է... Վաղը կ'երթամ ժողովարարութեան, — հառաջում էր խեղճ գանձապահը:

Եւ մինչդեռ նա այդպէս այրուում փոթոթւում էր առանց կարողանալու աչք փակել մինչև լոյս, կապուտակ մարդուկը, շարունակելով իր պայոյաը, գնաց թափահարելու իր փողի տոպրակը ու իր շղթան Բօմարշէ բուլվարի մի վերնատան վերելում, ուր Դէզիբէյի մեռնելուց յետոյ տեղափոխուել էին ապրելու հոչակաւոր Դըլօբէն ու իր կինը:

«Պայմանաժամանակամը...»

Աւաղ, խեղճ կաղիբի գուշակութիւնը ճիշտ գուրս եկաւ: Նրա մահից յետոյ տիկին Դըլօբէլը չը կարողացաւ երկար ժամանակ շարունակել մօդային թունիկների ու ճանճերի գործը: Աչքերը փչացել էին արտասուրից և պառաւած դողդոջուն ձեռքերը չին կարողանում այլ ես ուղղահայեաց ցցել կօլիբրիներին, որոնք, չը նայելով նրա բոլոր ջանքերին, ողորմելի ու ախուր տեսք էին ունենում: Պէտք էր թողնել այդ գործը: Այն ժամանակ այդ կարովի կինը սկսեց կարուճնով պարապել ժանեակներ, ասդեգործեր էր կարկատում և քիչքիչ իջնում էր հասարակ բանուոր կնոջ գրութեան: Բայց նրա շարունակ նուազող վաստակը հաղիւ էր բաւականանում տնտեսութեան ամենազլիւառ անհրաժեշտութիւններին, և Դըլօբէլը, որին իր in partibus (անպաշտօն) գերասանի անիծեալ կոչումը ստիպում էր անվերջ ծախսեր անել, արդէն սկսել էր ընկնել պարտքերի մէջ: Նա պարտական էր իր գերձակին, կօշկակարին, չապկակարին, բայց նրան ամենից շատ անհանգստողը այն երեկի նախաճաշներն էին, որ նա ապառիկ կերել էր բուլվարի ճաշարանում իր թատրոնապետութեան միջոցին:

Հաշիւը համնում էր երկու հարիւր յիսուն ֆրանկի, որ պէտք էր վճարել յունուարի վերջին, և այս անգամ այլ ես ամեննեին յոյս չը կար, որ թոյլ տային պայմանաժամը նորից յետաձգել, ուստի հասկանալի է, որ կապուտակ մարդուկի աղաղակը սարսուռ գցեց նրա ամբողջ մարմինը...

Մի օր է միայն մնում մինչև պայմանաժամը: Միմիայն մի օր՝ երկու հարիւր յիսուն ֆրանկ դանելու համար: Եթէ նա չը դանի այդ գումարը, նրանց տան մէջը ամբողջապէս կը ծախսեն: Կը ծախսեն այդ՝ տուն գնելու օրից մինչոյնը մնացած խղճուկ, գծուծ ու անյարմար կահ-կարասիները, որոնք քաղցր են, սա-

կայն, չորհիւ այն յիշողութիւնների, որոնք կապուած են նրանց քերծուածքների ու մաշուածքների հետ։ Կը ծախմն մօդային թռչնիների ու ճանճերի երկարուկ սեղանը, որի վրայ նա ընթրել է քառան տարի շարունակ։ Կը ծախմն Զիզիի մեծ բազկաթոռը, որին չէին կարողանում առանց արցունքի նայել և որ կարծես իր մէջ պահել էր մի բան այն քաղցր էակից, նրա շարժումներից, զիրքից և նրա երազանքի ու աշխատանքի երկար օրերի յոգնածութիւնից։ Տիկին Դըլօթէլը վշտամահ կը լինէր անշուշտ, եթէ այդպէս չքանային այդ քաղցր յիշողութիւնները...

Մտածելով այդ բանի մասին, թշուառ գերասանը, որին իր հաստակաշի եսականութիւնը սյնուամնայնիւ միշտ չէր կարողանում պաշտպանել խոճի խայթոցներից, չուռ էր գալիս անկողնում մի կողքից միւսի վրայ, խորը հառաջանքներ արձակելով և շարունակ աչքի առջել տեսնելով Դէզիրէյի մանրիկ ու զունատ կերպարանքը, այն պաղատական ու քնքոյչ հայեացքով, որ նա անձիօրէն գարճնում էր զէսի ինքը մահուան բոպէին, երբ մեղմիկ ձայնով ինգրում էր նրանից հրաժարուել... հրաժարուել... ինչից էր ուզում որ իր հայրը հրաժարուի։ Նա մնուա առանց այդ ասելու, բայց Դըլօթէլը այնուամնայնիւ մի քիչ հասկացել էր նրա միտքը, և այն օրից սկսած այդ անսիրտ բնաւորութեան մէջ ներս էր թափանցել մի տեսակ վըրդովմունք ու կասկած, որ այժմ, այս զիշերային պահին, տանջում էր նրան, խառնուելով փողի հոգսի հետ...

«Պայմանաժամը... պայմանաժամը»...

Այս անգամ պ. Շէրի ծինելոյզումն էր լսուում կապուտակ մարդուկի չարագոյժ աղաղակը։

Պէտք է ձեզ ասել, որ մի ժամունակից ի վեր պ. Շէրը ձեռնարկել էր խոշոր վաճառականական գործեր, սկսել էր պարապել շատ անորոշ, չափաղանց անորոշ «ոտնկայ» առնարով, որ շատ փող էր կլանումնրանից։ Արդէն մի քանի անգամ Ռիւլէրն ու Սիդոնին ստիպուած էին եղել վճարել իրանց հօր պարտքերը այն խիստ պայմանով, որ այնուհետև նա հանգիստ կը մնայ, էլ գործեր չի սկսի, բայց այդ մշտական սուզումները անհրաժեշտ էին նրա դոյտթեան համար։ Նա ամեն անգամ ջրի երեսն էր անում, աւելի մեծ կորովով, աւելի ևս եռանդուն գործունէութեան պատրաստակամութեամբ։ Փող չունեցած ժամանակը իր ստորագրութիւնն էր տալիս պ. Շէրը։ Նա նոյն իսկ սարսափելի ի չարն էր գործ դնում իր ստորագրութիւնը, յոյս դնելով միշտ, թէ ձեռնարկութեան օդուտից կը տայ պարտքերը։ Բայց, հակառակի նուան, օգուտ երբէք չէր երեսում, մինչդեռ

ստորագրած մուրհակները ամբողջ Պարիզում մի քանի ամիս պտոյտ գործելուց յիսոյ, յուսահատեցնող ճշտապահութեամբ վերադառնում էին տուն բոլորովին սևացած շրջադայութեան ժամանակ վրան կիտուած հիերօգլիֆներից:

Յունուարի տալիքն էլ չատ խոշոր գումար էր, և լսելով կապուտակ մարդուկի ձայնը, նա յիշեց յանկարծ, որ ոչ մի սու չունէր վճարելու համար: Այ քեզ խայտառակութիւն: Պէտք էր նորից ստորանալ Ռիսլէրի առաջ, մերժման վտանգին ենթարկուել, խոստովանել, որ խոստմաղանց է եղել... Այդ մտածմունքների աղդած շաւը աւելի ևս սաստիանում էր չնորհիւ զիշերային խաղաղութեան, ուր աչքը անզբաղ է և ուշքը առիթ չունի շրուելու, և հորից զննուիան դիրքից, որ կատարենալ անշարժութիւն տալով մարմնին, անպաշտպան միաքը մտանում է իր երկիւ դներին ու հոգսերին: Բոպէն մի անգամ ալ. Շէքը վասում էր լամոլը, լրագիր վերցնում ձեռքը և զուր ջանք գործ դնում կարգալու, ի մեծ տհաճութիւն տիկին Շէքի, որ տնքում էր կամաց ձայնով և, լոյսը չը տեսնելու համար, չուռ էր գալիս պատի կողմբ:

Եւ այդ միջոցին զժոխույժն կապուտակ արարածը, հիացած իր չարանենգութիւնից, քմծիծալ տալով զնում էր մի ուրիշ անդ զնդզնացնելու իր փողի տոպրակն ու զվթան: Ահա նա Վիյէլզօղրիէտ փողոցում, մի մեծ գործարանի վերևում, ուր բոլոր պատուհանները մութն են, բացի մէկից, պարագղի խորքում, առաջին յարկում:

Չը նայելով, որ չատ ուշ էր, ժօրժ մերօմօնը դեռ չէր պառկել քնելու: Կրակի առաջը նստած, գլուխը երկու ձեռքով բռնած, այնպիսի կոյք ու համր կենարոնացման մէջ, որ աղդում են անուղղելի դժբախտութիւնները, նա մտածում էր Սիդօնիի մասին, որ քնած էր այժմ վիրեկի յարկում: Այդ կինը ուղղակի գժուացնում էր նրան: Նա հստուած համոզուած էր, որ Սիդօնին դաւաճանում է իրան՝ կաղաքոն անունով, բայց կաղաքնի կոչուող տուլուզացի տէնօրի հետ, որ մուտք էր զըտել նրանց մօտ չնորհիւ տիկին Դօրոսի: Որքան ժամանակ է նա աղաչում է Սիդօնիին չընդունել այլևս այդ մարդուն, բայց Սիդօնին ականջ չէ գնում նրան, և հէնց այսօր, մի մեծ պարահանդէսի առիթով, որ տալու էր չուտով, նա կարական կերպով յայտնից ժօրժին, որ ինչ էլ լինի հրաւիրելու է իր տէնօրին:

— Ուրեմն ձեր սիրեկանն է նա, — գոռող ժօրժը բարկուցած ու աչքը նրա աչքերին յառած:

Սիդօնին չէ չասաց. նա նոյն իսկ երեսը չուռ չը տուեց, միայն թէ սաստիկ սասնութեամբ և իր զզումի թիթն ժպի-

տովի յայտարարեց նրան, որ ինքը ոչ ոքի իրաւունք չի տուել դատելու. իր արածները կամ արգելվ հանգիսանալու նրանց և որ ինքը ուզում է աղաս լինել ու նրան էլ, ինչպէս Ռիսլէրին, թոյլ չի տալ բռնակալ դառնալ իր գլխին՝ նրանք այդպէս մի ամրող ժամ անց էին կացրել փակ ու պատուհանների վարադոյրները իջեղրած կառքում, իրար հետ վիճելով, միմեանց վիրաւորանքներ հասցնելով, գրեթէ ծնծկուելով:

Ովկ կարող էր հաւատալ, որ նա այդ կնոջ համար զոհել էր ամեն ինչ, իր կարողութիւնը, պատիւը, մինչի իսկ սքանչելի կէրին, որ այժմ իր երեխայի հետ քնած էր կողքի սենեակում, այդ երջանկութիւնը, որ պատրաստ նրա ձեռքի մէջն էր և որ նա արհամարհել էր այդ անզդամի համար... Եւ այժմ այդ կինը յայտնում էր նրան, որ ինքը չի սիրում նրան և որ սիրահարուած է մի ուրիշի վրայ: Իսկ ինքը վատաքար դեռ սիրում էր նրան: Ինչո՞վ էր նա կախարդել նրան:

Լի զայրոյթով, որ եռում էր նրա ամբողջ էութեան մէջ, Փօրդ Ֆրօմօնը վեր թռաւ տեղից ու սկսեց տենզային կերպով քայլել սենեակում, և նրա քայլերը հնչում էին համր տան լըսութեան մէջ իբրև մի մարմնացած անքնութիւն... Իսկ այն կինը քնած էր վերեսում: Նա քնած էր հանգիստ՝ իր անխղճմըսանք բնաւորութեան արտօնութեամբ: Ո՞վ զիտի, գուցէ և մտածում էր իր կազաքօնիի մասին:

Երբ այդ բանը անցնում էր Ժօրժի մտքով, նրա մէջ խօլ յանկութիւն էր ծագում բարձրանալ վերև, զարթեցնել Ռիսլէրին, ամեն ինչ ասել նրան և կորուստի մատնել իրան ու Սիրօնիին, Ի՞նչ տիսմար մարդ էր այդ խաբուած ամուսինը: Ինչո՞ւ չէր կարգին հսկում կնոջը: Սյդպիսի սիրուն, մանաւանդ այդպիսի արատաւոր կին ունենալիս պէտք է անպատճառ աջքը վրան պահել:

Եւ հէնց այդ ժամանակ, երբ նա մտատանջւում էր այդ դաժան ու ապարդիւն հոգսերով, յանկարծ կապուտակ մարդուի չարագոյք աղաղակը հնչեց քամու աղմուի մէջ:

«Պայմանաժամը... պայմանաժամը...»

Թշուառ մարդ: Սիրուհու գէմ զայրացած, նա բոլորովին մոահան էր արել այդ: Եւ սակայն նա վաղուց զիտէր, որ մօտենում է յունուարի այդ սարսափելի ամնավերջը: Քանի՞-քանի անզամ, երկու ժամագրութիւնների արանքում, այն միջոցներին, երբ նրա միաքը, մի բոպէ աղատուելով Սիրօնիից, սկըսում էր զբաղուել դործերով և կեանքի իրականութեամբ, քանի՞-քանի անզամ նա ասել էր ինքն իրան: «Այդ օրը մեր կործանման օրն է լինելու»: Բայց ինչպէս միշտ, երբ մարդիկ ապ-

բում են՝ հարբածի նման անձնատուր եղած դառանցանքների, այնպէս էլ այս գէպքում նրա թուլամորթութիւնը նրան մտածել էր տալիս, թէ շատ ուշ էր եղածը ուղղելու համար, և նա խկոյն և եթ զլսից հանում էր այդ հոգսերը և աւելի ևս սասափիկ էր անձնատուր լինում իր անառակ մտքերին, որպէս զի մոռացութիւն գտնէր նրանց մէջ:

Բայց այդ բոպէին այլ ևս հնար չը կար մոռացութիւն գտնելու: Նա սլարդ ու որոշ տեսնում էր իր կործանումը, և Սիդիդմունդ Պլանիւսի չոր ու լուրջ կերպարանքը ցցւում էր նրա առաջ իր՝ կարծես բրիչով քանողակուած գծերով, որոնց դաժանութիւնը չէր մեղմանում ոչ մի արտայայտութեամբ, և իր գերմանաշվեյցարացու ճորիկ աչքերով, որոնք ո՞ր ժամանակից ի վեր հալածում էին նրան իրանց անողոք հայեացքով...

Բայց նա չունի այդ պահանջուած հարիւր հազար ֆրանկը, և չը զիտի՛ որտեղից կարող է գտնել Վերջին վեց ամիսները, իր սիրուհու աւերիչ քմահաճոքների համար փող ձեռք բերելու յոյսով, սաստիկ շատ էր խաղացել և ահազին գումարներ սարուել: Այդ բաւական չէր, աւելացաւ բանկիրներից մէկը մանակացումը և իրանց ողորմելի հաշուեկշիռը... Միմիայն գործարանն էր մնում նրան, այն էլ ինչ սարսափելի վիճակի մէջ:

Ուր գնար այժմ, ինչ սնէր:

Այն, ինչ որ մի քանի ժամ առաջ նրան թւում էր մի քաօս, մի մրրիկ, ուր ոչինչ չէր կարելի այլ ևս որոշակի տեսնել և որի խառնաշփոթութիւնը այնուամենայնիւ մի փոքրիկ յոյս էր նրա համար, նրան երեսում էր այժմ սոսկալի պարզութեամբ: Դրամարկղը դատարկ, զնները՝ փակ, մուրհակները բուղքի ենթարկուած, առևտրական տունը աւերուած: Ահա թէ ինչ էր տեսնում նա, որ կողմից էլ որ նայէր դործին եւ որովհետու այդ բոլորի վրայ աւելանում էր և Սիդօնիի դաւաճնութիւնը, թշուառականը, զլուխը կորցրած ու չիմանալով ձեռքը ինչին զցի այդ ահոնելի նաւարեկութեան ժամանակ, յանկարծ մի ցաւագին աղաղակ, մի հառաչանք արձակեց, կարծես թէ նախաիմամութեան զիմելով:

—Ժօրժ, Ժօրժ, ես եմ... Ի՞նչ է պատահել քեզ:

Նրա առաջ կանգնած էր կինը, կինը, որ այժմ ամնն զիշեր սպասում էր նրան, կարօտադին աչք էր պահում ձանապարհին, մինչև որ վերադառնար ժողովարանից, որովհետու խեղճ զեռ ևս կարծում էր, թէ այնտեղ է նա անց կացնում երեկոները: Տեսնելով, որ ամուսինը փոխուում է, մռայլանում է օրէցօր, կէրը միաք էր անում, թէ երեխ նա փողի նեղութիւն

ունի, թէ անշուշտ մեծ գումար է տարուել թղթախաղում։ Նրան ասել էին, որ մարդը շատ է խաղում, և չը նայելով այն անտարբերութեանը, որով Փօրթք վերաբերում էր նրան, նա անհանգստանում էր նրա պատճառով, ուղում էր, որ նա յայտնի նրան իր դադանիքը, առիթ տայ նրան մեծահոգութիւն ու քնքչութիւն ցոյց տալու։ Այս զիշեր նա լուսմ էր, որ ամուսինը շատ ուշ ժամանակ քայլում է իր սենեակում։ Եւ որովհետեւ աղջիկն էլ միւս կողմից սաստիկ հազում էր և ամեն րոպէ ինսամք էր պահանջում, նա բաժանել էր իր հոգսերը երեխայի և հօր տանջանքների մէջ, և մնացել էր նատած, ականջը սրած բոլոր շշուկներին և անձնատուր եղած գորովալից ու վշտալից անքնութեան, որպիսի վիճակի մէջ կանայք հաւաքում են իրանց ամբողջ կորովը իրանց բաղմապատիկ պարտականութիւնների ծանր բեռը կրելու համար. վերջապէս, երեխան քուն եղաւ և մայրը, լսելով ամուսնու հեկեկանքը, վազ տուեց նրա սենեակը։

Օ՛հ, երբ նա տեսաւ կնոջը իր առաջ, այնքան քնքոյց, այնքան յուղուած և այնքան գեղեցիկ, ինչ սարսափելի խղճի խայթոցներ, թէի ուշ, զարթնեցին նրա մէջ։ Այս, նու ինքն էր, նրա մտերիմ կողակիցը։ Ի՞նչպէս էր կարողացել ինքը լքանել նրան։ Երկար, շատ երկար ժամանակ նա լուռ ու մունջ լաց եղաւ կնոջ ուսին յենած։ Եւ շատ լաւ էր, որ նա չէր կարողանում խօսել, ապա թէ ոչ նա ամեն ինչ, ամեն ինչ կ'ասէր։ Թշուառականը պահանջ էր զգում սիրտը բանալու, անդիմագրելի բաղձանք՝ ինքն իրան մեղագրելու, ներողութիւն խընդուելու, նուազեցնելու խայթոցների ծանրութիւնը, որ խորտակում էր նրա սիրտը։

Կլէրը ազատեց նրան խօսելու նեղութիւնից։

— Անպատճառ թուղթ ես խաղացել, տարուել ես, չչ... և երեխ շատ։

Նա զլսով դրական նշան արեց, իսկ յետոյ երբ կարող եղաւ խօսել, նա խոստովանեց, որ ինքը հարիւր հազար ֆրանկի պէտք ունի վաղը չէ միւս օրը և չը զիտէ որտեղից ճարել այդ գումարը։

Կլէրը ոչ մի յանդիմանութիւն չարեց նրան։ Նա այն անհատներիցն էր, որոնք դժբախտութեան առաջ մտածում են միայն օգնելու մասին առանց ում և իցէ դատապարտելու։ Իր սրտի խորքում նա նոյն իսկ օրհնում էր այդ աղէտը, որ մարդուն մօտեցնում էր նրան և մի կապ էր դաւնում իրանց գոյութիւնների մէջ, որոնք այն աստիճան անջատուած էին երկար ժամանակից ի վեր։ Նա մտածեց մի րոպէ և կայացնելով իր մէջ մի վճիռ, որ շատ ծանր էր նրա համար, նա ասաց.

—Դեռ ճար կարելի է անել: Ես վաղը կ'երթամ Սալինի Գարդինուա պապից խնդրելու այդ փողը:

Ժօրժը երբէք չէր համարձակուիլ խօսել նրա հետ այդ բանի մասին: Նրա մտքովն անգամ չէր կարող անցնել այդ: Կլէրը այնքան հապարտ էր, իսկ ծեր Գարդինուան այնքան բիրտ: Շատ մեծ զահ էր այդ, որ Կլէրը յանձն էր առնում նրա համար, սիրոյ փայլուն ապլացոյց նրա կողմից: Ժօրժին յանկարծ տիրեց սրտի այնպիսի ջերմութիւն, այնպիսի ցնծութիւն, որ առաջ է գալիս վտանգը անցնելուց յետոյց Կլէրը թւում էր նրան, իբր մի գերբնական էակ, որ բարութեան և հանգստացման չնորհք ունէր, ինչպէս միւսը, այն վերեխնը, խենթացնելու և քայլայելու չնորհք ունէր: Նա ուրախութեամբ ծունկ կը չփէր այդ գեղեցիկ դէմքի առաջ, որ շրջապատուած էր զիշերուայ համար հիսնալի հիւսուած սև ծամերի շրջանով, իբր փայլուն կապտաւուն լուսապակով, և որի գծերի փոքր ինչ խիստ կանոնաւորութիւնը՝ վարաժուում էր քնքչութեան հրաշալի արտայայտութիւնից:

—Ո՞րքան բարի ես... Կլէր:

Առանց ոչինչ պատասխանելու, Կլէրը տարաւ նրան դէպի իրանց երեխայի օրօրոցից:

—Համբուրիր փոքրիկին... ասայ նա մեղմօրէն:

Նրանք կանդնած էին օրօրոցի մօտ իրար կողքի, փաթաթուած վարագոյրի շղարշի մէջ, զլուիները խոնարհուած այդ խուզաղուած, բայց գեռ ցաւիցը փոքր ինչ հեացող փոքրիկ չնչի վրայ, և Ժօրժը վախեցաւ զարթեցնի աղջկան ու մոլեղին հոմքուեցի կնոջը:

Դեռ երբէք կապուտակ մարդուկի երեւումը այդպիսի աղջեցութիւն չէր գործել որ և է ընտանիքում: Սոլորաբար որտեղով անցնում է այդ զարհուրիկի սատանածուտը, նա բաժանում է իրարից ձեռքերը և սրտերը, հեռացնում է մտքերը ամենասիրելի էակներից և զարթեցնում նրանց մէջ հազար ու մի հոգսեր ու ահեր, հնչեցնելով կտուրների վրայ իր շղթան և իր չարագոյժ աղաղակը:

«Պայմանաժամը... պայմանաժամը...»

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը օտրունակուի)

Բ Ա Խ Տ Ի Զ

(Պատկեր Բալախանու կեանքից)

Բուրք է։ Զիւնախառն քամին ոռնում է, ճանապարհ ուղում, անցքեր գտնում, ճեղքեր պատռում և չարածճիի յամառութեամբ ներս խուժում, ադահութեամբ լցում, ջարդում ու սառեցնում։

Ավշերոնեան թերակղու դայլայլիկն է այդ։ Ամառը առատ փոշի, ձմեռը ուժգին բուրք։

Այդ դաժան օրին, աղքատ Սաքօն իր հարազատ փոքրիկը կրծքին ամուր սեղմած, յամառ քամու դէմ ճակատը պարզած, ամբողջ մարմնով դէմ է կանգնում օդի հոսանքին, ծայրայեղ ոյժով նրա ալիքը ճեղքում, ոտերը առաջ գցում ու ցրտից դողահար, կծկուած առաջ քայլում։

Ցուրաը սաստիկ է, բայց կարիքը սաստկագոյն։ Եւ նա քայլում է։

Ահա եկաւ կանգ առաւ մի գրասենեակի ցածրիկ սանկուխներին։ Պէտք է ներս մտնել, այդտեղ է քըշել կարիքը։ Սակայն վստահանալ...

«Սպասեմ, գուցէ ծառան գուրս նայի», մտածում է նա, մէջքը պատին յենում և փոքրիկի կապտած, սառած դէմքը կրծքին աւելի ու աւելի սեղմում։

Կէս ժամ է կանգնած է, բայց գեռ հչ ոք չի հարցնում նրան։ Իսկ բուրքը ծեծում է նրան, մարմինը սառցնում։ Աւելի սպասել անհնար է։ Եւ նա պարզում

է փետացած ձեռքը, մօտեցնում դուանն ու սառած մատերով շօշափում: Շօշափում, այն, և ոչ բաղխում, այն հասարակ պատճառով, որ սառած մատերը ոյժ չունեն ծեծելու:

Մի բոպէ ևս և դուռը բացւում է:

—Հը, ինչ կայ, բղաւում է գրասենեակի ծառան, ստորին ծառայողին յատուկ գուռզութեամբ:

—Կառավարչին եմ ուզում... կմկմում է թշուառ հայրը:

—Չի կարելի, բարկանում է ծառան ու էլ ետ դուռը փակում:

Ցետ դառնալ չի կարելի: Եւ սովատանջ ընտանիքի հայրը կրկին բաղխում է:

—Ի՞նչ ես ճակատդ դէմ տուել, բղաւում է նոյն դիւրաբորբոք ձայնը:

—Խնդիրը լսէք, կառավարչին եմ ուզում տեսնել...

—Կառավարիչը զբաղուած է, ժամանակ չունի:

Նորից գուռը փակում է: Կրկին բաղխում է խեղճ մարդը: Բաղխում է, բաղխում մուրացկանի աներես յամառութեամբ, սակայն դուռը այլ ևս չի բացւում:

Մի կէս ժամ ևս և ահա կառը կանգնում է դըռան առջև, ուրեմն կառավարիչը դուրս կը գայ: Եւ յոյս է փայլում թշուառ մարդու սառած դէմքին: Ահա և ինքը կառավարիչը: Պճնուած է, բաղաք է գնում՝ ծանր օրը կլուբում անցնելու:

Մի բոպէ ցնցւում է խեղճ մարդը. ցնցւում, թերև ևս «մեծ» մարդուն արժանանալու ուրախութիւնից, բայց և գուցէ երկիւղից, «մեծի» ազդած երկիւղից:

—Աղա, միմնջում է վախլուկ մարդը, կծկուած երեխայի սառած երեսը շրջելով կառավարչին՝ նորին մեծահոգութեան գութը հայցելու:

—Աղա, ես քեզ մատաղ, երեխաս... տունս գըլխիդ մատաղ, այս ցուրտ օրին մեզ բաղցած մի կոտորիր, թող գնամ գործիս...

— Ո՞վ ես, հարցնում է կառավարիչը, տեղաւորությունիվ կառքում...

— Մօլոտովոյէց (մուրճահար), դլխիդ մատադ:

Մեխանիկը դուրս արաւ...

— Հըմ, դուրս է արուած, շնչում է ինքն իրան բարի կառավարիչը: — Լաւ, կը հարցնեմ:

— Աղա, աղա...

Աղան սլացաւ:

Յուսահատ աչքերը նախ յառեց կառքի ետևից, ապա դարձաւ, մուրացկանի վախլուկ հայեացքով շուրջը դիտեց: Ամաչեց: — Գուցէ: Նա էլ «Ես» ունի:

Եւ նա գլխակոր յետ դարձաւ, կրկին անձնատուր եղաւ անխիղճ տարերքին:

Այժմ նա գնաց կանգ առաւ մի տախտակեայ կեղտուս որջի շէմքում: Դա նրա բնակարանն է, մի ամբողջ ընտանիքի ապաստարան: Քարէ պատին կպած մի երեք արշինաչափ, հողէ խոնաւ յատակով, ցածրիկ որջ էր այդ կացարանը, որի միւս երեք պատերը նաւթուս հին տախտակների կտորներից էին կազմուած, վերեն էլ նոյն տեսակ փտած տախտակներով ծածկուած: Մի կեղտուս որջ էր դա, շինուած անշուշտ տանտիրով խոզերի համար, սակայն զիջուել էր խեղճ Սաքոյի ընտանիքին երեք ուուրլի ամսավարձով, մի վարձ, որ չը լսուած է Բալախանում և որի համար իսկապէս չնորհակալութեան արժանի էր տանտէրը, քանի որ դրա նման ծակերը 7—8 ուուրլի ամսավարձ արժեն:

Մերժուած Սաքօն գողահար ոտ դրեց որջում, ուր մի կտոր կապերտի վրայ կծկուած՝ սպասում էին նրան կինն ու վեցամեայ աղջիկը:

Ամուսնու վշտահար դէմքը ամեն ինչ պարզ պատմում էր, այնպէս որ գեղջկուհուն աւելորդ էր հարցուագործ անել նրան, մանաւանդ որ ցրտից ընկճուած, ծուլանում էլ էր բերան շարժել:

Թշուառ մարդք դուռը վրայ դրեց և սովատանջ աղջկայ յուսախափ հայեացքի տակ առաջ եկաւ, փոք-

րիկը դրեց մօր գոգոմ՝ ու լռելեայն տեղաւորուեց իւրայինների կողքին, մէջըը ամուր սեղմելով սառը քարէ պատին, տախտակեայ պատերի ճեղքերից փչող քամուց պաշտպանուելու համար։ Ճեղքեր, որոնք միևնոյն ժամանակ և՝ այդ որդի լուսամուտն էին կազմում։

Այս խոզի բնից էլ գոհ կը լինէր թշուառ ընտանիքը, եթէ այդ անհամար ճեղքերը չը լինէին, որոնք առատ ցրտութիւն էին մատակարարում անհաց ընտանիքին։

Քարէ պատը, որ որդի չորսորդ ու միակ քարէ պատն էր և որին ամուր կպել էին ընտանիքի անդամները՝ ցրտից շատ թէ քիչ պաշտպանուելու համար, — կազմում էր մեքենաների ու երկաթեղէնի միլիոններ արժեցող պահեստի պարիսպը։ Կարծես այս ողորմելի ընտանիքը կպել էր այդ միլիոնանոց պահեստի պատին՝ մի աւելորդ անդամ էլ ապացուցանելու որ հարստութեան հարեանը ծայրայեղ աղքատութիւնն է միշտ։

—
Հետեւեալ առաւօտը քամին դադարել էր, թէ եցուրտը դարձեալ սաստիկ էր։

Օդուուելով եղանակի հանդարտութիւնից, այս անգամ Սաքօն ամբողջ ընտանիքով եկաւ գրասենեակի դուռը կտրեց, կառավարչի ողորմութիւնը հայցելու։ Բայց դեռ շատ վաղ էր, կառավարիչը չէր վերադարձել։ Նրանք սպասում են երկար...

Եկաւ վերջապէս կառավարիչը։ Այս անդամ Սաքօյին ներդաշնակեց և կնոջ աղիողորմ թախանձանքը։ Սակայն այս ամեն մուրացկանական ձեւերը աւելի շուտ ձանձրացնում են մարդուն, ուստի և կառավարիչը նեղայած, եթէ ոչ զզուած, հրամայեց հեռացնել նրանց ու պատուիրել առաւօտեան դալ։

Առաւօտեան Սաքօն վերջնական մերժման արժանացաւ և ընկճուած ու յուսահատ սրտով տուն դարձաւ։

Սակայն... տանը տւելի մեծ վիշտ էր սպասում
Նրան:

Փոքրիկը մարում էր... Նա տաքութեան մէջ էր ու
հազիւ էր շնչում: Մի շարք օրերի ցուրտը ծծուել էր
անսնունդ երեխայի մինչև ոսկորների ծուծը: Մի երկու
ծանր րոպէ և մինչև հայր ու մայր իրանց անզօր շըն-
չով ճգնում էին կենդանացնել գունատ մանուկին, նա
յաւէտ փչեց շունչը:

—Ի՞նչ անիծուած աշխարհ...

Ողբում է մայրը: Իսկ Սաքօն լուռ է:

—Ի՞նչու եկանք, բողոքում է կինը: Ի՞նչու մեզ բե-
րիր այս դժոխքը... Այս է քո հարուստ աշխատանքը...
Միթէ մենք դիւզում կարօտ էինք հացի... կամ պա-
կաս էինք ապառում...

Սաքօն լուռ է:

Նա տատանում է գլուխը ու ինքն իրան հաշիւ տա-
լիս. «Այս իմ բախտիցն է: Ահա Միմնը, Սարդիսը,
ահա Համբարձումը, Գրիգորը, ահա Ալեքսանը, Առատա-
մը... ամենքն էլ այստեղ են... դալիս են աշխատում,
տանում տուն պահում: Իսկ ես»...

—Այս մեր բախտն է... մռնչում է նա յուսահատ
մարդու խեղզուղ ձայնով:

Անցաւ մի ամիս: Երկար թափառումից յետոյ վեր-
ջապէս, Սաքօն պաշտօնի է:

«Բախտս բանում է», միթմիթում է նա, ծանր
մուրճը վարժ ձեռներում պտըտելով և ուժգին հարուած
իջեցնելով երկաթին:

Բայց խոնաւ, ցուրտ որչը իր աւերիչ ոյժը գործ
դնել չի խնայում երբէք:

Զմեռը դեռ երկար է, իսկ բուք օրերը շատ: Փչում
է մահաբեր քամին, շարունակ բազիսում նաւթու
տախտակները ու ներս խուժելով չարաճնիի իւանդով
լնդգրկում Սաքօյի կուչ եկած ընտանիքին:

Խոչքան էլ գեղջկական բացօթեայ կեանքում եփուած էր Սաքօյի կինը, այնուամենայնիւ փակուած ու մեծ Աստամբ անմունդ կեանքը, մրոտ ու ապակուած օդը, կեղտոտ ու թունալից ջուրը չէին կարող առողջարար լինել նոյնիսկ այդ կաղմուածքի համար, Եւ գժխախտ գեղջկուհին, ամուսնու բախտի գերին, հալւում՝ էր ու մաշւում... Պակասը լրացրեց սիրելի զաւակի մահը: Նա էլ հիւանդ էր: Երկար ախու վախ քաշելուց, երկար անճար ու անօդնական մնալուց յետոյ նա փչեց շունչը թէև ամուսնու գրկում, բայց անիծելիս նրան:

Եւ զարհուրած Սաքօն նոր միայն զգաց պանդըխատութեան ամբողջ գառնութիւնը: Սակայն ուշ էր և «բախտ» որոնող Սաքօն, կրկին հաշտ իր գրութեան հետ, գիմեց աշխատանքի. պէտք էր խնամել կենդան մնացած մի հատիկ որբին:

Եւ նա աշխատում էր:

Բարեկենդան կիրակի է: Խնդութեան ու քէֆի օր Սի օր՝ երբ ամեն անկիւնում կեանք է նկատում, երբ մարդիկ պատրաստում են մեծ խորհրդի:

Դակ գործարանական կեանքում... այդ ամենը միայն անցեալի յիշողութիւններ են, որոնք խեղդում են առանական կրծքերից գուրս թուչող ծանր հառաջների մէջ:

Բանում է գործարանը, արհեստանոցը: Բանում են գործարները, արհեստաւորները: Դժգոհութիւն չը կայ: Այս կեանքում չը պէտք է դժգոհ լինել:

Բանում է և Սաքօն: Ծանր մուրճը յետ պարտում, ուժգին հարուած իջեցնում բոված երկաթին, ամեն մի հարուածի հետ էլ ձախ ոտք բարձրացնում ու գետնին զարկում, կարծես թէ չափ է պահում: Այն ինչ բորբոքուած գերիքը աւելի թեքւում է գէպի կրակը, այրում, վառւում և քրտինքի մի-մի հատիկ խոշոր կաթիլ ծորում, իբրև ու արցունք այդ գաժան կեանքի...

Եռում է բովարանը, փշչում է շոգին, մունչում շոգեմուրճը...

«Դժբախտութիւն», յանկարծ բղաւեցին մարդիկ և
վրայ թափուեցին:

Սաքօն ուշաթափ փուռել էր գետնին: Երկաթի
մի բոված կտոր մուրճի հարուածից պոկուելով թռել
ու մխուել էր նրա մնի մէջ. և ահա նա թրագրտում էր
որպէս գնդակահար:

Բժշկական օգնութիւնը ուշ հասաւ, թէև Սաքօի
մէջ գեռ շունչ կար: Բժիշկը նայեց, քննեց, լուաց վէր-
ըլն ու կարգադրեց փոխադրել հիւանդանոց:

—Բժիշկ, վէրը... հետաքրքրուեցին մարդիկ:

—Մահացու է, — շտապով ընդհատեց հետաքր-
քրուողներին բժիշկը իր մշտական սառնութեամբ ու
թռաւ կառք:

Եւ մարդիկ ցրուեցին:

Իսկ որբի՛կը...

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲՈԶԻՆԵԱՆ

ՄԻ ԲՈՒՌԸ ՀԱՅ-ԼՈՒՍԱԽՈՐՉԱԿԱՆՆԵՐ

Ամառս, ազատուելով տաժանելի աշխատանքիցս, միջոց ունեցայ մի ամսուայ չափ անց կացնել կիսլօվօգսկ ամարանոցում, որ յայտնի է իր «Նարզան» հանքային ջրով։ Նարզան՝ աղաւաղած չերքէցերէն նարդ-սան խօսքերից է և նշանակում է կտրիճ ըմպելիք։ Սակայն ներկայումս հանքային այդ ջուրը՝ կապտաժից յետոյ, կորցրել էիր կտրիճ յատկութիւնը և դառել է համարեա թէ հասարակ ջուր, պարունակելով իր մէջ սակաւքանակութեամբ ածխաթթուային գաղ։ Զը նայելով գրան, բժիշկները շարունակում են ուղարկել այդտեղ ջղային հիւանդներին, որնց աւելի կազզուրում է տեղի օդն ու գիրքը, քան թէ հանքային ջուրը։

Իրաւ, կիսլօվօգսկ աւանը՝ ընկած լինելով էլքրուս լեռան լանջերից մէկի ստորոտում, կարող է համարուել լաւ ամարանոց, թէ այդ տեսակ ամարանոցներ պակաս չեն մեր երկրում թէ իրանց օգով և թէ համեղ ու սառնորակ աղբիւրներով։ Բայց կիսլօվօգսկ համարում է յարմարագոյն, որովհետեւ նրան գեղեցկացնելու համար միլիօններ է ծախսուել։ Եւ իրաւ, այն ամենը, ինչ մարդկային ձնոքը կարող է կատարել մի բնակավայր՝ ժամանակ անցկացնելու մի յարմար ու գեղեցիկ տեղ չինելու համար, այդ բոլորը արուած է։ Այդ պատճառով նուսաստանի ամեն անկիւնից մարդիկ տնով-ընտանիքով դիմում են այնտեղ՝ երկու կամ երեք ամիս բնութեան բարիքը վայելելու։

Ում կ'ուզես, կը հանգիաես այնտեղ։ Այս տարի ես էլ բախտ ունեցայ պատահել իմ վազեմի բարեկամ և համարեա դասընկեր, մեր տաղանդաւոր բանաստեղծ Սմբատ Շահաղիզին, որին երեսունուհինգ տարի էր տեսած չէի։ Սկզբում մենք իրար չը ճանաչեցինք, բայց յետոյ հետզհետէ մեր յիշողութիւնը պարզուեց և ինձ դժուար չէր մտարել այն ժպիտը, որ յա-

առուկ է նրան: Նշմարեցի նոյնպէս ձեռքերի ափերն իրար տրուրելու սովորութիւնը, որ շատ անգամ տեսած էի առաւելապէս այն ժամանակ, երբ նա իր գեղեցկահնչիւն քնարն էր լարում: Այժմ էլ նա չէ թողել իր այդ սովորութիւնը. բայց այժմ միայն յանդեր է հիւսում, որով սիրում է համեմել իր սիրալիր և հետաքրքիր խօսակցութիւնը: Աւելորդ չեմ համարում առաջ բերել նրա յանդահիւսութեան մի նմուշ, որով մի օր նա ինձ գիմեց. «Գնա, եղբայր, խմիր նարզան, թէ չէ կը ստանաս ապահարզան»: Ափսնո...»

Տեսայ այնտեղ և մեր վիպասան Պոօշեանցին, որ շրջելով չերքէզախօս արմաւիրցիների, գալաջի անող նախիջեանցիների և Կովկասի այլեայլ բարբառախօս հայերի հետ, նորանոր տիպեր էր որոնում նրանց մէջ իր զրչի համար:

Կար այնտեղ և մի հայ եպիսկոպոս, որ զզուած Շուշու մօս գտնուած Թթու ջուր աղբիւրից, կիսլավօղսկի նարզան էր անուշ անում և ամեն անգամ խմելուց յետոյ «օխայ» էր կտնչում: Մերունի էր նա և նոր էր ձեռնադրուած եպիսկոպոս: Նրա ասելով՝ հանգույեալ Մակար կաթուղիկոսը շատ անգամ ինդրել էր թոյլ տալ նրան եպիսկոպոս ձեռնադրել, բայց նա հրաժարուել էր, չկամենալով ստանալ կաթողիկոսի ձեռքից այդ բարձր աստիճանը, քանի որ նա ազգից ընտրուածը չէր: Իմ հարցին թէ ինչպէս է զդում իրան կիսլովօղսկում վիստող հասարակութեան մէջ, սրբազանը պատասխանեց.

—Է՞ն, եօլս ենք զնում. աշխատում եմ հեռու տեղեր մանդալ և առանձնանալով բայեաթի-շիրազ եմ երգում:

—Ես էլ, սրբազան, ձեր դրութեան մէջ եմ, ասացի, բայց բայաթի-շիրազի տեղ առաւօտեան ժամ եմ սկսում և վերջաշնում պատարագով:

Սրբազանս ձեռքը թափ առւալ և հեռանալով ասայ, թէ ինքը դրանից զզուել է:

Կար և մի հայ երիտասարդ վարդապետ, որ տէրողորմեան ձեռքին ջենտըլմէնին վայել քաղաքավարութեամբ «Շամաների» հետ «կալավորութիւն» էր անում:

Կային և երիտասարդ քահանաներ, որոնք ազգասիրաբար հրապուրուած օրիորդ Պապայեանի դայլայլիկներից, հեռաւոր կուրօրտներից շտապում էին նրան լսելու ֆօրկատիի թատրոնում:

Բայց ովքեր չէին այնտեղ: Շատերին կիսլովօղսկը հրապուրում է ոչ ամիսան իր զեղեցիութեամբ և յարմար ու անդորր կեանքով, որքան բազմաթիւ զուարձութիւններով, որ

բախտախնդիր անտրապենսկօրները կազմում են նրանց համար՝ դատարկելով նրանց գրանքը։ Այդտեղ փայլում են իրանց դռք-սերով և արդուզարդով զանազան կոկոտկաներ՝ քամելով դատարկադրւիս փշիւտների նիւթական և բարոյական ոյժերը։ Օրինակը հրապուրիչ է և մեր երեկուայ Զանգեղուրի գիւղացի Գրիգոր ասէրը՝ բախտի բերմամբ հարստացած Բագուի մըթ-նոլորտում, զլուխը սղոցում է և աշխատում է ձեռք բերել իր զուգակից, դիցուք, «Աննա Պետրովիչնայի» համար կոկոտկայի վրայ տեսած ակն ու մարգարիտը, արդուզարդը…

Սակայն ես շեղուեցի նպատակիցս։ Իմ միավը չեր կիսլո-վօդսկ աւանի սիրաը մաշող, հոգին տանջող մթնոլորտը նկա-րագրել։ Խնձ աւելի զրաւում էին այն մի բուռն հայ-լուսաւոր-չականները, որոնք ապրում են Բուղուրուսատան առլում։

Բուղուրուսատանը գտնուում է նոյնանուն և Պօտկումօկ գետակների ընդարձակ հովափ մէջ և կիսլօվօդսկից 18 վերս-տաչափ հեռու է դէպի հիւսիս-արևեմուտք։ Օդն ու ջուրը հրա-շալի են այդ փայրում և բնաւին չը զարմացայ, երբ տեսայ այն-տեղ խորին ծերութեան հասած մարդկանց՝ առողջակազմ, լայ-նաթիկունք, զուարթադէմ։ Առուզում ապրում են միքանի տուն հայ-լուսաւորչականներ Մեծ-Խարբարդացի Տամբիելսերի ազգից, որոնց թիւք երկու սեփաց կազմում է 107 հոգի։ Ծերերի դէմ-քից երեսում է որ նրանց մէջ հոսում է լեռնական խաբարդա-ցիների արիւնը, սակայն նոր սերունդը կորցնում է բնական տիպը, որովհետև պսակւում է նոր-նախիջնանցիների և մեծ մասամբ չերքէզախօս արմաւիրցիների հետ, որոնց լեզուն մօտ է խաբարդացիների լեզուին։

Նրանք՝ այդ միքանի տուն հայ-լուսաւորչականները սեր-ուած են Մեծ-Խարբարդացի Տամբիել իշխանից, որ հրապուրուե-լով մի հայ քահանայի աղջկայ գեղեցկութիւնից, անպատճառ կամեցել է ամուսնունալ նրա հետ։ Սակայն հայ քահանան և մանաւանդ նրա պարկեշտասուն աղջկը տուել են իրանց հա-մաձայնութիւնը մի պայմանով միայն՝ որ իշխանը փոխէ իր կրօնը և դառնայ հայ-լուսաւորչական։ Թէև ծանր էր իշխանի համար այդ պայմանը, սակայն երէցի աղջկայ սիրոյ հրապոյրը և նրա գեղեցկութիւնը ստիպում են նրան անել այդ քայլը, և որպէսզի ազատուի իւրայինների հալածանքից, իշխանը իր գե-ղեցկուհու հետ հեռանում է մայրենի երկրից և նոր բնակու-թիւն հաստատում այժմեան Գիօրգիեվսկի քաղաքի մօտ Ահա թէ ինչու մինչև տյժմ Տամբիելսերին հովում է Գիօրգիեվսկ եկե-ղեցու քահանան, թէև Բուղուրուսատանը համեմատաբար աւելի

մօտ է Պեատիգօրսկից: Հայ-լուսաւորչական Տամբիեվների, ազգը հետզհետէ բազմանալով առաջուայ աեղում, վերջնականապէս տեղափոխուել է ներկայ առւլը, գնելով այդ Արուկովիշխանից, որ գաղթել է Տաճկաստան: Երևուունուհինդ տարի սրանից առաջ Վլադիկավկազում կազմուած ժողովրդագրական և, հողատիրական, յանձնաժողովը գասել է Հայ-լուսաւորչական Տամբիեվների տոհմն էլ Մեծ-Խարարդայի առաջին աստիճանի ուղղենիների կարգը, այսինքն ճանաչել է ազնուական դասակարգ բոլոր այն իրաւունքով և արտօնութիւնով՝ որ վայելում են ազնուականները ուրիշ տեղերում: Նրանք էլ ունեցել են ճորտեր, որոնք յետոյ ճորտատիրական ընդհանուր օրէնքի գորութեամբ ստացել են ազատութիւն և նոյնպէս ապրում են Բուղարուսաւանում և կախումն ունին Տամբիեվներից այն չափով, որ չափով ազատուած ճորտերը կախուած են Կովկասի միւս տեղերի ազնուականներից:

Հայ-լուսաւորչական Տամբիեվները այժմս աիրում են ընդարձակ արօտատեղիների, ուր արածում են նրանց բազմաթիւ ձիաներն ու խաչները: Նրանց զլիաւոր պարապմունքը ձիաբուծութիւնն է և նրանք ազնուացնելով Խարարդայի տեսակի ընտիր նմոյգներ, իւրաքանչիւր տարի հարիւրներով ծախում են շրջակայ ստանիցաներում ապրող զազախների վրայ: Տեղի գիրքըն ու կլիման թոյլ չեն տալիս նրանց ձեռնարկել մեծ չափերով երկրագործութեան, թէև իրանց պէտքերի համար մշակում են ցորեն, վարսակ, աճար, աւելուկ: Մշակում են նոյնպէս մեծ քանակութեամբ գետնախնձոր, որ վագոններով տանում են վաճառելու Վլադիկավկազ, Պեատիգօրսկ և այլ մօտակայ քաղաքներ: Պարապում են նաև մեղաւարուծութեամբ, բայց ոչ մեծ ծաւալով, թէև արտադրած մեղրը իր համով և որակութեամբ կարող էր մրցել ուրիշ տեղերում ստացած մնջրի հետ: Արօնները իրանց բազմերանդ ծաղիկներով մեծ պաշար կարող էին մատակարարել մեղսւներին, սակայն մեղուարուծութիւնը երկրորդական է համարւում, քանի որ ձիաբուծութիւնը աւելի շատ արդիւնք է տալիս: Ամառը ձիաների ջոկերն ու խաչները պահում են լեռներում, իսկ ձմեռը իրանց շրջակայ արօններում են արածացնում բացօթեայ, որովհետև չնորհիւ տեղի դիթքի ձմեռը սաստիկ չի լինում: Սակայն ձմեռային բուքի ժամանակ քշում են նրանց ընդարձակ ախոռները, որ մօտիկ են աներից:

Բուղուրուսաւանում ապրող 7—8 տուն Տամբիեվները համարեա միննոյն ձեի և ոճի տներ ունեն՝ քարաշէն, երկյարկանի, երկաթածածկ, ունենալով բոլորովին քաղաքային տեսք:

Սենեակները մաքուր են և կահաւորուած եւրոպական ճաշակով՝ Անհրաժեշտ են համարում ունենալ սենեակում սրբերի պատկերներ, որոնց առաջ վառում է անչշչ կանթեղը։ Տների առաջ ու կից կան մրգատու ծառերի պարտէզներ։ Մեր այցելած ժամանակ ծառերից առատ կախուած էին ընտիր տեսակի խնձորներ ու տանձեր։ Կային և սալորիներ, կեռասիներ։ Պտուղներից հաղարճ, աղնիւ ելակ և այլն։ Պարսէղները պահւում են խնամքով։

Տղամարդիկ հագնւում են բնիկների տարազով՝ չերքէղկա, իսկ գօտկից կապած է անխուսափելի խանջալը։ Կանաք, թէ սպառաւ, թէ երիտասարդ, բացառապէս հագնում են եւրոպական չրազգեստ և գլխները ծածկում են շապօյտ։ Տեսանք միայն մի հարիւրամեայ պառաւ կնոջ, որ կրում էր խաբարդական հանդերձ՝ մի երկայն չերքէղիայի նման պարեզօտ ոսկեթելով բոլորած, մէջքին ոսկէ գօտիկ կապած, իսկ զլիխն թեթև շղարչ։ Քրիստոնէական անունների հետ միաժամանակ նրանք կրում են խաբարդացիների անուններ՝ Ասլանէի, Բագրբէի, Տեմիրբէի, Խասրուլաթբէի, ևայլն, որոնք գործածական են առօրեայ յարաբերութիւնների ժամանակի։

Տամբիւլների տունը լի է ամեն տեսակ բարիքով։ Կարող է գոհացնել տասնեակ հիւրերին, եթէ նոյնիսկ անակնկալ կերպով արշաւեն։ Հիւրասիրութիւնը նրանց ծէս ու աղաթուլ նուիրական պարտաւորութիւն է։ Պատահում է որ շաբաթներով ու ամիսներով պահում են իրանց մօտ հիւրեն և մեծ սրտնեղութիւն է պատճառում նրանց հիւրի հրաժեշտի օրը։

Վերին աստիճանի ջերմեռանդ են նրանք և կրօնասէր։ Ամեն անգամ սեղան նստելիս ու վեր կենալիս ազօթում են իրանց Ստեղծողին։ Մեծ յարգսնազով են վերաբերում զէպի եշմիածինը և սրա զահակալը։ Ներկայ կաթողիկոսի կենդանազիր որատիկերը տեսանք կախուած մի հիւրասինեակում։ Մեր եկիղեցու սահմանած բոլոր պասերը պահում են անխօփան։ Մեծ ուրախութիւն է պատճառում նրանց, երբ Գիօրգիելսկի քաղաքի քահանան զալիս է նրանց այցելութեան։ Ես զիազուածով տեսայ Կիսլօզսկում այդ երիտասարդ քահանային, որ աշակերտած է նղել ինձ ներսիսեան դպրանոցում։ Նա մեծ հրճուանքով էր խօսում այդ մի բուռը հայ-լուսաւորչականների կրօնասիրութեան մասին։ Շատ ափսոսում էր որ չի կարող լիուլի բաւարարութիւն տալ նրանց այդ չերմեռանդութեան, քանի որ ինքն ստիպուած է հովուել բացի Գիօրգիելսկի քաղաքի ծխականներից և միքանի մօտակայ աւաններում ապրող հայերին։ Բայց

և այնպէս տարին միքանի անգամ սիրով յաճախում է նրանց, երիտասարդ քահանան յուսով է որ եթէ մնայ երկար ժամանակ ներկայ պաշտօնում, կը սովորեցնի եթէ ոչ ծերերին, գոնչ երիտասարդ սերունդին միքանի աղօթքներ հայերէն լեզուով:

Միակ հայերէն զիտցողը այդ մի բուռը խաբարդացի հայ-լուսաւորչականների մէջ մեր հիւրասէր տանտիրոջ աւազ հարս էր՝ մի նազելի, չնորհաշուք, հաղիւ քսան տարին բոլորած տիկին, որ բնիկ չերքէզախօս արմաւիրցի է և աւարտած է իր ուսումը Նոր-Նախիջևանի Գօգոյեան ուսումնարանում: Տիկինը շարունակում է հետեւ մայրենի գրականութեան և մեծ եռանդով պարապում է ընթերցանութեամբ: Նա կարող էր իր հայագիտութեամբ նոր հոսանք մտցնել իրան շրջապատող խաբարդախօնների մէջ, սակայն տեղական ծէնն ու աղաթը պահում են նրան կրաւորական զիրքի մէջ: Խաբարդայի ծէսերը շատ են բունացել նրա վրայ: Երեք տարի է ինչ չնորհալի տիկինը հարս է մտել Տանբիեվների տունը և այդ երեք տարուայ մէջ ազգակից տղամարդիկ տեսած չեն նրա երեսը, ուր մնաց որ նրանց հետ նստէր, վեր կենար կամ զրուցէր:

Հիւրասէր տանտիրոջ աւազ եղբայրը, մի ութառն տառեկան ծերունի, անվերջ չնորհակալութիւն էր յայտնում ինձ որ միջոց տուի իրան տեսնելու իր եղբօր հարսին: Ահա թէ ինչ պէս սպատահեց այդ: Տեսնելով տիկինոջը միւս սենեակում իւրայիններից անտես կանգնած մի անկիւնում և մեր ճաշի սեղանին նայելիս, ես իմսդրեցի տանտիրոջ թոյլտւութիւնը ներս հրաւիրել հարսին և նստեցնել մեզ մօտ: Տանտէրը իւոժուեց դէմքը, բայց և այնպէս թոյլ տուեց մի բոպէով մտնել, իսկ սեղանակից լինել ոչ երբէք: Շնորհալի տիկինը մեծ պատկառանքով մտաւ, համբուրեց առաջ աւագ եղբօր և ապա սկիսարայրի ձեռքը՝ և իսկոյն հեռացաւ իր առաջուայ տեղը: Ահա այդ միջոցին էր որ ծերունին առաջին անգամ տեսաւ իր եղբօր հարսին: Բայց զարմանալին այն էր որ հարսի ամուսինը, որ այդ միջոցին ծառայում էր մեզ, տեսնելով իր կնոջ մեր սենեակը մտնելիս, իսկոյն չքացաւ և թագ կացաւ մի ուրիշ սենեակում, որտեղից միայն այն ժամանակ զուրս եկաւ, երբ նրա կինը անյայտացաւ մեր սենեակից: Բանից երեաց որ խաբարդական սովորութեամբ մարդ ու կին չեն կարող միասին մնալ հասարակութեան մէջ, եթէ նոյնիսկ հասարակութիւնը կաղմուած լինի իւրայիններից: Ահա այս և սրա նման բարբարոսական ծէսերն ու սովորութիւնները կրաւորական զիրքի մէջ են պահում հայութու տիկինոջը և նրա ձեռք բերած ուսումն ու գիտութիւնը ու-

նայն է անցնում: Մենք կրածում ենք որ աիլինը իր հայախօսութիւնը գէթ կը ներչնչէր իր գաւակների մէջ և այդպիսով առաջինը կը հանդիսանար հայերէն լեզուն տարածող խարարդախոս հայ-լուսաւորչականների մէջ, բայց տարաբախտաբար նա անգաւակ է և ուրեմն զրկուած՝ այդ մենաշնորհից:

Զարմանալի է, ճմարիտ, որ այդ մարդիկ աշխարհ տեսած են երեսում, աշխատում են փոխել իրանց նիստ ու կացը, բայց միւնոյն ժամանակ յամառութեամբ պահպանում են հին խարարդական բարք ու վարքը, ծէսն ու սովորութիւնը: Եւրոպական ճաշակով կահաւորած սենեակներն ու հացի սեղանի զարգարանքը ամեն պարագաներով և ծաղկեայ-վնջերով չեն սազում այն բանի հետ, որ աւագ որդին և միւս զաւակները ծոռայեն հիւրերին, իսկ հարսները փակուած մնան միւս սենեակում: Եւ երբ նրանց առաջ գնում ես այդ համեմատութիւնը, նրանք համաձայնում են տիրող ամհեթեթութեան, բայց և այնպէս չեն կարող ձեռք վերցնել իրանց հինաւուրց և դատարկ սովորութիւններից:

Ես երկար ու բարակ բացատրում էի մեր հիւրասէր տանտիրոջ (այրի է) որ մեծ հարսի իր հետ անխօսութիւնը շատ անդամ տան համար վնասակար հետեակը կարող է ունենալ, քանի որ նա պարտաւորուած է տան վերաբերեալ իր կարգադրութիւններն ու հրամանները հարսին՝ աղախնի միջոցով տալ ու պատասխանն ստանալ: Նա համոզուած էր որ այդ այդպէս է, սակայն տեղական սովորութիւնն արգելում է նրան այլ կերպ վարուել: Տանտիրոջ աւագ որդին՝ մեր հայախօս տիկնոջ ամուսինը խելօք ու զարգացած մարդ էր երեսում: Մեր հարցին թէ նա նոյնպէս կը վարուի իւրայինների հետ, երբ տան մէջ աւագութիւնն իր ձեռքն անցնի, նա պատասխանից թէ անպատճառ, որովհետև չէր կամնենալ մի նշանախեց անփամ փոխել իրանց մէջ արմատացած սովորութիւններից: Այդ խօսքերն ասողը համեմատաբար աւելի հին սերունդին է պատկանում: Նոր սերունդը, որին պատկանում է մեր տանտիրոջ կրտսեր որդին՝ մի բարեսիրտ և աչքաբաց երիտասարդ, որ այժմ Վարդիկավկաղի գլուխաղիօնի 8-րդ դասարանում է և առաջիկայ տարի աւարտելով իր ուսումը, մտադիր է ստանալ բարձր կըրթութիւն, ինչպէս տեսանք, առդորուած է նորանոր գաղափարներով: Յուսով ենք որ նա իր հասակակից համառուցինների հետ՝ վերադառնալով հայրենիք, կ'աշխատեն վերացնել իրանց միջից հին ծէսերն ու սովորութիւնները, և կը պահեն նրանցից միայն այնպիսինները, որոնք յատուկ են իւրագանչիւր նահապետական

տան, ինչպիսին որ է Տամբիեվսկի տունը։ Մեծ յոյս կայ որ զրանք շփուելով մայրաքաղաքում կրթուող հայ ուսանողների հետ, միենոյն ժամանակ կը հասկանան ինքնաճանաչութեան այս կարեորութիւնը, որ նրանք հայ-լուսաւորչականներ լինելով՝ անհրաժեշտ է ձեռք բերել և լեզուագիտութեան բաւարար պաշար, որ մի գործօն է հանդիսանում մեր կրօնական պաշտամունքների միջոցին։

Այն ժամանակ մեր նազելի հիւրասէր տիկին Տամբիեվի հետ ձեռք ձեռքի տուած նրանք կը կազմեն՝ մսքից մոռացուած և սրտից հեռացած այդ մի բուռը հայ-լուսաւորչականներից մեր եկեղեցու իսկական համայնք։

Ա. Ք.

Բ Ա Մ Բ Ե Ր Ը

(Գի դը Մօպասանի)

Զինուորականներով լցուած գերեզմանառունը ծաղկած դաշտի տեսք էր ստացել: Ամեն կողմը աչքի էին ընկնում կեպիներ, կարմիր անդրավարտիքներ, ոսկեթել ժապաւէններ ու ոսկեկոճակներ, թրեր ու բաղկավինչեր: Այդտեղ էր ամբողջ սպայակոյտը, այդտեղ էին հետեակ զօրքն ու հուսարները՝ իրանց դարդարուն հագուստներով,—գրանք ամենքն էլ անցնում էին զերեզմանների միջով, որոնց վրայի փայտէ, երկաթէ ու մարմարինսէ սև ու սպիտակ խաչերը կարծես իրանց բազուկները տիսուր ու արտում տարածել էին հանգուցեախների վրայ:

Նոր էին հողին յանձնել զնդապետ Լիմուզինի կնոջ մարմինը: Երկու օր առաջ լողանալիս խեղդուել էր գֆրախտ կինը:

Թաղման կարգն արդէն վերջացել էր, հոգնորականներն էլ գնացել էին, բայց գնդապետը՝ յենուած երկու սպայի բազուկներին, մնացել էր կանդնած զերեզմանի առաջ, որի խորքում նա գեռ տեսնում էր իր ջահէլ կնոջ՝ արդէն քայլայուղ մարմինը ծածկող դածաղը:

Գնդապեաը գրեթէ մի ծերունի էր, բարձրահասատկ, նիհար, սպիտակ ընդերովի երեք տարի առաջ նա ամբումնացել էր իր զինակից գնդապետ Սօրտիի աղջկայ հետ, որ հօր մահուանից յետոյ որբ էր մնացել:

Երկու սպան, որոնց կոթնած էր իրանց մեծաւորը, ուղում էին հեռացնել տանել, բայց նա ընդդիմանում էր և՛ աչքերն արտասուքով լի որ սակայն հերոսաբար չէր թողնում հոսելու, ցածր ձայնով մրմնջում: «Ո՛չ ո՛չ, թողէք միքիչ էլի մնամ» ու յամառութեամբ շարունակում էր զողդոջիւն ծնկներով կանդնած մնալ այն գերեզմանի եղբին, որ նրան մի անյատակ վիճ էր թւում, ուր ընկել էին իր սիրտն ու հոգին—իր ողջ ունեցած չունեցածը:

Գեներալ Օռմօնը շտագով մօտեղաւ իր սգաւոր զինակցին, բռնեց նրա թևից և համարեա բռնի կերպով քաշելով՝ ասաց. «Դէ, լաւ, բաւական է, իմ հինաւուրց ընկեր, հօ այստեղ չես մնալու. գնանք» Այս անգամ գնդապետը լսեց իր զինակցին և վերադարձաւ տուն:

Գնդապետը իր առանձնասենեակի դուռը բանալուն պէս մի նամակ տեսաւ գրասեղանի վրայ: Երբ վերցրեց նամակը, զարմանքից ու յուզմունքից քիչ մնաց փայր ընկնէր. նամակի հասցէն գրուած էր իր՝ նոր հողին յանձնուած կնոջ ձեռքով, իսկ մարկարի վրայ խփած փոստի գրոշմը նոյն օրուայ թուականն էր ցոյց տալիս:

Գնդապետը ծրաբը պատուց և կարդաց հետեւելը.

«Հայրիկ,

«Թոյլ տուէք ինձ դարձեալ հայրիկ կոչելու ձեղ, ինչպէս որ առաջ էի անում: Երբ այս նամակն ստանաք, ես արդէն մեռած ու հողի տակ պառկած կը լինիմ: Իցէ թէ այդ ժամանակ կարողանաք ինձ ներել:

«Իմ ուզածը ոչ ձեր գութը շարժեն է և ոչ էլ յանցանքս թեթեացնելը, ոչ. այլ միայն կամենում եմ՝ մի ժամից յետոյ մեռնելու պատրաստ կնոջ անկեղծութեամբ ամբողջ ու կատարեալ ճշմարտութիւնն ասել ձեղ:

«Երբ դուք վեհանձնութեան զգացմունքից զրդուած ամուսնացաք հետս, ես էլ երախտագիտութեամբ նուիրուեցի ձեղ և սիրեցի նորատի աղջկայ ամրողջ սրտովս: Ձեզ սիրեցի համարեա այնպէս, ինչպէս որ հօրս էի սիրում: Մի օր երբ ես նստած էի ձեր ծնկան վրայ և դուք փայփայում էիք ինձ, ես ձեղ, կամքիս հակառակ, «Հայրիկ» անուանեցի: Այդ՝ սրտի բընազդական ու ինքնաբրուղիս մի ծիչ էր Եւ յիրաւի, դուք ինձ համար հայր էիք, և միայն հայր: Դուք ծիծաղեցիք ու ասացիք ինձ. «Միշտ էլ այդպէս կոչիր ինձ, սիրելիս, այդ ինձ դուր է զալիս»:

«Երբ մենք տեղափոխուեցինք այս քաղաքը—ներեցէք ինձ, հայրիկ,—ես սիրահարուեցի: Ո՞հ, երկար ժամանակ ընդպիմացայ, զրեթէ երկու տարի. լսում էք, երկու տարի: Բայց յետոյ տեղի տուի. ես յանցանք գործեցի, ես մի ընկած կին դարձայ:

«Իսկ թէ ով է նա,—դուք չէք կարող իմանալ, այդ մասին ես բոլորովին ապահով եմ, որովհետեւ ինձ միշտ շրջապատում և միշտ էլ հետս էին լինում տաօներկու սպայ, որոնց դուք իմ տասներկու համաստեղութիւնն էիք անուանում:

«Հայրիկ, չաշխատէք իմանալու նրա ավ լինելը և մի ատէք նրան: Ի՞նչ փոյժ թէ նա արաւ այն, ինչ որ կ'անէք մի ուրիշ՝ ով էլ լինէք նրա տեղը: Բացի դրանից ևս հաստատ պիտեմ որ նա ինձ սրտանց էր սիրում:

«Բայց լսեցէք գեռո.—Մէկ օր ժամադրութիւն ունէինք «Կցարների» կղզում, զուք իմանում էք, ջրազացի մօտի փոքրիկ կղզին և նու պէտք է լողալով գնացի այնտեղ, ուր նա պէտք է ինձ սպասէք մացանների մէջ և ապա մնար այնտեղ դրեթէ մինչև երեկոյ, որպէսզի իր վերադարձը ոչ ոք չը նկատէր: Ես նոր էի հասել բարեկամիս մօտ որ թիերը բացուացին և մենք տեսանք մեր առջև Ֆիլիպին՝ ձեր բանքերին, որ մեղյանկարծակիի բերաւ: Ես զգացի մեր անել դրութիւնը և մի յուսահատական ճիչ արձակեցի: Անմիջապէս բարեկամս ինձ ասաց. «Ինձ թողէք այս մարդու հետ, սիրելիս, իսկ զուք հանդարաւ լողալով անցէք գնացէք»:

«Ես զնացի, բայց այնպէս էի յուզուած որ քիչ մնաց խեղղուէի: Վերադարձայ տուն՝ սպասելով որեէ զարհուարելի բանի:

«Մի ժամից յետոյ դահլիճի նախասնեակում հանդիպեցի Ֆիլիպին, որ ցածր ձայնով ինձ ասաց. «Եթէ տիկինը ինձ յանձնելու նամակ ունենայ, պատրաստ եմ ծառայելու»: Ես հասկացայ որ նա կաշառուած էր, և կաշառուած էր բարեկամիցս:

«Այնուհետև զրկելիք բոլոր նամակներս նրան էի տալիս՝ բարեկամիս տանելու: Եւ նա տանում էր, պատասխաններն էլ բերում:

«Այդպէս տեսեց Թօտաւորապէս երկու ամիս Մենք ես ձեզ նման վստահութիւն ունէինք նրա վրայ:

«Բայց ահա թէ ինչ պատահեց, հայրիկ: Մի օր լողալով գնացի միւնոյն կղզին. տեղ հասնելուս պէս փոխանակ բարեկամիս՝ ձեր բանքերին գտայ այնտեղ: Այդ անպիտանը ինձ սպասելիս է եղել. նա յայտնեց որ ինձ կը մատնէ և իմ բոլոր նամակներս, որ նա գողացել ու պահել էր, կը յանձնէ ձեզ, եթէ ես չը համաձայնեմ իր կամքը կատարելու:

«Ո՛հ, հայրիկ, սիրելի հայրիկ, երկիւղը պատեց ինձ, մի անարդ ու անարժան երկիւղ. վախեցայ մանաւանդ ձեզանից, ձեզանից՝ որ այնպէս բարի էք գէպի ինձ, բայց խարուած ինձանից. վախեցայ նոյնպէս նրա համար, — զուք կը սպանէիք նրան, — վախեցայ գուցէ նաև ինձ համար: Միթէ ես գիտեմ. ինքս ինձ կորցրած, ես խելազարուածի պէս էի: Մտածեցի մի անգամ նորից կաշառել այդ թշուառականին, որ՝ ինչ խայտառակութիւն, նոյնպէս սիրում էր ինձ:

«Մենք՝ կանայքս, այսպէս թոյլ ենք որ մենք մեզ աւելի շուտ ենք կորցնում, քան թէ դուք՝ տղամարդիկդ, Բացի դրանից մի կին բարոյապէս չը պէաք է ընկնի, սակայն երբ մէկ անգամ ընկնում է, այնուհետև նա աւելի ու աւելի է ցած գնում: Միթէ զիտէի արածու Ես միայն այն էի հասկանում որ ձեր երկսից մինն ու մինդ և ես մեռնելու էինք, և ես անձնատուր եղայ այդ անարգ արարածին:

«Ինչպէս տեսնում էք, հայրիկ, ես չեմ աշխատում ինձ արդարացնելու:

«Սակայն... սակայն պատահեց այն, ինչ որ պէաք է որ ինքս գուշակած լինէի. — շարունակ սարսափ ազդելով վրաս, նա ինձ տիրեց և նորից ու նորից տիրեց, երբ կամեցաւ: Ուրեմն նա ևս դարձաւ սիրելիանո, ինչպէս միւսը, ամեն օր: Միթէ զզուելի բան չէ, և որպիսի պատիժ, հայրիկ:

«Ահա այդ պատճառով ինքս ինձ ասացի. պէաք է վերջ տալ այս տեսակ կեանքին: Կենդան՝ անկարող էի խոստովանուել ձեզ այսպիսի ծանր յանցանք, մեռած՝ համարձակում եմ ամեն բան ասել: Բացի մեռնելուց ուրիշ կերպ վարուել չէի կարող, որովհետեւ չափազանց շատ էի արատաւորուել, ոչ մի այլ միջոցով չէի կարող մաքրուել մեղքերից: Այլիս ոչ կարողանում էի սիրել և ոչ էլ սիրուել. ինձ այսպէս էր թւում թէ ես ամենքին էլ կեղտոտում եմ՝ լոկ ձեռքս տալով նրանց:

«Անմիջապէս պէաք է գնամ լողանալու, որտեղից այլևս չպէաք է վերադառնամ:

«Այս գրութիւնս ձեզ կը հասնի սիրելիանիս միջոցով: Այս նա կը ստանայ իմ մահուանից յետոյ և առանց որևէ բան կասկածելու կը հասցնէ ձեզ՝ կատարելով իմ վերջին իղձս: Իսկ դուք... նամակս կը ստանաք հանդստարանից վերադառնալուցդ յետոյ:

«Մնաք բարով, հայրիկ, էլ ուրիշ ոչինչ չունիմ ձեզ ասելու: Արէք, ինչ որ բարւոք կը համարէք, միայն թէ ինձ ներեցէք»:

Գնդապետը սրբեց ճակատի սառը քրտինքը. սակայն նա շուտով տիրապետեց իրան և նա նորից վերստացաւ ճակատամարտերում ունեցած իր սառնասրտութիւնը:

Նա հնչեցրեց զանգը:

Ներս մտաւ մի սպասաւոր:

— Ձիլիպին ուղարկեցք այստեղ, ասաց նա:

Յետոյ երբ նա կէս-մին բաց արաւ գրասեղանի գզրոցը, գրեթէ նոյն բոպէին ներս մտաւ Ձիլիպը, մի բարձրահասակ՝ չէկ բեղերով, դաժանատես ու խորամանկ աչքերով զինուոր:

Գնդապետը ուղիղ նրա աչքերին նայեց։
— Դու պէսք է ասես ինձ կնոջս սիրեկանի անունը։
— Բայց, պարոն գնդապետ...։
Գնդապետը կիսաբաց գզրոցից վերցրեց ատրճանակը։
— Դէ, շնուտ, ասաց նա. դու հօ լաւ գիտես որ ես կատակ
ամել չեմ սիրում։
— Եթէ այդպէս է, լաւ... պարոն գնդապետ...։ Դա հա-
րիւրապետ Սէն-Ալբերն է։
Սյդ անունը արտասահնեց թէ չէ՝ ատրճանակը բացուեց
և նու երեսի վրայ փռուեց գետին։ Գնդակը ծիչտ ճակատի մէջ-
տեղին էր զիպել։

Թարգմ. ԼԵԽՈՆ Մ.—Ա.

ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ

Համիսլամութիւնը մի խոշոր երևոյթ է թրքական աղքատ հասարակական ու մտաւոր կենանքի ճահճում: Նա արտադրել է, արտադրում է, գուցէ և գեռ երկար ժամանակ պէտք է արտադրէ նորանոր երևոյթներ ու ցնցումներ:

Պէտք է ուսումնասիրել այդ երևոյթը, որովհետև նրանով կը բացատրուին չատ ուրիշ երկրորդական ու գլխաւոր երևոյթներ, որոնց էութիւնն ու նպատակը յաճախ թագնուած են մնում ընթերցող մեծամասնութեան համար:

Մենք կը փորձենք մի փաքրիկ ուսումնասիրութիւն տալ «Մուրճ»-ի ընթերցողներին համիսլամութեան էութեան, նրա նպատակների և միջոցների մասին: Աղքատ է նրա մասին գոյութիւն ունեցող զրականութիւնը, չափազանց աղքատ: Մեզ մնում է հիմնուել աւելի անձնական փորձերի, դիտողութիւնների ու տպաւորութիւնների վրայ, քան քաղել գոյութիւն ունեցող զրականութիւնից փաստեր:

I. Խ՞ՆՉ Է ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆԸ

Համիսլամութիւնը թիւրքիայում ծնունդ է առել թրքական պետութեան տնտեսական, պատմական ու քաղաքական պայմաններից: Սուլթանների մայրաքաղաքում կայ մի որոշ շրջան, վարիչների մի խմբակ, որ ձգտում է իրականացնել այդ գաղափարը կեանքի մէջ, նրան մարմին ու արիւն տալ, հոգի ներչնչել: Սյու լոկ ձգտումը դեռ բաւական չէ. արդէն արուած են բազմաթիւ գործնական քայլեր նրա իրականացման տատասկու ճանապարհի վրայ: Թէ նրքան նպատակայարմար են այդ քայլերը, որքան նրանք մօտեցրել կամ հնուացրել են այդ գաղափարի իրականացումը՝ այդ մենք կը տեսնենք յետոյ:

Թիւրքիայի համիսլամական քաղաքականութիւնը ունի մի որոշ նպատակ, որ կազմուած է երկու բաւական պարզ կերպով իրարից բաժանուող մասերից. մօսաւոր եւ հեռաւոր նպատակներ,

Նրա մօսաւոր նպատակն է դարձնել Թիւրքիան մի զօրեղ և հուժկու պետութիւն՝ միացնելով ու ձուլելով Նրանում ընակուող բոլոր բազմալեզու, բազմացեղ և բազմակրօն ժողովուրդները «Օթօման» անուան, իսլամական կրօնի և թքական լեզուի կապերով. ջարդել, փչացնել, դուրս քշել դիմադիր տարրերը»

Երբ Թիւրքիան կը դառնայ մի միապահաղ, ձոյլ ամբողջութիւն կազմող խլամական տարր, մի զօրեղ ու անընկծելի դուտ խլամական պետութիւն, այն ժամանակ ակսուելու է համիսւլամութեան հեռաւոր նպատակը կազմող յարձակողական տարծումը: Դուրս կը գան հաւատացնելները Թիւրքիայի սահմաններից՝ զօրեղ ու անյաղթելի, համախմբուած խլամական Սանջազը-Շերիֆի (սրբազն գրօշակի) կարմիր լոյսի շուրջը՝ լուսաւորուած Մահիկի գեղին չողերով, կը վարարեն արար-աշխարհը, կը ջարդեն, կը փշեն զեակուրենեի պարիսպները և կը վերականգնեն Օմարների, Հարուն-Ալ-Ռաշիդների փառահեղ խալիֆութիւնը: Աւ նաչը կը խոնարհի Մահիկի առաջ...

Այս է Պօլսի «Օթօման ազգասէրների» երազը: Այդպէս են մտածում Երլարզ-Քէօշքում և Բաբը-Ալիում (Բ. Դուռ)՝ սկսած սուլթան Համբէղը մինչև վերջին հեարիբը (գրագիր). այդպէս էին մտածում թրքական ազատամտութեան—սահմանադրութեան տիրահոչչակ հերոսները—Միհնատ փաշան իր ահազին խմբով. նոյնն են երազում, մեր կարծիքով, և նորագոյն երիտասարդ-թիւրքերը... գէթ նրանց իննըսունուիննը հարիւրերորդ մասը:

Բայց ինչ դիրք են բռնում նրանք այդ առիթով դէպի նւրոպան:

Այդ հարցին պատասխանելուց առաջ՝ բանանք մի փոքրիկ փակագիծ:

Հրաշալի է Պօլսի տեսարանը, երբ նաւով մօտենում են Մարմարայի կողմից: Զախ կողմդ փուռում է Սամ-Մտեֆանոյի և Ստամբուլի նկարչական ափը՝ իր ամֆիթատրոնով վեր բարձրացող թրքական շէնքերով: Նոյն կողմում, դէպի առաջ, Մարմարայի կապոյտ ալիքները ճեղքելով ներս է ցցւում Սարա-Բուռունի հրուանդանը, որի ներսում տեղաւորւում է Էսկի-Սերայը (Էին-պալատը): Երբ մօտենում ես այդ հրուանդանի ծայրին՝ ձախ կողմդ բացւում է վեհափառ Ոսկեղջիւրը իր անվրդով հայելիանման մակներեւոյթով:

Աջ կողմդ ընկնում են Մարմարայի ալիքների հետ «աչք-խփուկ» խաղացող իշխանաց գեղածիծաղ կղզիները, Հայդար-Փաշան, Մօղա-Բուռունին, Գատը-Քէօյը և Խւսկիւտարը՝ իր Զամլիճայի բարձունքով, որ մի տեսակ կանաչ թագ ու պսակ է

կազմում ասիական Պօլսի գլխին, Ամեն կողմ կանաչին են տալի թրքական մեզարլիքների (գերեզման) նօնիախիտ մէրիները... Սնթիւ-անհամար մզկիթները դէպի տմակերն են ցցում իրանց մարմարէ մինարէների սրածայր կատարները: Իսկ այս ամենի թագումին, բնութեան հրաշալիք Բոռֆօրը՝ գալարուող օձի նըման փուռում է ձեր տուաջ Մարմարայից մինչև Սև-ծովի երկու ժամ նաւով դնալու ճանապարհ՝ գրկելով իր ափերի մէջ ահազին թուով կայսերական պալատներ ու փաշաների եալիներ (ապարանք):

Եաւդ մօտենում է ափին: Մտնում ես դայեխ (մակոյի) և դուրս զալիս ափի Հաղիւ փաղոց ես մտնում, բնութեան այս բոլոր հրաշալիքները, կարծես կախարդական գաւազանի մի հարուածով՝ կորչում, ամհետանում են և նրա տեղը բռնում են աղտոտութիւնն ու նեզլիկ, զզուելի արենելեան փողոցները: Ուր էլ գնաս, Պօլսի որ մասն էլ մտնես, ամեն տեղ փողոցները լեցուն կը տեսնես չներով, անվերջ չներով ու աղաւնիներսի: Ամեն նոր եկող կարծում է, թէ այդ չներն ու աղաւնիներն անտէր են: Ոչ, նրանք անտէր չեն. նրանց տէրն է Դուրանը, ամբողջ իսմալական աշխարհը և մասնաւորապէս թիւրքերը: Սուլթան Բայազէջը հաշակուած է թիւրքերի մէջ իրը մեծ ու բարեգութ, որովհետեւ մեծ խնամք ու սէր է տածել դէպի շունն ու աղաւնին, այդ երկու «սրբազան կենդանիները»:

Դրանք, ընթեցող, թրքական վարիչ շրջանների, թիւրք ոփազուատների բնաւորութեան մարմնացումներն են, նրա սիմվոլները (symbols):

Թիւրք զիվլօմատը հեղ ու միամիտ աղաւնի է, երբ իսօսում է իրանից զօրեղի, մանաւանդ «գեավուր» եւրոպացու հետ: «Այս ձեռքը, որ չմս կարող կարել, համբուրիր, ձակատիդ գիր», ասում է թրքական առածը: Այդպէս էլ անում է թիւրք զիվլօմատը: Իսկ երբ նա գործ ունի իրանից ցածրերի, մանաւանդ անհաւաս ույաների հետ, այն ժամանակ նա ուսն է, նրա ընտորութեան բոլոր անսրտութիւնով, ցինքարական պարզութիւնով ու գազանութիւնով:

Համիսլամութեան վերաբերութեամբ էլ խաղում է թիւրք իշխանաւորը նոյն երկդիմի—շան ու աղաւնու դերը: Եւրոպացի առաջ նա ձեւանում է միամիտ, անտեղեակ, նոյնիսկ ապուշ. երդում, կոկորդն է պատում որ նա իսլամական սուրբ կրօնի քարոզներից, նրա լոյսը տարածելու ձգտումից զատ ուրիշ ոչ մի ցանկութիւն, ոչ մի հեռանկար չունի իր աչքի առաջ: Իսկ քրիստոնեայ հաղատակներից նա երբէք չի թագցնում իր նպատակը. ընդհակառակը՝ ամեն օր խրոխտում, սպառնում է,

որ «գեավուրլարը քեսեճէըզ» (անհաւասներին պէտք է կոտորենք), որ «կը գայ շուտով այն օրը, երբ իսլամը կը կործանէ և կը տիրէ ամբողջ քրիստոնեայ աշխարհին»:

Այս վերջին սպառնալիքների համար փաստեր բերելու կարիք չը կայ. իրականութիւնն արդէն խիստ պերճախօս կերպով ցոյց տուեց նրանց գոյութիւնը... Բաւական արիւն հոսեց... Բերենք գոնէ մի հատ օրինակ թրքական «աղաւնիութեան»:

1895 թուին, երբ թիւրք կառավարութիւնն սկսում էր իրականացնել իր գժոյային ծրագրերը Անտալիայի քրիստոնեաների վերաբերութեամբ, երբ բոլոր հայկական գուառներում հայի տաք արիւնի ծով էր դառել, Պարիզում՝ թրքական առատ ուկիներով տպւում էր մի գիրք—«Թիւրքիան և Օթօմանները» վերնագրով։ Դրա հեղինակը Բօդէն գ'Ալլօց կեղծ անուան տակ ծածկուած մի թրքական լրտես էր, որ, երեի, ուղղակի յարաբերութեան մէջ էր Ելլութզի հետ Նա իր գրքում փառաբանում, մինչև երկինք է հանում Արդ-իւլ-Համիդին, նրա հայրական գթաւաստութիւնը, նրա հանճարը, նրա ազատամտութիւնը... Եւ, վերջապէս, ասում է հետեւել խօսքերը համիսամութեան մասին։

«Ծատ անգամ եւրոպական մամուլը խօսել է Սուլթան Արդ-իւլ-Համիդի համիսամական ձգտումների մասին. իբր թէ նա ծրագրում է միացնել իր գայխանի տակ բոլոր մահմեդական երկրները։ Այն, համիսալամութիւնը գոյութիւն ունի, բայց ոչ արևմտեան գրողների ասած մաքով։ Նա չի ներչնչուած մի քաղաքական գաղափարով։ Նրա էութիւնն է մի զուտ կրօնական գաղափար։ Նա հիմնուած չէ ոյժի, այլ հաւատի վրայ։ Ինչպէս որ Պապի ձայնը երբէք անլուելի չի մնում ամբողջ աշխարհի կաթոլիկների կողմից, այնպէս էլ Խալիֆի ձայնը թընդացնում է հողագնոտի բոլոր իսլամների սրտերը. այս ազգեցութիւնը, որ շատ խորարմատ է, իբր մի բարոյական ազգեցութիւն՝ Եւրոպային անհանգիստ անելու ոչինչ չունի իր մէջ, որովհետև նա գործ է ածւում քաղաքակրթութեան օգտին»...

Այդ է թրքական բոլոր պաշտօնական հերքումների մեթօդը. սեր ճերմակ հրատարակել, եղածը՝ չեղած...

II. ԽՆՉՊԵՍ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ ԻՐԱԳՈԲԾԵԼ ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆԸ

Վերջնական, աշխարհակալ նպատակին հասնելու համար, համիսալամականները մտածում են նախ և առաջ իրականացնել իրանց մօտաւոր նպատակը, որ և պէտք է ծառայէ իրանց պագայ ծրագրերին իբր հիմք ու յենակէտ։

Բայց ինչպէս պէտք է համենել այդ մօտաւոր նպատակին, ինչպէս պէտք է զօրացնել թոյլ Թիւրքիան, միաւորել այդ պատառոտած փալասը, միապաղաղ ու միաձոյլ մի ամբողջութիւն, մի աղգութիւն կազմել այդ բազմացեղ, բազմալեզու ու բազմակրօն թարելնը:

Այդ նպատակին հասնելու համար համիսլամականներն ու նեն արդէն իրանց սրոշ տակտիքը, գործելու որոշ եղանակը կամ ներքին քաղաքականութիւնը, որի զլիաւոր տարրերը կամ գործադրուող զիսաւոր միջոցները հետևեաններն են.

ա) Նեղել ներքին ոչխալամ տարրերը և առաջ քաշել մահմեղականներին:

բ) Համերաշխութեան և առանդուն պրօպաղանդ ներքին իսլամների մէջ:

գ) Սահմանափակող օրէնքներ արտաքին քրիստոնեանների դէմ:

դ) Արտաքին ձեի պրօպաղանդ:

Ծանօթանանք այդ բոլոր միջոցների հետ առանձին-առանձին:

Վաղուց է զոյութիւն ունի՝ «Թուրքիան երիտասարդացներ» (rajeunir la Turquie) գաղափարը: Դեռ 1790-ական թուերին նապոլէօն Բոնապարտը մտածում էր գնալ Թիւրքիա, մտնել ծառայութեան մէջ, վերակազմել, երիտասարդացնել Արևելքը: Նապոլէօնին բախար կոչեց այլ ասպարէզի վրայ, բայց նր զ գաղափարը չը մնուաւ, նա Ֆրանսիայից Անգլիա անցաւ: Խրիմի պատերազմից էլ առաջ՝ անգլիական բոլոր մինիստրութիւնները՝ թէ Տօրի, թէ Վիզի, տեսնելով Ռուսիայի տարածուելը մի կողմից՝ զէալի Աւղանստան (ուրեմն և Հնդկաստան), Միջին-Ասիայով, միւս կողմից՝ զէալի Պարսից ծոց և Միջերկրական, Հայկական բարձրաւանդակի վրայով, շտապեցին հնարներ մտածել՝ պարխազ քաշելու իրանց վտանգ սպաննացող ոռուսական այդ առաջնադաշտեան դէմ: «Նենդ Ալրիօնը» մի կողմից զինել սկսեց Աւղանստանը, ամեն կերպ ամրացնելով նրա սահմանները, օգնելով նրան զրամով, զէնքով ու բանիմաց մարդկանցով, իր հու գործիքները դարձնելով նրա հմիրին ու կառավարիչներին: Միւս կողմից՝ Պասկեվիչի կոիւներից յետոյ պարզ ու որոշ կերպով զրուեց Թիւրքիայի վերակազմութեան ինդիքը ընդէմ Ռուսիայի:

Այդ վերակազմութեան քաղաքականութեան արդիւնք էին Թանգիմաժն ու Խատար-Հիւմայտնը. զրա արդիւնք էր մասսամբ Խրիմի պատերազմը, Թիւրքիային այդ ժամանակ եղած եւրոպական օդնութիւնը, այդ պատերազմից յետոյ մինչև 1876

թիւը Թիւրքիային արուած եւրոպական 12 հսկայական վտառասութիւնները, որ համառմ էին մօտ 200 միլիօն սոկու գումարի (մօտ 2 միլիարդ սուրլի): Այդ իրար նաևից արուող վտառասութիւնները պէտք է ծառայէին սուլթան Ազիզին իբր միջոց՝ վերակաղմնու թրքական բանակը, նաւատօրմը, բերդերը և կունքի մէջ հազէս գործորդիլս Թանգիմաթն ու Խաչառ-Հիւմայտնը: Անզիան կարծում էր թէ այդ միջոցներով Թիւրքիան կր գատնար մի նորագոյն, լուսաւոր ու զօրեղ եւրոպական պետութիւն և կը ծառայէր իբր մի անընկճելի պարիստ Ռուսաստանի:

Բայց պատմութիւնը թոփշքներ չի սիրում: Զի կարելի Աֆրիկայի Քաղցրներից կազմել մի կանոնաւոր ու զօրել միապետութիւն կամ Պարսկաստանը վերտծել է ակրն նաևրապետութիւնների անունու: Այդպէս էլ չէր կարելի օտարների ցանկութիւնով և մի քանի վարիչ շրջանների համաձայնութիւնով՝ բարբարոսութեան աստիճանի վրայ գտնուող թրքական բանակալութիւնը՝ մի անդամից գարճնել մի կանոնաւոր, լուսամիտ ու սահմանագրական պետութիւն: Արգիւնքն այն եղաւ, որ չես թիւրք վարիչներն ընկան ծայրայեղ շապարութեան, զեզութեան ու անբարոյականութեան գիրկը, ծախսեցին վչացրին բոլոր փոխ առնուած դումարները, գցեցին՝ 4—500 տարի մի կոտէկ օտարից պարսկ չառած Թիւրքիան 200 միլիօն սոկու հսկայական պարաքի տակը, գարճնելով նրան տնտեսապէս սորուկ եւրոպական պարտատէր ու հզօր պետութիւնների ձեռքին *):

Միայն այդ բոլոր պարագաների մէջ կազմուեց ու մնաց «Երիտասարդ Թիւրք» կուսակցութիւնը, որ հնարաւոր էր համարում միաւորել Թիւրքիայի բոլոր ազգերը Օրօնան անուան տակ—առանց կրօնի խորութեան, վերակազմել նրան և համել խալիֆների մեծազօր գիրքին: Ալի-Սուլափի էֆէնդին, Քէմալ-Բէյը, Թիփփիկ-Բէյը, Զիա-Բէյը, Մեհմէդ-Բէյը, Ահմէդ-Միդհամ Բէյը, Միդհամ-փաշան, հայլն, հայլն, այդ զօրեղ կուսակցութեան պարագլուխներն էին, որ արտաքուստ ցոյց էին տալիս թէ ուզում են փոխ առնել եւրոպական լուսաւոր կարգերը, ներմուծել նրանց Թիւրքիա, եւրոպական քաղաքակիրթ պետութիւնների շարքն ընկնել... իսկ ներքուստ առձում էին կատաղի ատելութիւն զէսի եւրոպական ու այն ամենը, ինչ որ իսլամ չէր: Տիրահոչակ հերոս Միդհամ-փաշան, թրքական կարծօրեայ առհմանալիքութեան հեղինակը՝ մի կողմից աղաւամիտ եւրոպա-

*) Տե՛ս այս ասիթով „Stambul und“ das moderne Türkenthum⁴, von einem Osmanen կամ Յ. Տեպլով-ի աշխատութիւնը, — „Смутное время и дворцовый переворот“.

կան սկզբունքներից քաղուած իր ստհմանադրութիւնն էր կազմում, ըուր հպատակների—առանց կրօնի ու ազգութեան խըտրութեան—հաւասարութիւնն էր քարոզում օրէնքի առաջ, իսկ միւս կողմից «Բոլղարական սարսափների» հրամանն էր ստորագրում, Յ օրուայ մէջ 45,000 բոլղարների արիւնն էր հոսեցնում:

Երիտասարդ թիւրքերի ջերմ կուսակիցների թուռումն էր և սուլթան Մեծիզի երկրորդ որդին՝ սուլթան Մուրադի և զբայր Արդ-իւլ-Համիդ էֆէնդին, ներկայ սուլթանը,

1876-ին գահնկէց արին երիտասարդ-թիւրքերը մեղկ ու թուլամորթ սուլթան Ազիզին և միքանի ամսից յետոյ՝ Զրադանի պալատի մէջ խողխողել տուին նրան երեք վարձկան սրիկայ փանլեվանների ձեռքով։ Ազիզի տեղ, անգլիական դրդումով, գահը բարձրացրին հիւանդու ու թոյլ Մուրադ Վ-ին, որ հաղիւ միքանի ամսի թագաւորեց, մնալով հլու գործիք փառասէր Միդհատի և ուրիշների ձեռքին։ Վերջապէս Միդհատ-փաշին, իր երիտասարդ-թիւրք կուսակիցների չնորհով, յաջողեց իր եղբօրը իբր ցնորուած գահից վայր վրորող Արդ-իւլ-Համիդի հետ բանակցութիւնների մէջ մտնել, $1\frac{1}{2}$ տարի գոյութիւն ունեցող թրքական «սահմանադրութիւնը» հրատարակել և, իր կարծիքով, նոր ու լուսամիտ համիլաւական եպօխա սկսել թրքական պատմութեան ու կեանքի մէջ։

Այս, երիտասարդ թիւրքերի աղեատ Համիդը գահը բարձրացաւ և, հազիւ ուսւաթիւրքական պատերազմը վերջացած, իր խոկական երիտասարդ-թրքական դոյնն ու ձգտումներն՝ առանց կեղծիքի, առանց քօղարկութեան սկսեց արտայալտեր։ Բանս, աքսոր, կախաղան ասպարէզ եկան իր նախկին կուսակիցների համար։ Միդհատ-փաշա, Զիա-՛նէ և այլն—աքսորուեցան Արարիա, ուր և թոյնով մեռան հաղիւ մի երկու տարի ապրելուց յետոյ։ Մահուդի տակ դրուեց սահմանադրութիւնն ու թանգիմաթը, արդարութիւնն ու հաւասարութիւնն օրէնքի առաջ... Եւ բոլոր վարիչ շրջանների համար թագաւորող սկզբունքը դարձաւ պարզ ու մերկապարանոյ հստմիսլամութիւնը։ Ով իսլամչէ, նա չը պէտք է մնայ թիւրքիայում...

Եւ սկսուեց Թիւրքիայի ոչ-իսլամ տարրերի իսկական խաչնանութիւնը։ Սկսուեցին տանջուել հայն ու բոլղարը, յոյնն ու սերբը, քրիստոնեայ ալբանացին ու դիւրզին... Սկսուեցին ամեն հնարաւոր միջոցներ գործադրուել նեղելու, ճնշելու ոչ-մահմեդական տարրերին, նրանց հեռացնելու թէ պաշտօնէութեան ասպարէզներից, թէ վաճառականութիւնից, թէ նոյնիսկ գործաւորութիւնից։ Սուլթան Համիդի վարչութեան մէջ թա-

գաւորող սկզբունքը հետևեալը եղաւ. նեղել բոլոր ոչ-մահմեցական տարրերը, քայքայել նրանց նիւթապէս, բարոյապէս ու ֆիզիկապէս. ստիպել նրանց մնանկանալու, մեռնելու, կրօնափոխ լինելու, երկրից զուրս փախչելու, որպէսզի նրանց թիւը քչանայ, նրանք արմատախիլ լինեն և դրանով իսլամ տարրերը միայն մնան իր երկրի ընդարձակ սահմաններում:

Բայց բոլորին միանգամից և միենոյն չափով չէր կարելի ճնշել. եթէ ոչ, բողոքն ու դիմադրութիւնը խիստ զօրեղ կը լինէր: Մաքիավելի թիւրք աշակերաները շատ լաւ գիտէին իրանց դասերը. նրանք բաժանեցին, երկասուակութիւն սերմանեցին զոհերի մէջ, որպէսզի աւելի դիւրութիւնով աիրեն նրանց: Հայերին բաժանեցին երեք միլլէրի: Հայ-կաթոլիկը հայ չէր, այլ «էրմէնի-կաթոլիկ միլլէթի»: Դրանով կարողացան գըրաւել հայ-կաթոլիկներին, որոնց մէջ պակաս չէին Զնդոյնանների նման քսու և ստոր հոգեւորականներ ու աշխարհականներ, որոնք ըլ տեսնելու տուրին թիւրերի խսկական նպատակը և, ժամանակաւոր յաջողութեան համար, բաժանուեցան հայութիւնից, դարձան լրտեսներ ու գործիքներ թիւրք Մաքիավելների ձեռքին:

Նրանք բաժանեցին ու մահացու թշնամի դարձրին բոլոգարներին ու սերբերին, յոյներին ու կուցօվալախներին: Ուրումը ցանուած էր Մակեդոնիայի մի հայրենիքի զաւակ միակրօն ցեղերի մէջ. ամենքը թշնամացան ամենքի գէմ*): Թէև աղգայնական անտազօնիզմը կար այդ ցեղերի մէջ առաջ էլքրայց նա երբէք հասած չէր այն հրէշաւոր չափերին, որ գոյութիւն ունի այսօր, չնորհիւ թրքական դիպօւմատների:

Վերանորոգուեց կրետացիների տանջանքը և տեսց մինչ 1897 թիւը, երբ երջանիկ կղզին վերջապէս ազատուեց թիւրքական լծից: Նոյն հալածանքը հանուեց և քրիստոնեայ ալրանների ու ոչ-քրիստոնեայ դիւրզիների գէմ:

Բայց, կրկրում ենք, ամենքին միասին ու միաշափ չէր կարելի նեղել: Դրա համար կառավարութիւնը իր յարձակման առաջին կէտերը նշանակեց հայերին ու Մակեդոնիայի բոլղարներին:

Արար-աշխարհ դղրդացնող ջարդերը, բանտարկութիւնները, աքսորներն ու կախաղանները ծառայեցին ու պէտք է ծառայեն այդ տարրերի թիւը քչացնելու համար: Կառավարութեան ու նրա հաւատարիմ դաշնակից ամեն ազգի վաշխառու-

*.) Այս առիթով տե՛ս Bresnitz von Sydaceff-ի „Soll die Türkei getheilt werden?“ գրքուիը:

ների հնարած արհեստական ու բնական սովերը պէտք է հասնեն նոյն նպատակին՝ սովամահ կոտորելով նրանց։ Եթէ այդ աղջտներին զոհ գնան միքանի խոլամներ են, վնաս չունի. ամեն նպատակ զոհ է պահանջում։ Երթևեկութեան արգելուելը դաւաններից Պօլիս և ընդհակառակը՝ մեոցրին ու դեռ պէտք է մեոցնեն առևտուրն ու վաճառականութիւնը. Քրդերի և առնառուտների զինուած թալանն ու խժդժութիւնները պէտք է կործանեն հայ և մակեդոն երկրագործի տնտեսութեան հիմքերը։ Այս բոլորի հետ միանալով կառավարութեան՝ նպատակով բըռնած նեղիչ ու քայքայիչ դիրքը, պէտք է ստիպեն հային ու մակեդոնացուն գաղթել իրանց երկրից, գուրս գալ Թիւրքիայից, ազատել իրանց բոնած տեղը, հողը, դիւղը և տունը, սրոնց իսկոյն դալիս տիրանում են քիւրդն ու չերքէզը, ալբանացին ու թիւրքը։ Եթէ վերադառնում է բացակայ տէրը և պահանջում իր սեփականութիւնը—լսող չի լինում. գեավակը, ասում են ու վոնդում. Եթէ շատ խօսեց՝ ծեծ, հրդեհ, սուր ու գնդակ պատրաստ են։ Օրէնքը փակում է իր աչքերը, չը տեսնելու է տալիս և նոյնիսկ խրախուսում է այդ տեսակ վարմունքները։

Մի անգամ ջարդից կամ հալածանքից փախած, սովից նեղուած՝ օտարութեան աշխատելու գնացած հայը կամ բոլդարը այլիս ոչ մի հնարով չի կարողանում վերադառնալ իր բնակալայրը. իսկ եթէ մի որեէ սատանայական միջոցով յաջողեց ներս մտնել, երբէք չի կարողանում տիրանալ իր նախկին տններին ու հողերին։ Ռուսաց հզօր կառավարութեան բաղմաթիւ դիմումներով անգամ հնար չի լինում սրի ու սովի ճանկերից փախած՝ կովկաս գաղթած 50,000 անօթիւծարաւ թիւրքահայերին վերադարձնել իրանց ծննդավայրերը, տիրացնել իրանց նախկին ստացուածքներին։ Նոյնն է և մակեդոնացիների վերաբերութեամբ։ Այսօր հաշում են միքանի հարիւր հազար մակեդոն գաղթականներ Բոլղարիայում, որոնց մեծ մասը ուզում է վերադառնալ իրանց երկիրը, բայց չեն թողնում։ Շատերն էլ վախենում են գնալ. «կօմիտածի» պիտի կոչուեն, թիւրքական անտանելի գժողք-գնդանը պէտք է նետուեն։

Ու պարպւում, դատարկւում են գաւառները իրար ետեւց. ամայանում ու խոպանանում է մայր հողը... որովհնաւուզում են նուազեցնել ոչխոլամ տարրերը։

Այս աւերիչ շարժման կից կատարւում է, թիւրք Մաքիավելիների կարծիքով, մի ուրիշ, շա՞ս տինող բնաւորութիւն ու նեցող շարժում։ Բոլոր գաղթող, սովամահ լինող և կոտորուող քրիստոնեայ տարրերի տեղը գալիս, լցւում են իսլամ տարրեր։

Բոլոր քրիստոնեայ պետութիւնների մէջ բնակուող խս-

լամներին հետևողական ու նուանգուն քարոզներ են կարդաց-
ւում Պոլսից զնացող մօլլաների ու սօֆթանների կողմից։ Այդ
քարոզները խիստ գրգռիչ ու ոգևորող բնաւորութիւն ունեն
Նրանք վառ գոյներով նկարագրում են սուլիտանների գթառա-
տութիւնն ու սէրը գէպի բոլոր խալամները, մանաւանդ գէպի
գեավուրների ծանր լծի տակ հեծող հաւատացեախները։ Նրանք
հրաշքներ են պատմում խալամութեան նողխեան Քատար, մահ-
մեղականների Աւետեաց-երկիր Թիւրքիայի առաստութեան մա-
սին, այնտեղ թագաւորող Եկրիկրի արդար օրէնքների մասին...
Խօսք մէջ հասկացնում են որ այնտեղ միւպիմն իրան չա-
ազատ է զգում. գեավուրին թալանելը, նրան նոյնիսկ սպա-
նելը մնդը չէ անտեղ—երջանիների աշխարհում...

Ծոյլ, մեղկ ու ոչ-կուլտուրական խալամ տարրերն ամին
քրիստոնեայ պետութեան մէջ յետ ընկած, աղքատ վիճակի մէջ
են։ Այդ աղքատութեան պատճառը՝ մօլլաններն ու քարոզիչները
բացատրում են անհաւատութեան թագաւորութիւնով։ Նրանք
բացատրում են խալամներին իրանց կրած վիրաւորանքներն ու
հալածանքները այդ քրիստոնեայ երկրներում և հրաւեր են կար-
գում գաղթել ապօրինութեան, աւաղակութեան ու բաշխրօնու-
կութեան Աւետեաց-երկիրը՝ Թիւրքիա։ Քրիստոնեայ պետու-
թեան օրէնքներից կաշիներն այրուած խալամների երեակայու-
թիւնները բոլորուում են։ Եւ ահա Բողզարիայից, Ռումանիա-
յից, Բոսնիայից, Հերցեգովինայից, Կրետէից, Կիպրոսից, Յու-
նաստանից, Խրիմից, Կովկասից ու Անդրկասպեան երկրից շա-
րան-շարան գալիս, լցուում են Թիւրքիա մահմեդական հոսանք-
ներ։ Վերջին սուս-թրքական պատերազմից մինչև այժմ միայն
Կովկասից՝ առնուազը 200,000 թուրքեր, քրդեր ու չեղքէզներ
են գաղթել Անատոլիա, լցուել հայկական վեց վիլայէթները *)
և Կիլիկիա, Բոսնիայի, Հերցեգովինայի, Բողզարիայի ու Ռու-
մինիայի գաղթականներն էլ խուժուում են Մակեդոնիա։ Կրե-
տէի, Կիպրոսի և Յունաստանի խալամները թափւում են Այդինի
վիլայէթը։ Գեւավուր-իդմիրի շրջակագլուխը։

Դրանք բոլորն էլ այրուած կաշիներ ու դադուած սրտեր
ունեն. գրանք գրգռուած, զայրացած են գեավուրների գէմ,
մահացու թշնամի են նրանց։ Դրանցից աւելի գաղանական բա-
շխրօնուի տարրեր երբէք տեսած չի կարող լինել մարդկային

*) «Հայկական վեց վիլայէթ» ասելով՝ մնաք հասկանում ենք Վանի,
Բաղեշի, Կարսի, Դիարբեքիրի, Խորբերդի (Մամուլէթ-իւլ-Աղիզ) և Սվազի
վիլայէթները, որ 1895 թուի եւլուպական վկոնտրու-կօմիսարիոնից կողմից
ճանաշուեցան իբր հայկական նահանգներ։

պատմութիւնը։ Գալիս են աղքատ, օրուան հացի կարօտ և կարծ ժամանակում՝ կառավարութեան օգնութիւնով և օրէնքի խրախոսով՝ թալանում, իւրացնում են զրացի քրիստոնեաների կինդանիներն ու գոյքը, և հարստանում։

Դրանք են Թիւրքիայի ամենից շուշ բանկուող ֆանատիկոս տարրերը։ Դրանք են մաքիավել վարիչների ծրագրերն իրականացնելու յարմար ու պատրաստ գէնքները։ Միւ-երկու ուղևորիչ ու կրօնամոլութիւն զրգոսղ խօսքեր, գիւրին վաստակի ու կողովուատի մի զողարիկ հեռանկարի հետ միասին՝ և ահա այդ գիւրաբորքով տարրերը համիսամական ծրագրերն իրականացնելու համար ամենափայլուն գործիքներ են. պէտք է որ կառավարութիւնը զրանց օկնէ, առաջ քաշէ, նպաստէ զալու, հաստատուելու և արմատ բանելու։

Եւ այդպէս էլ է։ Պօլսում կայ մի յատուկ մարմին, որ կոչում է «Ամուհաճիր-քօմիսիօնի» (գաղթականների յանձնաժողով)։ Նա գտնում է Երլաւզի անմիջական հովանաւորութեան տակ և օգտում է նրա բարձրագոյն պաշտպանութիւնով։ Այդ կօմիսսիան է հոգում Թիւրքիա զաղթող իւլամների բոլոր պէտքերը։ Նա է նրանց համար ազատ հողեր զանում, նրանց ճանապարհի, հաստատութեան, գիւղատուն շինելու, արտանքաստան սարքելու բոլոր ծախքերը հոգում։

Մուհաճիր-քօմիսիօնին ուղարկում է միշտ յատուկ յանձնաժողովներ դէպի Անսատօվի և Խումելի նահանգները՝ «Եկող ու զալիք իսլամ մուհաճիրների համար յարմար տեղեր որոշելու»։ Եւ, զարմանալի զուգագիպութիւն, միշտ յարմար տեղեր համարւում են կամ հայերի ու բոլղարների հողերը, կամ նրանց զիւղերի անմիջական զրացի հողերը։

Կովկասից զաղթած բոլոր քրդերին ու Թիւրքերին տեղաւորում են հայկական վիլայէթներում և իսկոյն նրանց զրում Համիդիէ ձիաւոր զօրքերի շարքը։ Կովկասից զնացող բոլոր լազերին տեղաւորում են Տրապիզոնի մօտերքը, ուռասական սահմանների վրայ։ Այդ բոլոր զաւասներից աւելի եռանդով աշխատում են խալամացնել Կիլիկիան, Տաւրոսի բարձունքը։ Կովկասի լեռներին վարժուած բոլոր չերքէզները քշում են դէպի Զէյթունի, Ֆոնուղի, Հաճընի, Մարաշի ու մասամբ Այնթարի մըլակայքը։

Ալբաններին և Բոլղարիայից զաղթողներին էլ տեղաւորում են մակեդոնական բոլղարների ու սերբերի կինտրոններում, լունոտ ու ամուր տեղերի վրայ կամ նրանց շուրջը։

Այս ամենը կատարւում է պարզ ու սրոշ նպաստակով. առաջին յարմար պարագային խկոյն քայլայիկ ու աւերել քրիս-

առնեաների բանած ոլոր այն կէտերը, որոնք կարող են ծառայել իբր պաշտպանութեան կամ զիմազրութեան դիրքեր կոտորածների ժամանակ:

Մուհամբիր-քօմիսսիօնին ունի բաւական խոշոր եկամուտներ: Նա ստանում է պետութիւնից որոշ նպաստ, նա ունի անսահման իրաւունք ներկայացումներ ու համերգներ տալու, վիճակախաղղեր սարքելու, նուէրներ ու ժառանգութիւններ ստանալու, ևայն: Այդ բաւական չէ, 1899 թուին սուլթանական մի իրադէով որոշուեց ամեն խնդիրների, պատենտների, առուծախի դրերի, մուրհակների և այլ գրութիւնների վրայ կազնել յատուի փուլեր կամ մարկաներ «յօդուտ մուհամբիրների», համաձայն թղթի կարեսութեան կամ նբա մէջ յիշած գումարների: Այս թեսի ամենամեծ մասն էլ ծանրանում է քրիստոնեաների վրայ:

Եթե 1899-ի հոկտեմբերին՝ օրինական կարգով զործադրութեան մէջ մտան այդ փուլերը, թիւրք լրագիրները, —յատկապէս Երլարզի օրգան «Մալումաթն» ու «Ժղդամ»-ը —գնահատեցին մօտաւորապէս 60,000 ոսկի նրանց եկամուտը ամբողջ պետութեան մէջ:

Ի հարկէ այցչափ ընդարձակ միջոցներով օգտուող մի մարմին կարող է ահազին թիւ սակաւագէտ ու թալանով ապրող զաղթականներ լցնել թիւրքիա: Եւ նա անում էլ է այդ բանը մեծ եռանդով:

Ի՞նչ կասկած որ մուհամբիր-քօմիսսիօնին ունի իր ստորաբաժնումները պետութեան բոլոր գլխաւոր տեղերում: Կազմուած Պօլսի կենարնից իբր վստահելի և էապէս խոլամ ճանաչուած տարրերից, կարելի է պնդել որ դրանք թթութեան ամենաթթու և քրիստոնեակեր տարրերն են:

Այդ մարմինն ունի և այլ ֆունկցիա: Թիւրքիա վերաբարձող կամ գուրս մեկնող, Պօլսից գաւառներ գնացող կամ գաւառներից Պօլսի եկող բոլոր հայերն ու բոլղարները պէտք է անցնեն նրա ձեռքով. նա պէտք է այս հաղական վստահելիութեան վկայական, առանց դրան՝ ամնամար է ներքին կամ արտաքին քեսերէ (անցագիր) ստանալ: Առանց նրա որոշման ոչ մի քրիստոնեայ ույայ չի կարող մտնել թիւրքիա կամ գուրս գալ այնաեղից: Խոկ այդ մարմնի հոսած-իսլամ անդամները ևրէք չեն համաձայնում ներս ընդունել մի անդամ պէս գուրս ելած զեավուր տարրերը: Նրա միակ վճիռները քրիստոնեաների դէմ միայն աբսոր ու բերգարգելութիւնն է:

Քրիստոնեաներին յետ քշելու, նրանց թիւը քչացնելու և իսլամներին առաջ քաշելու համար՝ նոյնիսկ Պօլսի մաքսատների, երկաթուղիների, ծովափերի և այլ գործերի մէջ աշխատող

բոլոր քրիստոնեայ տարրերին դուրս են քշում և նրանց տեղը լինում են Անատօլիայից բերուած և օտար երկրներից գաղթած իսլամներ, զլխաւորապէս քրդեր: Նոյն ձեռվ են սկսել վարուել և Անգորայի, Զմիւռնիայի, Սալոնիկի, Բէյրութի և ուրիշ տեղերի երկաթուղիների, մաքսատների և ծովափերի վերաբերմամբ: Այսօր թէ Անատօլիի, թէ Ռումելիի մէջ ոչ մի աւագուր կամ միւլքէզիմ^{*)} քրիստոնեայ չէ: Այդ արհեստը, որ ժառանգաբար հայերի, յոյների և բողզարների ձեռքին էր, բացառապէս քրդերի, թիւրքերի ու ալբանների ձեռքն է անցած:

Աշխատում են հասարակական պաշտօններից հեռացնել բոլոր ույայ քրիստոնեաները և ձգտում են ամեն պաշտօնի վերայ դնել զուտ և թթու իսլամ տարրեր: Երբ անհնար է, օրինակ, որևէ յարմար ֆինանսատ գտնել իսլամների մէջ, այն ժամանակ միայն ստիպուած համաձայնում են քրիստոնեայի զի ջել այդ տեղը: Դրանով պէտք է բացատրել, օրինակ, Սագըզ Յովհաննէսի սուլթանի անձնական գանձի և ֆինանսների մինիստր, Տատևան Արթինի արտաքին գործերի առաջին քարտուղար կամ Կարա-թէոդորիի այս ինչ տեղ գեսպան լինելը: Այդպիսիների թիւն էլ այժմ շատ սակաւ է: Այդ բարձր պաշտօնեայ ույանների մեծ մասը «աւելի թիւրք են, քան բուն թիւրքերը», նրանք մի-մի ցեղ ու դահիճ են իրանց կրօնակիցների համար... բայց և այնպէս թիւրք կառավարութիւնը չի սիրում նրանց, այլ միայն սիրուած համբերում է: «Էւ են, շատ լաւ, բայց ափառ որ իսլամ չեն»...

Նոյն համիսլամական ձգտումների արդիւնք է ամեն տեսակ մենաչնորհներ ու մենավաճառներ իսլամներին աւելի զիւրութիւնով տալը, քան քրիստոնեաներին: Այսպէս, օրինակ, մի որևէ արդիւնաւէտ ձեռնարկի մենաչնորհն աւելի շուտ արապիցոնցի թուրք դրամատէր Նէմիթ-զադէներին կը տան, քան որևէ քրիստոնեայի, եթէ նոյնիսկ այդ վերջինը կրկնակի օգուտներ ցոյց տայ կառավարութեան գանձարանին:

Ամեն տեսակ առուծախի, դատի ու վէճի ժամանակ պարզ կերպով երևում է որ կառավարութիւնը միշտ ձգտում է բոնել իսլամների կողմը—արդար թէ անարդար, նեղել ու ճշ-

*) Աւագ կոչում է Թիւրքիայի և բկրազործական հարկը (աշբատասը, աշար—տասանորդ), որ միշտ ծախտում է մասնաւոր անձերին՝ կապալով. կոսպալառուն կոչում է միւլքէզիմ: Եթէ միւլթէզիմը վերցրել է միայն մի երկու գիւղի աշար, ինքն է պարտում կալերը, չափում ցորենն, ու հատիկները և 8-ից 1-ը առնում. իսկ եթէ նա վերցրել է շատ զիսդեր կամ գաւառ—նա նշանակում է շահնաներ կամ միւլթէզիմի օգնականներ:

շել քրիստոնեաններին և արտօնեալ դիրքի մէջ դնել, երես տալ իսլամներին:

Վերևում յիշուած բոլոր միջոցները զործադրում են միայն ույայ քրիստոնեանների վերաբերութեամբ. նրանք չնայ կողմնակի կերպով են դիպչում օտարահապատակներին, որոնք ունեն հրապատոս ու դեսպան պաշտպաններ:

Այդ վերջինները կատարեալ մենաշնորհնեալ դիրք ունեն ամբողջ թիւրքիայի՝ մանաւանդ ծովափնեայ քսովաքների մէջ: Ոչ որ չի կարող նրանց ձեռք տալ, մի կոպէկին դիպչել:

Դրանց վերաբերութեամբ էլ կառավարութիւնն ուզեց միքանի սահմանափակող օրէնքներ հրատարակել, բայց իսկոյն համագիպեց Պօլսի դեսպանական մարմնի միահամուռ դիմադրութեան:

Այսպէս 1900 թուի սկզբներին Յ. Դուան երկու ներքին շրջաբներականները հրամայում էին հետեւալ երկու կէտերը. «Գերեզմանոցների (իսլամ), մզկիթների և այլ սրբավայրերի մօտերը—այսչափ մետք շրջապատում—ոչ մի քրիստոնեայ նոր կալուած գնելու իրաւունք չունի. ունեցողներն էլ՝ ծախելու դէպքում պէտք է տան միան խլամի, ոչ երբէք քրիստոնէի»: Այս էր առաջին շրջաբներականի մօտաւոր բովանդակութիւնը: Երկրորդը վերաբերում էր Թիւրքիայի հանքային հարստութեամնա և հրամայում էր բոլոր այն խլամներին, որոնք մենաշնորհներ են ստացել կամ ստանում են այս ու այն տեղերում հանքեր մշակելու չը տալ իրանց իրաւունքը կամ չը ծախել այդ իրաւունքը օտարահապատակների: Այդպէս վարուողները կ'ենթարկուեն պատժի, ասում էր այդ շրջաբներականը:

Ի հարկէ այդ երկու թղթերն էլ գրուած էին Ելլուրզի անմիջական ներշնչումով, նրա հրամանով *): Բայց պալատն ինքն ուղղակի հրամայել, կամ կայսերական իրադէ բաց թողնել չը յանդգնեց, որովհետև չը գիտէր, թէ ինչ դիրք պէտք է բռնէն մեծ պետութիւնների ներկայացուցիչները. վախենում էր, որ իրադէ անելուց յետոյ՝ ստիպուած լինի յնտ առնել կայսերական

*) Թէև Թիւրքիան ունի վեզիրներ (նախարար) և մեծ-եպարքոս (մինիստր-նահագահ), պատախանառու նախարարական մարմին, պետական խորհուրդ, ևալին, բայց այդ բոլոր պաշտօնների լոկ ձեւական, առաջնուած են: Բոլոր այդ պաշտօնների վրայ նշանակում են պալատի հլու-հապատակ, կոյլը գործիք, տգէտ ու բթամիտ գոեհիկներ, որպէսզի գործերի վեկը մնայ լոկ Ելլուրզի-սուլթանի, նրա անձնական քարեների նպէտ-նէլ և նպրահմ-նէլ), ներքինիների և հոմանիների ձեռքը, ցե՛ս այս մասին Edmonde Fasyի դիրքը. „Les tures d'aujourd'hui ou le Grand Karagheuse“.

իսուքր և պատահած այդ օրինակ բազմաթիւ խայտառակութիւնների վրայ մի նորն էլ աւելանայ:

Պալատը հրամայեց անել և աղաւնի ձեւացաւ. ոչնչից տեղեկութիւն չունի: Մնաց սպասողական գիրքի մէջ: Բայց երբ տեսաւ Երլարզը որ դեսպանները միահամուռ բողոք բարձրացրին՝ իսկոյն հրամայեց Բ. Դուան—«չը գիտչել բարեկամ պետութիւնների հպատակների իրաւունքներին, որ չնորհուած են ամսնողորմած Սուլթաններից»:

Դեսպանների բողոքը մօտաւորապէս հետեւեալ ձեռվ էր. «Հրատարակելով այդպիսի սահմանափակող օրէնքներ սեփականութեան և հանքների շահագործութեան մասին, Բ. Դուռը մոռանում է որ գրանով ոտի տակ է տալիս դաշնագրերը և զըրկում է մեր հպատակներին սեփականութիւնն ունենալու և աշխատելու անբռնաբարելի իրաւունքներից»:

Եւրոպական մամուլն էլ, մանաւանդ դերմանականը («Frankfurter Zeitung», «Berliner Tageblatt», եայլն), միքիչ քողը վեր վերցրին Տրանսվալի գործերի վրայից և ցոյց տուին որ այդ կատաղի ու անսարդար կոռուի իսկական պատճառը եղաւ հանքային հարստութեան մշակութեանը վերաբերող Տըրանսվալեան օրէնսդրութիւնը: Բոլոր արմատական թերթերը կամացուկ լուել տուին սուլթանին, որ այդ տեսակ սոսկ նիւթական ինսդիրների համար Եւրոպան պատրաստ է հազար անգամ աւելի շուտ արիւն թափել, քան միքանի հարիւր հազար քոհստոնեայ ույաների ջարդի համար:

Եւ Բ. Դուռը պոչն իրան հաւեց. յետ առաւ իր հրամանները:

Նոյն տեսակի մի վճռական ու յուսահատ փորձ էր և Եւրոպական փոստատների խնդիրը Պօլսում այս տարի, որ այնքան քաջութիւնով յարուցեց Բ. Դուռը և անքան լպիրչ անմեղութիւնով հրամայեց յետ առնել իր հրամայածը Երլարզ-Քէօշը:

Սյու տեսակ բազմաթիւ փորձեր են արուած, արւում են ու դեռ պէտք է արուեն թիւրքական «Օթօման» պատրիօտների ձեռքով, մինչև որ Եւրոպայի համբերութեան հսկայական ու առաջական բաժակը լցուի և մի օր վճարէ նրանց արդար վարձ՝ պատառ-պատառ անելով Հիւանդ-Մարդու սնանկութիւնից մնացած գոյքը:

Քրիստոնեաներին նեղող այս բոլոր ձգտումներին կից ընթանում է իսլամ ներքին տարրերի մէջ գրաւոր և մանաւանդ բերանացի մի շնոր զօրեղ պլուադանդ:

Թիւրքական բոնակալութիւնը զգալով որ իր ամենազօրեղ հիմքն է Դուռանն ու կրօնամոլութիւնը, իր գործակից մօլլաների, սօֆթաների, իմամների ու զերպիչների միջոցով

աւելի ու աւելի է գրգռում մութ ամբոխի ֆանատիկոսութիւնը, միշտ վառ է պահում նրանց մէջ ատելութիւնը դէպի գեավուրները, խոստանալով իսլամներին զիններ այն կեանքաւմ և քրիստոնեաների գոյքերից հարուստ կողոպուտ այս կեանքում, որ, խոստովանած, աւելի է ազդում աղքատ ու ձրի ապրելու վարժուած գաղթական ու տեղացի գոեհիկ տարրերի վրայ, քան Դուռանի բոլոր խօսքերը:

Այս բազմաթիւ գրգռիչ գործակալները տարածում են քրդերի, առնառուսների, բեդուինների ու տգէտ թիւրք ամբոխի մէջ իսլամական համերաշխութեան գաղափարը. ոգեսորում են նրանց միշտ պատրաստ մինել համախմբուելու Սանջազլ-Շերինի սրբազն ստուերի տակը, գնալու գեավուրների դէմ սըրբազն պատերազմի, մեռնելու լոյս հաւատի համար... Նրանք զինում են իրար դէմ գարերով իրար հետ հաշտ ու մտերիմ ապրած քրդին ու հային, թիւրքին ու ասորուն, առնառուսին ու բոլղարին: Նրանք հաշտեցնում են իրար հետ երկար տարիներ խոռվ ու կոռուի մէջ եղող քիւրդ բէզերին, աշխրէթներին և բեդուին ու ալբան ցեղերին բարեկամացնում են իրար հետ շարեան վրէժո ունեցող ցեղերը, բաց անելով նրանց աշքերի առաջ գեավուրների դէմ պատրաստուող մօտակայ «սրբազն» կոռուի հեռանկարը:

Պակաս նշանակութիւն չեն տալիս համիսլամականները նաև արտապին ձևերին նետելով իրանցից թիւրք անունը, խեկոյն առնում են նրանք «Օթօման» տիտղոսը և կարծում թէ անուան փոփոխութիւնը նշանակում է էութեան փոփոխութիւն: Շատ յաճախ սիրում են երիտասարդ-թիւրք ասուած կեղծ-ազատամիտ ու ջուր-ծեծող կոռակիցութեան անդամները ճառել եւրոպական ազատ երկրներում, դարեցրի բաժակին առաջներին՝ հայերի ու բոլղարների հետ՝ թրքահպատակ բոլոր դժգոհ Օթօման տարրերի համերաշխութեան մասին: Կեղծիք, զգուելի կեղծիք: Պօլսի ներկայ վարիչները չեն քօզարկում իրանց համիսլամական ձգտումներն ու կարմիր ծրագրերը, իսկ երիտասարդ թիւրքերը զիմակաւորում են իրանց ձգտումները, խարել են աշխատում սրան-նրան «Օթօման» կամ «զժգոհ տարր» դատարկ բառերով: Քերեցէք երիտասարդ-թիւրքերի մեծամասնութեան կային և նրանց տակ թագնուած կը տեսնէք ամենազուտ համիսլամականներ, նեղ ու այլատեաց հոգիներ, որոնք գուցէ արտաքուստ սրկորներն են պատում ներկայ թրքական հայուկեր ուժիմի դէմ, իսկ իրանց սրտի խորքերում ծափահարում, «օխ, օխ», են ասում: Փաստերը քիչ չեն. թերթ և ցեղ տիրահոչակ Մուրադ-բէյի ֆրանսերէն Մէշվէրէթների

այն համարները, որ լոյս տեսան 1894—96—97 թուերին, հայկական սարսափների ամենակատաղի ժամանակը։ Մուրագը ֆրանսերէն՝ Պարիզում, գոկտօր Հասան-Արիֆ Ժընէվում՝ թուրքերէն Մէշիքէթներում կատարեալապէս արդարացնում էին սուլթանի բանած զիրքը գէպի հայերը և բոլղարները... միայն հայհոյում էին նրան, որովհետեւ բուրքերի հետ լաւ չի վարւում։ Խոկ երբ Երլարզը խոշոր պաշտօն ու գեղին մետաղ խոստացաւ, թէ Մուրագը, թէ գոկտօր Հասանը խոյսն գնացին կ. Պօլիս, համբուրնցին այն ձեռքը, ծնրագրեցին այն անձի առաջ, որին այնքան հայհոյել էին... Այս երեսոյթը, գաղափարի այդ առևտուրը պատահական բան չէ երիտասարդ թիւրքերի համար. դա բնական արդիւնք է այդ կուսակցութեան կեղծ, ընկեցիկ ծնունդի։

Արտաքին նշանների պրօպագանդի մէջ ամենագլխաւորը և կրթուած մարդու համար տամնածաղրելին «Ֆէսի պրօպագանդն է»։ Ո՛րպիսի ոգեսրութիւնով արձանագրում են Պօլսի թիւրք թերթերը Հնդկաստանում կամ Կէպտօռնում միքանի էկացնատրիկ մահմեմադականների ֆէս ծածկելու. Երեսոյթը... Նրանք այդ համարում են խալամական համերաշխութեան խոշոր գործնական քայլերից մէկը։

Երկրի ներսում ևս Փէսի պրօպագանդը քիչ տեղ չի բըռնում։ Զգտում են փոխել տալ բոլոր քրդերի «քոլօզները» և տեղը Փէս ծածկել սովորեցնել։ Կը համարձակուի՛ Անատօլիայի մէջ մի ույա փոխել իր Փէսը և եւրոպական որևէ գլխարկ ծածկել... «Գեավուր, ի՞նչ վնաս տեսար մեր Փէսից, որ հիմա «աշլա-ֆրանկա» զլիսարկ ես ծածկում», կ'ասեն նրան պաշտօնեանները և յաճախ բանտ կը նետեն։ 1890—1901 թուերին նոյնիսկ Պօլսում պատահեցան միքանի այդպիսի դէսքեր, ուր մնաց գաւառներում... Նոյնիսկ 1900 թուի սկզբներում Ռուսաստանին կարսից երգուում երկաթուղի շինելու վաղամեռիկ թոյլտութեան իրադէի մէջ՝ պայմաններից երկրորդական տեղ չէր բռնում այն կէտը, որ «ապագայ երկաթուղու բոլոր ծառայողները պիտ է Ֆէս ծածկեն։

ԽԱԺԱԿ

(ԱՐ ՇԱՐՈՒՅՆԱԼՈՒԻ)

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԽԱIII ԴԱՐՈՒՄ

III

Հնդկահայ վաճառականի հասարակական գործունեութեան առաջին աչքի ընկնող օրինակը տալիս է մեզ վերոյիշեալ ջուղացեցի Պետրոս Ռուկանեանը։ XVIII դարի առաջին կէսում նա Մադրասում Անգլիական Ընկերութեան խորհրդականներից մէկն էր և շատ յայտնի էր նոյն իսկ օտարների մէջ իրրն բարեսէր մեծատուն։ Իր հարստութիւններից նա բաժին հանեց յօդուտ այն երկրի, որ այնքան հարստացրել էր նրան։ Այսպէս, նա մեծ գումար ծախսեց և մի կամուրջ շինեց Մադրասի մօտ։ Կամուրջը ապագայում էլ լաւ պահպանելու համար նա մի գումար մացրեց անգլիական բանկը։ Բացի գրանից, գարձեալ Մադրասի մօտ, նու մի սարի ստորոտից մինչև գագաթը շինել տուեց 160 աստիճաններից բազկացած մի քարէ սանդուղք, որպէս զի հեշտ լինի բարձրանալ սարի գլուխը, ուր, ինչպէս պատմում էր աւանդութիւնը, նահատակուել է թումաս առագեալը և ուր շինուած էր մի հեկեղեցի։

Ռուկանեանը չը մոռացաւ և իր իսկական հայրենիքը։ Հենց այս կողմից էլ նա ներկայանում է իրրև տիպար հնդկաստանցի երախտաւոր հայերի։ Դա ջերմ հայրենասիրութեան տիպարն էր։ Ոչ հարստութիւնը, ոչ փառքը չէին կարողանում խեղզել նրա մէջ հայրենի կարօտը։ Ռուկանեանին այնքան տոշորում էր այդ կարօտը, որ նա կարգադրեց՝ իր մահից յետոյ հանել իր սիրտը և տանել թաղել Զուղայում։ Այդպէս էլ արին։ Բայց հայրենի հողով ծածկուելու բախտը բաւական չէր այդ սրտին։ Իր սաստիկ սէրը նա արտայատեց և շօշափելի, հանրօգուտ գործով։ Ռուկանեանը կտակ էլ թողեց յօդուտ Զուղայի, գուցէ առաջինը հնդկական հոչակաւոր կտակներից։ Այդ կտակով 400 թուման նշանակւում էր Զուղայում աղքատանոյ շինելու համար, 1000 թուման մի այնպիսի գպրոց բաց անելու համար,

ուր պիտի աւանդուէին հայ, լատին և թիւրք լեզուները, 60 թուման էլ այդ գպրոցի շինութիւնը կառուցանելու համար:

Հասարակական գործունէութիւն, հիմնուած առողջ, աղ-նիւ հայրենասիրութեան վրայ—ահա ինչ ենք տեսնում հնդկաս-տանցի հայ վաճառականների մէջ: Դա մի նոր երնոյթ է. փոխ-ւում են հասկացողութիւնները. տեղային, եսամոլ հայրենասի-րութիւնը տեղի էր տալիս աւելի լայն, հանրային գաղափարին. մի ընդարձակ, ընդհանուր հայրենասիրութիւն է դա: Զգաց-ւում է հայութեան, հայ երկրի շահերի կարևորութիւնը, աւելի լայն, աւելի խոշոր բարեգործութիւնների անհրաժեշտութիւնը: Հրապարակ են դալիս մոռացուած գաղափարներ. սրանց մե-ծարելու, սրանց համար խոշոր զոհաբերութիւններ անելու միտքն է արծարծւում: Ո՞վ բերեց այդ նոր հայեացըը, որի առջև բացուեցան այնքան լայնարձակ հօրիզոններ:—Անզիւա-կան ազգեցութիւնը:

Հայ վաճառականները—մենք այդ տեսանք—սովորում են անզիւական լեզուն, մտյնում են նրան իրանց ընտանիքների մէջ: Մի գեղեցիկ, հուժկու առաջնորդ է դա, որ մտյնում է նրանց մտաւոր մեծ հոսանքների մէջ, ծանօթացնում է նրանց ժամանակի ամենաբարձր, գաղափարական և ըստապականութեան հետ: XVIII դարի առաջին երեք քառորդներում մի այլ ազգ հազիւ թէ կարողանար այնպէս կրթել մարդկանց բարձր ու վեհ գաղափարների ոգով, ինչպէս կրթում էր անզիւական աղ-գը: Հպարտ, հայրենասէր, ազատ, բարձրագույս անզիւացին իր օրէնքներով, որոնք ապահովում էին իւրաքանչիւր անհատի իրաւունքները, անկախութիւնը, իր սահմանադրական կառա-վարութեամբ, որ ամբողջ ժողովրդի վեհապետական իրաւունք-ներն էր պահպանում, Վոլտէրի և Մօնտեաքիէի նախանձն ու հիացմունքն էր շարժում: Նոյն այդ անզիւացին պատերազմում էր Հնդկաստանում, ցոյց էր տալիս հերոսութիւններ, իր խել-քով, իր տոկուն բնաւորութեամբ հրաշքներ էր գործում Ա-սիայի այդ անկիւնում, ուր ամենահին ժամանակներից մարդը վիզ էր ձկում բարբարոս բռնակալութեան լուծի տակ: Այդ բոլորը տեսնում էր հայ վաճառականը և, բնականաբար, նրա մէջ էլ շարժում էին տեսչանքներ հայրենիքի աղատութեան, մարդկային իրաւունքների մասին: Խակ ինչ մտաւոր պաշար էր ուղարկում Անզիւան Հնդկաստանում գործող իր որդիներին:—Մի շատ զարգացած մամուլ, որ առաջադէմ գաղափարներ էր տա-րածում, որ հասարակական կարծիքի արտայայտիչն էր և ժո-ղովրդի առաջ էր զնում պատգամաւորների ժողովի նիստերը, ուր ժամանակի հոչակաւոր ճառախօսները, ազատութեան, ար-

դարութեան, օրինականութեան այդ մեծ պաշտպանները, արտասանում էին անվախ, որոտալից, պերճախօս ճառեր^{*)}:

Բացի գրանից, անդիմական ցեղը հենց այդ միջոցին երեան էր հանել մի հերոսական ահազին պայքար, որ ամբողջ աշխարհի ուշադրութիւնն էր գրաւել և մարդկային ամենանուիրական գաղափարների, իրաւունքների անունով էր մզւում: Դա Հիւսիսային Ամերիկայի անգլիական գաղթականութիւնների հերոսական ինքնապաշտպանութիւնն էր, որ փօխուեց ապստամբութեան, երկարատև արիւնահեղ պատերազմների և ապա ծննդրեց Միացեալ-Նահանգները: Ամերիկական շարժումը նկատելի էր դարձել դեռ 1754 թուականներից, երբ գաղթականական առանձին նահանգները առաջին անգամ միացան՝ երկիրը ընդհանուր ոյժերով պաշտպանելու և ռամկապարական վարչութիւն ստեղծելու համար^{**)†}: Մենք ունենք մի քանի հատ նշանաւոր փաստեր, որոնք վկայում են թէ ինչպէս ովկիանոսի միւս ափում սկսուած այդ մեծ ազատափական շարժումը ազգում է Գանդէսի ափերում առետուր անող մի բուռն հայ մարդկանց վրայ, որոնք Ասիայի ամենադժբախտ մի ժողովրդի զաւակներն էին: Դրանք հասկանում են, որ իրանց ժողովուրդն էլ իրաւունք ունի անկախ սեփականատէր, ազատ լինելու: Ստրուկ ու արնաքամ Հայաստանը զաւում է այդ մարդկանց մտատանջութեան առարկայ. Կրանք, այդ վաճառականները, սկսում են հասկանալ թէ ինչ է հարկաւոր հային: Բայց ինչ կարող էր անել վաճառականը այդ հեռաւոր երկրից: Նա թողնում է իր շահն ու վաստակը, գառնում է քաղաքական գործիչ, մանում է հրապարակախօսի, քարոզողի, յորդորովի գերի մէջ:

Հայաստանը արդէն ունէր գործ, որ առաջնորդող աստղի նման ցոյց էր տալիս հնդկաբնակ հայրենասէրներին, թէ մի ազատ հայրենիքի գաղափարը չէ կարող ընորք լինել և՛ հայի համար: Դա Ղարաբաղի ապստամբական շարժումն էր, որ թէն անաջողութեան էր հանդիպել, բայց դեռ ապրում էր այն լեռներում, հայ կիսանկախ և քաջ մէկիքների հովանաւորութեան տակ: 1760 թուականին Լօնդոնից Պետերբուրգ գնաց էմին Յովակիսինամ անունով մի հայ վաճառական: Նա համազանցի էր

*) Անգլիայի ալդ դրութիւնը հիանալի կերպով պատկերացրել է ֆրանսիացի նշանաւոր գիտական Տէն (История английской литературы, Спб., 1871, ч. II, եր. 185—201):

**) Նեյմանъ—«История Америк. Соединен. Штатовъ, Спб., 1866, т. I, եր. 115.

և Հնդկաստանում ահազին հարսառութիւն էր զիզել։ Ներկայանալով ոռւսաց արքունիքին, կմին Յովսէփեանը առաջարկեց նորից ձեռք առնել հայերի ազատութեան գործը և խոստացաւ իր ամբողջ հարսառութիւնը գնել ոռւսաց կառավարութեան տրամադրութեան տակ։ Ելիսավետա Պետրօմնա կայսրուհու կոռուպտավարութիւնը այդ ժամանակ արեելնան քրիստոնեաների հարցով զբաղուելու միտք չունէր։ Բայց և այնպէս, Յովսէփեանի առաջարկութիւնը բոլորովին անտես չարուեց։ Խորհուրդ տուին հայ վաճառականին որ նու նախ գնայ Հայաստան և իմանայ հայերի տրամադրութիւնն ու հայեացքները։

Յովսէփեանը ճանապարհուեց Անդրկովկաս։ Ղարաբաղի, նոյնպէս և Երևանի մէլիքները դեռ պատրաստ էին շարունակել ազատութեան պայքարը, և հարուստ հնդկաստանցին, որ եկել էր յայտնելու թէ իր միջինները զոհում է հայրենիքին, միայն ողերութիւն և հիացմունք կարող էր ազգել ազատութեան զինուորներին։ Ի՞նչն էր պակաս, որ նորից ոտքի կանգնէ ապստամբութիւնը։ Յայտնի չէ. մնաք տեսնում ենք Յովսէփեանին Հնդկաստան գնալիս։ Նրան չէր աջողուել կենդանացնել իր ծրագիրը։ Ասում են թէ պատճառը վրայ Հերակլ թագաւորն էր, որ թշնամացաւ Յովսէփեանի մտքին, որովհետև փառաբրական նպատակներ ունէր, կամենում էր տիրել Անդըր կովկասին, ուստի և անկախ հայութեան միագը խոշնդու էր համարում իր գիտաւորութիւնների տեսակէտից *): Ինչ էլ լինի, կմին Յովսէփեանը դրանից յետոյ էլ դեռ երկար ժամանակ չէր մոռացել իր ծրագիրը **):

Այս հայրենականի վաճառականի ժամանակակից է մի աւելի եռանդուն, աւ ելի հնտաքրքրական հայրենասէր, որի կատարած մի քանի գործերը մի բոլորովին նոր, նշանաւոր երեւոյթ են կազմուել X VIII դարի պատմութեան մէջ և պարտաւորութիւն են գնում աւելի երկար խօսել նրա մասին։

Հնդկաստան զնացած ջուղայեցիների մէջ կար մի խեղճ գերձակ, Յակոբ Շահամիրեան անունով։ Մադրասում նա բաց է անում մի փոքրիկ խանութ, բայց շուտով թողնում է ասեղն ու մկրատը, գառնում է սեղանաւոր, մարգարիտ առնաուր է սկսում և կարճ միջոցում մեծ հարստութեան տէր է զառնում։

*). Երիցեան - Վովկասի տիրապետութիւնները, «Փորձ» հանդէս, 1877-1878, № 1, եր. 376։

**). 1780 թուականին, հռչակաւոր գեներալ Առվորով կազմում էր Հայաստանի ազատութեան ծրագիրը, նաևմակ զրել ոռւեց Եմինին որ զայ Պետերբուրգ՝ բանակցութիւնների համար («Առունելք ամսադիր, 1863, եր. 511)։

Այսպահն է այդ մարդու ամբողջ կենսագրութիւնը, որ, սակայն, աւելի մանրամասն ու լիսակատար պիտի լինէր: Եւ եթէ մնաք ասենք որ Շահամիրեսանի նախահայրը, ինչպէս նա ինքն է պատմում, այն գաղթականներից էր, որոնց Շահ-Աբասը քշեց Նախիջեանից Ջուղա, անշուշտ գրանով ոչինչ նոր բան աւելացրած չենք լինի՝ այդ վերին աստիճանի հետաքրքրական դէմքը ճանաչելու համար: Մի պարզ արհեստաւոր, մնուած ու մեծացած Ջուղայի անկման, քայլայման շրջանում, պարսկական բոնութիւններից մեծ չարչարանքներով օտար երկր փախած,—նա, ի հարկէ, չունէր մեծ կրթութիւն, նոյն իսկ լաւ չէր իմանում հայոց լեզուն: Հնդկաստանը, սակայն, կերպարանափախում է նրան: և միայն հարստութիւնը չէ այդ կերպարանափախութեան նշանը: Շահամիրեսանը ճանապարհորդում է շատ տեղեր. նրա հարցասէր, կենդանի և աշխոյժ խելքը շատ բան է սովորում անզլիացիներից: Երեխ, նա սովորել էր անզլիերէնը, կարդում էր զրքեր և լրագիրներ: Եւ այդ ինքնակրթութեան հետեւանքը այն է լինում, որ նա հասկանում է իր ազգի պակասութիւնները, հասկանում է թէ ինչ է պակասում հային՝ մի բախտաւոր ազգ գառնալու համար: Նա այնպիսի բնաւորութիւններից չէր, որոնք հասկանում են մի բան, բայց լուսմ են, ոչ էլ մէկը այն հարուստներից, որոնք իրանց գանձերի պահպանութեան համար պատրաստ են ուրանալ ամեն նուիրական միտք և պարտականութիւն:

Մեր Ջուղայեցի գերձակը, ընդհակառակն, հրապարակ է դուրս գալիս իր ազգին նոր մտքեր քարոզելու, քաղաքական և հասարակական առաջադիմութեան ճանապարհ ցոյց տալու համար: Մի ժիր, հայրենասէր գործիչ է նա. Նամակագրութիւններ ունի զանազան անձնանց հետ. բարդ ծրագիրներ է յղանում, անձամբ աշխատում է գրանց իրագործումը հեշտացնելու համար և իր հարստութիւնը չէ խնայում հասարակաց բարիքի համար: Մտքեր տարածելու, պրօպագանդա սկսելու գործիքը—տպարանը—շատ հարկաւոր էր այդպիսի մարդուն և նա բաց է անում Մադրաս քաղաքում մի հայերէն տպարան, առաջնը Հնդկաստանի հայերի մէջ: Փոքրիկ, շատ պակասաւոր մի հիմնարկութիւն էր դա. հնդկական հողը դեռ այդպիսի դորձեր զարգացնելու պատրաստութիւն չունէր. ոչ տպագրական թուղթ էր ճարտում, ոչ հմուտ վարպետներ կային: Աւելի աղքատիկ ու պակասաւոր էին այն ոյժերը, որոնք պիտի կենդանացնէին տպարանը, նիւթ տալով նրան: Մի վաճառականական փոքրիկ քաղաքի մէջ, հայրենի երկրից, գրական դասակարգից այնքան հեռու մի տեղ, նոյն իսկ շատ համեստ մտաւոր միջնավայր

ստեղծել չեր կարելի, որքան էլ անպակաս լինէր եռանդը, բարի կամքը։ Սակայն Շահամիրեանը անում է այն, ինչ կարելի էր անել այդպիսի պայմանների մէջ։ Չը նայած իր անպատրաստութեան, լոկ իր վառվոռն հայրենասիրութեամբ ոգևորուած, նա դառնում է հնդկահայերի գրականութեան նախահայրը։ Ինչեր չէ անում սուրբ ոգեսրութիւնը։

Երկու ծառայ ունէր Շահամիրեանը. հայեր չէին նրանք, այլ Սիամից բերուած երկու տեղայիներ, որոնք ընդունել էին քրիստոնէութիւն, սովորել էին հայերէն, ամուսնայել էին հայ աղախինների հետ Շահամիրեանի տանը։ Այդ հայացած երկու սիամցինները—Զէրհան Սիօնեան և Զաքէս Մարկոսեան—Հընդկաստանի առաջին հայ տպարանի գործաւորներ են դառնում—շարող և տպագրող։ Շահամիրեանը Սաղմոս կամ Ժամագիրք չէ տպագրել տալիս, այլ ինքը հանդիսանում է հեղինակ, զրքեր է շարադրում։ Բայց նա չը գիտէ հայոց լեզուն, այսինքն գրաբարը. ինչպէս դուրս գալ գրական հրապարակ։ Դժուարութիւնը վերացնում է Մովսէս Բարագամեան անունով մի հայ, որ աւելի փորձուած է հայերէնագիտութեան մէջ։ Նա դառնում է Շահամիրեանի «հրահանգիչը» կամ, ինչպէս այժմ ենք անուանում, աշխատակիցը։ Սակայն հեղինակի և աշխատակցի միացած զիտութիւնն էլ բաւական չէր՝ պարզ երեսով գրական աշխարհում գործելու համար։ Շահամիրեանը, այնուամենայնիւ, չէ ընկճւում. նա պարզ սրտով խոստովանում է իր տպագրութիւնների մէջ թէ ինքը վաճառական մարդ է, ուսում չէ ստացել չը զիտէ քերականութիւն և ուղղագրութիւն, և եթէ, չը նայած դրան, գրքեր է գրում և հրատարակում, պատճառն այն է որ սիրում է իր ազգը, կամենում է ծառայել նրան իր իմացածով։ Թոնը, ասում է նա, լեզուավետ, զիտուն հայերը աւելի լաւ կատարեն այն, ինչ ինքն է անում, մի անուսում վաճառական, այն ժամանակ նա ինքը շատ ուրախ կը լինի և կը քաշուէ ասպարէզից։ Այս բանը նա շատ անգամ է կրկնում։ Եւ մենք, կարդալով Շահամիրեանի գրքերը, չենք կարող կատարեալ իրաւունք չը առաջ նրան։ Իր անգրագիտութեամբ հանդերձ նա մի բոլորովին նոր երևոյթ էր մեր գրական աշխարհում. հայ զիտուն գրագէտները չէին հասկանում այն, ինչ հասկացաւ և սկսեց քարոզել Շահամիրեանը։

IV

Ասածին զիրքը, որ լոյս տեսաւ Շահամիրեանի տպարանից, մի այբբենարան էր, որ նման չէր մեր սովորական այբ-

բենարաններին, այլ կազմուած էր նոր ձևով, երեխ, եւրօպական օրինակի վրայ:

1772 թուականին լոյս է հանուում Շահամիրեանի առաջին հեղինակութիւնը՝ «Նոր Տետրակ, որ կոչի Յորդորակ» անունով: Անմիջապէս այդ վերնագրի տակ բացատրուած է որ զիրքը յօրինուած է՝ հայ երիտասարդներին ծուլութեան քնի թմրութիւնից սթափեցնելու համար: Աստուածաբանութիւնը, հոգեպաշտութիւնը չնու այդ սթափեցնողները, այլ—առաջին անգամ երկար դարերից ի վեր—աղջային ինքնաճանաչութիւնը, իսկական հայրենասիրութիւնը:

«Նոր Տետրակը» Յակոբ Շահամիրեանի գրուածքների մէջ դեռ համեմատաբար բաւարար կերպով խմբագրուած գործն է. Մովսէս Բարաղամեանի աշխատակցութիւնը այստեղ գոնէ այն հետեանքն է ունեցել, որ զիրքը մի յայտնի չափով աղատ է Շահամիրեանին յատուկ անլուկանդակութիւնից, անվերջ կրկնողութիւններից, ուղղագրական և քերականական կոպիտ սիմաներից:

Ակաւում է այդ զիրքը մի ընդարձակ ոտանաւորով: Կիսագրագէտ մարզը յանձն է առել մի շատ դժուար աշխատանք — ոտանաւորով զարթեցնել գաղափարական մնեց շարժում, հասկացնել անկման արաւոր և վերածնութեան կենսատու զօրութիւնը: Այդ բանաստեղծական փորձը խիստ անաջող է. Նրա մէջ արուեստ չը կայ, բայց կայում է չափը, լեզուն աղքատ է, ոճը անհարթ, աղքատիկ: Եւ դա երգ է, որ պիտի ծուլութեան մահանման քնից սթափուող երիտասարդութեան ղեկավարը դառնայ: Ո՞չ, այդպիսի արհեստական, ողորմելի ոտանաւորները չեն, որ ցնցում են դարաւոր ստրկութեան մատնուած մի ժողովրդի սիրտն ու հոգին, ցոյց են տալիս անկման սարսափը, փոտղ վէրքերը, Բայց մեղաւոր էր ասղի և մկրաւի մարզը, այդ հարուստ ակնավաճառը, որ լեզու և չնորհք չունէր իր սիրած աղզի մէջ յուղմունք և հիացմունք տարածել կրակոտ լեզուով, իսկական բանաստեղծի ոգեսրութեամբ իսկական բանաստեղծներ աշխարհային այն ցաւերի համար, որոնց ուղում էր երգել Շահամիրեանը, հայ ազգը գետ չէր տուել: Եւ մենք շարադրութեան գոնէ նշանակութիւնը հասկանալու համար չը պիտի նայենք նրան արուեստի տեսակէտից: Միանդամայն հաշտուենք, ինչպէս շատ տեղ խնդրում և թախանձում է ինքը՝ Շահամիրեանը, այն իրողութեան հետ, որ գերձակութիւնից ակնավաճառութեան հասած այդ վաճառականը զրական տեսակէտից փոքր ի շատէ կատարեալ գործեր չէ ուղեցել տալ

մեզ, այլ միայն մտքեր զարթեցնելու, գաղափարներ ձեակերպելու տեհանաբից է ստիպուել իր խեղճ գրչին առաջարէզ տալ:

Այս հայեցակէտը որոշելուց յևտոյ մենք կը գտնենք Շահամիւրեանի մօտ շատ նշանաւոր յատկութիւններ:

«Եոր Տեալրակը» առաջին հրապարակախօսութիւնն է մեղանում: Մի շատ ախորժենի զարմանքով մենք գտնում ենք նրա մէջ մի առանձին, բախտաւոր բացառութիւն. գժոխքի և արքայութեան հանգամանքները բացատրելու համար չէ նա կադմուել և լոյս տեսել, ոչ դաւանաբանական վէճեր ծեծելու համար, ոչ էլ քնայնող հոգեշահ խրատներ տալու համար: Դա աշխարհային ցաւերին նուիրուած մի աշխահիկ գրուածք է. իրականութիւնն է նրա էութիւնը, գժբախտութեան, յետամեացութեան դէմ գարման գտնելու հոգսն է նրա միակ ձգտումը:

Շահամիւրեանը առաջին հայն է միջին գարերից յետոյ, որ վերցնում է հայութիւնը իբրև ազգութիւն. նա հասկանում է որ հոգեպայտութիւնը չէ կարող միայնակ երջանկացնել մի ազգութիւն այս աշխարհում, ուր գործում են բազմաթիւ բնական օբյեկներ. և մտնում է իր ազգի զրութեան մէջ, ցոյց է տալիս նրա պակասութիւնները, մարակում է ազգային տգիտութիւնը, ուսումնատեացութիւնը, անմիաբանութիւնը. նա պահանջում է որ հինաւուրց ստրուկը սրբէ իր կեղտերը, ոտքի կանգնէ իբրև վերածնուող մի մարմին և ազատութիւն, կատարեալ անկախութիւն ձեռք բերէ: Առանց այդ քաղաքական ազատութեան, ասում է նա, չը կայ փրկութիւն, չը կայ աղզային պատիւ, առաջադիմութիւն և երջանկութիւն: Ահա ինչ է քարոզում այդ անարուեստ, խեղճ ու կրակ ոտանաւորը, որ թոյլ ու անկարող է, բայց և գեղեցիկ ու յուգիչ՝ իբրև մանկական առաջին թոթովանք...

Ո՞րտեղից և ի՞նչպէս գուրս բերեց Շահամիւրեանը այդ ձշմարտութիւնները. ովքեր էին նրա դաստիարակները, նրան զեկավարողները: Ի՞նքը, շարադրութիւնը, պատասխանում է այս հարցերին: Առաջին աղբիւրը Ս. Գիրքն է, Աստուածաշունչը և Աւետարանը: Հետաքրքրական է Շահամիւրեանը իբրև այդ զըրքերի բացատրող: Մարդկային միաբը երկու ծայրեր է ներկայացնում կրօնական զրքերը հասկանալու և բացատրելու մէջ: Եղել են այսպիսինները (և դրանք ահազին թիւ են կազմում), ուրոնք այդ զրքերից գուրս են բերել միայն սաստիկ ատելութիւն դէպի աշխարհային գործերը, միայն յուսահատութիւն և հիասթափումն մարդու բնութեան, ընդունակութիւնների վերաբերմամբ: Այստեղից առաջայ ել է վանական-ճպնաւորական իդէալը, որ վարակել է ամբողջ աշխարհը, սպանել է մարդու մէջ ինք-

նագործունէութեան ամեն մի միտք, ամեն մի ձգտում. դարերի ընթացքում նա մարդկանցից պատրաստում էր իրանք իրանց ատող անհատներ, որոնք պիտի մոռանային ամեն աշխարհային գործ ու հոգս և մտածէին, տանջուէին միմիայն երկնքի համար: Մեզանում ամբողջ գրականութիւնը այդ սպանող ոգով էր տոգորուած. ստորացնել մարդու արժանաւորութիւնը, սովորեցնել որ մարդը մի ոչնչութիւն է, սոսկալի յանցանք է գործում, սըրտանց կաշելով երկրաւոր գործերին, հաստատել թէ ամեն ինչ ունայնութիւն է լուսնի տակ և ոչինչ լաւ բան չէ կարելի սպասել նիւթական աշխարհից—ահա ինչ ջանքեր էր գործադրում վանական-ճգնաւորական իդէալը՝ մարդկանց ստրկացնելու և իր թագաւորութիւնը անխատ պահելու համար: Հայերը այդ կողմից միջնագարեան ամբողջ քրիստոնէութեան մի կտորն էին կազմում:

Բայց եղան և այնպիսիները, որոնք բոլորովին ուրիշ զաղափարներ հանեցին նոյն Ս. Գրքից Այս սակաւաւորներն էին, որ ազատութեան, ջերմ հայրենասիրութեան, մտքի անկախութեան, լայն հայեացքների քարոզիչներ գարձան, հիմնուելով այն իսկ գրքերի վրայ, որոնցից վանականութիւնը այնքան յուսահատական, մոռայլ, անձնասպան եղբակացութիւններ էր հանում: Շահամիրեանը հէնց այս տեսակ քարոզիչներից մէկն էր մեղանում, առաջինը՝ երկար դարերի խաւարի մէջ: Ազգային իրաւունքները, քաղաքական ազատութեան ստիպողական անհրաժեշտութիւնը նա հաստատում և ապացուցանում է Աստուածաշնչի տուած օրինակներով, Քրիստոսի և նրա աշակերտների վարդապետութիւններով: Շահամիրեանի ժամանակ Հիւսիսային Ամիրիկայի անզիլիական գաղղթականութիւնները, նոյն այդ Ս. Գիրքը քաղաքական անկախութեան և ապստամբական շարժման զրոշակ գարձրած, մեծ ոգեգորութեամբ և անձնազոհութեամբ պաշտպանում էին իրանց նուիրական իրաւունքները: Այդ մեծ շարժումը գասեր էր տալիս ամեն մէկին նոյն Աստուածաշնչի և Աւետարանի վրայ. և այդտեղից էլ, երկի, ներշնչումներ էր ընդունում հայերի քաղաքական վերածնութեան առաջին գրական քարոզիչ Շահամիրեանը:

Ս. Գրքից յետոյ Շահամիրեանին ոգեսրողը հայոց ամենամեծ հեղինակն էր, Մովսէս Խորենացին: Խոսելով Խորենացու պատմութեան առաջին տպագրութեան մասին, մնաք ցոյց տուինք թէ ինչ մեծ դեր պիտի կատարէր մեր պատմահայրը՝ ազգային գիտակցութիւն, ինքնաճանաշութիւն տարածելու մէջ *): Խորենացու ազգած հայրենասիրական կրթութեան ա-

*) «Հայկ. Տպ. 1, եր. 336—343.

ուաշին երևոյթը, տպագրութեամբ լոյս տեսնելուց յետոյ, հընդկաստանցի վաճառականն էր: Ո՞րպիսի ոգեորութիւն, հաւատ, խրախոյս են ներջնչում Շահամիրեամսցին ազգային այն հին հերոսները, որոնց նկարագիրը թողել է Մովսէս Խորենացին: Հայկը, Տիգրանը, Տրդատը նրա թե ու թիկունքն են գառնում՝ ազգառութիւն քարոզելու մէջ: Այդ անունները կենդանացնում են Շահամիրեանի սովորաբար ցուրտ, արհեստական ստանաւորը. գուք զգացւում էք, կարդալով այն տողերը, ուր Շահամիրեանը կանչում է հին հայոց քաջերին, ցոյց է տալիս նրանց Հայաստանի տիսուր, արիւնոտ ներկան և նրանց հովանաւորութիւնն ու օգնութիւնն է ինդրում:

Համեմատութիւնը անցեալի և ներկայի մէջ նրան զառն մատածութիւնների է հասցնում: Հայաստանը նրան ներկայանում է սկզբից մի ընտրեալ և երջանիկ երկիր. Արարատը, Նախիջևանը, Մարանդը, դրախտի գետերը իրանց հետ կապուած աւանդութիւններով վկայ են որ երկինքը առաջնութիւն է տուել այդ երկրին, դարձնելով նրան մարդկութեան առաջին հայրենիք: Հսկաներ էին թագաւորում այդտեղ. և հայը այդ ժամանակներում գովելի էր բոլոր ազգերից աւել. իսկ այժմ... «Ստրկաբար օտար ազգերի ծառայութեան տակ ընկնելու պատճառով, իրրե ստոր գերիներ՝ բոլոր ազգերից անպիտանը և ատելին դարձանք», բացականչում է Շահամիրեանը: Առաջին անգամն է, որ հայոց պատմութիւնը իր փիլիսոփայութիւնն է յայտնում այդ վաճառական հայրենասէրի բերանով: Մինչև այդ՝ հայը իր դժբախտութիւնների, իր սոսկալի գերութեան պատճառը միմիրայն իր մեղքն էր համարում: Նրան ամեն ժամանակ համոզում էին, որ եթէ կոսանրող կոտորողի ետերց է գալիս, եթէ քար քարի վրայ չէ մնում, կայ միայն մի պատճառ. այն, որ նա, այդ մորթուող և սպառուող ազգը, շատ է մեղաւոր, իր անիրաւութիւններով, իր յանցանքներով շարժում է երկնքի բարկութիւնը և այդպիսի պատիժներ է ստանում: Եւ դժբախտ, անզին, ցիրուցան ազգը աւելի ևս թուլանում էր այդ համոզմունքից, աւելի ևս խրում էր կրօնական նախապաշարմունքների մէջ: Շահամիրեանը այդպէս չէ հասկանում հայոց երկրի կործանման բուն պատճառը: Մեղքը իր կարգին, ասում է նա, բայց Հայաստանը արիւնով լոււացող թշնամիները միայն իրանց ոյժով չէին տիրում ու առնում, այլ այն պատճառով, որ հայերը ժամանակի ընթացքում անպիտանացան, ծուլացան, չէին հետեւում իրանց փառաւոր նախնիքների օրինակին, չէին պատերազմունքների մէջ: Շահամիրեանը, մոռացել էին հայրենիքի շահերը: Կոտորողների, քանդողների դիմաց նրանք միայն մի միջոց գի-

տէին—փախչել, անյայտանալ քարերի ծերպերում։ Սմին մէկը կեանք փրկել էր աշխատում. բայց դա փրկութիւն չէր. որոնք էգ էին—կանաքը, աղջիկներ, միահամուռ խայտառակւում, պղծւում էին, իսկ արուները—տղամարդիկ, երեխաներ. մեծից մինչեւ փոքրը, կոտորում էին։ Հայտառանը սուզի հայրենիք դարձաւ. հայոց վարդերն ու մանուշակները չորացան, քաղցրահամ աղբիւրները արիւնու եղան. հայը թափառական ընկաւ երկրից երկիր, իսկ իր խևական հայրենիքում միայն արտասուզ էր ուտում ամեն տեղ փոռուած զիակների մէջ...

Երկար ողբում է Շահամիրեանը այս դժբախտ դրութիւնը, երկար նա կանչում է իր նախահայրերին, կանչում է հին Իսրայէլի դժբախտութիւնները ողբացողներին, քրիստոնէական եկեղեցու սուրբերին։ Թող ամենքը տեսնեն թէ ինչպէս գազան տիրողները չեն բաւականանում իրանց սահմանած հարկերն ու տուրքները ստանալով, այլ խլում տանում են կոյսերը, բռնարարում են, ծնողներին անհուն վիշտ և տանջանքներ պատճառելով։

Բայց ողբով, հառաջանքներով, աղօթքներով հրաշքներ չէ կարելի կատարել այս աշխարհում։ Եւ Շահամիրեանը զբանավ բաւականանալ չէ էլ ուզում։ Նա տեսնում է իր առջեւ գործ, հաւատում է թէ կը վերակենդանանայ մի ազատ Հայտառան, նա զգում է որ հեռացաւ գիշերուայ այնքան խաւարամած և մառախապատ աղջամուղջը և ահա մօտիկաւ հասաւ արեի ծագումը մեր աշխարհը լուսաւորելու համար, կորաւ ու չքացաւ ձմեռուայ սաստկութիւնն ու զմնդակութիւնը և հասաւ ծաղիկներ ծնող ու մանուշակներ բերող գարունը՝ մեր երկիրը զուարձայնելու համար։ Թող ցիրուցան հայութիւնը համաշխարհային պանդխտութիւնից վերադառնայ տուն, իր սաացուածքի տէրը գառնայ։ Մահ հայրենիքի ազատութեան համար—ահա ինչը պիտի բերէ այդ արեը, այդ գարունը։ Երանի թէ—ասում է նա—հայները կարողացած լինէլն նահատակուել իրանց հայրենիքի փրկութեան համար, նրանք կոտորուել են ահազին քանակութեամբ, բայց ի՞նչ օգուտ։ Պէտք էր որ ազգի մի մասը միւս մասի համար զլուխ դնէր, մեռնէր ապրեցնելու համար, քան թէ թոյլ տար որ ամբողջ ազգը ծառայ և սարուկ գառնար օտարին։ Մի ազգ, որ ազատութիւնը պահպանում է պատերազմի մէջ, երբէք չէ պակասում. օրինակ է բերուում ոռուաց ազգը, որ իր նուաստ գրութիւնից բարձրացաւ, դարձաւ տիեզերակալ։ Ուրեմն պէտք է աշխատնի, պէտք է զէնք ունենալ, վարժուել նրա գործածութեան մէջ։ Ոչ ոք չը պիտի իրան անկարող համարէ, ոչ ոք չը պիտի արդարացնէ իրան ասելով

թէ գանձ և կարողութիւն չունի: Արիացէք, բացականչում է Շահամիրեանը, եկէք մէջ տեղից վերցրէք մեր ամօթն ու նախատինքը: Թնդ հայոց շընազ օրիորդները հայ կտրիճներից փեսայ ընտրեն իրանց համար և թնդ ասեն իրանց փեսաներին. «Թշնամիներից վրէժ հանեցէք, մեզ համար հարուստ աւար բերէք, աւելի հարուստ քան այն աւարը, որ նրանք մեղանից ստացել են. արդար հատուցում, շուտշուտ պահանջեցէք տուկոսներով»: Իսկ ծերերն ու պառաւները թող, ի սէր Քրիստոսի, նոյնպէս գառնան ազատութեան առիթ. Թնդ չասեն նրանք, թէ իրանց քիչ է մնացել ապրել և ովկ կենդանի կը մնայ, որ տեսնէ ազատութիւնը: «Անդադար յորդորեցէք առոյգ մանուկներին և երիտասարդներին, որ արի լինեն. եթէ ոչ դուք, ծեր սերունդները գուցէ արժանանան իրանց սեփական ժառանգութեան»:

Շատ հետաքրքրական է Շահամիրեանցի վերաբերմունքը դէպի հոգեորականութիւնը: Նրան զեկավարող գեր չէ յատկացնում աղդային նոր վերածնութեան գործում: Շահամիրեանցը ամենայն յօժարութեամբ խոստովանում է որ հոգեորականութիւնը կատարել է գեր անցեալում, որ նա պահել է եկեղեցին և մեծ ազգեցութիւն ունի ազգի վրայ: Բայց աղաջում է հոգեւորականներին այլ ևս չանփել հայերին: Ինչպէս յայտնի է, հայոց պատմութեան ամենատխուր շրջաններում երկրի աւերմունք պատճառող զանազան դժբախտութիւնների մէջ յիշատակւում է և հոգեորականների անէծքը: Ներսէս Պարթեց անփծեց Արշակին և Պապին. հայոց փառաւոր մայրաքաղաք Անիի կործանման մէջ խառն էր հոգեորականի մատը և ամենքը հաւատացած են որ թշնամու ոյժը չէր նրան քարուքանդ անողը, այլ հայ հոգեորականի անէծքը: Ուստի և Շահամիրեանցը խընդում աղաչում է որ նորոգուող Հայաստանը այլ ևս չենթարկուի այդ անէծքներին, որոնց չնորհիւ կործանուել են ոչ միայն իշխանութիւնները, այլ և ամբողջ երկիրը:

Բայց ինչ պէտք էր անել որ հայ ժողովուրդը բմբանէ վերանորոգչական գաղափարները: Հնդկաստանցի հայրենասէրը զիտէ, ի հարկէ, որ իր զիրքը, այդ զրքի նման հարիւրաւոր ուրիշ զրքեր բաւական չեն հասկացնելու հայ ամբոխին թէ ամօթ ու նախատինք է ստրկութիւնը, թէ ժողովուրդը կարող է իր ձեռքով իր երջանկութիւնը տնօրինել, եթէ զէնք ունենայ: Գրքերը բաւական չեն: Հարկաւոր էր մի աւելի մեծ բան. հայրենի դժբախտութիւնները առաջանում էին տղիտութիւնից, պէտք էր, ուրեմն, վերցնել նրան, պէտք էր ուսման լոյսը տարածել հայերի մէջ: Ու Շահամիրեանցը անդադար ուստում, ու-

սում» է կանչում: «Եւրօպան ամենքիս գաղափարն է»—ասում է նա. Եւրօպական շատ ազգեր էլ մեզ պէս են եղել. պէտք է նրանց հետեւ, նրանցից օրինակ վերցներ: Սա առաջին հրաւէրն էր մեզանում, որ ուղղում էր ժողովրդին. հրաւէր դէպի եւրօպականութիւն, դէպի ուսում և քաղաքակրթութիւն՝ քաղաքական վերակենդանութեան համար: Խոքը, հեղինակը, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ, Եւրօպական նորագոյն մաքի ազդեցութեան տակ էր գտնում: Ո՞չ Ս. Գիրքը, ոչ ազգային պատմութիւնը չէին կարող միայնակ ներշնչել նրան այդ համարձակ մտքերը, բաց անել նրա մտքի առաջ վերածնութեան մի յեղափոխական ճանապարհ, եթէ ժամանակակից քաղաքակիրթ ազգերի խօսքն ու գործը անհասկանալի, անյայտ մնային նրան, եթէ գարի աղատասէր, քննական ողին չը լինէր նրա դեկավարն ու ուղեցոյցը:

Այդ համարձակ մտքերը, այդ աղատական յեղափոխութիւնը պէտք էր ապացուցանել: Պէտք էր ցոյց տալ թէ զէնքով անկախի հայրենիք պահպանելը մի նոր, գեռ չը տեսնուած բան չէ կարող համարուել հայերի մէջ, թէ հայը, սատանալով մի աղատ երկիր իր ապրուստի, իր երջանկութեան համար, միայն վերանորոգում էր այն, ինչ ունէր մի ժամանակ. նա ուրիշց չէ յափշտակում այդ երկիրը, այլ միայն վերահաստատում է իր հինաւուրց իրաւունքները այդ երկրի վրայ: «Ո՞չ,—ասում է Շահամիրեանցը,—մենք ուրիշ բան չենք ցանկանում, բայց միայն ստանալ մեր սեփական և հաւաստի ժառանգութիւնը, որ կորցրել ենք մեր անկարգութեան և ծուլութեան պատճառով: Այն, ինչ տգիտութեամբ կորցրել ենք, պատուաւոր ենք յետ ստանալ իմաստութեամբ և արիութեամբ»: Եւ այդ բոլորը հաստատելու համար նա դիմում է հայոց պատմութեան: Շատ լաւ էր հասկացել Շահամիրեանցը որ աղատութեան գաղափարը կարող է հիմք գտնել միայն այնտեղ, ուր զարգացած է ազգային ինքնածանաչութիւնը: Մի գերի ազգ կարող է զգալ իր զրութեան ամբողջ ամօթն ու նախատինքը, երբ նա սկսում է հասկանալ թէ ինչ է ինքը, որտեղից է զալիս և ուր է զնում, երբ նա տեսնում է իր նախնիքներին, գտնում է նրանց մէջ ոգեսրող գաղափարներ: Ոչինչ այնպէս չէ նպաստում մի ազգի ինքնածանաչութեան, ինչպէս համեմատութիւնը անցեալի և ներկայի մէջ: Այդ պատճառով Շահամիրեանցը բայց է անում հայի առջև նրա մոռացուած անցեալը, զրում է հայոց պատմութիւն:

«Նոր Տետրակի» ամենամեծ մասը նուիրուած է հայոց պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան: Մենք համարում ենք այդ մասը գրական մի շատ գնահատելի վաստակ:

ի նկատի առնելով այդ գործի հանդամանկքները։ Հայը ունէր մեծահատոր կրօնական գրքեր, բայց չունէր իր հայրենիքի փաքր ի շատէ ամբողջացրած, լիակատար պատմութիւնը։ XVII դարի վերջում մենք տեսանք Մինաս Համդեցու աղքատիկ «Ազգաբանութիւն Հայոց» գործը և ցոյց տուինք թէ ինչ նշանակութիւն ունէր նոյն իսկ մի այդպիսի ողորմելի պատմութիւնը այն ժամանակներում, երբ հայը համարեա բոլորովին մոռացել էր իր անցեալը *։ Համդեցուց յետոյ Յակոբ Շահամիրեանցն էր, որ գրեց հայոց պատմութիւնը, բայց համեմատաբար աւելի ընդարձակ ծաւալով։

Դա մի ամբողջացրած պատմութիւն չէ, ունի խոշոր պակասութիւններ։ Բայց անկարելի էլ էր որ Շահամիրեանցի պէս մի մարդ Հնդկաստանի պէս մի երկրում կարողանար նոյն իսկ մի համառօտ պատմութիւն կազմել առանց պակասութիւնների։ Նրա գլխաւոր աղբիւրը եղել է Խորենացին։ Մինչև Արշակունեաց թագաւորութեան վերջը, այսինքն մինչև այն տեղը, ուր վերջանում է Խորենացու գրուածքը, Շահամիրեանցի պատմութիւնը թէ մանրաման է, թէ հետաքրքրական։ Այդ ժամանակից յետոյ մեր հեղինակը հաստատ հող չունի ոտի տակ, սահում է պատմական եղելութիւնների վրայով, տալիս է կցկտուր տեղեկութիւններ, համարեա միայն անունների մի ցուցակ։ Աղբիւրների պակասութիւնը շատ զդալի բացեր է թողնում գործի մէջ։ Այսպէս, հինգերորդ դարի կրօնական պատերազմի մասին Շահամիրեանցը շատ աղօտ ու վայր ի վերոյ հասկացողութիւն ունի, թէև Եղիշէի պատմագրութիւնը ութ տարի էր, ինչ հրատարակուած էր կ. Պօլում։ Ի վերջոյ Շահամիրեանցը մի քանի շատ հետաքրքրական էջեր է նուիրում Ղարաբաղի մէլքներին, նկարագրում է թէ ինչ իշխանութիւն ունին նրանք և ինչպէս են կառավարում իրանց երկիրը։

Վերջացնելով հայոց պատմութիւնը, մեր հեղինակը մի առանձին գլխի մէջ քննում է թէ ինչ պատճառներից ընկաւ հայոց թագաւորութիւնը, Եօթը հատ են այդ պատճառները։ 1) Բացարձակ միապետական կամ, աւելի ճիշտ ասած, բնապետական կառավարութեան ձեր Հայաստանում։ Զը կայ հաստատուն օրէնք, որին հպատակուէին ամենքը։ Ժողովուրդը խորհրդակցական իրաւունք չունի իր երկրի կառավարութեան մէջ։ Այս սկզբունքը Շահամիրեանցը մանրամասն բացատրում է իր մի ուրիշ աշխատութեան մէջ, որի մասին յետոյ կը խօսեմք։ 2) Թշնամին Հայաստանի վրայ տիրեց ոչ թէ իր զօրու-

*.) «Հայկ. Տպ.», I, եր. 284.

թեամբ, ոյժով. «մեր թշնամու խմաստութիւնն էր, որ մեզ կաշկանդեց»։ Մեր բազուկի զօրութիւնը չէ նուաճուել, այլ մեր մտքի կուրութիւնն է մեզ տուել թշնամու ձեռքը։ Մարդը նախ յիմարանում է, ապա կորչում. յիմարութեան և տղիտութեան պատճառով շատ ազգեր են կորել։ 3) Մեր երիտասարդները, ոչ թէ արիութեան պակասութիւնից, այլ տղիտաբար միմեանց դէմ էին դուրս գալիս և փոխանակ թշնամիներին կոտորելու իրար էին կոտորում։ Շատ յիմարներ, թողնելով իրանց բնիկ ազգը, մեծ քինախնդրութեամբ և նախանձով միանում են այլ աղջերի հետ, ինչպէս օձը կարիճի հետ։ 4) Անմիաբանութիւն. իրար դէմ ատելութիւն գրգռելով, հայերը չը կարողացան մնալ իրանց աշխարհում, ցիրուցան գարձան, քամու տարած չոր ճիւղերի կամ եղէզնի պէս փոռւեցան երկրի երեսին և այդպէս էլ մաշուեցան։ 5) Ծուլութիւն. մեր երկիրը բերքերի պակասութիւնից չամայացաւ, այլ որովհետև ծոյլ ու անդործ էին մշակներն ու երկրագործները. նրանք թոյլ տուին որ իրանց արտերն ու հանդերը արջերի և վարազների ոտների տակ տրսուուն։ Իսկ ծոյլերի առաջ արքայութիւնն էլ փակ է։ Պէտք է արի ու քաջ լինել, արդար, խոնեմ ու ողջախոհ։ 6) Մեր յամառ, բոի բնաւորութիւնը։ Հնազանդութիւն, կարդապահութիւն չէ եղել։ 7) Հայերը ատել են ուսումը, օր օրի վրայ յամառել են տղիտութեան և մատասր կուրութեան մէջ։ Պարտաւոր ենք այսուհետև այդպէս չը լինել. պիտի ատենք տղիտութիւնը, սիրենք իմաստութիւնն ու հանճարը, որպէս զի զարգանանք, միժանանք և այդպէս հանգստանանք այնքան նեղութիւններից և թշուասութիւններից յետոյ։—Բայցի այս եօթը պատճառներից կան և ուրիշ շատերը, բայց բոլորը մի առ մի յիշատակել զանց է անում Շահամիրեանցը, միայն յորդորում է ձեռք վերցնել այն հին մոլորութիւնից թէ Աստուծու կամքով է քանդուել՝ Հայաստանը։ Աստուծ բարերար է, չարութեան աղբիւր լինել չէ կարող, և մենք իզուր ենք մեր պակասութիւնների պատճառով եղածը վերագրում այն սկզբունքին, որ ամենքի լաւութիւնն է կամենում։ Բայց ինչն է հայերի փրկութիւնը։—Սահմանադրութիւն, —ասում է Շահամիրեանցը, —մի հաստատուն վարչական օրէնք, ժողովրդի կամքով և մամսակցութեամբ մշակուած և ընդունուած։ Թող լինի այդ բանը, և ողուք նորից կը տեսնէք ձեր ծայրագոյն իշխանութիւնը, նոյն իսկ աւելի հարուստ քան էր առաջ, որովհետև մեր վաղեմի իշխանները իմաստութեամբ չէին վարւում, ինչպէս հարկաւոր էր»։

Այս եղջրակացութիւնների մէջ ճիշտ նկատուած պակասու-

թիւնների և պատճառների հետ մենք գտնում ենք և շատ միամիտ անգիտութիւն, խակ խորհրդածութիւնները Հեղինակը միմիայն հայ ազգի ներքին յատկութիւնների մէջ է առանում քաղաքական անկման պատճառները, դիտմամբ թէ չիմանալով ոչնչութեան է հասցնում արտաքին հանգամանքները: Դրանով նա ուղում է հետացնել հայկական վերածնութեան գործը: Եւ իրաւ, համեմատաբար նրբան քիչ բան էր այդ ծրագրով պահանջւում հայերից՝ միանդամայն անկախ ու ազատ լինելու համար: Բաւկան էր աշխատել միայն ներսում, վերացնել բարոյական պակասութիւնները, և անկախութիւնը ինքն ըստ ինքեան կը դար: Մոռանում էր Շահամիրեանցը շատ և շատ բան: Նա պարզ հասկացողութիւն չունէր հայերի թուի իսկական չափի և քաղաքական ոյժի մասին անցեալում: չէր հասկանում Հայաստանի աշխարհագրական դիրքի նշանակութիւնը, որ ահազին դեր է խաղում ազգերի ճակատազրի մէջ: Վերջապէս ամենից մեծը, ամենից կարևորը—ազգերի հեղեղը, որ արհելքից արևմտաք անցնելիս, երկար դարերի ընթացքում ոչնչացրեց ամեն ինչ, ոչնչացրեց ոչ միայն թոյլ Հայաստանը, այլ և անհամեմատ ուժեղ ու մեծ Պարսկաստանը, արաբական խալիֆների պետութիւնը, բիւղանդական կայսրութիւնը: Համաշխարհային այդ սոսկալի աղէտների մէջ նոյն իսկ բարոյապէս աւելի զօրեղ, ներքին կազմակերպութեամբ աւելի տոկուն մի ազգ չէր կարող անվեսա մնալ, չը կորցնել իր հայրենի ժառանգութիւնը: Շահամիրեանցը գատում էր, երեսակայում էր, երազում, բայց իրականութեան, գործնական կեանքի վերաբերմամբ զարմանալի միամիտ էր: Հայաստանից հեռու ծնուած, իր գրական գործունչութեան միջոցին հայրենիքից աւելի ևս հեռացած, նա չէր կարող կշռել և զատել իրեն շատ փորձուած մարդ: շատ բան նա լսել էր, շատ բան էլ երեսակայութեան, ևնթադրութիւնների միջոցով էր պարզում իր համար: Եւ այդ հանգամանքը աւելի ևս աչքի է ընկնում մասնաւանդ այն ժամանակ, երբ նա վերջանում է խրատներն ու յորդորները, հին պատմութիւնը և մօտենում է իրական կեանքին, ներկայ Հայաստանին:

Ինչպէս ասացինք, Շահամիրեանցը հայոց պատմութեան կցել է և Հայաստանի աշխարհագրութիւնը: Շնորհակալութեան արժանի է նա և այդ գործի համար, որի մէջ մտցրել է սեփական շատ աշխատանք: Թէ ինչ նշանակութիւն ունի հայրենագիտութիւնը, —այդ հասկանալի է և առանց բացատրութիւնների: Ահա այդ կարենոր ձիւղի մէջ էլ առաջին, աչքի ընկնող նախաձեռնող է հանդիսանում մեր հնդկաստանցի վաճառականը,

յաղթելով մի շաբք դժուարութիւններ։ Նրա ժամանակ հրատարակուած էր Մոլսէս Խորենացուն վերագրուող աշխարհագրութիւնը *։ Առաջնորդ ընտրելով այդ համառօտ գործը, Շահամիրեանցը աւելացնում է ուրիշ աղբիւրներից հաւաքած իր տեղեկութիւնները և տալիս է Հայաստանի մի բաւական լիակատար և նոյն իսկ մանրամասն տեղագրութիւնը, որի մէջ առաջին փորձն է անում ցոյց տալու թէ այժմնան որ տեղերին են համապատասխանում հին աշխարհագրական անունները, նկարագրում է նոր տեղերը, պատմում է թէ ինչ ցեղերի հետ ինչ պատմական յիշատակներ են կապուած։ Բայցի զրանից նա ցոյց է տալիս Հայաստանի սահմաններից դուրս գտնուող այն երկիրները, որոնց վրայ հայերը մի ժամանակ տարածել էին իրանց տիրապետութիւնը, իսկ մի առանձին զլիում, ուր գննուում է այն հարցը թէ որքան հարկեր է տալիս հայ ազգը իր վրայ իշխողներին, մէջ են բերուած և այն երկիրները, ուր գոյութիւն ունեն հայ գաղթականութիւններ։

Մի քայլ էլ առաջ է գնում Շահամիրեանցը և փորձում է լրացնել աշխարհագրութեան մի կարեռ պակասը—վիճակագրութիւնը։ Այստեղ նա արդէն ոչինչ հաստատուն, զրական տեղեկութիւն չունի և գործում է լոկ իր երեակայութեան օգնութեամբ, ուստի և ընկնում է չափազանցութիւնների մէջ։ Նա վերցնում է Հայաստանը հին սահմանների մէջ և այդպիսով ստանում է մի «հայրական ժառանգութիւն», որ տարածւում է կասպից ծովից մինչև Միջերկրականը։ Բնաջինչ անող սուրբ, որ գարերի ընթացքում սպառում էր հայ կեանքը այդ սահմանների մէջ և ահազին գաղթականութիւններ էր հանում մայր երկրից, մեծ նշանակութիւն չունի Շահամիրեանցի համար։ Նրա հաշուով դուրս է գալիս մի խիտ, միապաղաղ բնակչութիւն ծովից մինչև ծով։ Հայաստանը ունի 20 նահանգ, որոնց մէջ կան 258 քաւառ և 103 քաղաք։ Վերածելով այդ բոլոր տեղերը գիւղերի, նա ընդունում է որ ամբողջ Հայաստանում կարելի է ընդունել 77,400 գիւղ։ իւրաքանչիւր գիւղ միջին թուով 60 տուն հաշուելով, ստացւում է ընդունելով 6 հոգի, դուրս է գալիս որ ուրեմն Հայաստանի ամբողջ ազգաբնակութիւնը բաղկացած է 27,864,000 հոգուց։ Այս քանակութեան ուղիղ կէս մասը համարում է այլազգիներ՝ «ասձիկ» անունով, ուրեմն զուտ հայ ազգաբնակութիւն ստացւում է 13,932,000։ Հանելով այս թուից կանանց և աղջիկների մի ենթագրական

*.) ռէալկ. Տոլ. 1, էր. 161—166։

թիւ, դարձեալ ընդհանուր թուի կէսը, ինչպէս նաև հարկ չը վճարող ծերերի և մանուկների թիւը, Շահամիրեանցը գուրս է բերում որ պարսիկներին և օսմանցիներին հարկ տուող չափահաս հայ տղամարդկանց թիւն է 5,224,500։ Այդ բազմութիւնը տալիս է դիմահակ 10,449,000 ոսկի և զանազան անուղղակի հարկեր՝ մաքս, հաս, բաժ՝ դարձեալ նոյնքան։ Բնդամենն, ուրեմն, հայ ազգի գրպանից դուրս է գալիս տարին 20,898,000 ոսկի կամ 4,179,000 պարսկական թուման։

Ինչու համար է այս հարկերի հաշիւը։—Չը մոռանանք Շահամիրեանցի իսկական նորատակը—հայերին քնից արթնացնելը և ազատութեան սովորեցնելը։ Տեսնում էք, ասում է, ինչ անհուն քանակութեամբ հարստութիւն է դուրս գալիս մեզանից ամեն տարի։ Սա գեռ մեր յօժարակամ տուրքն է։ Եթէ աւելացնէք այն հարստութիւնները, որ օտար տիրապետողները խլում են մեզանից զօռով, այն ժամանակ հաշիւ ու համար չէք գտնի։ Յայտնի են Սպանիայի հարուստ արծաթահանքերը. բայց հայ ազգը իր տէրերի համար այդ հանքերից էլ մեծ եկամուտների աղբիւր է։ Սպանիայիները չարչարուելով են արծաթ հանում իրանց հանքերից, իսկ մեղ վրայ տիրողները մեր կրօնը հայ-հոյելով, մեր պատիւը ոտնատակ տալով են առնում։ Օտարները մեզ տիրեցին հչ թէ իրանց սեփական ոյժով, այլ մեր աջակցութեամբ. մենք տղիտութեամբ նրանց տուինք մեր գանձերը, մեր ցորենը, մեր ձիաները. և նրանք այդպէս զօրեղացան ու տիրեցին մեզ, Եւ ինչ է մեր դրութիւնը։ Տիրողները չեն թող-նում որ մենք հագնենք մեր ցանկացած զգեստը, ձի հեծնենք, աղատօրէն ցոյց տանք մեր կանանց և աղջիկների զեղեցկութիւնը. մեր երիտասարդներին չեն թոյլ տալիս ցոյց տալ արիտութիւն և քաջութիւն։ Կորագլուխ ման ենք գալիս յանցապարտների նման, ծառայ ենք և երիտասարդութեան ժամանակ բռնարարուում ենք։ «Ո՞հ, դառն և սգալի մեծ թշուառութիւն. ով կարող է հաւաքել ու պատմել ամեն ինչ, եթէ սրանից բիւրապատիկ աւել էլ գրէ»։ Չեզ չեն թոյլ տալիս մտածել մի ուրիշ բանի մասին, բացի միայն նրանից, որ դուք մի քանի կերակուրներով յագեցնէք ձեր փորի քաղցը և կտաւներով ծածկէք ձեր անդամների մերկութիւնը. բայց ագռաւներն էլ, մկներն էլ, նոյն իսկ այնքան չնչին որդիներն էլ կարողանում են կշտացնել իրանց փորը։ Չորս հարիւր տարի եղաւ, ինչ մենք բոլորովին հրաժարուեցանք պատերազմներից և խոռվութիւններից, հարկատու եղանք օտարներին, որպէս զի աղատենք մեր անձը մահից։ Եւ 400 տարիների ընթացքում ամբողջ հայ աղղը՝ տղամարդիկ թէ կանայք, ծերեր թէ տղաներ հառաչելով ու յոդոց

հանելով մեռան տխուր ու անմիսիթար մահով։ Իսկ եթէ մենք էլ այդպէս վարենք մեր կեանքը, միմիայն մեր փորը լցնելու ջանք անենք, աւելի վատ կերպով պիտի մեռնենք. և ոչ միայն մենք, այլ և մեր որդիները, մեր որդիների որդիները մինչև աշխարհի վերջը։

Ուստի Շահամիրեանցը երգուեցնում է հայերին բոլոր սրբութիւններով, յանուն քաջ նախահայրերի—Հայկի, Արամի, Տրդատի—գործել և գործել աղատութեան համար։ Ողորմեցէք, ինքներդ ձեզ ողորմեցէք, ով հայկազուներ. ամօթ չէ որ որդիները ողորմեն իրանց մօրը՝ 400 տարիների ընթացքում մեր շատ նախահայրերը և առաջնորդները մի քանի անգամ աղաչեցին դրացի քրիստոնեաներին, բայց մինչև այսօր ոչ ոք չօգնեց մեղ, ձեռք չը մեկնեց մեղ. իսկ մի քանիմերը մեղ միմիթարելու վախարէն՝ վիրաւորեցին մեղ։ Եւ լաւ էր որ այդպէս եղաւ, մենք ոչ որին պարտական չը մնացինք, ամբողջ ժամանակ մեր օգնականը Աստուած էր։ Այժմ էլ, յոյս գնելով Աստուծու վրայ, ինողբենք որ նա սէր գնէ մեր սրտի մէջ, գուցէ արծարծուած սիրոյ բորբոքմամբ օգնենք մեր տառապեալ և ընկած մայր Հայաստանին, ողորմենք նրան։ Դժուար չէ ողորմելը. այդ ողորմութիւնը չի պակասեցնի մեր հարստութիւնները, մեր կերակուրները, մեր զարդերը, որովհետև ամեն ինչ մենք մեղ համար ենք անում։ Եթէ օտարին անհուն գումարներ ենք տալիս ինչ պէս հարկ, ինչեր կարող ենք անել, այդ գումարները մեր օգտին ծառայեցնելով։ Նրանք կարող են բաւականութիւն տալ պատերազմողներին, որոնք պիտի յարուցանեն մեր ազգը, վերայնեն մեր նախատինքը և աղատեն այն ձեռքերից, որոնք միշտ նեղում են մեզ։

Այսպէս ահա, պարզում է Շահամիրեանցի քարոզած քաղաքական ծրագիրը։ Մենք սկսում ենք մտածել որ հնդկաստանցի հայ հայրենասէրը յորդորում է հայերին ապստամբութիւն բարձրացնել։ Բայց նա չտապում է դրականապէս յայտարարել որ չունի այդպիսի միտք։ Շատ հետաքրքրական է նրա բայցատրութիւնը։ «Մենք չենք ասում որ հայերը ապստամբուն այլազդիների կամ իրանց կառավարիչների գէմ և աչք գնեն նրանց ստացուածքի վրայ և կամ վնաս տան նրանց։ Քաւ լիցի, դա քրիստոնեաների գործ չէ»։ Հապա ինչպէս պիտի գլուխ բերուի Հայաստանի աղատութիւնը։ Շահամիրեանցը արդէն ասել է որ մենք նոր բան չենք ուզում, ուրիշի սեփականութիւն իւել չենք կամենում, այլ միայն մեր սեփական ժառանգութիւնն ենք յետ ստանում։ Իսկ սա, ինչպէս երեւում է, ապրստամբութիւն չէր Շահամիրեանցի համար։ Բայց ինչպէս

պէտք էր հասկացնել պարսիկներին և օսմանցիներին թէ հայերը իրաւունք ունեն անկախ ու ազատ ապրել իրանց հայրենիքում: «Եթէ—ասում է Շահամիրեանց—դուրս գան իշխաններ հայոց ազգից—և այդպիսիները կան Հայաստանում—կամ մի ուրիշ մէկը, որ ջանք է անում հայերի ազատութեան համար, այն ժամանակ առաջ պիտի գան հայ համայնքները՝ մէկը միւսից աւել օգնելու նրանց: Վերևում ասացինք որ օգնելը հեշտ է: Հեշտ է, որովհետեւ եթէ այն հարկերի մի տասներորդ մասը, որ հայերը տալիս են այլազգիներին, տան այդ իշխանին օգնութիւն, նա ինքը կ'իմանայ թէ ինչ պէտք է անել և կ'անէ: և Աստուած էլ նրա օգնականը կը լինի»:

Ուրեմն, Շահամիրեանցի ծրագրով, երեան է զալիս մի իշխան, որ աղատում է Հայաստանը և հայերի պարագը այն է միայն, որ փողով օգնում են նրան: Կար արդեօք այդպիսի ազատարար: Շահամիրեանցը ճանաչում է այդպիսի մէկին: Նորից մի ակնարկ զցենք նրա գրած հայոց պատութեան վրայ և կը տեսնենք մի այսպիսի հանգամանք: Այնտեղ, ուր վերջանում է Բագրատունեաց թագաւորութիւնը, մեր հեղինակը ամսպասելի կերպով սկսում է բացատրել թէ Բագրատունիների տոհմը ամբողջապէս չը վերջացաւ, այլ մինչեւ այժմ էլ պահպանում է իր գոյութիւնը.—Նոյն այդ տոհմից է վրաց թագաւորութիւնը: Եւ Շահամիրեանցը սկսում է փառաբանել իր ժամանակի վրաց թագաւորին, որ Հերակլ II էր, անուանելով նրան քաջ, քրիստոնէութեան հզօր ախոյեան և մասնաւորապէս հայ ազգի պաշտպան: Հերակլը, ասում է նա, վճռել է աղատել քրիստոնէութիւնը պարսից և օսմանեան լուծից, իսկ հայերին այնքան սիրում է, որ չէ գանազանում իր սեփական ազգից:

Ահա ով էր կանգնած Շահամիրեանցի առաջ իրք Հայաստանը աղատող: Թէ և այս մասին չը կայ գրական, որոշ վկայութիւն «Նոր Տետրակի» մէջ, բայց Շահամիրեանցի նամակադրութիւնները ոչ մի կասկած չեն թողնում որ այդպէս էր նրա միաբը: Նա անմիջական բանակցութիւններ ունէր վրաց թագաւորի հետ, գրում էր և ստանում էր պատրասիաններ: Խնչպէս երեւում է, հսդկաստանցի մեծատուն հայը պատրաստ էր իր հարստութիւնը մէջ բերել, եթէ Հերակլը յանձն առնէր գործել նրա ծրագրով: և Հերակլը անկարելի չէր համարում այդ առաջարկութիւնը, զոնէ յատուկ մարդիկ էր ուղարկում Հնդկաստան՝ Շահամիրեանցի հետ անձամբ խօսելու: Բայց միայն դրամը չը պիտի լինէր հայերի երախտազիտական հատուցումը: Շահամիրեանցը Հերակլի համար տեղ էր պատրաստում աղատուած Հայաստանի կառավարութեան մէջ: Ահա այստեղ հայ-

րենասէր վաճառականը ներկայանում էր Ասիայի համար մի բոլորավին անօրինակ վերանորոգիչ և հազիւ թէ նրա ծրագրած գործը համոզիչ և ուշադրութեան արժանի լինէր վրաց թագաւորի համար: Շահամիրեանցի զիտաւորութիւնները և քաղաքական գաղափարները հասկանալու համար առայժմ թողնենք նրա բանակցութիւնները և ծանօթանանք նրա մի ուրիշ նշանաւոր աշխատութեան հետ:

«Եոր Տետրակի» հրատարակութիւնից հազիւ մի տարի անցած, Շահամիրեանցը իր տպարանից լոյս հանեց մի նոր գիրք, որի վերնագիրն է «Գիրք անուանեալ Որոգայթ Փառաց»: Աչինչ չէ ասում այդ վերնագիրը, նոյն իսկ եթէ աւելացնենք նրա բացատրութեան համար զրուած «վասն կալանաւորելոց ամենայն գործ անկարգութեան» բառերը: Անկարգութիւններ կալանաւորող մի որոգայթ... Որքան խեղճ, միամիտ բացատրութիւն: Բայց դարձեալ չը զարմանանք. մենք գիտենք թէ ինչ է Յակոբ Շահամիրեանցը իբրև հայ հեղինակ: Այժմ աւելացնենք որ այս գրքի մէջ այլ ևս չը կայ աշխատակից Մովսէս Բարագամեանցը և գուրս կը գայ այսպիսի մի հանգամանք. «Որոգայթ Փառաց»—ը XVII դարի մեր զարմանալի գրքերից մէկն է նոյն իսկ ամենից շատ զարմանալին, բայց վաճառականի անզրագիտութեամբ տաստիկ աղջառուած մի զիրք: Գրական արժէքի տեսակէտից նա ոչինչ է, կարդալ նրան շատ դժուար է.—անհամ, ձանձրացուցիչ շատախօսութիւնների և անվերջ կրկնութիւնների մի քառ է դա: Բայց ինչ անակնկալութիւններ, ինչ գոհարներ ենք զբանում այդ կողիտ ու անտաշ ստեղծագործութեան մէջ: «Որոգայթը» ուղղակի մի պարծանք է մեր գրականութեան համար: Նա սահմանում է պետական, վարչական, օրէնսդրական կարգեր, որոնք պիտի մտցնուէին աղատուած Հայաստանի մէջ: Հերակիլ թագաւորի համար պատրաստուած դերը երեսում է գրքի հէնց առաջին երեսի վրայ, ուր կարդում ենք. «Ի թագաւորուպեան Յոգոստափայլ Տեառն Երկրորդի Հերակլիոսի ի Թիսլիա»:

Սկատել հայերին օտարների ծառայութիւնից բաւական չէր: Պէտք էր որ անկախ Հայաստանը ապրէր իբրև քաղաքական ազատ մարմին, պէտք էր որ իւրաքանչիւր հայ այլ ես ենթարկուած չը լինէր ասիական բռնակալութեան կամայականութիւններին, գառնար իր երկրի տէրը, նրա կառավարողն ու օրէնսդիրը: Հաւասարութեան, աղատութեան բոլոր բարիքները վայելող հայ քաղաքացի—այս է այն միտքը, որ զեկագարել է Շահամիրեանցին իր զարմանալի զիրքը գրելիս: Եւ նա մի երկար, ձանձրալի, շատ տեղ անհասկանալի առաջարանի մէջ անթիւ անդամ ապացուցանում ու կրկնում է թէ Հայաստանի

փրկութիւնը և երջանկութիւնը պէտք է հիմնել երկու սիւների վրայ—Օրենք և Հանրապետութիւն:

Մենք, խօսելով արևմտեան Եւրօպայի մէջ ծաղկած Լուսաւորութեան Դարի մասին *), ցոյց տուինք, որ այդ հակայ առաջադիմութեան շարժման տեսակէտից մեծ յետադրմութիւն և դժբախտութիւն էր այն գրականութիւնը, որ այդ ժամանակ մշակուում էր հայ հոգեորականութեան ձեռքով։ Ասացինք որ ոչ անգլիական փիլիսոփիանների, ոչ Վոլտէրի, Մօնտեսքիէի մաքերը չէին թափանցում մեր խաւարի մէջ, այլ նոյն իսկ այդ երիտասարդական թարմութեան ոգեորիչ ժամանակներում էլ մենք շարունակում էինք կերակրուել միջնադարեան սիօլաստիկայի և ճկնաւորական բարեպահութեան գաղափարներով։ Յակոր Շահամիրեանցը մի փայլուն օրինակ է, որ ցոյց է տալիս թէ մենք նոր ժամանակների լոյսի մէջ այդքան դժբախտ ու զրկուած չէինք լինի, եթէ մեզանում գոյութիւն ունենար աշխարհական գրագէտ մի դասակարգ, որ ազատ լինէր վանական նախապաշարմունքներից ու հնամոլութիւնից, կրթուած լինէր եւրօպական գաղափարների վրայ և կարողանար գրականութիւն հիմնել ու պահպանել։ Այս անգրագէտ վաճառականը իր անտաշ, թոթով լեզուով **) մեղ ասում է որ ինքը իր ժամանակի գաղափարական շարժումների մի արձագանքն է։ Ո՞րտեղից և ինչպէս նա, մի ասիացի խեղճ մարդ, այդքան բարձր, համարձակ մտքեր սովորեց։

Երբ նա ապացուցանում է միահեծան միապետութեան վնասակարութիւնը, պահանջում է որ ամբողջ ժողովուրդը լինի իր երկրի օրէնսդիրը, մենք այդ տողերի ետևում տեսնում ենք Լոկիին։ Երբ նա սկսում է ճառել, որ բարեկարգութիւնը, մի պետութեան այդ հիմքն ու խարիսխը, հաստատ օրէնքն է, մենք ըմբռնում ենք ամբողջ գատողութիւններ, որոնք Մօնտեսքիէր «Օրէնքների Ողին» անմահ զրքի ազդեցութեան տակ են իազմուել։ Ինքը, Շահամիրեանցը, այդ առաջաբանի մէջ յիշում է եւրօպական ազգերը, անգլիական սահմանադրութիւնը, Հիւսիսացին Ամերիկան և յատկապէս Վաշինգտօնին եւրօպական ազգերի մասին նա ասում է։ թող չառարկեն հայերը թէ այդ կարգերը եթէ այդքան լաւ են, հապա ինչու բոլոր եւրօպացիները չեն ընդունում նրանց։ Եւրօպակամն բոլոր ազգերը, պատասխանում

*) Տ. գերեսում, զլ. Ա., IV.

**) Մենք չը զիտենք թէ ի՞նչ լեզուների հետ էր ծանօթ Շահամիրեանցը և ինչ չափով։ Այստեղ մենք նկատի ունենք միայն հայերէնացիութիւնը։

է նա, սրտանց համակրում են այդ կարգերին և շատ տեղ արդէն ժողովրդական ներկայացուցիչների ժողովներն են օրէնքներ հրատարակում։ Օրինակ է բնրում անգլիական մեծ ազգի սահմարդրութիւնը։ Անգլիայում թէ և կայ թաղաւոր, բայց իւրաքանչիւր անհատ վայելում է կատարեալ ազատութիւն՝ օրէնքների պաշտպանութեան տակ։

Սակայն Շահամիրեանցի վրայ ամենից մեծ աղդեցութիւն գործողը, ինչպէս ասել ենք, ամերիկական շարժումն էր։ «Այժմ լսում ենք մի նոր բորբոքման մասին, գրում է նա. —իմաստուն մէկը, Վաշինգտօն անունով, բրիտանական ազգից, ծնուած Ամերիկայում, հակառակուելով տէրերին և հաւաքելով Ամերիկայի ժողովրդից շատ զօրք, աշխատում է ազատութիւն գտնել և անկախ լինել. թէն գործի վախճանը գեռ չէ երևացել, բայց ամերիկայիների սրտի ցանկութիւնը բնական է մարդու բնութեան, որովհետև չը կայ երկրի երեսին մարդկային ստացուածների մէջ աւելի քաղցր բան, քան ազատութիւնը։ Սա այն ժամանակների լաւագոյն մարդկանց ասածների կրկնութիւնն է։ Այսպէս էին վերաբերում ամերիկացիներին Անգլիայի հոչակաւոր պետական մարդիկ, գրողներ. այսպիսի ձայներ էին լսում Եւրօպայի զանազան կողմերից։ Ամերիկական ժողովրդի դատը մարդկային սքսնչելի մեծագործութիւններից ամենսրբարձրն էր։ Հիւսիսային Ամերիկան ազստամբուում էր Անգլիայի զէմ՞ո՞ս այնքան այն պատճառով, որ դադթականութիւնները շատ էին ճնշուած, շատ էին ինքնուրոյնութիւնից ու ինքնավարական ազատութիւններից զրկուած, — այդ կողմից շատ երկիրներ կարող էին նախանձել նրան, — այլ գլխաւորապէս այն պատճառով որ ազատութեան և անկախութեան ողին հասել էր զարգացման բարձր աստիճանին և գործադրութիւնն էր պահանջում։ «Անկախութիւն ձեռք բերելու մէջ Ամերիկայում գրիչը պակաս կարեոր ծառայութիւններ չը մատուցեց քան սուրը», ասում է ամերիկական յեղափոխութեան պատմագիրներից մէկը։ Այն ժամանակ, երբ Շահամիրեանցը գրում էր իր գիրքը, գեռ չէր սկսուել անգլօ-ամերիկական պատերազմը, որի մէջ այնքան պիտի փառաւորուէր մեծ Վաշինգտօնը. բայց գըրիչը արդէն հասունացրել և միանգամայն անխուսափելի էր դարձրել այդ ազատարար պատերազմը։ Տարիներից ի վեր, սկսած այն ժամանակից, երբ ծագեցին առաջին անհամաձայնութիւնները գաղթականութիւնների և Անգլիայի մէջ, ամերիկական լրագիրները պատրաստում էին մտքերը, ներշնչելով նըրանց վստահութիւն, քաջութիւն. հրատարակուեցան մի շարք բրօշիւներ, որոնցից մի քանիսը պատմական հոչակ են ստա-

ցել և ահագին տպաւորութիւն էին թողնում ոչ միայն ամեն ըիկացիների մէջ, այլ և Անդլիայում: Աղատութեան և օրինականութեան նուիրուած այդ ներբողները մի կրակոտ լեզուով ազնիւ կրքեր էին յարուցանում, առաջացնում էին մտքերի մի ահագին յեղափոխութիւն: Եւ աղատ Ամերիկայի հայր Վաշինգտոնի կողքին պատմութիւնը թոյլ է տալիս արժանաւորապէս կանգնել Սամուել Ադամսին, որ գործում էր գրչով, միացնում էր ամերիկական նահանգները մի նուիրական դրօշակի տակ:

Գաղափարական, վեհ, եռանդուն ժամանակներ էին: Հեշտ էր այդպիսի ժամանակներում որ նոյն իսկ մեզ պէս մի խեղճ ազգի միջից գուրս գային Շահամիրեանցներ:—պէտք էր միայն ուշագրութեամբ ականջ դնել առաջաւոր հոսանքներին: Ինքը, Անդլիան, աղատութեան այդ սքանչելի հայրենիքը, որքան մեծ օրինակներ էր տալիս: Վօլտէրին անկեղծ հիացմունք պատճառած, նրան կրթած, աղատութեան զինուոր դարձրած երկիրը թէն սաստիկ գրգռուած էր Ամերիկայի իր գաղթականութիւնների դէմ, բայց այնտեղ չէին պակասում պետական և զրական մեծ մարդիկ, որոնք պաշտպանում էին աղատութեան անունով ոտքի կանգնած ամերիկացիներին, չէին քաշւում բայցարձակ անելու իրանց հայրենակիցներին, իրանց կառավարութեան, թէ նրանք անարդար են, թէ նրանք ճնշում, սպանում են աղատութիւնը: Այդ հոյակապ անձնաւորութիւններից էին Ռւիլիամ Փիտու և Բօրկ: «Ես շատ ուրախ եմ, որ Ամերիկան զիմադրում է, —ասաց Փիտու իր մի ճառի մէջ:— երեք միլիոն մարդիկ, որոնք ընդունակ կը լինէին այնքան խլացնել իրանց մէջ աղատութեան զգացմունքը, որ յօժարակամ ստրկութեան ենթարկուէին, կարող կը լինէին մի լաւ գործիք զառնալ մնացած անդլիացիներին էլ ստրկացնելու համար... Ամերիկայի ներկայ ապստամբութեան ոգին այն իսկ ոգին է, որ մեղանում հաստատեց մեր աղատութեան էական, հիմնական և մեծ սկզբունքը, որ սահմանում է թէ Անդլիայի հպատակներից ոչ մէկը չէ կարող ենթարկուել որեէ հարկի առանց նրա անձնական համաձայնութեան: Այս փառաւոր ոգին Ամերիկայում ոգեսրել է երեք միլիոն մարդկանց, որոնք նախապատիւ են համարում աղքատ ու աղատ լինել, քան դժոնուել ամօժալի հարստութեան և ոսկեզօծած շղթաների մէջ: պաշտպանելով իրանց իրաւունքները, նրանք կը մեռնեն իրեւ մարդիկ, այն էլ իրեւ աղատ մարդիկ: Իրեւ անդլիացի ծագմամբ և սկզբունքներով, ես ընդունում եմ որ ամերիկացիները ունեն բարձրագոյն և անկողոստելի իրաւունք իրանց սեփականութեան վրայ, իսկ այս իրաւունքի տեսակէտից արդարացի է որ նրանք պաշտպանեն իրանց մինչև

վերջին ծայրայեղութիւնը» *): Պէտք է յիշատակել միւս ճառախօսներին, գրողներին. պէտք է աւելացնել, որ նոյն այս եռուն ժամանակներում լոյս տեսան իւնիուսի հոչակաւոր «Նամակները», որոնք պաշտպանում էին քաղաքացիական ազատութիւնը և որոնցից մէկը ուղղած էր նոյն իսկ անդիւական թագաւորին և ցոյց էր տալիս թէ նրա, թագաւորի, ամբողջ դժբախտութիւնն այն է, որ նա երբէք չէ լսել ճշմարտութեան լեզուն Ամեն տեղ կատաղի, տաղանդաւոր պաշտպանութիւն մի և նոյն վեհ գաղափարների—ազատութեան, մարդկային իրաւունքների: Հնդկաստանում նստած մեր խեղճ, բարի, հայրենասէր Շահամիրեանցը որքան առատ ու փայլուն լոյսերով էր սղողուած:

Բացի ժամանակակից այդքան հզօր գրդիչներից ու գործօններից, Շահամիրեանցին էր նայում և մի փառահնչ օրինակ խոր հսութեան միջից: Դա հանրապետական Հոօմն էր: Արդէն Մօնտեպիէն, ինչպէս իր տեղում յիշեցինք, մի աշխատութեան մէջ քննել էր հոօմէտական պետութեան զարգացման և անկման պատճառները և ցոյց էր տուել որ հանրապետութիւնն էր Հոօմի փառքի և ոյժի զլխաւոր աղբիւրը. երբ ազատ քաղաքացիների մէջ թուլացան հանրապետական զգացմունքները, պետութիւնն էլ սկսեց փչանալ, զարգացնել իր մէջ այնպիսի արտաներ, որոնք պիտի հարթէին նրա անկման ձանապարհը: Շահամիրեանցը կրկնում է նոյն այս միաքը. նա էլ նոյն կերպով է պատճառարանում Հոօմի քայլքայումը: Ո՞րպիսի ոգեսորութեամբ է նա վերաբերում այնպիսի մի հանրապետական գործիչին, ինչպէս էր, օրինակ, կինկիննատոս, որ պետութեան առաջին մարդ լինելուց յնառոյ քաշում է զիւլը և սկսում է հողը վարել իրեւ մի հասարակ մշակ: Շահամիրեանցը շատ ցանկալի է համարում որ Հոօմի պատմութիւնը հայերէն թարգմանուի և մաղթում է որ այդ հոչակաւոր հանրապետութեան ոգին իջնէ հայերի վրայ, տարածուի նրանց մէջ, բայց, ի հարկէ, հեթանոսական կրօնից:

Եւ ահա այս բոլոր առաջնորդների զեկավարութեամբ մեր հեղինակը գալիս է երկար ու բարակ բացատրելու թէ Հայաստանը միապետութիւն չը պիտի լինի: Սյդպէս է թելազրում մեր պատմական անցեալը, այդպէս է ցոյց տալիս և բնական օրէնքը: Հայաստանի պատմութեան նա մօտիկ ծանօթ չէ, լաւ ուսումնասիրել է, ինչպէս տեսանք, միայն Մովսէս Խորենացուն Բայց այս պատմագրի լուսաբանած շրջանն էլ բաւական է որ Շահամիրեանցը համոզուի, թէ Հայաստանի դժբախտութեան

*) Տեհ—«Իстор. անգ. լիտ.», տ. II, եր. 194.

պատճառը միապետութիւնն էր։ Մի մարդ, ասում է նա, կանգնում էր պետութեան գլուխ, անում էր ինչ ուղում էր, իսկ արածները մեծ մասամբ վեասակար էին, որովհետև նա չունէր խորհրդականներ ժողովրդի կողմից։ Փոյութիւն չունէին հաստատուն օրէնքներ, որոնց հպատակուէին ամենը. և սա մի մեծ աղջտ էր մեր աշխարհի համար. Հայաստանը կործանուեց այն պատճառով, որ արդար ու իմաստուն օրէնքների մասին հասկացողութիւն չունէր։ Տիրում էր բարբարոսական միապետութիւն, և գլխաւոր կառավարողը, իր քմահաճութիւններին ու կամայականութիւններին թողնուած մի բանապետ, գործում էր մեծամեծ սխաններ, որոնցից վնասուողը ժողովուրդն էր։ Մեր շատթագաւորներ և իշխողներ «ամբարիչտ ու անիրաւ էին և վարում էին իրանց իշխանութիւնը գոռոզութեամբ և ինքնահաւանութեամբ, զրկելով, կողոպտելով, լկելով կամ անասնական բնութեամբ անցկացնելով իրանց կեանքը, մինչև որ կորան իրանք և կորցրին մեր պատիւը և հայոց սերունդը մատնեցին գերութեան, իսկ մնր աշխարհը ուրիշների ժառանգութիւն զարձրին։ Հայերի անկարգութիւնը նրանց անկման, ստորացման և անասելի թշուառութեան պատճառ դարձաւ։ Զէ եղել և չէ կարող լինել արեգակի տակ ոչ մի բան, որ չունենայ օրէնք. ամեն մի գործ աւերւում, ոչնչանում է, երբ հակառակ է օրէնքին։

Այս մտածութիւնները արդարացի ևն մեծ մասամբ Հայոց երկիրը իր քաղաքական անկախութեան միջոցին մի ասիական բռնապետութիւն էր։ Շահամիրեանցը չէր սխալում. թէն միայն Մովսէս Խորենացին էր նրա միակ աղբեւրը, բայց յայտնի է, որ ոչ միայն Արշակունիների, այլ և Բագրատունիների ժամանակ գրաւոր հաստատուն օրէնքներ գոյութիւն չունէին մեզանում։ Եւ այսպէս շարունակուեց մինչև XIII դարի սկիզբը, երբ մի հայ գարզապետ հաւաքեց և կարգաւորեց մի գատաստանագիրք, որ իր բազմաթիւ պակասութիւններով հանդերձ՝ հայերէն միակ իրաւաբանական գիրքն է մնր ամբողջ պատմութեան մէջ *): Բռնապետութիւնը հէնց այն պետական կազմակերպութիւնն է, որ օրէնքներ չունի։ Տեսնէնք թէ ինչպէս է բնորոշում Մօնտեարիէն բռնապետութիւնը. «Բռնապետական իշխանութեան բնութիւնն այն է, որ մի մարդ է այդ իշխանութեան տէրը և այդ մի մարդը այդ իշխանութեան գործադրութիւնը յանձնում է նոյնպէս մէկին։ Մի մարդ, որին բոլոր հինգ զգայարանը

*.) Վ. վ. Բաստամեան—«Մխիթարակ Գոշի Պատաստանագիրք», Վարշավապատ, 1880, առաջաբան, եր. 13—52։

ները միշտ ասում են թէ նա ամեն ինչ է, իսկ մնացած մարդիկ ոչինչ են, բնականաբար ծոյլ է, տգէտ, վաւաշոտ։ Ուսափ նա ինքը չէ գործերով պարապում։ Բայց եթէ նա այդ գործերը յանձնէ մի քանի մարդկանց, սրանց մէջ կը սկսուեն երկապառակութիւններ, ինտրիգներ, որովհետև իւրաքանչիւրը կը ձգտէ ստրուկների մէջ առաջինը լինելու պատիւն ստանալ։ Բռնապետութեան սկզբունքը երկիւղն է։ Այստեղ արդէն չէ կարելի մեղմ լինել. «Եթէ բռնակալական պետութեան մէջ թագաւորը գէթ մի վայրկեան ցած գցէ սպառնացող ձեռքը, եթէ նա չը կարողանայ իսկոյն և եթ ոչնչացնել այն մարդկանց, որոնք առաջին տեղերն են գրաւում պետութեան մէջ,— ամեն ինչ կորած է, որովհետև երկիւղը—միակ շարժող սկզբունքը այս տեսակ կառավարութեան մէջ—անյայտայել է և ժողովուրդը այլ ես չունի հովանաւոր» *), Շահ-Հիւսէինը, ասում է Մօնտեսպիէ, դեռ Միքայէլի արշաւանքից առաջ էր զդում որ իր պետութիւնը պիտի քանդուի, որովհետև ինքը արիւն քիչ էր թափեր։

Բռնապետութիւնը, ուրեմն, չէ կարող թոյլ լինել, այլապէս նա չէ էլ կարող գոյութիւն պահպանել։ Սա իսկապէս մի սարսափելի գրութիւն է։ Իսկ Հայաստանը միշտ թոյլ էր, հետեարար և ամենադժբախտը բռնապետութիւնների մէջ։ Այս հանգամանքն էր, որ հասկանալի դառնալով Շահամիրեանցին, հարկադրում էր նրան սմնգել թէ Հայաստանի կործանողը միապետութիւնն էր։ Բայց այստեղ մեր հեղինակին անծանօթ է մնացել մի ուրիշ, շատ կարենոր հարց. կարող էր Հայաստանը մի անկարգ բռնապետութիւն չը լինել։ Եթէ Շահամիրեանցը աւելի խոր և բազմակողմանի ուսումնասիրութիւն կատարելու հնարաւորութիւնն ունենար, նա կը տեսնէր որ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել Ասիայի այն անկիւնում, ուր հայերն էին ապրում։ Մի ազգ, որ տասնեակ դարերի ընթացքում չէր կարողացել հասկանալ գրաւոր, հաստատուն օրէնքների անհրաժեշտութիւնը, մի ազգ, որի մէջ չափազանց զարգացած էր աւատական սիստէմը, որ երբէք չը մտածեց այդ սիստէմը վերացնելու և ընդհանուր համայնական շահեր ու գաղափարներ իւրացնելու մասին, կարող էր այլ ճակատագիր ունենալ, կարող էր ստեղծել հանրապետութիւն կամ օրէնքների վրայ յենուած միապետութիւն։—Չէր կարող կառավարութիւնները ստեղծում են ժողովուրդները։ Իսկ ժողովրդից կարելի է պահանջել աւելի կատարեալ կառավարչական ձև միայն այն դէպում, երբ նա հասել է կուլտուրական զարգացման մի յայտնի աստիճանին։

*). «Օ լուխէ Զակոնօվե», Ընե., 1900, էր. 31.

Բնական օրէնքների տեսակէտից էլ Շահամիրեանցը անարդար և անընական էր գտնում միապետութիւնը։ Մի անհատ չէ կարող այնքան կատարեալ լինել, պակասութիւններից ու արատներից այնքան ազատ, որ նրան կարելի լինի յանձնել անսահման իշխանութիւն մի ամրող ազգի վրայ։ Թագաւորել կարող է միայն Աստուած. մահկանացու մարդը չունի նրա անսփառականութիւնը, նրա գերազոյն յատկութիւնները, մարդը երբեմն բարկանում է, երբեմն ծուլանում, երբեմն ուրախ է, երբեմն տիտուր, երբեմն զայրացկոտ, երբեմն գթած։ Ուրեմն «ըստի տանձը մեր սանձը այնպիսի ինքնակալի ձեռքը, որ ճմէ մեր կզակը իր կամքի և հաճոյքի համաձայն»։ Մարդիկ ծնւում են ազատ և համահաւասար. և նրանք, մեծից մինչև փոքրը, պիտի կազմնն մի հօտ, որի կառավարողը պիտի լինի ոչ թէ այս կամ այն անհատի կամքը, քմահաճութիւնը, այլ մի և ընդհանուր Օրէնքը։ Երկիխը, բոնապետութեան այս գլխաւոր և միտկ հիմքը, չէ կարող արգարացնել մարդուն, որ կամաւ հրաժարում է ազատութիւնից և ենթարկում բոնակալի ձեռքին։ «Դու մահուան երկիւղի պատճառով թուլանում ես քո ազատութիւնից և հնազանդուում ես անօրէններին. բայց ահա մի ամենամանը կարիճ կամ օծ և կամ մի անմարս սառն կերակուր կարող է այդպիսի մահ բերել քո բնական կեանքին։ Ասել է թէ ամեն թունաւոր կենդանի կարող է քո թագաւորը լինել Ոչ։ Մեզ հարկաւոր է մեռնել ազատ և պատրաստել մեզ համար յաւիտենական կեանք։ Անասուններն էլ չունեն իրանց մէջ մէկը, որ ինքնակալ և ինքնակամ հրամայող լինէր նրանց վրայ, ուրեմն ողքան ամօթ է մեր բանականութեան համար լինել հնազանդ մի մարդու, որ մեր նմանութիւնն ու բնութիւնն ունի, որ ինքնակամ հրամայող է գառնում մեզ վրայ։ Ոչ, կառավարողը ինքը, ժողովուրդը պիտի լինի. թաղաւորը Օրէնքը պիտի լինի։ Մարդու և Աստուծու մէջ կարող է միայն մի ծայրագոյն իշխանութիւն լինել—Օրէնքը, որ ամեն մէկին տալիս է իր երկիրը կառավարելու, նրա ճակատազիրը անօրինելու իրաւունք։

Բայց ինչպէս կարող են միլիօնաւոր մարդիկ կառավարել երկիրը։ Հարկաւոր չէ որ այդ միլիօնները հաւաքուեն միասին, վճռեն իրանց անելիքները։ Մի կալում դարսուած է մեծ քանակութեամբ ցորեն. այդ ցորենի արժանաւորութիւնն իմանալու համար բաւական է նրանից վերցնել մի բուռ միայն։ Այդպէս էլ ժողովուրդը. բաւական է մեր երկրում գտնուող իւրաքանչիւր տասը հազար տանից երկու-երկու ներկայացուցիչ ընտրել. դրանք կը դառնան իրանց ընտրող բաղմութեան փո-

խանորդ և կը կատարեն նրա բոլոր գործերը։ Փոխանորդները կը ժողովուեն միասին, կը մշակեն օրէնքներ, հարկաւոր է իշխանութիւն, որ գործադրէ օրէնքները, և այդ իշխանութիւնը կ'ընտրուի փոխանորդների միջից մի յայտնի ժամանակի իրանց աստիճանի համեմատ այդ պաշտօնեաները վայելում են պատիւներ, բայց երբէք իշխանաւորներ չեն, այլ ժողովրդի սպասաւորներ, նրան ծառայողներ, ինչպէս Աւետարանում ասուած է, թէ ով ձեր մէջ մեծ է, նա պիտի լինի ամենքի սպասաւոր։

Այսպէս, ուրեմն, Շահամիրեանցը առաջարկում է Հայաստանի համար հանրապետական կառավարութիւն, հիմնուած ուամրավարական սկզբունքների վրայ։ Հանրապետական կարգերի հետ ծանօթացնելը բաւական չէ համարել նա. իր այդ մտքերը բազմաթիւ կրկնութիւններով ապացուցանելուց յետոյ դիմում է գործնական միջոցին—տալիս է օրէնքների մի ծրագիր, որ զրբի ամենահետաքրքրական կողմն է ներկայացնում. այդտեղ կայ թէ հայկական հանրապետութեան սահմանադրութիւնը, թէ քրէական և քաղաքացիական օրէնքների մի ժողովածու եւ Շահամիրեանցը հաւատում է որ այդ կարգերը կարող են հեշտութեամբ հաստատուել Հայաստանի հողի վրայ։ Հարկաւոր է որ ժողովրդի մէջ տեղի ունենայ մի յայտնի պատրաստութիւն՝ այդ օտար ու նոր սկզբունքներն ըմբռնելու և գործադրելու համար։ Շահամիրեանցը դանում է որ բաւական կը լինի և այն, ևթէ հայերը հասկանան իրանց սպարտաւորութիւնները, որոնք ձեակերպուած են այսպէս. 1) Հայաստանի գլխաւորները (զետապետ) պէտք է հրամայեն Հայաստանում ապրող բոլոր մարդկանց, արու թէ էզ, սովորեն զրել ու կարգալ հայերէն. 2) Հայ հայրերը իրանց որդիներին պիտի նախ հայերէն զրագիտութիւն սովորեցնեն, ապա զինուորութիւն, ինչպէս պիտի սովորեցնեն նաև հնագանդուել Օրէնքներին. 3) Հայ տիկինները պէտք է հաւանացնեն իրանց և իրանց աղջիկների սրտերը ամուսին ընտրել քաջ մարդկանցից ու յաղթող զինուորներից և ամաչեցնեն իրանց ամուսիններին, երբ սրանք կը մտնեն ուրիշ աղդերի ծառայութեան մէջ։ «Այսքան օգնութիւն ձեր կողմից բաւական կը լինի որ հայոց ազգը փայլէ երջանկութեամբ Հայաստան աշխարհի երեսին»։

Մենք կը տեսնենք որ «այդքան օգնութիւնը» բաւական չէր, կը տեսնենք որ Շահամիրեանցի գործը ամբողջովին մի ուտօպիտ էր։ Բայց առայժմ գեռ դիմենք նրա խմբագրած օրէնքներին։ «Որոգայթ Փառաց»-ը առհասարակ այնքան նշանաւոր դիրք է, որ արժէր նրան մի առածին մանրամասն ուսումնասիրու-

թեան առարկայ գարձնել, ցոյց տալ այն աղբիւրները, որոնք զեկավարել են Շահամիրեանցին մի այդպիսի գործ պատրաստելիս: Իսկ թէ մեղանում շատ հեշտերից ու սովորականներից չէր այդ գործը, կարելի է իմանալ հէնց նրանից, որ իրաւաբանութիւնը հայոց գրականութեան մէջ համարեա անյայտ մնացած մի ճիւղ է և բացի Մխիթար Գօշի «Դատաստանագըրքից» մենք հազիւ թէ կարողանանք գտնել մի այլ գիրք, որի առարկան լինէին օրէնքները: Շահամիրեանցի օրէնսդիրքը Մխիթար Գօշի հետ համեմատած այն առաւելութիւնն ունի, որ միայն քրէական ու քաղաքացիական իրաւունքը չէ չօշափում, այլ և պետական, հասարակական իրաւունքը: Սակայն մենք այստեղ չենք կարող մանրակրկիտ կերպով քննել «Որոգայթ Փառացը», մեր աշխատութեան ծրագիրը ինքն ըստ ինքնեան հասկանալի է դարձնում որ այստեղ մենք կարող ինք միայն Շահամիրեանցի օրէնքների էութիւնը դնել:

Շահամիրեանցը չէ կարողացել մի յայտնի սիստէմով դաշտաւորել իր օրէնքները: Ընդամենը 521 յօդուած է նա խմբագրել և դրանք խառնուած են վայրիվերոյ, երեսում է որ հեղինակը ինչ որ գտել է կամ ինչ որ յիշել է, իսկոյն գրել է, չը մտածելով կարգի և հետևողականութեան մասին: Խառն է ոչ միայն դասաւորութիւնը, խառն են և հայեացքները: Խիստ ազատամիտ առաջադիմական որոշումների հետ մենք տեսնում ենք յօդուածներ, որոնք շատ միամիտ են, յետագիրմական, նոյն իսկ տափական: Յանկարծ, հանրապետական խիստ լայն սկզբունքներ արծարծող յօդուածների շարքում ձեր աչքին է ընկնում, օրինակ, մի յատուկ յօդուած, որ արգելում է բակլա ցանել Հայաստանում, երեխ այդ բոյսի յատկութիւնը ի նկատի առնելով: Այս խառնաշփոթութեան մէջ մենք կը փորձենք որոնել հետևեալ կէտերը. 1) Պետական կազմակերպութիւն. 2) Հասարակական կարգեր. 3) Դատաստանական օրէնքներ:

I. Պետական կազմակերպութիւն: Կասպիական ծովից մինչև Կիլիկայի արևմտեան սահմանները և Տաք նահանգից մինչև Տաւրոս լեռները Հայաստան է և պիտի յաւիտեան մնայ հայերի ժառանգութիւն, առանց մի քայլ տեղ անգամ պակասեցնելու: Պետութիւնը հիմնւում է ազգայնամոլական սկզբունքների վրայ. Խղճի և անձնաւորութեան կատարեալ ազատութիւն է, բայց իւրաքանչիւր մարդ, որ ապրում է Հայաստանում, պիտի իրան պատիւ համարէ հայ կոչուելը և պիտի սովորէ հայերէն: Բոլոր պետական և հասարակական պաշտօնները տրուում են միմիայն լուսաւորչական եկեղեցուն պատկանող հայերին, թէև միւս կրօնները ազատութիւն են վայելում: Պե-

տութեան ամբողջ մէքենան հիմնուած է ընտրողական սկզբունքի վրայ. ձայնատուութեան իրաւունքը չէ սահմանափակուած, ընդհանուր է: Իւրաքանչիւր տամն երկու հազար տուն ընտրում է երկու փոխանորդ կամ, խօսելով ներկայի լեզուով, պատգամաւոր: Պատգամաւորները իրանց ընտրողներից ստանում են ոռճիկ: Նրանցից է կազմւում պիտական ամբողջ պաշտօնէութիւնը—գործադիր, գարչական, դատաստանական մարմինները, նոյն իսկ զօրքի գլխաւոր հրամանատարները: Պատգամաւորները ընտրում են երկը տարով. այդ ժամանակն է որոշում և բոլոր ընտրուսի պաշտօնէութիւնների համար, իսկ իւրաքանչիւր երկը տարուց յետոյ լիազօրութիւնները վերանորոգուում են ընտրութեամբ. վերընտրուել թուլարւում է ամենքին, թէ պատգամաւորներին, թէ նրանցից ընտրուած պաշտօնեաննեաններին:

Հանրապետութեան միջուկը, ի հարկէ, այդ պատգամաւորների ժողովն է, որ մշտիւմ է օրէնքներ երկրի համար և միակ բարձրագոյն հիմնարկութիւնն է: Հարցերը այդտեղ վճռուում են վիճաբանութիւններով և ձայների բացարձակ առաւելութեամբ: Պատգամաւորները իրանց միջից ընտրում են գործադիր իշխանութեան գլուխի, որ կոչում է նախարար. դա հանրապետութեան նախագահն է: Ապա զալիս են միւս պաշտօնեանները նախարարը ունի առանձին ծածուկ խորհուրդ, բաղկացած ն հոգուց: Մինխատրութիւններ այն ձեռով, ինչպէս գոյութիւն ունեն այժմ, չը կան: Դրանց փոխարէն տեսնում ենք այսպիսի անուններով հիմնարկութիւններ. լրտեսապետութիւն, զինապետութիւն, վատողապետութիւն, կառապետութիւն, վրանապետութիւն, կերակրապետութիւն, գանձապետութիւն, երկրաշափութիւն, պետ տկարների և աղքատների: Առաջին հինգ հիմնարկութիւնները զինուորական են. կերակրապետութիւնը իր տեսակի երկրագործական մինխատրութիւն է, գանձապետութիւնը—փինանսների: Հետաքրքրական է կերակրապետութիւնը: Նա պիտի հսկէ հողագործութեան վրայ, որպէս զի անմշակ հողեր չը մնան. և եթէ երկրագործները միջոց չունեն վարելու և հնձելու, պետութիւնը պիտի միջոցներ տայ այդպիսիններին: Ժողովրդի կերակրի գլխաւոր հոգսը այդ պաշտօնէութեան վրայ է. նա պիտի երեք տարուայ պաշար պահէ հասարակական շտեմարաններում, ամեն տարի հաւաքելով հացահատիկներ: Բոլոր այս հիմնարկութիւնները կառավարուում են երեք-երեք մարդկանց ձեռքով, որոնք յատկապէս ընտրուում են պատգամաւորներից: Ընտրուում են բացի դրանցից և քաղաքներ կառավարովներ, զօրքի սպարապետներ, հազարակական հարկերի վրայ հսկող

պաշտօնեաներ, ինչպէս նաև 60 դատաւորներ բարձրագոյն կամ մայր դատարանի համար: Կայ և մի պատուաւոր պաշտօն, որ կոչւում է «Հայր Հայաստանեայց», սա ընտրուում է երեք օրուայ ժամանակով և պաշտօն ունի երդուեցնելու բոլոր պաշտօնեաներին: Իւրաքանչիւր պաշտօնեայի ընտրութեան մասին կազմուած են պաշտօնական թղթեր կամ նամակներ, որոնց օրինակները ամենայն մանրամասնութիւններով դրել է Շահամիրեանցը իր գրքի մէջ:

Բոլոր պաշտօնեաները պատասխանատու անձնաւորութիւններ են ազգի առաջ. պաշտօնը չէ արգելում որ զանցառու կամ կաշառակեր պաշտօնեան, սկսած նախարարից, դատի ենթարկուի և հեռացուի իր տեղից: Նախարարի պաշտօնի հետ կապուած են հետեւեալ պարտաւորութիւններն ու իրաւունքը. Խստութեամբ պահպանել օրէնքները, լինել հայ ազգի ներկայացուցիչ և բերան, վարել արտաքին քաղաքականութիւնը՝ պատերազմ հրատարակելու և հաշտութիւն կնքելու իրաւունքով: Նախարարը զօրքերի ծայրագոյն հրամանատարն է, իրաւունք ունի ներումն չնորհել մահապարտներին, բայց տարին եօթն անգամից ոչ աւել: Նա հայերի առաջին պաշտօնատարն է, մի և նոյն ժամանակ և հաւատարիմ սպասաւորը:

Մի առանձին յօդուածով նախարարութիւնը դարձնուում է ժառանգական: Դա կարող է լինել այն դէպքում, երբ Հայատանուում կը յայտնուեն նախկին թագաւորական տների ժառանգներ, մարդիկ, որոնք կ'ապացուցանեն թէ իրանք սերուած են կամ Հայկից կամ Վաղարշակից և կամ Բագրատից: Այդպիսիները պէտք է լինեն հայ-լուսաւորչական և նախարարութիւն են անում մինչև մահ, իսկ մահից յետոյ նոյն պաշտօնը ժառանգում են նրանց որդիները: Այսպիսով Շահամիրեանցը մի ձեռքով քանդուում է այն, ինչ լինել էր միւս ձեռքով: Պետութեան առաջին պաշտօնեային դարձնելով ժառանգական, նա իսկապէս հիմքից խախտում էր իր հանրապետութիւնը և տեղը դնում էր սահմանադրական միապետութիւն: Եւ ինչու էր նա այդպէս անում: Հայկի ու Վաղարշակի ժառանգներին նա հազիւ թէ սպասելիս լինէր. այնքան հեռաւոր հնութիւնից չէր կարող սերունդ պահուել: Ուրիշ բան է Բագրատը. մենք արդէն տեսանք որ արա սերունդը դեռ շարունակուում էր—վրաց թագաւորը: Յատկապէս Հերակլի համար էր զրուած այդ տարօրինակ յօդուածը. Շահամիրեանցը կամենում էր այս կերպով վարձահատուց լինել Հերակլին, մատուցանելով նրան ժառանգական նախագահութեան կամ, որ համարեա մինոյնն էր, սահմա-

նադրական միապետի պաշտօնը, նրա ազատած Հայաստանում Մինչդեռ ընտրուած նախարարը միայն ինքն էր ոռմիկ ստանում, ժառանգական նախարարի որդիներին էլ, արու թէ էգ, յատկացւում էին ոռմիկներ:

Պետութեան գլխաւոր նեցուկը զօրքն է։ Հայոց զօրքերի թիւը Շահամիրեանցը որոշում է 90 հազար, զրանից 21 հազարը ձիաւոր, 69 հազարը—հետևակ, Բանակը բաժանւում էր երեք սպարապետութեան, որոնք կոչւում են կարմիր, կապոյտ և գեղին, Այդ գոյները գրօշակների գոյներն են. և զրա համեմատ էլ սպարապետների և զինուորների գդակն ու կապան պիտի լինեն կամ կարմիր, կամ կապոյտ, կամ զեղին։ Շահամիրեանցը առանձին ուշադրութեամբ է վերաբերում զօրքին և աշխատում է իր օրէկների մէջ նախատեսել զինուորական ծառայութեան բոլոր մանրամասնութիւնները, նոյն իսկ այնպիսիները, որոնք հասկանալի են ինքն ըստ ինքնեան։ Սյսպէս, մի առանձին յօդուած ասում է. «Գիշերապահ զինուորը եթէ քնէ իր ծառայութիւնը կատարելիս, պիտի պատժուի»։ Կամ թէ պատերազմի ժամանակ իւրաքանչիւր զօրաբաժին, նախ քան քնելը, պիտի պահապաններ նշանակէ, որպէս զի անակնկալ յարձակումն չը լինի։ Ինչպէս տեսանք, զօրքի բոլոր հրամանատարները, նախարարից սկսած մինչև հազարապետները, ընարուիլ են. առաջին անգամից զարմանալի է թւում, որ հրամանատարներ ընտրողը ինքը, զօրքը չէ, այլ ժողովրդի պատգամաւորները։ Բայց պէտք է իմանալ որ Շահամիրեանցի կանոններով իւրաքանչիւր հայ զինուոր է. 12 տարեկան հասակից նա պիտի զինավարժութիւն և զինուորական ծառայութիւն սովորէ։ Դործող բանակի մէջ երիտասարդները մտնում են վիճակահանութեամբ. 100-ից 5-ը պիտի զինուոր գնան վիճակ հանելով և ծառայեն 7 տարի զօրքի մէջ։ Ընդհանուր զինուորագրութեան այս կանոնը շատ հետաքրքրական է այն ժամանակների համար եւրօպական շատ կարգերի ենք հանդիպում այդ զինուորական կազմակերպութեան մէջ։ Բայց և տեսնում ենք այնպիսի հին կարգ, որպիսին է պատերազմական աւարի բաժանումը։ Թըշնամուց խլած ամեն բան—ոսկի, արծաթ, ալիներ. ամեն տեսակ անապուններ, իւղ, ձէթ, զինի պէտք է վաճառել հրամանատարներին և զինուորներին. նախարարը ստանում է 5 տոկոս^{*}.

*.) Հետաքրքրուղների համար դնենք այստեղ հայոց նախարարի պաշտօնական համազգեստի նկարագրութիւնը. «Սև ուրար թիկնամիշջով նւրարի վրայ մի ոսկէտիպ առիման, Ակներից շինած մի ճառագայթ ձախ կրծքի վրայ, Այդ ճառագայթի մէջ «Ճառն նստուծոյ» դրօշակ խաչով՝

ծիաւոր զօրքը 16, իսկ հետեւեակը—34 տոկոս Պատերազմի ժամանակ ոչ մի զինուոր իրաւունք չունի նոյն իսկ մի ձու առնել բնակիչներից զօռով. ամեն բան պէտք է առնուի փողով:

Պետութեան եկամուտները գոյանում են հարկերից և տուրքերից: Գլխահարկ գոյութիւն չունի, որովհետեւ նա ստըրկութեան նշան է, մինչդեռ Հայաստանում ապրող իւրաքանչիւր մարդ միանդամայն ազատ է: Գլխահարկի փոխարէն ազգաբնակութիւնը տալիս է հարկ իր կերած կերակրից, հազած զգեստից և գործ ածած ազից: Ենթազրուում է Հայաստանի մէջ 24 միլիոն բնակիչ: Իւրաքանչիւր անհատ տարեկան տալիս է 40 դահեկան կերակրի համար, 10 դահեկան զգեստի և նոյնքան էլ ազի հարկ: Մնացած եկամուտները ստացւում են անուղղակի հարկերից. մաքս ներմուծուող ապրանքներից, առևտուրի, անշարժ կալուածքների և այլ տուրքեր: Ընդամենը այդպիսով ստացւում է 1320 միլիոն գահեկան կամ 66 միլիոն պարսկական թուման: Հետաքրքրական է հարկերի մի տեսակը: Մօնտեգրիէն ասում է որ իւրաքանչիւր հանրապետութեան թշնամին փափկակեցութիւնն է, զեղսութիւնը. այդ պատճառով էլ հոօմէական հանրապետութիւնը օրէնքներ էր հրատարակում աւելորդ ծախսարարութիւնների դէմ: Շահամիրեանցն էլ, երևի հէնց այդ հանգամանքի ազգեցութեան տակ, հարկերի է ենթարկում այն բոլորը առարկաները, որոնք անհրաժեշտ չեն սովորական, միջակ կեցութեան մէջ: Ով միջոց ունի հարուստ ու շքեղ ապրելու, նա պիտի տուրք տայ պետութեան՝ այդ շքեղութեան իրերից: Ահա ինչ յօդուածներ ենք գտնում: «Սաղրի կօշիկ հագնողն հատուցէ տարէն երկու զրամ արծաթ, կանայք ազատ»: «Զառ զօտիկ և զառ հաշիա զգենողն տարէն տասն դահեկան, կանայք ազատ»: Տուրք է վճարում զարդարուն սենեակում ապրողը, մետաքսէ գորգի վրայ նստողը, մի կանգունից աւելի մեծութեամբ հայելի պահողը, կառքեր ունեցողը, մարմարեայ աւաղան շինել տուրղը և այլն:

Այժմ նայենք ծախսերին: Պետական եկամուտների մեծագոյն մասը յատկացրած է բանակին. մնում են մի քանի թեթև գումարներ միայն ազգատներին խնամելու, որը մանուկներին ուսում տալու, դեղերի և բժիշկների համար: Հանրապետութիւնը սեփական նախաձեռնութիւն չունի երկրի կրթական-

Մի ոսկէ շղթայ պարանոցից կախուած և այդ շլթայի ծայրին մի ոսկէ ծիաւոր: Կերարկուն մի սե ու երկար փիլոն է և փիլոնի ներսը (աստառը) մկան մորթից. մէջքին կապած է սուր, իշխանական ցուալ ձեռքին. թագպատակ գլխի վրայ և խաչ՝ գագաթի վրայ:

կուլտուրական գործերի մէջ. ոչ ժողովրդական լուսաւորութեան, ոչ ճանապարհների հաղորդակցութեան, ոչ արհեստների և առևտրի զարգացման համար գումարներ չը կան նշանակուած։ Մինխստրութիւնների նմանութիւն ունեցող վերոյիշեալ հիմնարկութիւնները սեփական բլուջէ չունեն։ Օրինակ, մենք տեսանք թէ ինչ է կերակրապետութիւնը. այնքան կարիոր պարտաւորութիւնները ինչպէս պիտի կատարէ այդ մարմինը, քանի որ պետական գանձարանը նրան ոչինչ չէ տալիս, բայց միայն երեք հատ կերակրապետների ոռօնիկից։ Ընդհանուր առմամբ, պետական բոլոր ծախսերի գումարն է 1237 միլիոն դահեկան։

II. Հասարակական կարգեր։ Իւրաքանչիւր անհատ կատարելապէս ազատ է բարի կամ չար գործելու մէջ, ազատ է խօսելու, դատողութիւններ տալու մէջ։ Սակայն այս լայն ռամկավարական սկզբունքին սաստիկ հակասում է օրէնսդրի զասակարգային նախապաշարմունքը։ Հասարակական ժողովներից նա պահանջում է կարգ պահպանել ըստ գասակարգերի. տեղեր գրաւելլ կախուած է մարդու աստիճանից և դիրքից։ Նոյն իսկ եկեղեցում, ուր խորութիւն չը կայ «հրէայի և հեթանոսի» մէջ Շահամիրեանցը այսպէս է կանգնեցնում ազօթողներին. 1) նախարարը, 2) իշխանները, 3) զօրագլուխները, 4) զինուորները, 5) վաճառականները, 6) հողագործները և 7) արհեստաւորները։ Այսպէս և կանայք։ Մինչև անգամ մասնաւոր, ընտանիկան խնձոյքների մէջ էլ պահանջում է գործադրել նոյն կարգաւորութիւնը, յատկացնելով ամեն մէկին նստելու տեղ, նայած պատուին և աստիճանին։

Հասարակական հանրաշահ գործեր կատարողները, մանաւանդ շահաւետ արհեստներ երկրի մէջ մտցնողները սասանում են պետութիւնից պարզեներ։ Քաղաքների բարեկարգութիւնը առանձին հոգածութեան առարկայ է. փողոցները անուններ պիտի ունենան, իսկ տները՝ թուահամարներ։ Ուսումը պարտադիր է ամենքի համար, թէ արու և թէ էզ։ Բայց հասարակական դպրոցները թողնուած են ծնողներին։ Ամեն տեղ, սկսած առաջին քաղաքից մինչև յետին փոքրիկ գիւղը, պէտք է լինին երկու ուսուցիչներ։ մէկը տղաներին և աղջիկներին գրել կարդալ սովորեցնելու համար, իսկ միւսը տղաներին զինուորական կրթութիւն տալու համար.—ինչպէս զիտենք, իւրաքանչիւր արու, 12 տարեկան հասակից, պիտի զինուորական արհեստը սովորէ։ Միայն որբերն ու ապօրէն զաւակները գաստիարակւում են պետութեան հաշուով։ Տկարներին և աղքատներին խընամերն էլ պետական գործ է և զրա համար, ինչպէս տեսանք,

սահմանուած է յատուկ պաշտօնէութիւն, «Պետ տկարաց և ազքատաց» անունով։ Այդ պաշտօնէութեան պարտքն է մեծ քաղաքների մօտ կառուցանել ընդարձակ շինութիւններ, բոլոր չքաւոր տկարներին և վիրաւորներին խնամելու համար. հիմնը ուում են ազքատնոցներ. բժշկական օգնութիւնը պետական գանձարանի հաջուով է։ Բորոտներին պէտք է առանձնացնել և պահել սարերի վրայ, մինչև կ'առողջանան. ապա նրանք ազատ են գնալ և ապրել ուր կը կամնան։

Շահամիրեանցը շատ մեծ ուշագրութիւն է դարձնում մասնաւանդ հասարակական բարոյականութեան վրայ և սահմանում է կարգեր ու պատիժներ, որոնք իրանց խստութեամբ բարբարութեան են հասնում։ Այսպէս, ազատութեան և հանրապետական գաղափարների այդ ոգևորուած պաշտպանը նոյն իսկ հրապարակային ցոյցերի առարկայ է դարձնում կանանց հաւատարմութիւնը։ Ամեն մի կին, որ սրբութեամբ պահել է իր կուսութիւնը և ընծայել է նրան իր ամուսնուն, ունի պատիւ գաղտ գուրս գալ զրօննելու, մանել հանդէսների մէջ, սեղան նստել, պարել պատուաւոր տիկինների հետ։ Այդ պատիւներից զրկուում է այն կինը, որ կորցրել է կուսութիւնը մինչև պսակուելը, նոյն իսկ ևթէ կուսութիւն խախտողը եղել է այն տղամարդը, որ յետոյ նրա ամուսինն է դարձել։ Բնորոշ է մասնաւանդ հետեւեալ օրէնքը։ Եթէ զայեակը խաւնակուում է իր ինսամքին յանձնած արու երեխոյի հետ, նա պիտի ն շաբաթ բանա նստաէ. ամեն հինգշաբթի օր մերկացնուում են նրան, ման են ածում փողոցներում, վաթսուն անդամ մտրակ են խփում նրա փափուկ մսին. վեց շաբաթից յետոյ կտրտում են նրա գըլիի մազերը և խայտառակութեամբ արձակում։

Պէտք է նկատել որ Շահամիրեանցը յանկացել է կնոջ համար փոքր ի շատ է տանելի զիրք սաեղծել հասարակութեան մէջ։ Կանացք ման են գալիս բաց երեսով. նրանք իրանց ամուսինների օգնականներն են։ Անզաւակ կինը իր ամուսնու մահից յետոյ ստանում է նրա կազքի կէսը, իսկ զաւակ անեցողը—մի երրորդական մասը։ Ամուսնացած զինուորը իր ոռձկի կէսը պիտի տայ իր կնոջը. պատերազմի ժամանակ կնոջը չէ կարելի գերի տանել։ Ամուսնանալուց առաջ հարսնայուն ու փեսան պիտի կնքեն իրանց մէջ քաղաքացիուկան գաշնազրութիւն. այդ թղթով փեսան պարտաւորուում է իր ունեցածից մի մաս հանել իր կնոջը և այդ մասը անձեռնմխելի պիտի մնայ ամեն տեսակ դէպքերում, եթէ ամուսինը նոյն իսկ վեասուի, ձախորդութեան մէջ ընկնէ։ Կնոջ սենեակը նուիրական է. ոչ ոք չէ կարող մտնել այնտեղ, բացի միայն այն դէպքից, երբ գատաստանական վճռով

պէտք է ձերբակալել քրէական յանցապարտ նրա ամուսնուն։ Կանաքը ազատւում են և մարմնական պատժից, բացի երկու դէպքից.—առաջինը, երբ դատաստանական վճռով պէտք է ծեծել յանցաւոր կնոջը և երկրորդ, երբ այդպէս է պահանջում մանկավարժութիւնը։ Շահամիրեանցը այս խայտառակ գործերը աշխատում է մեղմացնել շատ միամիտ կերպով։ Երբ դատաստանի վճռուը պէտք է գործադրել ամուսնացած կնոջ վրայ, այդ դէպքում ամուսինը պիտի մտրակով 12 հարուած տայ նրա փափուկ տեղին, բայց զգուշութեամբ, որպէս զի վէրք չը պատճառէ կամ չը կոտրէ իր կնոջ ոսկորները։ Իսկ երբ վարժապանց աշակերտուեն, այդ դէպքում տան կանաքը են ծեծողները։ հարուածների թիւը (միշտ մտրակով) իննից չը պիտի անցնէ, դարձեալ յանձնարարուում է զգուշութիւն։ ծեծուողը օրիորդ է, չը պիտի վնասէ իր դէմքը, ոչ էլ չափից դուրս վախենայ, որովհետեւ կարող է զըրկուել որդեծնութեան ընդունակութիւնից։ Ամենածանր տպաւորութիւնը հէնց այս զգուշութիւններն ու հոգածութիւններն են թողնում։ Ի՞նչ է նշանակում իւրացնել զրսից եկած գաղափարները, մնալով, սակայն, խաւար իրականութեան զաւակ։ Այսպիսի պատժիներ առաջարկողը միւս կողմից տնօրինում է որ օտար երկրից Հայաստան փախած յանցաւորը ազատ ու անձեռնմխելի մնայ և չը յանձնուի իր երկրի կառավարութեան։ Սա անզլիական օրէնք է, ինչպէս նաև այն, որ արջեր, գայլեր և այլ վնասակար կենդանիներ կոտորողները ստանում են պարզ պետական գանձարանից։ Մի և նոյն ժամանակ եթէ հիւանդը մեռնում է, նրան բժշկող բժիշկը ոչինչ վարձատրութիւն չէ ստանում, նոյն իսկ չէ կարող պահանջել իր գործ ածած գեղերի արժողութիւնը։ Իսկ եթէ նոյն բժիշկը ազատէ հիւանդին մահից, կամ մանկաբարձուհին աղատէ ծննդկանին գժուար և վտանգաւոր ծննդաբերութիւնից, նրանք ստանում են գանձարանից մի-մի դահեկան պարգե։

Հասարակական ուրիշ շատ կարգեր էլ է հիմնում Շահամիրեանցը։ Մենք կը յիշատակենք մի քանիսը։ Երեկոյեան ժամի 9-ից յետոյ տանից գուրս չը գալ առանց ճրագի, մեռելի տուն կամ ծննդկանի մօտ չը գնալ առանց հրաւէրի (հրաւէրի օրինակն էլ գրուած է), տարին սկսել յունուարի 6-ից, հարսանիքը, թաղումը, մկրտութիւնը կատարել առանց մեծ ծախսերի, այնպէս, ինչպէս սահմանում է Շահամիրեանցը, որ չէ մոռացել նոյն իսկ քահանաների և եկեղեցական ուրիշ սպասաւորների վարձը նշանակել։

Այստեղ հարց է ծագում. ի՞նչ զեր է կատարում հոգեու

րականութիւնը հայոց հանրապետութեան մէջ։ Նրան յատկացընւում է պատուաւոր տեղ. պատգամաւորների ժողովում նախարարից յետոյ առաջին տեղը պատկանում է հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ եպիսկոպոսին, որ ինչպէս և նախարարը, երկու ձայն ունի Բայց և այնպէս, սահմանում է որ ոչ պետութիւնը խառնուի հոգեորականութեան գործերի մէջ, ոչ էլ հոգեորականութիւնը՝ պետութեան գործերի մէջ։ Հետաքըրաբական է հետևեալ կարգը։ Ամեն երկը տարին մի անդամ, երբ ընտրում է նոր նախարար, նրա կողմից 12 ծեր և խոհեմ մարդիկ շրջում են վաճերն ու կուսանոցները, մտնում են միաբանների և ապաշխարողների մէջ, առանձնանում են ամեն մէկի հետ և իմանում են ամեն մէկի սրտի փափազը—արգեօք կամենում է աշխարհ գուրս գալ և ամուսնանալ։ Կազմում են այդպիսի փափադ յայտնածների ցուցակը, որ ներկայացնում է նախարարին։ Վերջինս թոյլաւութիւն է խնդրում կաթողիկոսից և վաճերից ու կուսանոցներից հանւում ու աշխարհ են մըտցընւում ամուսնանալ ցանկացողները։

III. Գաւաստանական օրենքներ։ Դատաստանական կազմակերպութիւնը այսպիսի պատկեր է ներկայացնում, որքան կարելի է հասկանալ Շահամիւեանցի վայր ի վերոյ, խառն ի խուռն յօդուածներից ու գատողութիւններից։ Կայ «Մայր Դատաւորութիւն»։ Երեխ, զա դատաստանական բարձրագոյն հիմնառկութիւնն է պետութեան մէջ։ Բոլոր մնած քաղաքներում դոյտութիւն ունեն մեայուն դատարաններ, որոնց անդամները ընտրուին են։ Դրանց են ենթարկուած վիճակի քաղաքացիական և քրէական գործերը։ Բայց այդ դատարանները անընդհատ նիստեր չունեն. գործեր քննելու համար յատուկ ժամանակամիջոցներ են նշանակւում—դարձնանամուտը, ամառնամուտը, աշնանամուտը և ձմեռնամուտը։ Սակայն որպէս զի մանր-մունք պահանջները արագ վճռուեն, դատարանի անդամներից իւրաքանչիւրը հերթապահութիւն է անում մի ամիս և վճռում է մասնի գումարները պահանջները։ Քրէական գործերի քննութեան համար երգուեաների դատարան կայ։ Ընտրուում են 94 հոգի. գրանցից 70 հոգին բուն երգուեաներն են, որոնք դատավարութեան միջոցին պիտի համոզում կազմեն դատի ենթարկուածի մեղաւորութեան կամ անմեղութեան մասին. 12 հոգի դատաւորներն են, իսկ 12 հոգի մեղադրուողի կողմից են, նրա պաշտպանները *): Բոլորը երգում են ուտում որ իրանց պաշտօնը սրբութեամբ կը կատարեն։

*.) Այդ 12 մարդկանց մեղադրուողը ընտրում է իր ազգականներից կամ, եթէ կամենում է, օտարներից։

Դատավարութիւնը գրաւոր է: Քաղաքացիական գործերում կայ գանգատուող, որ պահանջ է ներկայացնում, իսկ միւս կողմը, պատասխանատուն, դատախաղ է կոչւում: Քրէական գործերում կողմերից մէկը գանգատուող է, միւսը մեղաւոր: Թէ քաղաքացիական և թէ քրէական գործերում գանգատուողի գրայ է ընկած իր հակառակորդի մեղաւորութիւնը հաստատելու պարտքը: Գործը սկսում է այսպէս: Գանգատուողը ներկայացնում է գանգատ: Եթէ գործը քաղաքացիական է, պատասխանատու կողմը կամ դատախաղը ներկայացնում է իր կողմից գրաւոր բացատրութիւն այդ գանգատի դէմ: Իսկ եթէ քրէական է գործը, մեղաւորը պիտի երաշխաւորութիւն ներկայացնէ և ազատ մնայ, որպէս զի կարողանայ իր համար վկաներ և այլ ապացոյցներ պատրաստել: Երաշխաւորութիւն չը ներկայացնողը բանտարկում է: Դատավարութեան ժամանակ երկու կողմերի ներկայացրած ապացոյցները կազմում են այն նիւթը, որի վրայ հիմնուում է դատավճիռը, ինքը, դատաստանական իշխանութիւնը նախնական քննութեան միջոցով փաստեր չէ ձեռք բերում գործի էութիւնը պարզելու համար: Աւելորդ է ներկայացնել այստեղ երդուեալների գործունէութիւնը: ամենքին յայտնի է թէ ինչպէս են նրանք գործը վճռում: դատավարութիւնից յետոյ փակուել խորհրդակցական սենեակում, չը հեռանալ այնտեղից մինչև վճիռ կայացնելը, ոչնչ յարաքերութիւն չունենալ դատուող կողմերի հետ՝ այս ամեննը ծանօթ է: Խորհրդակցութիւնից և վճիռ կայացնելուց յետոյ երդուեալները մտնում են դատարանի գահինը և նրանց առաջնորդը կարդում է վճիռը, որ մի բառից է բաղկացած: «Յստակ», եթէ արդար է դատի ենթարկուածը, և «Աղուեղի», եթէ մեղաւոր է: Այնուհետև 12 դատաւորները և մեղադրուողի 12 ներկայացուցիչներն են մտնում խորհրդակցութեան սենեակը՝ պատժի աստիճանը որոշելու համար: Պատժի տեսակներն են. մահապատութիւն, շիկացած երկաթով ձեռքը կամ մի այլ անդամը այրելը, ծեծ մտրակով, դրամական տուգանք, ցման բանատարկութիւն: Թէև այս պատժներից մի քանիսը թւում են մեզ այժմեան ժամանակ շատ խիստ ու անգութ, բայց և այնպէս, պէտք է խոստովանել, որ դատաստանական կազմակերպութիւնը առհասարակ լաւ է յօրինուած և ներկայացնում է մի եւրօպական հիմնարկութիւն:

Ահա ինչ պիտի լինէր ազատուած Հայաստանը Շահամիրեանցի ծրագրով: Եթէ մենք այսքան շատ ուշադրութիւն նուիրեցինք այդ գործին, պատճառն այն չէ, որ հաւատում ենք թէ

հայոց երկրին հէնց այդպիսի կարգեր էին պակասում, թէ մի հանրապետութիւն իրագործել Ասիայի ամենաղժբախտ անկիւններից մէկում նոյնքան հէշտ էր, որքան թղթի վրայ գծագրելը: Ըստհակառակն մեզ համար ամբողջ այդ ծրագրիը, ինչպէս ասացինք, մի ուաօպիտ է. հնդկաստամնցի վերանորոգիչը չէր ճանաչում իր իրական հայրենիքը. նա թղթի գրքի, երեակայութեան մարդ էր: Այդպէս են եղել ազատութեան մասին առաջին անգամ խօսողները: Եւ մեզ համար «Որոգայթ Փառաց»-ը նշանակութիւն ունի հէնց իրքի այդպիսի խօսք, իրքի քաղաքական գաղափարներ և թէօրիաներ արծարծող մի աշխատութիւն: Հարկաւոր չէր որ այդ գրական խղճուկ արտադրութիւնը լինէր առաջնորդ և անսխալ ղեկավար. միաք արթնացնելը, հեռաւոր, լաւագոյն վարչական ձեռքի մասին ազօտ գաղափարներ տալն էլ բաւական են որ այդ գիրքը մի շատ նշանաւոր երեսյթ համարուի մեր մէջ: Ուստի մենք էլ, իրքի գըրքերի պատմութիւն ուսումնասիրող, պարտք համարեցինք մանրամասն ծանօթութիւններ տալ այդ նշանաւոր երեսյթի մասին:

Այդպէս հարկաւոր էր մանաւանդ այն պատճառով, որ Որոգոյթ Փառաց»-ը այժմ շատ հազուագիւտ գիրք է: Իր ժամանակին էլ նա շատ չէ տարածուել. — Շահամիրեանցը նայում էր իր աշխատութեան իրքի մի ծրագրի, ուստի տպագրել արւելյանից միայն հարիւր տամն հատ: Մի հատի գինը նա նշանակել էր տասն ոսկի կամ քառասուն հնդկական ոռուփի, ուրեմն մօս 20 ոռուբի: Պէտք էր սպասել որ քաղաքական այդպիսի գաղափարներ արծարծող գիրքը կը տպուէր մեծ քանակութեամբ, մատչելի կը լինէր ամենքին, որպէս զի լայն ժողովրդականութիւն ստանային հանրապետական սկզբունքները: Զէ որ զրանք այնպիսի սկզբունքներ էին, որոնք կարող էին կենաքի մէջ գործադրուել միմիայն ժողովրդի ընդհանուր կամքով, գիտակցութեամբ: Բայց Շահամիրեանցը այդպէս չէր մտածում. նրան թւում էր թէ բաւական է որ մի քանի մարդիկ համաձայնուեն թէ հանրապետութիւն լինի, և նա կը լինի:

Այժմ տեսնենք թէ ինչ էր պատասխանում Շահամիրեանցին հայկական իրականութիւնը:

Լ է 0

(Ար օարունակուի)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ծ Դ Ե Մ Ք Ե Ր

I

Օկտավ Միրո

Ոչ մէկ գրադէտի գէմքը ինձի գժուար թուած է ուրուագծել, որքան այս հոյակապ վիպագրին վրգովող գէմքը։ Ամեն անգամ ուր որոշած եմ Լ'Abbe Jules-ի, Sébastien Roch-ի, Le Jardin des Supplices-ի հեղինակին համար ունեցած պաշտամունքս տրամաբանել, շուարումի ողէս բանի մը առջև կանգ առած եմ։

Մատնանիշ ընելու համար իր բազմամասն գէմքին մէկ կողմը, ու ցոյց տալու համար մանաւանդ թէ ինչպէս հասկցած են արուեստի վարպետները գրականութիւնը՝ լաւագոյն բանը պիտի ըլլար թերիս, թարգմանել նայնիսկ այն էջը, զոր Միրո նուիրած է Լէօն Դոդէխն՝ Ալֆօնս Դոդէի որդուն։

«... Լէօն Դոդէ չի գրեր երբէք զուարձանալու և մեզ զուարձացնելու համար, վիպական ճղճիմ պատմութիւններով, պղտիկ, անկարեսոր ամուսնախաբութիւններու և ծիծաղելի, խեղճուկ անբարոյականութիւններու վիպումով։ Զի գրեր նմանապէս միմիայն պարապ նախագասութիւններ—ոսկիին մէջ ընդելուզելու Խօսքին շլաշնող ու մերկ գոհարները։ Լէօն Դոդէ կը գրէ, որովհետև գերագոյն ոյժ մը կայ իր մէջ, որ կը մղէ զինքը՝ ըսելու էական բաներ, պոռալու իր մտածումները, կեանք ու արտայայտութիւն տալու իր ուղեղին մէջ եռացող ու զայն չարչրկող գաղափարներուն։ Իրաւցնէ իրեն կրնանք տալ, բառին իսկական նշանակութիւնով՝ մտաւորական տիտղոսը՝ այսօր այսքան լըրճուած։ Անիլա մտաւորական մը չ սակայն, սա արամաբանող ու գասակարգող, կանոնապաշտ

ու սառած հոգեբաններուն պէս, որ իրենց զգայութիւնները վերլուծումի տրտում ցուցափեղին տակ կը պիտակեն ու կ'անուանակարգեն, ինչպէս միջատաբանը իր մեռած միջատները, ինչպէս բուօսաբանը իր չորյած բոյսերը, Գոռուն աշխուժով ու աղմկալի հիւթով լեցուն միտք, միշտ կը քալէ ան, միշտ կը վազէ գէպի բարձրութիւնները: Ոչ մէկ բան կը կ'ասեցնէ զինքը ու ամեն բան իր տենդը կը զայրացնէ: Մեծ զգուշութիւններով՝ արգելքներուն ու անդունդներուն շրջանն ընելու տևող ուժգին ոստումով մը կը կտրէ, կ'անցնի զանոնք, իր ոսկորները փշել աչք առնելով նոյնիսկ, Գաղափարներն ու պատկերներ—գաղափարներ ու ցոլքեր—կ'աճապարեն, կը կուտակուեն, կը բռնկեն, կը տաքցնեն իր ուղեղին զօրաւոր մեքենան, զոր կը պահեն միշտ ամենէն բարձր ճնշումին տակ ու ահազին ցնցումներով, տարօրինակ դղրդումներով կը քչեն կը տանեն գէպի գագաթները, ուր խանդավառութեան, աստուածեղէն լոյսը կը ճառագայթէ:

Գրականութիւնը ոչ զրօսանքի միջոց մըն է և ոչ ալ զարդարանք մը մարդու համար: Անիկա մարդկացին գիտակցութեան ինքնարեր ու անկեղծ աղաղակը պէտք է ըլլայ յուղումներունկրքին աշխարհին ազդեցութեան տակ: Անիկա պէտք է մեզի բացատրէ ու սիրցնէ կեանքը, որուն պէտք է տայ ուղղութիւն մը, մեծութիւն մը:

Միրրո թէն պազ Պատմասնաւններու և Արուեստը արուեստին համար» գաւանողներու մտերմութեան մէջ ապրած, իր զրականութիւնը երբէք չանջատեց կեանքէն, որ աղբիւրն է Արուեստին ու Գեղեցիութեան: Ու իր զրականութիւնը իր աղբիւրին չափ այլազան, խորունկ ու յուզող է:

Ամեն արուեստագէտի ստեղծագործութեան ոյմը՝ կեանքի իր ըմբռնումին համեմատ կը գործէ, կեանքը ոմանց համար կատակերգութիւն մըն է, իսկ ուրիշների համար անսահման, ցաւատանջ ողբերգութիւն մը: Առաջինները՝ անոր գերակատարներուն նկատմամբ հեկնող ու սկեպտիկ են: Վերջինները՝ անոնց գժրախառութեան առջև կը խչխչան: Եւ որովհետե Միրրոյի համար կեանքը ողբերգութիւն մըն է, իր զրականութիւնը ոչ սկեպտիկ մը և ոչ ալ գիլէտանտի մը զրականութիւնն է: Իր տաղանդը շինուած է բարութեամբ, վեհանձնութեան մաքուր իդէալով: Իր կեանքը անդագրում ու հերոսական կոիւ մը եղած է բոլոր անիրաւութիւններուն, բոլոր կեղծաւորութիւններուն, բոլոր չնականութիւններուն գէմ:

Ֆրանսական լրագրութեան մէջ օրը օրին հրատարակած յօդուածները՝ Փրանսական երգիծանքի ամենէն նկարագեղ և

ուժով էջերը պիտի մնան: Ոչ մէկ մարդ հոգիները այնքան անխնայօրէն կը մերկացնէ, որքան Միրքօ:

Ինքը՝ Անաթոլ ֆոանսին հետ թերևս միակ գրագէտն է, որուն տաղանդին առջե կը խոնարհին նոյնիսկ ոխորիմ թշշնամիները:

Մարդիկ չեն պակասած սակայն, զինքը մեզադրելու իր քննադատութիւններու խստութեան համար: Արդի կարգուարքերուն դէմ մղած իր վիթխարի կոփուը չար ու խոժոռ նըկարագրի մը արդիւնք նկատած են:

Ճշմարտապէս չարերը անոնք են, որ չեն վրդովուիր Անիրաւութեան առջեւ, Սխալին առջեւ իրաւցնէ չարերը գոները, կրաւորականներն են, որ իրենց անիմաստ լաւատեսութեամբ, աղետաբեր համակնրպութեամբ թոյլ կու տան որ Զարիքը յաւերժանայ: Գրագէտին, արուեստգէտին մէջ դատողութեան խստութիւնը՝ արդարութեան, իրաւունքի, գթութեան ուժգին սէր մը, անայլայլ հաւատք մը կ'ենթադրէ զոր կեանքի իրողութիւնները ամեն վայրկեան կը հեղուեն: Իւրաքանչիւր չարութիւն, իւրաքանչիւր անիրաւութիւն զինքը յուսախսր կ'ընէ, կը վիրաւորէ իր հաւատքն ու իր հոգին կը դառնացնէ: Լաւագոյն կեանքի մը ծարաւը, ներդաշնակ, արդար ու աղնիւ մարդկութեան մը ձգտումը իր մէջ հետզհետէ աւելի կը զայրանայ ու իր իդէալին՝ իր առջևէ փախչիլը տեսնելով, իր վերլուծումի զօրութիւնը կ'աւելնայ, իր քննադատութեան ոյժը կը կրկնապատկի:

Այսպէս կարելի է բացատրել գժգոններու, ըմբոստներու հոգերանութիւնը:

Ազատ քննութիւնը աշխարհի երեսը փոխեց: Երկինքը իր ընակիններէն պարպուած է ու մարդ այսօր միամտութիւնը չ կրնար ունենալ հաւատք ընծայելու կարգ մը աւանդութիւններու, որ իր կեանքը թունաւորեցին ու զինքը հողին վրայ գըժրախտ ըրին: Աստուածները մեռած են ալ ու հին հաւատքներու աւերակին վրայ, անկախ քննադատութեան ոգին մեզի ընդնըշմարել կու տայ զիւթական պալատը, ուր մարդկութիւնը ատելէ, տառապելէ, հեծեծնէլէ յոդնած՝ եղբայրութեան ու յաղթանակի յնծերգը պիտի հնչեցնէ:

Կեանքի նոր ու առողջ ըմբռնումին հակառակ, եթէ մարդը կը շարունակէ բանտուած մնալ Զարիքի ուժերուն մէջ, անոր համար է որ նա իր ազատազրութեան զործը գլուխ չէ հանած: Մարդկային ուղեղին չուրջը գարերէ ի վեր զիզուած նախապաշարումները բոլորովին չեն ցրուած տակաւին: Յամր ու յամառ աշխատութիւն մը կայ կատարուելիք, որ իրեն կը

հրաւիրէ արդարութեան նուիրուած բոլոր կամքերը, ճշմարտին խանդավառ բոլոր միավերը:

Բաւական է որ մարդը այլևս համոզուած է թէ իր գըժ-քախտութիւնը ճակատագրական չէ, թէ անոր պատճառները իր միջավայրին, իր ապրած ընկերութեան մէջ իսկ են:

Օկտակ Միրրօ՝ ապագայ Ռոտանին ամենէն խանդավառ գործաւորներէն մէկն է: Իր յօդուածներուն, վէպերուն, թատրերգութիւններուն մէջ միշտ միենոյն ազնուական մտահոգութիւնն է, որ կ'առաջնորդէ զինքը: Տող մը չէ կարելի գտնել այս զուտ արուեստգէտէն, որ տգեղին, անիրաւին դէմ իր ատելութիւնը, գեղեցկին ու ճշմարտին համար իր անզուսպ պաշտամունքը պոռացած չըլլայ:

Ոչ մէկ դար իր անիրաւութիւններով, իր կեղծիքներով, իր անսանձ եսասիրութեամբ մարդկային գիտակցութիւնը ըմբոստացուցած է այնքան՝ որքան մեր ժամանակը: Ուիէ անշահախնդիր ու գեղեցիկ շարժումի անկարող՝ անհաշտ թշնամին եղած է նա, ամեն ճշմարիտ մեծութեան, ամեն գեղեցկութեան:

Միրրօ՝ չը գիտեմ ուր, սա նշանաւոր խօսքը ըսած է.

«Գեղեցիկ բանի մը առջև առաջին մտածումը զոր կ'ունենանք՝ զայն քանդեկն է»:

Ներդաշնակութիւնը՝ ընկերութեան մէջ բացակայ, աքսորուած է նաև հոգիներէն: Մարդկանց միակ մտահոգութիւնը կը բուի ըլլալ՝ վայելել տարամերժօրէն, նոյնիսկ ուրիշներուն գժբախտութեան ու արիւն արդունքին գնով:

Արքա Ժիւլ՝ Միրրօյի ստեղծած տարօրինակ տիտարներէն մէկը անձկութեան հետեւեալ աղաղակը կ'արձակէ, երբ զըդշումի ու ներողութեան յեղակարծ պէտքէ մը բռնուած՝ իր մեծաւորին կը զիմէ ու ան զինքը մտիկ չուզեր ընել ու կրքնանայ:

«Մարդ՝ մարդը չի սիրեր, մարդ՝ մարդը չի հասկնար, մարդ՝ մարդու օգնութեան չի հասնիր: Իւրաքանչիւր մարդ մենակ է, միս-մինակ, զինքը շրջապատող միլիօնաւոր հոգիներուն մէջտեղ»:

Իր վէպերը՝ ուր Միրրօ իր վարպետի ձեռքովը կը ցուցադրէ մարդերուն մոլութիւնները, ծիծաղելիութիւնները, բարոյական ու ֆիզիկական ծամածումները՝ արդի ընկերութեան դէմ ուղղուած ամենէն սարսափելի ամբաստանագրերն են:

Երբ իր Գողգոթան (Le Calvairie) վէպը հրատարակեց, բողքի, լուսանցներու միահաղոյն աղաղակ մըն է որ բարձրացաւ շովիններու, հայրենասիրութեան վաճառականներու պիզծ զոլիրին մէջէն: Զինքը մինչև «զաւաճան» անուանելու

քաջութիւնը ունեցան: Խնչու: Որովհետև Միրքօ անոր քանի մը զլուխներուն մէջ 1870-ի պատերազմին յիշատակը վերակենդանացուցած էր անբազմակի կենդանութեամբ մը: Որովհետև Միրքօ ահաւոր ճշմարտութիւններ մերկացրած էր: Բայց ինչ որ մանաւանդ Միրքօյի չը ներեցին՝ պատերազմի նկատմամբ իր ունեցած սարսափն էր: Տակաւին մինչև հիմա մոքէս չի ելած—հինգ-վեց տարի է Calvairé-ը կարդացած ըլլալս—պատերազմի պատմութեան գրուազներէն մէկը, որ առաջ կը բերենք հոս:

Վաշտը՝ որուն մէջ վէպի հերոսը զինուոր է, երկար, տաժանագին թափառումներէ յետոյ կը գիշերէ ագարակի մը մէջ: Այդ օրը պահակի, հսկողի պաշտօնը իրեն յանձնուած էր: Գիշերը, յուրտին՝ ժամերով ու ժամերով ճամբուն եղերքը կը հըսկէ հրացանը ձեռքը, հաղիւ զիտնալով զայն գործածել: Ինքը անմեղ ու միամիտ հոգի մըն է: Մէկուն զէմ ատելութիւն չունի, չըմբռնիր, չի կրնար ըմբռնել թէ ինչու. իր նմաններուն վրայ զէնք պիտի պարագէ, նմաններ զոր չի ճանչնար նոյնիսկ և որոնք իրեն ոչ մէկ չարիք հասցուցած են: Անիկա կը սպասէ միշտ յուրտին տակ, ոտքը գետին ծեծելով, որպէսզի քիչ մը տպնայ: Բայց քանի գիշերը կը յառաջանայ, յուրտին հետ անձկութիւնն ու վախը կը պաշարեն իր բարի ու վեհերու հոգին: Մութին մէջ ստուերներ իր աչքին առջն կը պարեն. երկինքը ամպամած է ու աստղերուն ընկերութենէն իսկ զրկուած: Սարսափէն կ'ուզէ պոռալ, բայց բառերը կոկորդին խորը կը խեղդուին: Սրագ-արագ կը քալէ: Հեռուէն շուները կ'ոռնան գիշերին մէջ, Յողնած՝ հողակոյտի մը վրայ կը նստի, հրացանը ծունկերուն մէջ: Ու իր մանկութեան յիշատակներն է որ կ'արթնան: Աչքին առջնէն մէկիկ-մէկիկ կ'անցնեն հայրական տունը, ուր հանգիստ էր, իր բարեկամները, իր գրացիները, որ զինքը ճամբայ զրած էին գէպի բանակի: Իր առաջուան խանդաղատալից կեանքը կը բազգատէ՝ իր անվերջ և հիբնի ու անդադար թափառումներու, հազար զրկանքներով, չարչարանքներով, յարատև ահ ու սարսափով լեցուն ներկայ կեանքին հետ: Ազարակէն աքազազի մը երգը վեր կը ցատկեցնէ զինքը տեղին: Հսկողութեան օրինական չորս ժամերը աւարտած են. ու տակաւին պահակի պաշտօնէն չէ հանուած ինքը: Սըսալոյսին առաջին ճերմակութիւնները դաշտին վրայ մեռելական պատանքներու պէս կ'երկննսն: Գիշերուան թռչունները պղտիկ ու մահացչուկ ճիշերով իր զիսուն վրայ իրանց թեերը կը բաղիսն: Վստահ ըլլալու համար որ տակաւին կ'ապրի՝ ճակատը, կուրծքը, սրուազները կը շօշափէ: Ուղի կ'ելէ:

բանակը իր տեղը չէ: Կը սկսի ասդին անդին վազել, իր ընկերները կանչել, Զայնը անհուն դաշտին քստմնելի լոռութեան մէջ անարձագանք կը մնայ: Աղօթարանը կամաց-կամաց կը բացուի: Լոյսի աղօտ նշոյները հորիզոնի թանձր աղջամուղջ արիւնի թեթև երանդով մը կը ներկնա: Դաշտին մէկ կողմը ցրուած ծառերու կմախքները կը ցցուեն սպառնագին ուրուականների պէս: Առոտուան պաղ հով մը արիւնը երակներուն մէջ կը սառեցնէ: Շուարած ու ցաւագին, ասդին անդին կը վաղէ: Մօտակայ անտառին մէջ կը մտնէ ու կը սկսի նորէն ձայնել. ծառերուն սազարթները հովին հպումին տակ երկար հասուչանքով մը իրեն կը պատուախանեն: Տարակոյս չունի այլիս, բանակը առանց իրեն լուր տալու շտապով հեռացած ըլլալու է: Արդեօք դերմանացիներու առջեխն փախած է: Պետերէն լսած էր, որ թշնամիները իրենց մօտեցած էին: Այս մտածումներուն մէջ՝ յանկարծ, հեռուէն քառասմբակ արշաւող ձիու մը ոտքին գորիւնը կը հասնի ականջին: Կանգ կ'առնէ: Ուշադրութեամբ մտիկ կ'ընէ: Ձիուն ոտքին աղմուկը աւելի կը մօտենայ: Անմիջապէս ծառի մը բունին ետև կը պահուըտի: Հաղիւ ծածկուած՝ ծառուղիին մէջ փրփրերախ նժոյգի մը վրայ գեղեցիկ, յաղթանգամ, պարթև հասակով մէկը կ'երեայ: Արշալայսի պայծառութեան տակ անոր սազաւարտը կը փայլի շողշողալով: Ուկենուռ համագետեան մէջ խրոխտ՝ ձիուն վրայ շիփ-շիտակ նստած է: Բայց անիկա անքան տպաւորող է առոտուան մէջ որ վայրկեաններով հիացած դիտելէ չի կշտանար:

Գերմանացի սպայ մըն է, բանակին ուղեցոյց մը: Ծառին ետևէ կը դիտէ անշարժ: Առաջին անգամն է որ գերմանացի կը տեսնէ սակայս: Իրեն ըսած էին թէ անիկա «թշնամին» էր: Բայց համակրութենէ, խանդաղատանքէ զատ անոր տեսքը ոչ մէկ զգացում կ'արթնցնէ իր մէջը: Հիմա ան ծառուղիին մէջ կեցած է ու յուղումով չորս կողմը կը նայի: Զինուորը զանիկա կը զննէ ուշով: Այդ «թշնամին» բարի, զթած, անկեղծ ու խելացի դէմք մը ունի: Բանաստեղծ մըն է, որովհետև բնութեան գեղեցիկութիւններուն առջև անտարբեր չի մնար: Իրեն կը թուի, թէ անիկա հիմա իր զաւակներուն կը խորհի: Վայրկեան մը առաջ կը փափագի զանոնք կուրծքին սեղմել. ու այդ պահուն կը զարմանայ նոյնիսկ թէ ինչո՞ւ այս անտառին մէջ կը գտնուի: Չէ, չէ, զինուորը չի սխալիր, այս ամնն մտածումներն է, որ կը պտուագեն անոր ուղեղին մէջ, այս մտածումներն է, որ յուղումէ կը կծիեն անոր զիմագծութիւնը:

Յանկարծ հրազէնի պայթիւն մը օդը կը թնդացնէ: Ծու-

իսի ամպ մը ծառերուն ետեէ կը գալարուի, ու սպան իր նը-
ժոյգին վրայէ կը գլտորի կ'իյնայ գետին, խուլ թնդիւնով մը:

Զինուորն է, որ առանց ուղելու, անգիտակցարար, ճա-
կատազրական մղումով մը հրացանին ըլթակը քաշած՝ ու բոսի
մը առաջ հիացած, սիրած մարդը զիատապաստ փռած էր: Կոյր
ատելութեան բռնաւոր պէտքէ մը, արիւնի անակնկալ ու վայր-
կենական ծարաւէ մը մտրակուած էր որ հրացանը պարպած էր:
Ո՞վ զիտէ: Վառօդին ծուխէն ու սպային անկումովը սուրին
գետին բաղխումէն սթափած՝ իր թաքստոցէն դուրս կը նե-
տուի. յաւէն խելայեղ, կը վազէ իր զոհին մօտ. անոր մահա-
մերձ գլուխը իր թեւերուն մէջ կ'առնէ, կը ջանայ ոսքի կեցներ:
Շրթունքները կը փակցնէ անոր շրթունքներուն՝ նոր կեանք
տալու համար, բայց խեղճը քիչ յետոյ կը մենաի իր գրկին մէջ:

Միրօ, Անաթօլ Ֆրանս ու կարգ մը խսկապէս բարձր
արուեստգէտներ ու գրագէտներ կը ներկայացնեն ֆրանսիական
վեհանձն, տաք ու կեանքոտ մտածումը:

Միայն Գողգորան չէ, որ Միրօյի դէմ շղթայազերծած է
ազգասէր-ստահակներու, սուտին ու անիրաւութեան երկրպա-
գող տղմուտ ու չար հոգիներու հեռն ու նախատինքը: Գրեթէ
իր ամեն գործերը ողջունուած են զայրոյթի ու լորձունքի
պոռթկումով մը: Երբ Սառա Բեռնար իր Գէս հովիւները (Les
Mouyais Bergers) թատրերգութիւնը խազաց, ներկայ կարգ ու
սարքի բոլոր պարարտ պաշտպանները, բոլոր հանդարտ ու
դիւրաւ մարտողները կատաղօրէն սուլեցին: Որովհետեւ Միրօ
անժառանգներուն, շահազործուողներուն դատը կը պաշտպա-
նէր վայելողներուն ու կեղեքողներուն դէմ: Նոյն բանը պա-
տահացաւ նոյնապէս իր վերջին գրին՝ La Journal ճ'սու
քոյտ ծե շամեր-ին համար: Քիչ զործ՝ իր անողոք նշմար-
տութեամբ, իր ցաւագին իրականութեամբ այնքան վրդովող է,
որքան Սէնեկապանուիիի մը օրազիրը: Ասիկա ամենէն զար-
հուրելի ամբաստանազիրն է, որ ուղղուած ըլլայ տիրող ու
վայելող գասակարգին բուրժուազիին դէմ: Սէլէսթին՝ օրազիր
ձեռվ կը պատմէ, առանց կեղծ պարկեցութեան ու անվերա-
պահօրէն, իր աշխատած տուներու մէջ տեսածը. ինչ որ կ'անց-
նի կը դառնայ բուրժուա, ազնուական ընտանիքներու մօտ
Հատորը հաղիւ հրատարակուած 25-րդ տպագրութեան բար-
ձրացաւ: Այս պզտիկ թուանշանէն կրնանք դատել գործին յա-
րուցած հետաքրքրութիւնն ու գտած յաջողութիւնը:

Բայց այս վարպետը քանդող մը չէ միայն նրկու արբ-
տում աչքերու, ցաւագին կոնակի մը տեսքը բաւական են եր-

բեմ՝ զինքը լիցնելու խամսդաղատանքով, զթութեամբ, յուշ զումով:

Արբա ժիւլ, իր եղբօր տղուն՝ փոքրիկ Ալբէրին դասը աւարտելէ յետոյ յանկարծ կը կեցնէ զայն ու սա սլատուէրը կու տայ.

«... Զէ, կեցիր... այս առտու սարեակներուն լարուած թակարթ մը գտայ նորէն պարտէզին մէջ... Կ'արգելեմ քեզի որ թաշունները որսաս... պէտք է անսնց կեանքը յարգես... Զանոնք սպանելով զիտես թէ ինչ կը ջնջես անսնց մէջ... Երածշտութիւն մը, կեանքի թրթում մը, որ քուկինէդ աւելի կ'արժէ թերես... Թոշուններուն աչքին մէջ նայած ես... Զէ... Նայէ ուրեմն ու ալ չը պիտի սպանես երբէք... Հիմա զնա, խաղա...»:

Օկտավ Միրբօ իր մտածումին վեհանձնութեան չափ ունի նաև արտայայտութեան չքնջութիւն: Քիչ զրագէտ կը ճանչնամ այնքան հրաշալիօրէն զրագէտ, որքան Միրբօ: Մեր ժամանակին ամենէն մեծ քնարերդակին է: Իւրաքանչիւր բառը երաժշտութիւն մը, իւրաքանչիւր նախադասութիւնը երգ մըն է:

ՏԻԳՐԱՆ Զ.

ՄԱՏԵՆԱԹՈՍՈՒԹԻՒՆ

ՅԳ) „ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ՅՈՒՂԵՐԱԿԱՆ ՅՈՒՂԵՐԱԿԱՆ 1701—1901., ՎԵՆԵՏԻԿԻ
ԵՐ. 226. ԳԻՆԸ 2 ԱՌԱՐԱՐԻ

Եր երկուհարիւրամեալի տօնին Մխիթարեան միաբանութիւնը «Մխիթար» անունով մի շքեղ պատկերազարդ հատոր տուեց հայ ազգին: Բնական էր սպասել այսպիսի մի տպագրական գլուխ գործոցի: Մխիթարեանները հոչակ են հանել ոչ միայն իրեն հեղինակներ ու թարգմանիչներ, այլ և իրեն հրատարակիչներ: Եւ այս յօրելեանական հրատարակութիւնը սքանչելի տպաւորութիւն է թողնում նախ և առաջ իրեն տը պագրութիւն: Գրքի շապիկը գունաւոր մի սիրուն խորհրդապատկեր է, որ ներկայացնում է Վենետիկը և Մխիթարի կիսարձանը: Իսկ գրքի մէջ, բայց Մխիթարի գունաւոր գեղեցիկ պատկերից և ս. Ղազարի նոյնպէս գունաւոր տեսարանից, գտնուում են բազմաթիւ ուրիշ պատկերներ (ընդամենը 155), որոնք Մխիթարեանների անցեան ու ներկան, ս. Ղազարի ու նեցածներն են պատկերացնում: Այդտեղից մենք տեսնում ենք թէ հրքան շատ բան ունի ցոյց տալու Մխիթարեան միաբանութիւնը: Երկու հարիւր տարիների ընթացքում նա ոչ միայն շինութիւններ է բարձրացրել ս. Ղազարի կղզում, այլ և առ պարէզ է հանել տաղանդներ, որոնց զարմանալի աշխատափրութիւնը ստեղծել է հայկական բոլոր գրադարանները զարգարող Մխիթարեան բազմաթիւ հատորները: Գրքի մէջ պատկառելի անունների տէր գէմքերի հետ երևան են հանուած հոչակաւոր վանքի սիրուն տեսարանները, որոնք առանց մանրամասն նկարագրութեան էլ վերին աստիճանի մխիթարական տպաւորութիւն են թողնում:

Այսքանը գրքի, այսպէս տսած, արտաքինի մասին: Գանք այժմ բովանդակութեան: Դա մի հաւաքական աշխատութիւն է: յօդուածների մի ժողովածու, որ բացատրում ու նկարագրում է

միաբանութեան անցեալն ու ներկան: Գիրքը սկսւում է Հ. Ղ. Ալիշանի «Յիշատակ» Մխիթարեան Յորելինի յօդուածով: Այդտեղ պատկառելի հեղինակը յիշում է որ ներկայ տարուայ մէջ, բայց Մխիթարեան յօրելեանից, երկու նշանաւոր պատմական դէպերի գարեղարձներն էն: Առաջինն է հայոց քրիստոնէութիւն ընդունելը (301 թուին), իսկ երկրորդը Ռուբինեան թագաւորութեան վերականգնող կեոն Մեծագործի հօթներորդ դարեղարձը (1201):

Այնուհետև գրքի 48 երես գրաւում է Մխիթար Սեբաստացու կենսագրութիւնը: Նոր բան այդտեղ չը կայ. միակ ազգիւրը մնում է գարձեալ Մխիթարի այն կենսագրութիւնը, որ գրել է Ստեփանոս Ագոնց արքահայրը և տպուել է գեռ անցեալ դարի սկզբում: Սակայն Ագոնցի գործը մի բազմակողմանի, սառն պատմական աշխատասիրութիւն չէ, այլ մի ոգերուած ներքողեան, սկզբից մինչև վերջը մի ջատագովութիւնները: Նոյն այդ հանգամանկներն ունի և ներկայ կենսագրութիւնը: Մենք հասկանում ենք որ մի յօրելեանական հրատարակութեան մէջ բարձր ներքողական ոճը տեղ ունի. հասկանում ենք նոյնպէս որ մի կրօնական միաբանութեան անդամները չեն կարող աւելի քննադատաբար վերաբերուել նոյն միաբանութեան հիմնադրին, մանաւանդ երբ սա իսկապէս մի խոչոր, մեծ անձնաւորութիւն է եղել: Բայց և այնպէս, չենք կարող չը ցաւել որ անաչառ պատմութեան տեսակչտից Մխիթարի կեանքն ու գործունէութիւնը բաւականաչափ լուսաբանուած չեն: Հարկաւոր էին աւելի առատ փաստեր, հարկաւոր էին նոր ազգիւրներ, որոնք լոյս կը գցէին Մխիթարի և նրա ժամանակի վրայ. վերջապէս հարկաւոր էր որ Մխիթարեանները իրանց նախահօր մասին մի նոր բան հաղորդէին գոնէ երկուհարիւր տարուայ երկար շրջանը տօնելիս: Բայց, ինչպէս երեսում է, ոչինչ նոր բան սպասել չէ կարելի, բայց միակողմանի փառաբանութիւններից: Եւ սա, կրկնում ենք, ցաւալի է: Ո՞վ գիտէ, պատմութեան համար ինչ թանկագին նիւթեր կարող էր գտնել հետազոտողը, եթէ այդպիսի մի նշանաւոր մարդու կենսագրութիւնը սահմանափակուած չը լինէր նեղ, տեսդենցիօգ շրջանների մէջ:

Հ. Սարեան գրել է Մխիթարին յաջորդած արքաների (մինչև ներկայ արքահայր Հ. Կիւրեղեան) համաօտ պատմութիւնը: Դրանք են՝ Ստեփանոս Մելքոնեան, Ստեփանոս Աղոնց, Սուքիաս Սունալեան, Գէորգ Հիւրմիւլը: Այստեղ էլ նոյն պակասութիւններն ենք գտնում: Նոյն ներքենցիօգ շրջանների մէջ:

գործին։ Ինչ որ այժմ ունեն Մխիթարեանները, մի շաբք սկրունդների աշխատութեան գործ է։ Մխիթարը միայն հիմքը զրեց, իսկ նրա յաջորդները շարունակեցին շինութիւնը։ այժմ էլ աշխատանքը չէ գաղարած այդ շինութեան վրայ և պէտք է յուսալ որ չի գաղարի այսուհետեւ էլ։ Ահա այդ երկարատես, անդուլ աշխատութեան պատկերը մենք կը տեսնէինք, եթէ մեզ տային ս։ Ղաղարի արբահայրերի թէկ համառօտ, բայց փաստական պատմութիւնը։ Բացի Մխիթարից, առանձին հրատարակած, թէկ շատ համառօտ, կենսագրութեան արժանացել է Ագոնցը։ Միւսների մասին շատ քիչ բան է յայտնի և եթէ շը լինէին մի քանի ուրիշ աղքիւրներ (օրինակ, Սարգիս վ. Թէսդորեանի աշխատութիւնը), մենք համարես ոչինչ տեղեկութիւն չէինք ունենայ միաբանութեան կեանքի մի մեծ շրջանի մասին։

Աւելի հետաքրքրական է Հ. Ղաղիկեանի ընդարձակ յօդուածը (85 երես), «Համառօտ զրական պատմութիւն նշանաւոր Մխիթարեան Հարց»։ Այսուեզ մեր առջև են Մխիթարեանների համար զրական փառք փաստակած մի շաբք անուններ։ Վրթանէս Ասկերեան, Մխիթարի աշակերտը, որ զրաբար լիզուն մաքրողների և գեղեցկացնողների մէջ առաջնուն է, թարգմանել է Կովկընի «Փիլիսոփայութիւնը» չորս հատոր, Խօլէնի «Հոռոմէական Պատմութիւնը» 6 հատոր, Միքայէլ Զամշւան, «Հայոց Պատմութեան» հանրածանօթ հեղինակը, որ պահած նշանաւոր չէ իրու «Քերականութեան» հեղինակ, ունի և այլ աշխատութիւններ, ինչպէս, օրինակ, Սաղմոսի մինչնութիւնը, 10 հատոր, Գաբրիէլ Աւետիքեան, աստուածաբանական մեծահատոր զրուածքների հեղինակ, մէկը «Հայկազեան Բառզրքի», կազմողներից։ Ղուկաս Խնճիճեանց, «Հնախօսութիւն Հայաստանի», «Ստորագրութիւն Հին Հայաստանի», «Նոր Հայաստան» նշանաւոր գրքերի հեղինակ, առաջնուն աշխարհաբար գրողներից մէկը, երկրորդը հայերէն պարբերական հրատարակութիւն խմբագրողներից (Շմաւոնեան քահամայից յետոյ)։ Մկրտիչ Աւգերեան, 65 տարի զրական աշխատութիւններին նուիրուած մի մարդ, գրել ու թարգմանել է բաղմաթիւ գրքեր, աւելի նշանաւոր է նրանով, որ «Հայկազեան Բառզրքի» ամենամեծ մասի կազմողն է (է տասից մինչև վերջը), կազմի է նաև «Առձեռն Բառարանը»։ Յարութիւն Աւգերեան, Բայրոնի բարեկամը և ուսուցիչը (հայերէնի), Միլտոնի թարգմանիչը, անգլիերէնի բառարան կազմողը։ Մանուէլ Զախշախսեան, «Տեղեմակի» թարգմանիչը, Եղիշ Թովմանամն, Հոմերոսի թարգմանիչը։ Արսէն Բագրատունի, լազմաթիւ հեղինակութիւններ («Հայկ Դիւցազն», «Քերականութիւն ի պէս զարգացելոց») և

թարգմանութիւններ (Հոմերոսի «Իլիական», Վիրապիլիոսի «Մշակականք») է թողել. եղուարդ Հիւրմիւզ, բանաստեղծ, թարգմանիչ:

Մխիթարեանների գրական պատմութիւնը չէ այս յօդուածք. գեռ կան շատ անուններ. մեռածներից չեն յիշուած այնպիսի գրողներ, ինչպէս էին, օրինակ, Գաբրիէլ Այվազովսկի, Մինա Բժշկնան և ուրիշներ. իսկ այժմ ապրողներից չը կայ Հ. Ալիշանը, ամենքիս շատ լաւ ծանօթ հեղինակը և բանաստեղծը:

Մի փոքրիկ յօդուած էլ, «Մեռելոց հետ» (Հ. Հացունու), նկարագրում է Մխիթարեանների գերեզմանատունը: Ասկա գալիս է «Ա. Ղազար» անունով ընդարձակ տեղագրական յօդուածք, որի հեղինակն է Հ. Ա. Էփրիկնան: Մանրամասն և աշխոյժ ոճով՝ նա նկարագրում է Մխիթարեան վանքի բոլոր սեփականութիւնները և Ղազար կղզում: Դա երկու դարի անխոնջ կուլտուրական աշխատանքի պատմութիւնն է, որ թողնում է գեղեցիկ տպաւորութիւն և ընթերցողի սիրալ լցնում է հիացմունքով և պատկառանքով գէսի այդ ժիր ու աշխատաւոր վարդապետները: Հայերի մէջ սովորական չէ տեսնել հիմնարկութիւնների երկարաւութիւն, աստիճանաբար առաջադիմութիւն, բարեկարգութիւն. Մխիթարեան վանքը մի բախտաւոր բացառութիւն է կազմում այս ախուր, յուսահատական իրականութեան մէջ: Երկու գար գոյութիւն ունենալ և երբէք չը մոռանալ բարեկարգութիւնը, աւերակներ չառաջացնել, այլ չարունակ շինել, նորոգել, մեծացնել—աս հայկական յատկութիւն չէ թւում, այնքան հազուագիւտ է մեզանում:

Հետաքրքրական է մանաւ անդ Մխիթարեան գրադարանի, մաւզէնի, թանգարանի նկարագրութիւնը: Գրադարանը ունի 30,000 հատոր գրքեր զանազան լնգուններով. հայերէն գրչագիրների ժաղացածուն պարունակում է իր մէջ 1500 կտոր: Դեռ XVIII դարից Մխիթարեանները զանազան նուէրներ էին ստանում թէ հայերից և թէ օտար անձինքներից, մանաւանդ վեհապետներից: Այսպէս, 1757 թուին «Սէտէֆճի Գրիգոր» անունով պօլսեցի հայը նուիրել է վանքին անփուտ վայտից շինած մի աթոռ, որ Հնդկաստանի գործ է և Նաղիր-Շահի արշաւանքի ժամանակ յափշտակուած էր Հնդկաստանի Դէհլի քաղաքից: 1825 թուին Եգիպտոսի Մէհէմմենդ Ալի փաշայի առաջին պաշտօնեայ հայ Եռուսուֆ-բէկ նուիրել է վանքին մի եգիպտական մումիա, որ 3500 տարուայ հնութիւն է: Նապօլէոն III կայսր 1862-ին նուիրել է բաղմաթիւ զրքեր: Խուսաց Ալկուանդը II կայսր նուիրել է չորս հատոր «Զինական օրէնքների գիրը», մի շատ թանկագին հրատարակութիւն, որի սակաւաթիւ օրինակ-

ները բաժանուեցան միայն առաջնակարգ գրադարաններին։ Եւ թէ այդ նուէրները, թէ միաբանութեան հաւաքածները պահում են մեծ խնամքավ, յատուկ պատրաստած անզերում։ Կարդալով այդ նկարագրութիւնը, նայելով բազմաթիւ պատկերներին, որոնք ներկայացնում են մուգչօնը, թանգարանը, գրադարանը, գուշ խորին ցաւով ցիշում էք մամուապատ, խոնաւ, բորբոնած մեր վանքերը, ուր փառում, ոչնչանում են գրչագրերն ու հնութիւնները, ուր յափշտակող յափշտակողի ետեից է մըտնում...

Եւ զարմանալի չէ որ ս. Ղազարը հետաքրքութեան առարկայ է եղել Վենետիկը այցելող բոլոր ճանապարհորդների համար Վանքում կան գրքեր, ուր այցելուները գրում են իրանց անունները. այդ գրքերը չոյց են տալիս որ մի տարուայ ընթացքում ս. Ղազարը այցելողների թիւը համար է ութ հազարի։ Դեռ շատ ու շատ այցելուներ չեն ստորագրուում գրքի մէջ. իսկ ստորագրուողներից շատ շատերը մի քանի անգամ են այցելում վանքը։ Կարելի է երեկայել թէ որքան ժամանակ և աշխատանք է խլում միաբաններից հէնց միայն այդքան հիւրերի լինդուններութիւնը։ Մի համառօտ ցուցակից, որ հանուած է այցելուների գրքից, մենք իմանում ենք որ ս. Ղազարի այցելուների թւում եղել են և կան թագաւորներ, իշխաններ, հռչակաւոր գիտնականներ։ Այդ անունների մէջ են Ալեքսանդր I, Ֆրանց-Յովաչի, Ռեմբերտօ, Ալեքսանդր II թագաժառանգ ժամանակը, Էդուարդ, Անգլիայի այժմեան թագաւորը, Ֆրիդրիխ Վիլհելմ, որ յետոյ եղաւ գերմանական կայսր, Թիէո, իշխան Փորչակօվ, Գլադտոն, Բեօսկին, Միշէ, էրնեստ Ռընան, Վալտէր Սկօստ, էդգար Քինէ, Լէօպոլդ Շանկէ, Ժօրժ Զանդ և այլն։

«Միսիթար» ժողովածուի վերջին յօդուածն է «Միսիթարեան ամբողջ հարք»։ Այդտեղ յիշատակուած են Վենետիկի բոլոր Միսիթարեան միաբանները, հիմնարկութեան օրից մինչի այժմ։

Վերջացնելով մեր խօսքը այս շքեղ գեղարուեստական հրատարակութեան մասին, մենք շատ կը ցանկանայինք որ նա շատ տարածուէր հայերի մէջ։ Գրասեղանի աւելի սիրուն զարդ հազիւ թէ կարելի լինի գնել մեղանում։

40) Մատենարաբան «Անահիտ» — № 1. Անարք Թրան. Եպիկուրի պարեկը (Հատուածներ), թարգմանեց Ա. Զ. Բարիզ, 1901 թ. Գինը 1 դրամկ:

Պարիզում հրատարակուող «Անահիտ» ամսեայ հանդէսը իր բաժանուրդներից նրանց, որոնք երրորդ տարուան բաժանորդավիճակը վճարած են, ձրիարար ուղարկում է յիշած գիրքը, ինչպէս և Ալֆրէդ Դը Վինէլի «Քերթուածները», որ չուտով լոյս կը տեսնի: Անկասկած, կարելի է ողջունել՝ Փրանսիական գրականութիւնից ընտիր երկասիրութիւնների հայերէն թարգմանութեան միտքը, անկայն, մեզ թւում է, որ այդ սերիաներին պէտք էր լցել, իբրև առաջարան, մի տեսութիւն Փրանսիական արդի գրական հոսանքների մասին. այն ժամանակ աւելի կը թիւ ազդեցութիւն կ'ունենային այդ հրատարակութիւնները և իրարից անջատ, անկապ, պատահական հատուածների բնաւորութիւն չէին կրի:

Անարք Ձրանսի «Եպիկուրի պարտէզ»ի մէջ հատուածները այնպիսի տպաւորութիւն են թողնում, որ կարծես գուք յանկարծ մտել էք Փրանսիական մի բարձր սալօն, ուր խօսում են զանազան փիլիսոփայական, հասարակական և զիտական հարցերի մասին սալօնական նրբաճաշակութեամբ և թեթեութեամբ. գուք չը գիտէք խօսակցութեան սիլիզը, շատ բան միայն հարևանցի ակնարկով է շօշափուած. զգում էք որ խօսողը աշխատում է որքան կարելի է գեղեցիկ ձեռքի մէջ ամփոփել իր թը-ռուցիկ մտքերը... Սյդ սալօնական խօսակցութիւններից հազիւթէ շատ բան ուսանի հայ ընթերցողը. նրան հարկաւոր են այժմ ոչ գրական քաղցրեղէններ, ոչ բխսկվիտներ, այլ աւելի մնադարար և պարզ մուաւոր կերակուր: Փրանսիական գրականութեան մէջ պէտք է ընտրել և թարգմանել աւելի հիմնական, տեսողական գին ունեցող երկեր:

Գալուվ թարգմանական լեզուին, պէտք է խոսառվանել որ նա գողտրիկ է և կարողացել է արևմտեան հայերէնով արտայայտել հեղինակի նուրբ, թեթև և գեղեցիկ ոճը:

I. II.

41) Н. В. КРЕНИЦЫНЪ, „Восточный вопросъ на почвѣ его исторіи и политики“, С.-Петербургъ, 1900, 118 стр. цѣна 1 руб.—н. Վ. Կրենիցին. «Արևելեան հարցը իր պատմութեան և քաղաքականութեան տեսակէտից», Պետերբուրգ, 1900 թ. 118 եր. գինը 1 ռ.:

Մարդկային կեանքը զոյութեան կոուի մի անոներչ շղթայ

Է։ Ազգեր և ժողովուրդներ անդադար մրցում են միմեանց հետ, անողոք կախ են մզում բնութեան դէմ, որպէս զի բարւոքեն իրանց վիճակը, համնեն տենչալի ապագային։ Նրանցից իրաքանչիւրը մի որոշ գեր է խաղում այդ կուռում, մի որոշ հետք է թողնում համաշխարհային կեանքում։ Դժբախտաբար կան ազգեր, որոնք այլ և այլ հանգամանքների ազգնութեան տակ իրանց ստոր բնազդը, աւերիչ հակումները ծայրայեղութեան հասցնելով։ Կատարեալ պատուհաս են գառնում հարևանների համար, միմիայն չարիք են պատճառում համայն մարդկութեանը։

Ահա այդպիսի ազգերի թուին են պատկանում թիւրքերը, որոնց ամբողջ պատմութիւնը ընթացել է հրի և սրի ու արեան զետերի միջով։

Թիւրքիայի ամբողջ անցեալը մեզ բերում է այն եզրակացութեան, որ նա սկզբից մինչև վերջը եղել է մի պատերազմական բանակ (*), որ հրով և սրով հիմնել է իր գոյութիւնը, հրավ և սրով հասել հզօրութեան և նոյն միջոցով ենթարկուել քայրայման։ Բնականից աւարառու և աւազակաբարոյ թիւրքերը, իւրամբ ընդունելով, աւելի կոստացան, ազատութիւն տուին իրանց գաղանային հակումներին, անզուսպ կրքերին։

— Թիւրքերը, ասում է անմահ Գլագոտոն (**), նման չեն ոչ Հնդկաստանի հեզ մահմեզականներին, ոչ Սիրիայի ասպետ-սալլուդիններին և ոչ էլ Սպանիայի քաղաքակիրթ մաւրերին։ Եւրոպա ուզք գնելու օրից նրանք ներկայացնում են մի ահարկոտիպ, որ բացասում է այն ամենը, ինչ որ մարդկային է։ Նըրանք ուր որ մտել են, այնտեղ թողել են արիւնաշաղախ լան հեռագեր, ուր որ հաստատել են իրանց տիրապետութիւնը, այնտեղ անհետացրել են քաղաքակիրթութիւնը։ Նրանց կառավարութիւնը միշտ հիմուած է եղել ոչ թէ օրէնքի, այլ բռնակալութեան վրայ... Այն, Թիւրքիան եղել է զինուռական հօգույժ, որից մի ժամանակ վասնպի է ենթարկուել ամբողջ եւրոպան»...

Սակայն այդ հզօրութիւնը հէնց սկզբից եղել է արտաքին, անհիմն և միայն մի շարք բարեբաստիկ հանգամանքներից առաջացած։

Իբրև ապացոյց բաւական է մի թեթև ակնարկ ձգել գէպի անցեալը, բաւական է պատկերացնել թիւրքիոյի նուաճած ազգերի սօցիալական և քաղաքական կազմն ու ոյժը։ XII—XIII

(*) Ferrero Il Militarismo, Milano 1898.

(**) „Болгар. ужасы и восточн. вопр.“ В. Гладстона - стр. 9—10.

դարաշրջանում թէ Փոքր-Ասիան, թէ Բալկանեան թերակղզին արգէն քայլայուած մահամերձ դրութեան մէջ էին և բնականապար հէնց առաջին հարուածից պիտի խոնարհուէին թշնամու տուաջ, պիտի ընդունէին իսլամի լուծը: Ուրեմն զարմանալու ոչինչ չը կայ որ Թիւրքիան այգավիտի հեշտութեամբ ու արտգութեամբ տիրեց այդ երկիրներին:

Կրկնում ենք. այդտեղ մեծ գեր կատարողը բարեյաջող հանգամտնքներն էին և ոչ իսկական ոյժը: Ի հարկէ հնարագէտ խելքը, նպատակայարմար միջոցներից օգտուելով, կարող էր արտաքին հզորութիւնը դարձնել և ներքին—հիմնաւոր, բայց Ալլահն այլ կերպ էր տնօրինել...

Տիրապետելով լայնածաւալ և բերրի երկիրներ, նուաճելով բազմացել ու բազմադաւան ազգերի, Օսմաննեան պետութիւնը չաշխատեց կուլտուրական միջոցներով կարգաւորել իր գործերը՝ հաղորդակցութեան ճանապարհներ շինել, գործարաններ հիմնել, երկրի բերքերը շահագործել, հպատակների վիճակը բարութել, ուսում և կրթութիւն տարածել *): Նա ընդհակառակը իրան զէնք ընտրեց կոպիտ ոյժն ու լուսակալութիւնը: Թիւրքերը, իրեն պատերազմող—աիրող տարր, ապրել են մեծ մասամբ «բայաների» հաշուով, շարունակ անձնատուր են եղել ծուլութեան, յետամնացութեան: Քրիստոնեայ հպատակներն են եղել երկիր մշակողը, արդիւնագործաւթեան ու վաճառականութեան զարգացնողը, պետութեան տնտեսական հիմքը պահպանողը: Անվերջ մրցման, անընդհատ տոկունութեան չնորհիւ դրանք բնակոնարար եղել են կուլտուրապէս աւելի բարձր քան մահմետականները: Սակայն օրէցոր անող բռնակալութիւնը, կառավարիչ դասակարգի կամացականութիւնը, երկրի սիստեմատիքաբար անբերրիանալը և ընդհանրապէս կեանքը ու գոյքի կատարեալ անապահովութիւնը քրիստոնեայ ազգաբնակութեան թշուառութիւնը հասցըել են զագաթնակէտին և տեղի տուել մի շարք ապատամբութիւնների. իսկ այդ իրողութիւնը մեծ պետութիւնների այլ և այլ միտունների հետ միացած առաջացրել է «Սրեկեան հարցը»—այդ անլուծելի «Գորգեան հանգոյցը»:

Վերոյիշեալ զրքի հեղինակը—պ. Կրենիցին արևելեան հարցի սիլլը համարում է 1453 թ. մայիսի 29-ը, այսինքն

*) Ճիշտ է, այժմ Թիւրքիայում կան մի քանի բարձրագուն, 140 միջնակարգ (որոնցից 12 զիմնավիա—Սուլթանիէ միկթէրի և 118 բէալ դպր.—միկթէրի բուժդիէ) և բազմաթիւ տարրական գարոցներ (իրդիթալէ միկթէրի), բայց դրանք ողորմելի պատկեր են ներկայացնում իրանց աւանդած առարկաների և դաստառութեան ձեռով: Ամեն տեղ թագաւորում է Նորանի ոգին:

այն օրը, երբ թիւրքերը կ. Պօլսի տէրը դարձան: Նրա կարծիքով այդ հարցի հիմքը կրօնական տարբերութիւնն էր: Ռուսական ները յոյների հաւատակիցն էին, ուստի և պիտի պաշտպանէին նրանց շահերը: Բացի զրանից 1472 թ. Մեծ իշխան Իօհանն III-ը ամուսնացաւ յունաց թագաւորազն Սօֆիայի հետ և այդ օրուանից ուստաց վեհապետները թիւրքահպատակ քրիստոնեաների հովանաւորը դարձան և սկսեցին միջամտել թիւրքիայի գործերին:

Պ. Կրենիցին մանրամասն կերպով նկարագրում է Ռուսաստանի կատարած դերը արևելեան հարցում, նրա քաղաքական յարաբերութիւնները թիւրքիայի հետ և մղած պատերազմներն ու ձեռք բերած հետեանքները:

Դժբախտաբար նա այդ հարցերն այն աստիճանու միակողմանի է չօշափում, որ ընթերցողն ակամայից դալիս է այն եղբացութեան, թէ արևելեան հարցը գոյութիւն ունի միայն Ռուսաստանի և Թիւրքիայի համար, թէ միւս մեծ պետութիւնները չեզոք կամ երկրորդական դեր են խաղացել, թէ ապագայում էլ միայն Ռուսաստանը պիտի լուծէ այդ հարցը:

Սակայն հեղինակի թէ զլիաւոր հայեցակէտը և թէ եղբացութիւնները միանգամայն սխալ են: Անա թէ ինչու. արևելեան հարցի զլիաւոր հիմքը ոչ թէ կրօնական կամ ազգային տարբերութիւնն է, այլ անտեսական-սոցիալական գործոնները, ինչպէս արդէն նկատեցինք վերևում: Եթէ Թիւրքիան լինէր քաղաքակիրթ պետութիւն, եթէ նրա հպատակներն ունենային կեանքի և գոյքի ապահովութիւն, եթէ նրանք ազատ լինէին գաղանային հալածանքներից ու բռնութիւններից, այն ժամանակ կրօնական գործօնը ոչ մի դեր չէր կարող կատարել և արևելեան հարցն էլ գոյութիւն չէր ստանայ:

Ինչ զերաբերում է հեղինակի եկրակացութիւններին, կարելի է միայն այսպանը նկատել. ճիշտ է, Ռուսաստանն է եղել արևելեան հարցում զլիաւոր դեր խաղացողը, ճիշտ է, նրա զինուորների արիւնն է ներկել Թիւրքիայի դաշտ ու լեռները, նրա միջամտութիւնն է նպաստել յոյների, սերբերի, սև լեռնըցիների ու բոլղարների ազատութիւն ձեռք բերելուն, բայց երբէք չը պէտք է մոռանալ որ այդտեղ նշանաւոր դեր են խաղացել նաև Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան, ուստի դրանց մասին էլ խօսեն անհրաժեշտ էր:

Բացի զրանից արևելեան հարցը լուսաբանելու համար հարկաւոր է քննել Թիւրքիայի հերքին - սոցիալական կեանքը, նրա հպատակ ազգերի կարիքներն ու պահանջները, որ միան գամայն բաց է թողնուած պ. Կրենիցինի գրքում:

Առանց դրան միանգամայն սննդապատակայարմար է վճիռ-ներ տալը, առաջարկութիւններ անելը, որովհետև դրանք միշտ էլ կարող են սիսալանքներ ու թիւրիմացութիւններ առաջացնել: Ի մնալ միայն «Ճայն բարբառոյ յանապատի»:

Եւ իսկապէս մինչև օրս այդպիսի քանի առաջարկութիւններ են ևզել. Բ. Դուռը քանիքանի խոստումներ է տուել Եւ-րոպային. սուլթանները որքան գեղեցիկ բարենորսգումներ են հրատարակել... իրագործուել են, երկրի գրութիւնը փոխուել է արգեօք... Ոչ: Ըսդհակառակը թիւրքիայի կազմը հետզհետէ աւելի ու աւելի է քայլայուել, թիւրքահպատակների վիճակը աւելի է վատթարացնել: Միայն քսան տարուայ ընթացքում (1854—75) նա քսան անգամ արտաքին փոխառութիւն է առել *): 1875 թ. նրա պարագն էր 995,000,000 ռ., 1897 թ.—1,064,372,370 ռ. իսկ անցեալ 1900 թ.—4,100,000,000 ֆրանկ: Այդպէս ուրեմն թիւրքիայի պարտքերը տարէց տարի աւելացնել են:

Հապա ուր են գնում մեծաքանակ հարկերը, ինչ են լինում լայնատարած երկրի բերքերը: Ահա թէ ուր.—Սուլթանը, իր արքունիքում խիստ հսկողութեամբ պահպանելով Սանջաղիշերիքը (նուիրական դրօշակ, որով Մահմէդն առաջնորդեց ամբոխին դէպի Մեկլա), Օմարի յաղթական դրօշակը և Խրիսյիշերիքը (Մահմէդի վերարկուն), իրան համարում է Մահմէդի յաջորդ—իսլամի խալիֆ: Իրեն մի բաղմամիլիօն համայնքի կրօնական աշխարհական պետ, նա ասլրում է իր կոչմանը վայել չուքով և շռայլութեամբ: Նա տարեկան մօտ 50,000,000 ռ. ծախսում է միայն իր հարէմում, ուր ապրում են 1,500 հոգի (Սուլթանի կանանց թիւը հասնում է 300-ի) **):

Դրա վրայ աւելացրէք լրտեսների (տարեկան 30,000,000 ռ., զօրքի ***) վրայ ծախսածը, փաշաների և միւս պաշտօննեաների կատարած բազմազան տեղի և անտեղի ծախսերը, ինկատի ունեցէք հարկահանութեան կամայական ձեր և այն ժամանակ հասկանալի կը լինի թիւրքիայի սնանկութեան պատճառները:

Նա XVII դարից մտել է անզօրութեան շրջանը: Նրա ներքին և արտաքին քայլայումը գեռ շարունակւում է: Իբրև

*) Յորի Կազի Բեկъ: „Современная Турция“.

**) R. Stein: „Abdul Hamid, seine Familie, sein Hofstaat“. 1901.

***) Թիւրքիայի զօրքի թիւը խազաղ ժամանակ հաւասար է 182,000-ի —1,183 թնդանօթով, իսկ պատերազմի ժամանակ 610,000—1,512 թնդանօթով:

ապացոյց բաւական է յիշել թիւրքահայաստանի և Մակեդոնիայի արխնահնեղ դէպքերը, Արարիայի մերթ ընդ մերթ կը ընուռող ալպստամբութիւնները, «Երիտասարդ թիւրքերի» խըբրտումը: Իզուր է վրդովեռում խոլա՞փի խալիֆը, ապարափին է թիւրք հայրենասէրների ջանքն ու ճիգը: Գործերի ընական ընթացքը, Ղուրանի աւերիչ ոգին հէնց սկզբից թիւրքիացին դէպի կորուստ—քագքայում էին տաճում և այժմ արդէն ուշ է այդ պատմական հոսանքի առաջն առնելը:

Եթէ թերթենք պատմութեան էջերը, կը նկատենք որ երբ բազմանում են մի որ և է զինուորական պետութեան կործանման յատկանիշները, այն ժամանակ իշխողատիրապետող գասակարգն աւելացնում է բոնութիւններն ու խստութիւնները, բայց այդ խաբուսիկ միջոցը միշտ էլ ապարդին է մնացել և ընդհակառակը արագացրել է կործանման պրօցէսսը: Այժմ նոյն երևոյթը նկատում է թիւրքիայում:

«Հիւանդ մարդը» որքան սաստկացնում է իր անգիտութիւնները, որքան յոճախ է կրկնել տալիս կոտորածները, այնքան շատ խառնակութիւններ ու գժառութիւններ է առաջացնում և զրանով իր վիճակը վատթարացնում: Համեմատենյէք այժմեան և նախկին թիւրքիան: Մըքան փոքրացել են նրա սահմանները: Նրանից բաժանուել են՝ Վենգրիան, Տրանսիլվանիան, Կրօստիան, Բեսարաբիան, Յունաստանը, Սերբիան, Դարադաղը, Ռումինիան, Բոլղարեան, Ալմիրը, Թունիսը, Կիպրոսը: Լիբանանը և Կրէտէն ինքնավարութիւն են ստացել:

Այն թիւրքիան, որ մի ժամանակ արսափի մէջ էր պահում ամրող Եւրոպան, այսօր ստիպուած է ամեն մի քայլափոխուում մեծ պետութիւնների հրահանգով շարժուել, նրանց անհամաձայնութիւնից օգանուել, հարցեր ձգձիլով, խոստումները չիրագործելով: Կարող է արդեօք այդպիսի արհեստական գոյութիւնը երկար տեսել...

Այդ հարցին պատասխանել—կը նշանակէ տալ ամրող «Արևելեան հարցի» լուծումը, որովհետեւ դրանից է կախուած թիւրքիայի «լինել-չը լինել» խնդիրը:

Ինչպէս յայտնի է, մինչի օրս շատ է զրուել ու խօսուել այդ չարաբաստիկ հարցի մասին, շատ հեղինակաւոր մարդիկ (օրինակ Գլադատոն, պրօֆ. Կոմարտովսկի, տնտեսադէտ Էմիլ-Չըլաւելէ, Սոլովեօվ և այլն)—յայտնել են իրանց կարծիքը: Այժմ դրանց վրայ աւելանում է մի նոր կարծիք—ալ. Կրենիցինի կարծիքը:

Վերջինս պատկանում է սուսաց բարձր զինուորական շրջանին, ուստի և նրա կարծիքը մի առանձին հետաքրքրութիւն

է ներկայացնում: Նա իր գրքի վերջում քննադասում է Ռուսաստանի քաղաքականութիւնը արևելեան հարցում և գալիս է այն եղանակացութեան, որ այդ քաղաքականութիւնը սխալ ուզզութիւն է ունեցել, ուստի և հանդիպել է արգելքների Եւրոպայի կողմից: Ռուսաց գործիչները միշտ աշխատել են մեծ-մեծ ծրագիրներ կազմել (օր. Պատեօմիլնի, գրաֆ Կապօդիստրիոյի, Զուբովի ծրագիրները). իսկ այդ հանգամանքը երկիւղ է աղղել Եւրոպայի վրայ: Եւրոպական պետութիւնները ամեն կերպ աշխատել են զսպել Ռուսաստանի աշխարհակալական ձգտումները և գրանով գանդաղեցրել են արևելեան հարցի լուծումը:

Նրա կարծիքով արևելեան հարցը վերջնականապէս լուծելու համար հարկաւոր է Բալկանեան պետութիւններից կազմել մի գաշնակցութիւն և Պոլիսը գարձնել այդ գաշնակցութեան մայրաքաղաքը:

Ջրանցքների վերահսկողութիւնը պէտք է յանձնել Ռուսաստանին և Բալկանեան գաշնակցութեան: Իսկ թէ ինչ է լինելու թիւրքահապատակների վիճակը—այդ մասին հեղինակը ոչինչ չի ասում. միայն հայերի մասին նկատում է, թէ նրանց պէտք է վերցնել Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Բոլորից վերջը կրենիցինը եղանակացնում է, թէ Ռուսաստանի շահերի տեսակիչտից անհրաժեշտ է Ղարսը երկաթուղու ցանցերով միացնել կենտրոնական Ռուսաստանի հետ և ուժեղացնել Սև ծովի նաւատորմը, որովհետև միայն արիւնահեղ պատերազմը կարող է վերջնականապէս լուծել արևելեան հարցը...

Ե. Թ.

42) Dr. Ernst Friedrich: „Handels und Produktenkarte von Kleinasiens“. Halle, verlag G. Sternkopf.—Դ-ր Երնառ Ֆրիդրիխ. „Փոքր-Ասիայի առևտուրական և արդինաբերական քարտուզը“ Հալլէ հրատ. Գ. Շտերնկառֆի:

Եւրոպական կապիտալիզմը, շարունակ աճելով, միշտ կարիք է զգում նոր վաճառանոցների: Սակայն առանց հիմնական ուսումնասիրութեան չափազանց գժուար է մի որ և է երկրի հետ առևտուրական յարաբերութիւն ունենալ, գժուար է համապատասխան չափով մթերքներ արտահանել ու ներմուծել:

Ահա հէնց այդ տեսակիչտից շատ մեծ արժէք ունեն առևտուրական արդինաբերական քարտուզներն առհասարակ:

Ինչպէս յայտնի է, վերջին տարիներում Փոքր-Ասիան Եւրոպայի յատուկ ուշադրութեան առարկան է գարձել: Պետու-

թիւններն աշխատում են իրանց քաղաքական ազդեցութիւնն ուժեղացնել, իսկ կապիտալիստները ձգտում են շահագործել այդ ազդեցութիւնը, կարելոյն չափ շատ ձեռնարկութիւններ սկսել և շատ օգուտ ստանալ:

Այդպիսի պայմաններում մի բացառիկ նշանակութիւն է ստանում գոկար Թրիդրիսի աշխատութիւնը, որ բազկացած է 16 մեծադիր երեսներից և մի յաջողակ քարտէզից:

Քարտէզում որոշուած են իւրաքանչիւր սանջաղի սահմանները և նշանակուած է, թէ Փոքր-Ասիայի իւրաքանչիւր դաւառն ինչ է արտադրում, ինչպիսի բնական հարստութիւններ է պարունակում իր մէջ. Բնագրում զետեղուած են մի քանի անհրաժեշտ բացատրութիւններ քարտէզի մասին, անուանացուցակ և Փոքր-Ասիային վերաբերեալ գրուածքների ցանկը, որ դժբախտաբար լրիւ չէ:

Ե. Թ.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ի Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Բժկ. Վ. Արծրունի, «Մի խմիր», 2-րդ հրատարակութիւն, պատկերներով, Թիֆլիս, 1901 թ., գինն է 5 կ.:
- 2) Կոկոյեան կտակի պատմութիւնը, Նոր-Նախիջնան, 1901 թ.:
- 3) H. Arakélian. La question arménienne au point de vue de la paix universelle, -Genève 1901.
- 4) Համառոտութիւնք տարեկան հաշուոյ 1900 ամի աղգային կրօնական, բարեգործական և կրթական հաստատութեանց Նոր-Զուղայի և երից դպրոցաց գիւղօրէից, Նոր-Զուղա, 1901.
- 5) Տարեոր Տեղեկագիր հանրական ատենին յանձնանաց հայ աղգային հաստատութեանց Բատաւիոյ վասն 1900 ամի. Նոր-Զուղա, 1901:
- 6) Տեղեկագիր և հաշուեկշիռ 1900—1901 տարեշրջանի Թաւրիդի հայ Բարեգործական Ընկերութեան, Դաւթէ 1901.
- 7) Տեղեկագիր և հաշուեցոյց 1900—1901 տարեշրջանի Ատըր պատականի Հայ. Բարեգ. Ընկ. Թաւրիդ, 1901.
- 8) W. Nalbandian, Leopold von Rakes bildungsjahre und Geschichtsauffassung, Leipzig, 1901.
- 9) Վ. Փափազեան. Պատմուածքներ, Թիֆլիս, 1901, գինն է 50 կ.:
- 10) Д-ръ Рындюнъ. Основы водолечения и свѣтолеченія, Ростовъ на-Дону 1901, цѣна 20 коп.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«ՀՈՂԱՅԻՆ ՏՈՒՐՔԸ» ԵՒ ՀԱՐԿԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Գլ. V

«Ծխահարկիս սկզբունքի աղդեցութիւնը գիտերի հարկի բաժանման արդարացի սովորութիւնների քայլակման նկատմամբ։ Հարկերի անհաւասար ծանրանալը ունեորների և չունեորների վրայ օրինակներ կովկասի զանազան շրջաններից։ Դրամական տուրքի թուլ կողմերը։ Շնորհմանկիս տուրքերի ուժեղանալը։

Արևելեան Անդրկովկասի թրքական շրջանում, ինչպէս և խառը թուրք-հայկական (Գանձակի և Բագուի նահանգներում) տուրքի ենթարկուող օրեեկտը կազմում է «զլուխը» (աշխատաւոր տղամարդու), «տունը», անասունը, վարելահողը, այգիները։ Հայ զիւղերում, իբրև հողագործների, «զլիխ» հետ միասին հաշւում են և վարելահողը, այգիները։ Մեծ մասամբ խաչնարածութեամբ պարապող տուրքերը «զլիխ» հետ միշտ հաշւում են և անասուններին։ Շամախի գաւառի թափառաշրջիկ Սրաբ-Շահվէրդի զիւղում, օրինակ, ամեն ծխից վերցնում են 5-ական ո., իսկ մնացած տուրքը բաժանում «կարա»-ի հաշուով։ Մի «կարան» համապատասխան է 40 ոչխարի, 8 մեծատաւարի, 4 ծիռ, 1 փոքր ուղտի, $\frac{1}{2}$ մեծ ուղտի, $\frac{1}{2}$ աշխատող տղամարդու և այն։

Նուխու գաւառում և այլ շրջաններում, ուր մեծ նշանակութիւն ունի այգեգործութիւնը, տուրքի խոշոր առարկայ են այգիները իրանց տարածութեան, ստացուող բերքի, կամ կենդանացուող շերամի սերմի քանակութեան համեմատ։

Հողագործ հայ և վրաց շրջանում (Երեանսի, Թիֆլիսի նահանգներում) հարկային ձեւ ենթակայ է հողական կարգերին։ Բայց քանի որ համայնական հողատիրական սկզբունքի համաձայն բաժանման են ենթարկուում հողերի մի մասը—վարելահողերը և խոտամարգերը—դրա համապատասխան ձևով էլ կատար-

ւում է և հարկերի բաժանումը: Մեծ մասամբ հողը և մարգերը բաժանում են համփա-չարէքի, կամ—ինչպէս Վրաստանում են ասում—լիտրա-չարէքի սկզբունքի հիման վրայ: Համփա-չարէք սկզբունքի էութիւնը կայտնում է նրանում որ գիւղի կողմից ընտրեալների միջոցով ընտանիքները բաժանում են՝ զանազան կարգերի, իրանց աշխատաւորների, լծկանի թուերի և առնասարակ ապրուստի համեմատ: 3—4 տղամարդ, 7—8 լուծ և զնու գոմէշ, 100—200 սչխար ունեցող ընտանիքը հաշւում է իսկական համփա (լիտրա) ընտանիք, դրա կեսի չափ ոյժ-կարողութիւն ունեցող ընտանիքը հաշւում են կէս համփա, կամ 2 չարէք և այլն. Կան ընտանիքներ որ 1^{1/2}, նոյնիսկ 2 համփա են, և ընդհակառակը վերջերս երևացել են նոյն իսկ 1/2 չարէք, կամ համփի 1/8 ուժով ընտանիքներ (պճեղ), նոյն իսկ համփի 1/16-ական մասը:

Յիշուած հայ-վրայական հողագործ շրջանի համփա-չարէքական սկզբունքով զեկավարում են նոյնիսկ և հայ-վրացական շրջաններում ապրող հողագործ թուրքերը ինչպէս և հայերի մէջ ապրող յոյները, եղբդները:

Բայց պատահում է և հակառակը:

Զուտ հողագործ հայ-վրացական շրջանում կան գիւղեր, ուր համփա-չարէքական սխատէմը փոխարինուել է ուրիշ աւելի անարգարացի ձեռվ-ծխի, հոգիի վրայ և այլն. պ. Մաշաբեկի ասելով վրացարնակ Գօրուայ գիւղերը բաժանում են 4 կարգի՝ գաւառում հարկերի ձեռի բաժանուելու վերաբերմամբ. 1) 27 գիւղի բոլոր տուրքերը (արքունական և գիւղական) բաժանում են կարողութեան վրայ (լիտրա-չարէքի սկզբունքով), 2) 26 գիւղի արքունական հարկերը բաժանում են կարողութեան վրայ, գիւղական ծախսերը—հաւասարապէս բոլոր ծխերի, 3) 4 գիւղում արքունական հարկերը բաժանում են ծխի վրայ. գիւղական ծախսերը կարողութեան վրայ (4) 66 գիւղի բոլոր հարկերը (արքունական և գիւղական) բաժանում են հաւասարապէս բոլոր ծխերի վրայ:

Ընդհակառակը, հողագործ զուտ հայկական Ալեքսանդրապոլի, Սխալքալաքի, Նոր-Բայազէթի գաւառներում, ինչպէս և հարեան տեղերը հարկերի բաժանումը անխսախտ կախուած է հողի բաժանումից. հարկերը վճարում են հողի տարածութեան համեմատ: Մեծ մասամբ ի նկատի են առնուում վարելահողերը և խոտհարքները: Լաւ եկամուտով հողերը գնահատուում են աւելի բարձր և հակառակը. օրինակ, Սխալքալաքի գաւառի Գիւմուրդա գիւղում աղբած հողերի մէկ չափը հաւասարուում է միւս հողերի 2 չափին, Մեծ Արակոլա գիւղում. 20 կոդ աղբած

հողը հաւասար է 30 կոտ միջակ հողին և 40 կոտ սարի հողին... Հողատիրական ձեր փոփոխութեան հետ միասին փոփուռմ է և հարկային ձեր: Դրանով է բացարրում այն հանգամանքը, որ վերջի ժամանակներս հայկական շրջաններում հարկային սիստէմը հողատիրականի հետ միասին համփա-չարէքի սկզբունքից վերածւում է «ջանի» (անճնաւորութեան) սկզբունքի:

Այս ամենատարածուած ձեւերից մենք ունենք և շնորհմներ դէպի երկու հակառակ կողմեր: Այն տեղերը, ուր հողատիրական ձեր համայնականից փոխուած է անհատականի, կամ մօտ է այդ փոփոխութեան, ուր տնտեսութիւնը միատեսակ է, ուր չը կան ուժեղ արագիցիաներ և ուր թոյլ է ժողովրդի զիտակցութիւնը—տուրքերը սկսում են բաժանել ծիփ վրայ: Այդ զրութեան մէջ է Քութայիսի նահանգի գիւղերի մեծամասնութիւնը, Թիֆլիսի, Սղնախի գաւառների ոռուսաց, գերմանացոց գիւղերը հարեւանների հետ և երկրի այս ու այն անկիւնում ընկած թուրք հայ, յոյն հաւա-հատ գիւղերը:

Ընդհակառակը, ուր համայնական հողատիրութիւնը ուժեղ է, ուր բարդ է անտեսութիւնը, ուր մանաւանդ արագիցիաներին օգնութեան է հասնում զարգացումը, զիտակցութիւնը և գիւղական ինտելլիցիայի աջակցութիւնը—հարկային ձեր մնում է հինը (կարողութեան վրայ) և նոյնիկ աւելի անարդարացի հիմքերից անցնում է այդ ձեին: Շամախի գաւառի Դեկման, Խաթման, Գաջման թաթերի գիւղերում բնակիչները բաժանուած են 6 կարգի, 1,2,3,4,5 և 6 շահի անունով: 6-որդ շահի գասակարդի ընտանիքը վճարում է 3 անգամ աւել քան 2 շահի գասակարդի ընտանիքը և 6 անգամ աւելի մէկ շահանոցից: Նոյն գաւառի Բասիսալ գիւղում, ժողովրդի անտեսական զրութեան անկման պատճառով, ամբողջ հասարակութիւնը բաժանուած է 24 զանազան կարգերի «ստիլի» անունով՝ 1 ստիլից մինչև 24 ստիլ...

Սղնախի գաւառի Բօգրէօ-Զուրաբանի վրաց գիւղում աշխատողի, հողի և անասունների հաշուով, ամենահարուստ ընտանիքը վճարում է բոլոր տուրքեր 90 ոռուրուց աւել, այն ինչ կան աղքատներ, որոնց վճարելիքը հաղիւ համում է մի քանի սուբլու:

Ախալքալաքի գաւառի բարդ, բազմակողմանի և ինտենսիւ կուլտուրա ունեցող Խրթըզ մահմեղական գիւղում չը նայած բոլոր հողերի բաժանուած լինելուն, բարդ ու արդարացի է նաև հարկային ձեր: Խրթզի հարկային ձեր, ասում է այդ գաւառը հետազոտող պ. Վերմիշեվը, իրան նպատակ ունի եկամուտի

բոլոր աղբիւրները, ընդունելով ամէնսարդարացին՝ որ եկամտի 100/0 վերցնուի իրքե տուրք յօգուտ հասարակութեան։ Այս հիման վրայ ամեն մի կոմից տուրք վերցնուում է 2 կոպ., լծկանից 20 կ., ձիուց 50 կ., էշից 20 կ., ոչխարից 10 կ., մեզուի փեթակից 30 կ., մէկ քար ունեցող ջրաղացից 6 ուուրլի, խանութից 3 ուուրլի, այզիներից ամեն տարի գրոշուող ու գնահատուող եկամտի 100/0-ը... Այսչափ մանրակրկիտ և արդարացի են զիւղացիք տուրքը բաժանելիս և մի քանի հայ զիւղերում, ուր ինտենսիւ ու բաղմակողմանի է երկրագործական կուլտուրան։ Այդպիսի զիւղերի շարքումն են Նուխուայ գաւառի Վարթաշէն զիւղը, Զանկեսպուրի Մեղրին և ուրիշները...

Ինչպէս վերը ասացինք, զիւղական սովորութիւնները (հարկերի բաժանման վերաբերմամբ) մշտական չեն. նրանք համաձանուում են ժամանակի տիրապետող ողու հետ, փոխուում են, երբ փոխուում է մարդկանց աշխատահայեցողութիւնը ու զիւղական տարբեր շահերով մրցող խմբակների հաւասարակոչող ոյժը։ Տարաբախտաբար «ժամանակի ողին» չի տանում դէպի հաւասարութիւն։

50 տարի շարունակ զոյութիւն ունեցող «ծխահարկի» սկզբունքը հակառակ էր արդարութեան, և այդ անարդար սկզբունքը կարողացաւ զիւղերի մէջ զոյութիւն ունեցող սովորութիւնները ուղղել դէպի վատը, դէպի այն, որ թոյլը աւելի թուլանայ, իսկ ուժեղը աւելի ուժեղանայ։ Ստեղծուած անարդարութեան աստիճանը պարզելու համար ես ինձ թոյլ կը տա՞րերել այստեղ երկրի զանազան շրջանների տիպիկական ընտանիքների բիւղչէններից (ստացած-ծախսուածից) մի քանի օրինակներ։

Նոր-Բայազէթի գաւառի հայաբնակ Կուլալի զիւղում, որ ալ. Պարվիցիու *) ասելով կարելի է տիպիկական համարել հայրնակ գաւառի համար, հարուստ, միջակ և աղքատ ընտանիքների բիւղչէններից ինչպէս և վճարելով տուրքերը հաւասար են.

Որ գաւառիարգի	Պարելաս- հողի աս- անասուն.	Տուքը- բահու- արդէքը)	Տարե- կան կան մուրը	Զուտ	Վճա-
Համարելա-	Հողի աս- անասուն.	կան կան մուրը	ա. ա. ա.	ա. ա. ա.	ա. ա. ա.

Հարուստ . 13 121 2,948 1,353 1,231 +122 210

*) Материалы по изуч. экономич. быта Госуд. кр-яня Закавк-я, т I, стр 350—362.

Միջակ	.	.	7	52	738	318	267	+	51	980
Աղքատ	.	.	6	42	20	40	45	—	5	750

Եթէ մենք հաշուենք թէ ինչ 0/0 0/0 է կազմում վճարելիք տուրքը կարողութեան կամ ստացուող եկամուտի համեմատ, ինչպէս նաև այն թէ ինչքան է տուրքը մի անձնաւորութեան վրայ, կ'ստանանք.

Ինչ դասակարգի	Հողիի փրայ	0/0 ամբողջ	0/0 ստացող
ընտարիք:	ռ.	կարողութեան	եկամուտի:
Հարուստ	161	070/0	150/0
Միջակ	140	130/0	310/0
Աղքատ	125	375/0	188/0

Այսինքն, չը նայած նրան որ աղքատի ամբողջ կարողութիւնը (շինութիւն, անասուններ, կահ-կարասիք) (20 ռ.) 36 անգամ աւելի պակաս արժէ—քան միջակ ընտանիքի կարողութիւնը (735 ռ.) և 47 անգամ պակաս քան հարուստ ընտանիքի կարողութիւնը—բոլոր դասակարգի ընտանիքների վճարելիքը համարեա նոյնն է՝ հարուստինը 161 ռ. հոգուց, միջակին—140, աղքատին 125 ռ.: Աւելի մեծ է տուրքերի տարբերութիւնը, եթէ ի նկատի ունենանք զանազան դասակարգի ընտանիքների կարողութիւնն ու ստացած եկամուտը:

Կուլալի գիւղը բացառութիւն չէ կազմում նոր-հայագէթի գաւառի միւս գիւղների մէջ և հարկատութեան վերաբերմամբ նրա մէջ գոյութիւն ունեցող անարդարութիւնը ընդհանուր է հայ գիւղների ահազին մնածամնութեան համար: Դաշտակի գաւառում տեղի ունեցող հարկատիրութեան արդարութեան կամ անարդարութեան առաջնանի մասին որոշ զաղափար տալու *), ինչպէս և գաւառում ընակուող զանազան ազգաբնակութիւնների կենցաղավարութիւնը պարզելու համար պէտք է բրիցեանը բերում է միայն երկու տեսակ ընտանիքների բիւղչէններ՝ ունեոր և չունեոր:

Բացի գրանից, գաւառի լեռնային, միջակ և դաշտային գոտիների տարբերութիւնները պարզելու համար նա վերջնում է առանձնապէս ընտանիքներ լեռնային, միջակ և դաշտային գօտիներից: Լեռնային գոտին նկարագրելու համար նա վերջնում է ոռու գիւղացիների ընտանիքներ (Միխայլօվկա գիւղից), միջին գոտու համար հայ գիւղացիներին (Կողը գիւղից), դաշտի համար—թուրք գիւղացիներին (Գևջալի գիւղից): Այդ տիպիքա-

*) Материалы по Изуч. Экон. быта Госуд. крестьянъ Закавк.
т. II.

կան ընտանիքների բիւղէն կազմուած է հետեւալ գլխաւոր մասերից.

Բնչ գօտիի գիւղա-	Հողերի տա-	Համարդու-	Տարիների կա-	Ցարկեան ե-	Ցարկեան ե-	Ցարկեան ե-	Ցարկեան ե-
ցիւ	բաժութ.	դեսեատ.	մարդու-	պարագան-	պարագան-	պարագան-	պարագան-
շնուն.	(+ ծառասնութ)	պամաւրի	այգի.	լահող.	լահող.	լահող.	լահող.
				մարդու-	մարդու-	մարդու-	մարդու-
				ալիք.	ալիք.	ալիք.	ալիք.
				ա.	ա.	ա.	ա.

Ունեւոր գիւղացիներ:

Լեռնային (ոռու)	14	—	44	4,582	1,697	1,624	173	322
Միջակ (հայ)	.	10(8)	1/2	7	4,345	2,111	1,937	174 533
Դաշտ (թուրք)	.	8(6)	1	24	5,795	3,666	3,485	181 770/0

Զբաւոր գիւղացիներ:

Ռուս (լեռնային)	5	—	1	291	230	260	—30	322
Հայ (միջին գօտի)	3	1/4	15	284	167	172	—73	120
Թուրք (դաշտի)	.	3	—	—	54	65	70	—50 165

Հարկերի ծանրութեան չափը պարզելու համար հետաքըր-քիր է հաշուել տուրքի քանակութիւնը մի հոգու, ամբողջ կա-րողութեան և տարեկան ստացուածքի վրայ, որոնք հաւասար են՝

Բնչ գիւղացու:	Հողի պարագաներ:	0/0 կարո- վրայ: զութեան.	0/0 ստաց- ուածքի:
---------------	-----------------	-----------------------------	----------------------

Ունեւոր գիւղացիների:

Ռուս (լեռնային գօտ.)	.	230	070/0	190/0
Հայ (միջին գօտիի)	.	533	120/0	25
Թուրք (դաշտի)	.	963	180/0	2

Զբաւոր գիւղացիների:

Ռուս (լեռնային գօտ.)	.	644	1110/0	140/0
Հայ (միջին գօտիի)	.	400	420/0	720/0
Թուրք (դաշտի)	.	550	3060/0	2540/0

Չը նայած ուներների ու չքաւորների կարողութեան ա-հագին տարբերութեան (15, նոյն իսկ 100 անգամ), նրանց վճարելիք տուրքերի քանակութիւնը համարեա նոյնն է: Հայ և թուրք գիւղերում հարուստների վճարելիքը 53—96 սուրլի է հոգու վրայ, աղքատներինը 40—55 սուրլի: Ռուս գիւղում աղքատ ընտանիքը նոյն իսկ աւելի է վճարում, քան հարուստը (64 և 23 սուրլու տեղ):

Հաշուելով կարողութեան և եկամուտի վրայ, տուրքի ծանրութիւնը աւելի մեծանում է.

Կարողութիւնից ուներները վճարում են 07, 12, 180/0/0:	» չքաւորները » 111—42, 3060/0:
---	--------------------------------

Եկամուտից ունեորները վճարում են 19, 25, 210/00%:

» Հքաւորները » 140, 72, 2540/0%:

Ամենամեծ անարդարութիւնը նկատում է թուրքերի մէջ,
յետոյ ոռումների, իսկ վերջը հայերի:

Նոյն անարդարութիւնը մենք տեսնում ենք և վրացիների
ու միւս ազգերի մէջ: Սղնախի գաւառի Բօդրէօ-Զուրաբանի
վրաց նահապետական գիւղի հարուստ, միջակ և աղքատ տի-
պիքական ընտանիքների բիւղէները հաւասար էին *).

	Ընտանի- կարո- գամների	Տարեկ.	Տարեկ.	Զուա- նելու	Տուա- նելու
	քի ան- գութ.	եկա- մուտը	ծախ-	կամուտը	քերը
Կարգեր:	թիւը:	քը:	սը:	(+) կամ	
	ռ.	ռ.	ռ.	ռ.	ռ.
Հարուստ	28	10,215	8,222	4,433	+ 3,789
Միջակ	.	14	1,817	1,492	1,251 + 241
Աղքատ	.	4	22	137	167 — 31
					142

Հաշուելով տուրքի քանակութիւնը միջակ անձնաւորու-
թեան, կարողութեան և եկամուտի վրայ, մենք կը տեսնենք որ
տուրքը կազմում է.

	Ընտանիք. դասակարգեր:	Հոգու վրայ:	Կարողու- թեան 0/0/0%,	Եկամուտի 0/0/0%
Հարուստ	.	.	822	280/0
Միջակ	.	.	746	570/0
Աղքատ	.	.	455	6450/0

Նոյն Սղնախի գաւառի Նովօ-Ալկասանդրով հայուսու-
դիւղի տիպիքական ընտանիքների բիւղէներն են.

	Ընտանիքների Ընտանիքն. Կարողութ. 8 ա ր ե կ ա ն: Տուրք.	Հարուստ	Կարգեր:	Անգամն. արժէքը. Եկամ. Տախար. Մացորդը.	թիւը:	ռ.	ռ.
	թիւը:	ռ.		ռ.	ռ.	ռ.	ռ.
Հարուստ	.	7		4,303	2,049	1,388	+ 661
Միջակ	.	6		9,444	919	878	+ 41
Աղքատ	.	6		149	313	289	+ 24
							42

Տուրքի քանակութիւնը անձի, կարողութեան և եկամու-
տի վրայ կը լինի.

Ընտանիքների	Անձի.	Կարողութ.	Եկամուտի:
Դասակարգեր:	ռ.	0/0/0%,	0/0/0%
Հարուստ	.	110	180/0
Միջակ	.	96	400/0
Աղքատ	.	70	280/0
			1400/0%

*) Материалы по изуч. Экон. быта Госуд. кр. Сигн. уезды.

Տերած օրինակներից ակներե է, որ Կովկասի գիւղերի մեծամասնութեան մէջ հաստատուած է ներկայումս մի այն տեսակ զրութիւն, որ աղքատ զիւղացին միջանի անդամ աւելի է ծանրաբեռուած հարկերով, քան միջակ կարողութեան և ելամուտի տէրը, իսկ միջակը շատ աւելի, քան հարուստը:

Այդ անարդարութեան պատճառը, անկասկած, կայանում է նրանում, որ հարկերը միմեանց մէջ բաժանելիս զիւղացիք զեկավարում են ոչ թէ կարողութեան կամ սացող եկամուտի սկզբունքի լայն մաքով, այլ այդ կարողութեան ու եկամուտի միմիայն մի ճիւղով։ Նոր-Բայազէթցիք տուրքը զցում են վարելահողի համեմատ, չը նայած որ եկամուտի արդիւնք են և արօտները, սրոնք միմիայն հարուստ խաչնարածների ձեռքին են, չը նայած որ մեծ եկամուտներ ստանում են ջաղացատէրերը, զիւղի վաճառականները և այլն։ Ղաղախնցիք տուրքի են ենթարկում միմիայն աշխատողի, վարելահողի համեմատ, չը նայած որ ահազին եկամուտ ստանում է հարուստը և իր բանեցրած կապիտալից (անասունների մէջ), չը նայած որ աշխատողը շատ անդամ հազիւ իր կեանքն է կարողում ապահովել... Պարսկական իշխանութեան ժամանակ այս տեսակ միակողմութիւն չը կար և վերը նշանակուած անարդարութիւնը տուրքի բաժանման վերաբերմամբ հարուստների ու աղքատների մէջ անուայման վերագրելու է «ծխահարկի» սկզբունքին։ Ընդունուած լինելով պետութեան կողմից, այդ սկզբունքը սկսեց կամաց-կամաց արմատ ձգել և զիւղացիների հայեցողութեան մէջ, սկսել փոխել հին, աւելի արդարացի սովորութիւնները։ Տարարախտաբար ինչքան էլ մեծ լինէր այս անարդարութեան նշանակութիւնը, այդ գեռ հարցի մի կողմն էր միայն։ Հարկային նոր սիստէմի ամենասէական կողմներից մէկն էլ այն էր, որ եզած բոլոր բազմատեսակ տուրքերն ու հարկերը վերածուեցին գրամի։ Դրանով ստեղծուեց զիւղացու համար մի անսովոր դրութիւն, որով տուրքը զնարկելու համար նա ստիպուած էր ծախսել ստացած մթերքների մի մասը։ Բացի ժամանակի կորուստից, ծախսելու համար, ամեն մէկ զիւղացի կամայ-ակամայ պիտի տուժէր իրան անծանօթ տոետրական ասպարէզի մէջ, ստիպուած պիտի ծախսէր մթերքները, երբ պահանջուում էր հարկը, ինչքան էլ ցած լինէր բերքի արժէքը։ Այսպիսով, կամայ-ակամայ զիւղացին ընկաւ տուստրական ուղիի մէջ, վերջինիս բոլոր վտանգաւոր ու վնասակար կողմներով։ Այն շրջանների համար, որ զիւղացիք այդ ժամանակները արտահաննելու մթերքներ ունէին և ունենում էին ձեռքերին զրամ (շերամապահութեամբ, այդեղործութեամբ պարսպող զիւղերում), հարկի գրամի վերածելը

հարկաւ, կարող էր միմիայն ցանկալի լինել: Բայց այդ տեսակ վայրերը շատ չեն. 50 տարի մեզանից առաջ երկրի մեծ մասը դժուում էր գեռ ևս «նատուրալ» տնտեսութեան շրջանում— երբ ապրուստի համար անհրաժեշտ իրերը ստացւում էին իր ընտանիքի մէջ:

Այներեւ պիտի համարել որ այդ՝ գլխաւորապէս հողագործութեամբ պարապող, շրջանների համար վճարելիք տուրքի դրամի վերածելը պիտի լինէր անձեռնուու: Մանաւանդ որ տուրքերի դրամի վերածելը ստեղծեց գիւղացու համար և մի այլ անյարմարութիւն: Ի՞նչ անէր հողագործը այն տարին, երբ ստացուած բերքի քանակութիւնը պակաս էր միջակից, երբ զները ցած էին միջակից, երբ կարկուածը, մորեխը, տոթը ոչ ընչացնում էին նրա սպասելիքը, երբ ազարը կոտորում էր տաւար-ոչխարը, հիւանդութիւնը զրկում նրան իր սիրելիներից և պակասեցնում աշխատաւոր ձեռքերը: Զը նայած գիւղացու ստացուածքի ու եկամուտի սովորականից 23 անգամ պակասուելուն, նա ստիպուած էր այդ պարագաներում վճարել այն տուրքը, ինչ որ լաւ և միջակ տարին: Ամեն մի պատահար այդ պարագայում բնականաբար աւելի էր հողագործին ընկճելու, աւելի էր զցելու նրան վաշխառուի ճանկը, քան կարող էր լինել խանական կարգերի ժամանակ, երբ եկամուտը պակասելիս պակասում էր տուրքը, և ընդհակառակը:

Թողնում ենք մի կողմ այն ահազին նշանակութիւն ունեցող երեսյթը, որով արքունական շտեմարանները հանդիսանում էին մի տեսակ պահեստներ սովի ու հայի զների բարձրանալու առաջն առնելու համար. վերջի տարիների դառը փորձերը, երբ անբերրիութիւնից վեասուած տեղերը չեն կարողանում ստանալ փոխարինաբար իրանց պակասի $\frac{1}{2}$, $\frac{1}{3}$, $\frac{1}{10}$ -ը, երբ գժուար է ազատուել նոյնիսկ տարեկան տուրքից, իսկ նպաստ ստանալու յաջողութեան պարագայում նոյն տուրքը ժողովուում է բարդուած տոկոսների հետ միասին—շատ լաւ ապացոյցներ են հին սիստէմի չարձանագրուած առաւելութիւնների:

Հին ըէմիմի չարձանագրուած առաւելութիւններից մէկն էլ այն էր, որ առաջ համարեա բոլոր տուրքերը ուղղակի էին, յայտնի և պարզ ամեն մէկի համար: Ուղղակի տուրք վճարելիս ամեն մէկը գիտէր թէ ինչ է տալիս, ինչն համար. նա միջոց ունէր քննութեան ենթարկելու. իր վճարածք հարեանի վճարածի համեմատութեամբ: Տուրքի բարձրացնելը ամեն մէկ կոպէկով ալիսայտնի կերպով ընկնում էր նրա ուսի վրայ, ստիպում էր նրան մտածել, ցոյց տալ վարչական մարմիններին նոր տուրքի

սիսալ կամ անարդարացի կողմերը։ Այդպիսով ամեն մէկը որոշ չափով վերաքննող էր հանդիսանում եղած հարկային սիստէմին և որոշ չափով էլ ուղղութիւն տալիս նրան։

Ծխահարկի սկզբունքի ընդունելուց յետոյ ուղղակի հարկերի բարձրացուելուն սահման տրուեց Երբ որևէ աղքատ գիւղ (չը նայած բոլոր ձեռք առնուած միջոցների) չէր կարողանում եղած հարկերը վճարել, երբ չունեորների վճարնելքը ընկնում էր ունեորների ուժին և վերջինները բողոք էին բարձրացնում այդ «անարդարութեան» գէմ—ինքն ըստ ինքեան սպարզ էր համարւում որ ապառիկների աւելանալը և զիւղացոց բողոքը ապացոյց է տուրքի բարձրացնելու անկարելիութեան։ Եւ այդ վերագրւում էր ոչ միայն անկարող աղքատներին ու չքաւոր գիւղին կից կային շատ հարուստ զիւղեր, չը նայած որ 5 ո. վճարելու անկարողները ունեն հարեաններ, սրոնք հեշտութեամբ կարող են վճարել 50, 100, նոյն իսկ 500 առւրի տուրք։

Սակայն, «ծխահարկի» սկզբունքի ժամանակ վերջի հանդամանքը պարզել պետութիւնն անկարող էր։ Տուրքի բարձրացնելը այս կամ այն հարուստ զիւղում, այս կամ այն ունեոր ընտանիքների վրայ առանց «ծխի» վրայ հաստատուած ամրող հարկային ձեր փոփոխութեան, անկարելի էր։ Այդ կը տանէր զէպի մեծ զեղծութեների Խոկ պետութեան կարիքները արագ կերպով մեծանում էին, պետութեան անտեսական կեանքը իր չրջանի մէջ էր առնում հասարակութեան տնտեսութեան նորանոր ճիւղեր։ Պետութիւնը, անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու համար, հարկադրուած էր զիմելու եկամուտի նոր աղբիւրների Այդ տեսակ աղբիւրներ հանդիսացան կողմնակի անուաննեալ տուրքերը և սեփական ձեռնարկութիւնները։ Դրանց վրայ էլ պետութիւնը սկսեց աւելի ծանրանալ։ Հաստատուեցին գոյութիւն չունեցող տուրքերի նոր ձեեր—ակցիզ օղիի, ծխահիսոտի, նաւթի, լուցկիի վրայ, հարկ արդիւնաբերուող շաքարի և այլ պիտուքների վրայ, անչափ բարձրացուեցին արտասահմանից ներմուծուող մթերքների մաքսը, ծանրացաւ զինուորական տուրքը, միմեանց յետից պետութիւնը սկսեց ձեռք զցել փոստ-հեռագրատունները, երկաթուղիները, օղիի մենավաճառութիւնը։ Մեր նախադից գուրս է մանրամասնօրէն կանգ առնել այս ամեն կատարուած փոփոխութիւնների վրայ։ Բաւական է իբրև օրինակ յիշել, թէ ինչ չափով էր բարձրանում Երևանան նահանգի Գևորչայ լճի ձկնորսութեան իրաւունքից ստացող տուրքը, որի հետ միասին բնականաբար բարձրանում էր և ձկի արժեքը։

Պ. Զօլոտայեւի ասելով, որ 1894 թուին վերահսկում էր
իմ ձկնորսութեան աղբիւրների վրայ՝

1828—29 թթ.	լիճը կապալով	տրուած էր	480	ոռոքով.
32—36 »	»	»	1,220	»
1846 թուին »	»	»	4,055	»
1856—59 թթ.	»	»	7,600	»
1862 թուին »	»	»	11,316	»
72—75 թթ.	»	»	18,639	»
76—80 »	»	»	23,893	»
80—84 »	»	»	21,400	»

Այսինքն՝ ամեն 10 տարի լճի կապալազրամը համարեա
կրկնապատկում էր, իսկ 1829 թուից մինչև 1893-ը նա
աւելացած էր 50 անգամ. կապալառութեան գումարի հետ
միասին բարձրանում էր և ձկան գինը: 40-ական թուական-
ներին, օրինակ, իշխան ձկի 100-ը լճի ափին արժէր 150—250
ռ., իսկ 1893 թուին արդէն 750—10 ռ. բարձրանալով հասաւ.
մինչև 30-ի և նոյնիսկ 60 ռ.:

Ձկնորսութիւնը միակ աղբիւրը չէր, ի հարկէ, ուր պե-
տութեան ստանալիքը բարձրանում էր այդպէս արագ կերպով:
Նոյնը կատարում էր և միւս պետական սեփականութիւնների
վերաբերմամբ:

Օգտուելով այն հանգամանքից, որ տուրքը չի վերցւում
ուղղակի կերպով սպառողից, ու այդ տեսակ քօղարկուած հարկը
առաջ չի բերում լսելի գժգոհութիւններ—պետութիւնը բար-
ձրացնում էր այդ տեսակ տուրքը մինչև այն աստիճան, երբ
սուրքի նոր բարձրացնելը զարգարում էր աւելացնել եկամուտը,
ստեղծում էր նորմնոր ձեի մօնօպօլիաներ: Դրա մէջ չը կասկա-
ծելու համար բաւական է բերել այսուեղ, թէ ինչ աղբիւներից
էր կազմուած ոռոսաց պետութեան ամրող եկամուտը վերջի-
ապրիների ընթացքում: Օրինակի համար վերցնենք 1900 թիւը:
Այդ տարին պետութիւնը սւնէր եկամուտ *).

Ի ն չ ճ ի ւ զ ե ր ի ց:	Միջին Ընդամենը թուով մէկ միլ. անձի **)			0/0/0
	մուրի:	վրայ	ոսութիւն:	

I. Ուղղակի տուրքեր (հողային և անշարժ կալուածք. 451, վաճառակ. պարապելու իրաւունքից 511, եկա- մուտ բերող կապիսալից (162) . 1204	093	69 ⁰ / ₀
--	-----	--------------------------------

*) Ռուսկի կալենդար Սуворինա զա 1901 թ.

II.	Կողմնակի տուրքեր (ոգելից ըմպե- լվաներից 2930, ծխախոսից 376, շաբարից 615, նաւթից 245, լուծ- կիից 68, մաքսաներից 2179)	641	493	366 »
III.	Հարկեր (պայմանագրերի, դատա- տանական 354, մէկից միւսին անդ- նող կալուածքներից 256, այլեայլ 238)	848	065	48 »
IV.	Պետութեան արտօնութիւններից (պօստային և հեռագր. 480, օղիի մենավաճառումից 1181, լեռնային, գրամական 71)	1737	134	99 »
V.	Պետութ. հարստութիւններից (կա- պալով տրուող հողերից 169, ան- տառներից 467, երկաթուղ. 3309, գործարաններից 282)	4233	326	240 »
VI.	Գիւղացիների վճարելիքները ազ- նուականներից առած հողի ար- ժեքի փոխարէն	777	060	44 »
VII.	Պետութեան կողմից արած ծախ- սերի վերադարձումը	669	052	38 »
VIII.	Այլեայլ եկամուտներ (Արտակարգ եկամուտներ (մնացորդ հայլն)	58	004	03 »
		1636	105	93 »
	Ընդամենը	1757	1352	1000 ^{0/0}

Այդ աղիւսակից ակներե է, որ XIX-րդ դարի վերջին պե-
տութեան ստացած ամբողջ եկամուտի կէսը (երկաթուղիններից,
փոստատներից, օղիի մենավաճառութիւնից և այլն) չունէր
տուրքի բնաւորութիւն։ Դրանք ստացւում էին արդիւնաբերա-
կան ձեռնարկութիւններից, որոնք թէն տալիս էին եկամուտ,
բայց պահանջում էին և ծախսեր համարեա նոյն չափով...
Եկամուտի միւս կէսը կազմուած էր մոտ 366^{0/0} (493 կ. անձնա-
ւորութ. վրայ. կողմնակի տուրքերից, 69^{0/0} (93 կ. անձն. վ.)
ուղղակի տուրքերից և 48^{0/0} (45 կ. անձն. վ.) այն հարկերից,
որ տրւում էին եկամուտի համեմատ։ Այսպիսով իսկական տուր-
քերի համարեա 3/4 մասը ընկնում էր «կողմնակի տուրքերի»
վրայ. Առանց մանրամասն բայց առութիւնների, կարծեմ, պարզ

*) 1897 թուին նուսաստանում հաշում էր 130 միլ. բնակիչ:

է, թէ ինչումն է կայանում «կողմնակի տուրքերի» իմաստը: Օդիի, ծխախոսի, նաւթի, լուցկու վրայ ծանրացող տուրքը ընկում է հաւասարապէս բոլորի վրայ, ինչպէս միլիօնատէր հարուստի, նոյնպէս և օրավարձով ազրող մշակի: Զէ որ 10 անգամ գիւղացուց ու արհեստաւորից աւելի եկամուա ստացող բազավային 10 անգամ աւելի օդի ու ծխախոտ չի գործածում, 10 անգամ աւելի լուցկի, նաւթ չի վառում: Միլիօններ ունեցող հարուստը աւելի չաքար չի գործածում, քան սոճիկով ապրող ուսուցիչը, և երկուսի ծախսն էլ զինուուրակոչութեան վրայ ^{*)} հաւասար է, չը նայած որ առաջինի միջոցներն ու եկամուտը 10, 20, 100 անգամ աւելի բարձր են, քան երկրորդինը: Համեմատելով պարսկական բէժիմի ժամանակ գոյութիւն ունեցող հարկատիրական ձեր (երբ հարկերի միայն $\frac{1}{10}$ -ը կազմում էին կողմնակի տուրքերը) նորի հետ (իր $\frac{3}{4}$ կողմնակի տուրքերով), անկարելի է չը խռատավանուել որ XIX-րդ դարուայ ընթացքում հարկային գրութեան կրած փոփուութիւնը դէպի կողմնակի հարկերի ուժեղանալը, կարող էր միմիայն նպաստաւոր լինել հարուստների ու քաղաքացիների համար ի վեա աղքատների և գիւղացիների:

Գլ. VI

Նոր հարկային սիստէմի բացասական կողմերը. քաղաքների ուժեանալը ի վեա գիւղերի, գիւղական պրօլետարիների առաջ դալը և շատանալը, — երեք Ախտա Խաշուր ու ծալա, Խաղեան և Քանաքեռ գիւղերի, օրինակները, — Ճնտեսական անհասաւութեան հետևանքները:

Դժուար չէ նախատեսել թէ ինչ կորստաբեր հետեանքներ պիտի ունենար այս տեսակ սխալ—եթէ չասենք աւելին—հիմքերի վրայ դրուած հարկատիրական սիստէմը:

Մի քանի անգամ քաղաքացուց աւելի աղքատ գիւղային, լինելով համարեա չորս անգամ քաղաքացուց աւելի ծանրաբենուած տուրքերով (1285 և ծխի վրայ 444 ոուրբու տեղ), հարկաւ տարեց տարի համեմատաբար պիտի աւելի աղքատանար, պիտի աւելի ընկճուէր քաղաքացու առաջ: Դրա հետեանքը մնաք տեսնում ենք ակների: Այն ժամանակ, երբ կոլկատի գիւղերը մնում են համարեա նոյն ցեխի, աղքատութեան ու

^{*)} Ե նկատի ունենալով այն, որ ամեն տարի գէնքի տակ կանգնած է Ռուսաստանում մօտ 1,000,000 զինուոր, որից ամեն մէկը, ազատ դէպում, կարող էր ստանալ մօտ 100 ռ., զինուորազրութեան ծախսը հաշուելու է մօտ 100 միլ. ռ. (77 կոտ. անձնաւորութեան վրայ):

տգիտութեան մէջ, ինչ որ 50 տարի առաջ, քաղաքները ծածկուել են գեղեցիկ, բազմայարկ շինութիւններով, ունեն եւրոպական ամեն տեսակ յարմարութիւններ։ Ելեքտրական լուսաւորութիւնը, ջրանցքները, թանգարանները, թատրոնները, բազմաթիւ կրթական հիմնարկութիւնները կամաց կամաց ոչընչացնում են այն մեծ տարբերութիւնը, որ 50, 100 տարի առաջ կար կովկասի և եւրոպայի քաղաքների մէջ։

Քաղաքացի բուրժուաները, արիստօկրատները և նոյնիսկ ազատ պարապմունքներով զբաղուզները իրանց հարստութեամբ, եկամուտով, նիստուկացով յետ չեն մնում եւրոպացիներից։ Մի տարուայ ընթացքում մեր քաղաքները կրեցին այնչափ փոփոխութիւն, որի համար եւրոպայում պահանջուեց մի քանի դար։

Բայց ինչ խորը անգունդ մեր գիւղացու և բանուորի ու նրա հակատիպար եւրոպացի բանուորի և գիւղացու մէջ։

Առաջինը հագնուած է ինչոր ցնցութիւնների մէջ, կերակըրւում է ցամաք հացով սոլի ու պանրի կտորի հետ. նրա ստանալիք օրական 40—60 կ. վարձը գրոշմուած է գունատ դէմքի վրայ երկրորդը չի ուտում ճաշ առանց մաֆ ու գինու, հագնուած է մաքուր և քաղաքավրաբ. նրա դէմքը չէր կարող լինել այնքան զուարթ, կենդանութիւն ու ոյժ արտայայտող, աչքերը չէին լինիլ այնքան փայլող, նմէ աշխատաւորը օրական ստանալիս չլինէր $1\frac{1}{2}$, 2, 3 ռուբլի։

Շնորհիւ գիւղացու անապահով վիճակի և ընդհակառակը քաղաքացու ապահովութեան, չնորհիւ գիւղացու ուղղակի և կողմնակի հարկերով ծանրաբեռնուած լինելուն համեմատած քաղաքացու հետ, վերջինս պահում է գիւղացուն տնտեսական կախման մէջ, ստանում է դիւղացուց չնչին գնով նրա աշխատանքը, ձեռք է դցում անսասունները, գրաւ է աւնում հողերը։

Տարէց տարի աւելանում է քաղաքների հարստութիւնը, տարէց տարի գրա հետ միասին աւելանում է և գիւղերի կախումը քաղաքներից։ Մասամբ գրանով և քաղաքների հարկերի թեթևութեամբ է բացարւում այն հանգամանքը, որ ամեն մի քիչ թէ շատ «աչք բայ անող» գիւղացի տեղափոխում է քաղաք։

Չը նայած նրան որ բնական աճումը գիւղերում աւելի բարձր է քան քաղաքներում (1894—97 թթ. տարին 164 և 109^{0/0} *), 1886—87 տասնամեակի ընթացքում Անդրկովկասի բոլոր քաղաքների բնակիչների թիւը 4635 հազարից հասած է

*) Կավկազskii Կալեդնարъ, 1901.

6945 հազարի, այսինքն տւելացած 231 հազարով կամ $498^0/0^0/0$ -ով, իսկ գիւղերինը 4239 հազարից հասած է մինչև 4822 հազարի, որ տախու է միմիայն $135^0/0^0/0$ (573 հազ.). աւելացումն ամենապարզ ապացոյց է որ քաղաքների տնտեսական դրութիւնը անհամեմատ աւելի նպաստաւոր է քան գիւղերինը, որի պատճառով գիւղերից ժողովուրդը կամաց-կամաց զաղթում է դէպի քաղաքները:

Նոյնանման բաշասական ազդեցութիւն ունեցաւ նոր հարկային գրութիւնը գիւղերի ազգաբնակութեան վրայ:

Ծնորհիւ կողմնակի տուրքերի ուժեղանալուն (ուղղակի տուրքերի փոխարէն), չնորհիւ «Ծիահարկի» սկզբունքի (եկամուտի տեղ) հարկերի ամենամեծ ծանրութիւնը ընկաւ աղքատ տարրի վրայ: Եթէ հարուստը կարողութիւնից կամ եկամուտից վճարում էր տարին $1-25^0/0$, միջակ գիւղացին ծանրաբեռնում էր $3-5,15^0/0$ -ով, իսկ աղքատը՝ նոյն իսկ $-10, 20, 30^0/0$ -ով: Գանուելով այդչափ աննպաստ պայմաններում, աղքատը՝ տարէց տարի պիտի աւելի աղքատանար, աւելի ընկնէր իր գիրքից, իսկ հարուստը ընդհակառակը: Զը կարողանալով տարեկան եկամուտով ծածկել տարեկան ծախքերը տուրքերի հետ միասին, աղքատը խրուռմ էր պարտքերի մէջ, վճարում էր հարուստին սարսափելի տոկոսներ, ծախում էր սկզբում ոչխարը, կովը, իսկ յետոյ և եղը:

Զրկուելով լծկանից նա արդէն գուրս էր ընկնում հողագործների շարքից. ծախում էր այզին, տունը, գրաւ դնում վարելահողը և ստուարացնում գիւղացի պրօլետարների շարքը: Ամեն մի պատահար՝ երաշտ, կարկուտ, ժամադ, ազար, հիւանդութիւն արագացնում էր այս ընթացքը, շատացնում էր պրօլետարների թիւը, գցում էր աղքատների շարքը նաև միջակ ընտանիքների մի մասը, որպէս զի վերջիվերջոյ դրանք էլ անցնեն պրօլետարների շարքը:

Եւ այլ կերպ չէր էլ կարող լինել:

1892—94-ի մնբերրիութեան ժամանակ ինձ շատ հետաքրքրեց երեք միմնաց հարևան գիւղերի տարբեր վիճակը: Այդ գիւղերն էին՝ Նոր-Բայազէթի գաւառի Վերին, Ներքին և ոռոսաց Ախտաները: Երեք անբերրի տարիների վերջում յիշուած գիւղերի վիճակի մասին անփոփ գաղափար տախու է հետեւալ աղիւսակը *):

*). „Опытъ изслѣдов. сельскаго хозяйства Эрив. губ. и Карсск. Обл.

Գիւղերի վիճակը 1894-ի վերջը:			Վերին Ներքին Ռուսաց Ախտա, Ախտա, Ախտա,		
Միջակ անձի վրայ ցանքս էր տառածած	քառ. սաժ.	.	240	360	1560
Ցանքսը սովորականից (1892-ից) սլակա-	սեցրած էր 0/0%	.	72	67	7
Ցանքս չարած գիւղաց. թիւն էր 0/0%	.	40	17	6	
Լծկան չունեցող	»	»	51	26	0

Ահազին տարբերութիւն երեք հարևան գիւղերի մէջ: Երբ սկսեցի հետաքրքրութել այդ տարբերութեան պատճառներով, ինձ համար պարզուեց որ զա հողի անհաւասար բաժանումն էր երեք գիւղերի մէջ, որից առաջ էր գալիս անհաւասար եկամուտ և հարկի անհաւասար ծանրութիւն: Եւ իսկապէս, չնայած վերին-Ախտայի հողերի աւելի բարձր և վատ գիրքիքան Ներքին-Ախտայի և վերջինի հողերի աւելի քարոտ լինելու, քան ոռւսաց Ախտայի, երեք գիւղերի մէջ ամեն մի բնակչի վրայ հաշւում էր.

Հող, եկամուտ և լին:	Վերին Ներքին Ռուսաց Ա լ ա տ ա մ ա լ ա տ ա մ		
1886-ին վարելահող գեսեատին:	.	069	093
» հող առհասարակ գես.	.	127	139
1894-ին հող բաժանուող քառ. սաժ.	1260	1716	2280
Միջակ տարուայ ցանքսի տարածութ.			
քառ. սաժ.	.	900	1080
Միջակ տարուայ հողագործ. ստացուած			
եկամուտը ո.	.	2624	3109
1886-ին տուրքերի քանակ. անձի վրայ ո.	152	186	224
Տուրքերը կազմում էին հողագործ. եկա-			
մուտի 0/0/0-ը	.	580	590
Արտաքուստ էլ գիւղերը շատ տարբերում էին միմեամցից. ոռւսաց Ախտայում բոլոր աները նոր ձեր էին, ծածկուած կրոսմիտով, Ներքին-Ախտայում այդ ձեր աները մի քանիսն էին, վերին-Ախտայում—ոչ մէկը...			4994

Նոյն տարբերութիւնը և ընտանելան բարեկեցութեան մէջ, նրանց ապահովութեան, անսառնների, կահ-կարասիի, գիւղատնտեսական գործիքների մէջ: Նկատուած տարբեր պահովութիւնը չէր կարող և տարբեր ազգեցութիւն չունենալ անբերբիութեան տարիները: Հարուստ ոռւս՝ ախտեցին երաշտի ժամանակ կարող էր չաւելացնել իր հարստութիւնը: Կարող էր ծախել մսացու աղրանքը, անցեալ տարիներից մնացած ցորենը, կարող էր աւելացնել փուրգօն բանացնելը: Մի խօսքով

նա կը տուժէր շատ քիչ, որ և ասլացուցանում են վերը բերած թուերը:

Միջակ դրամթիւն ունեցող ներքին-ախտեցին անցեալ տարիներից մնացած ցորեն չունի (ցանածը հազիւ է իրան բաւականանում), մսացու մի քանի ոչխարն ու տաւարը հազիւ բաւականութիւն է տալիս նրան անբերրիութեան առաջի տաւարին, սայլապանութեամբ պարապողը լծկանի թուլանալու պատճառով չի կարողանում ստանալ եկամուտ բեռնակրութիւնից: Կամայ-ակամայ նա կիսով չափ ուտում է տան կահ-կարասիքը, կթան տաւարը, լծկանը և սերմացուն... Անբերրիութեան վերջը ցանքսը գիւղում պակասում է 76⁰/օ-ով. լծկան չունեցող-ների թիւը բարձրանում է 26⁰/օ-ի, որի չնորհիւ հողաղործ գիւղերում պազարնակութեան 17⁰/օ-ը դուրի է հանդիսանում բոլորին ցանքսերից:

Աւելի ծանր է վերին-Ախտայի վիճակը: Սա աղքատ է նոյնիսկ միջակ տարին: Ցորենի պաշար սա չունի, ոչխարն ու մասցւ ապրանքը, ինչպէս և ընդհանուր ապրուստը այստեղ պակաս է Ներքին-Ախտայից: Երաշտի հէնց առաջի տարուանից դիւղացու տնտեսութիւնը սկսում է քայլայուել: Գոյութիւնը պահպանելու համար գիւղացին ծախում է ոչ միայն անասուններն ու հողերը, այլ և պղինձը, վերջի փալասը, տան գերանները: Հայրենի գիւղը թողնելով գիւղացին վախչում է գէպի աշխատանքի տեղը, իսկ կինն ու երեխաները պատսպարուում են հարեանի ախտորի անկիւնում: Զարմանալի չէ, որ անբերրիութեան երրորդ տարուայ վերջը այդ գիւղում ցանքսը պահանձ է 72⁰/օ-ով, լծկան չունեցողների թիւը հասած է 510/օ-ի, սեփական հասկին կարօա է ազգաբնակութեան 40⁰/օ-ը:

Եւ այսպէս լինում է ամեն տեղ, ամեն տեսակ տղէտների ժամանակի: Թոյլը ընկնում է ամբողջովին, միջակը թուլանում է, տեղը զիմանում և նոյնիսկ հարստանում, օգտուելով թոյլի անել վիճակից:

Նոյն 1892—94 թուականներին, երբ երաշտից տուժում էր երեանեան նահանգի լեռնային մասն ընդհանրապէս, կային հարուստ գիւղեր և մանաւանդ անհատներ, որ իրանց կարողութիւնը կրկնապատկւցին: Հայով առատ գիւղերն ու հարուստները 1^{1/2} ոսւբլով ծախում էին կարօտեալներին այն ցորմնը, որ միջակ տարին արժէ միայն 70—80 կոպ., կամ որ ժողոված էին առատութեան ժամանակ 50—60 կոպէկով: Ունեորները մինչ 30, 50-ի բարձրացրած տոկոսով տալիս էին չունեարներին հաց, կամ դրամ, կէս գնով առնում էին նրա կովը, եղը, տան կահ-կարասիքը, կէս հաշուով վերցնում աղքատներից վեր-

ջիններիս ապագայ հունձը, խոտհարքներից սպասուող խոաք... Այն ժամանակ, երբ տուժած շրջանի ցանքսի տարածութիւնը պակասած էր 20, 30 և նոյնիսկ $40^0/0$ -ով, չատ գիւղերում կային հարուստներ, որոնք «կիսով» կամ այլ պայմանով ցանել էին չունեորների հողերը և այդպիսով կրկնապատկել, եռապատկել իրանց եկամուտը...

«Վայ յաղթուղներին», գոչում են յաղթողները պատերազմի ժամանակ. «վայ չունեորներին», մտածում են ունեորները չունեորների մասին խաղաղ ժամանակ և իրանց ձեռքը զցում աղքատ եղքօր ու հարեանի տաւարն ու ոչխարը, տան կահ-կարասիքը, հողերը, նրա ապագայ աշխատանքը:

Անհաւասարութիւնը մեր գիւղերում աճում է օրէցօր, աւելի և աւելի խորը դարձնելով աղքատների ու հարուստների մէջ եղած տարբերութիւնը:

Գորուայ գաւառի Խաշուրի և Ճալա վրաց գիւղերում հարկատիրական ձեր կազմուած է լիտրա-չարէքի սկզբունքի վրայ Բայց Խաշուրին գտնուում է Միխայլովկա կայարանի մօտ, գիւղացիները թողած են հողագործութիւնը և ընկած արհեստավաճառականական ուղիի մէջ, իսկ Ճալան գեռ ևս շարունակում է իր նահապետական դրութիւնը, ապրելով հողագործութեամբ: Եւ տեսէք ինչ մեծ տարբերութիւն երկու հարեան գիւղերի ընտանիքների կարողութեան աստիճանների մէջ *):

Ընտանիքների կարողութեան աստիճանները:	Ճ ա լ ա թիւ $0/0/0$:	Խաշուրի թիւ $0/0/0$:
4—3 չարէք .	. 26—27 $0/0$	— —
3—2 » .	. 14—15	2—4 $50/0$
2—1 » .	. 10—10 5	14—32
1 չարէք—1 լիտր .	. 35—37	28—63 5
Հարկ չը վճարողննը	. 10—10 5	0—0
<hr/> Ընդամենը . .	. 95—100 $0/0$	44—100 $0/0$

Համեմատելով հողագործեամբ պարապող ճալա գիւղը հարեան արհեստա-առևտրական ուղիի մէջ ընկած Խաշուր գիւղի հետ, մենք ակներն տեսնում ենք, որ Խաշուրում, համեմատած ճալայի հետ, հարուստների («լիտրա» կարգի) թիւը $270/0$ -ից ընկած է $0/0/0$ -ի. ունեորների ($2—3$ չար.) $150/0$ -ից իջած է $450/0$ -ի. միջակ ընտանիքների թիւը ($2—1$ չար.)— $105/0$ -ից բարձրացած է $320/0$. չունեորների (1 չար.— 1 լիտրա)— $475/0$ -ից— $635/0$:

*) Թուերը վերաբերում են 1892 թուին:

Բացի դրանից, «նահապետական» ձալայում ամենաաղքատ ընտանիքները (β ուով 10 կամ $10^0/0$) ազատուած են բոլորովին տուրքից, իսկ «առաջադիմած» և զարգացած Խաչուրում տուրքի են ենթարկուած և ոչինչ չունեցող որբերը: Խաչուրի և ձալայի համեմատութիւնը պարզաբանում է բնորոշ կերպով այն արագ փոփոխութիւնը, որ առաջ է դալիս զիւղերում վաճառականական ուղղութեան զարգացման հետ միասին:

Նոյն փոփոխութիւնները, թէ քիչ մեղմ չափով, մենք տեսնում ենք և այն զիւղերում, որոնք արտաքուստ չեն ենթարկում այդ տեսակ փոփոխութեան:

Շամախի գտառի հայաբնակ Խաղեան զիւղում աղջաբնակութիւնը վազուց ի վեր ասպրում է համարեա թէ միմիայն այդեզործութեամբ և զինեզործութեամբ: Այզիների բաժանման մասին զիւղի ընտանիքների մէջ մենք ունենք տեղեկութիւններ 1889 և 1901 թուականներին վերաբերեալ *):

Հետեւեալ աղջիւսակը տալիս է բաւական ճիշտ գաղափար, թէ ինչ փոփոխութիւն է կատարուած Խաղեան զիւղի ընտանիքների տնտեսական դրութեան մէջ վերջի 12 տարուայ ընթացքում:

Ալգիների տարածութիւնը՝ կամ շուանով **):	Ընտանիքների թիւը			
	1889 թիւ %	1901 թիւ %		
0—10 չուան . . .	72	450/0	111	550/0
11—20 » . . .	52	325	55	27 »
21 և աւել » . . .	37	225	37	18 »
Ընդամենը . . .	161	1000/0	203	100 »

Ամենահարուստ ընտանիքի

այզին 60 կազ. 68 կազ:

Ակների է, որ վերջի 12 տարուայ ընթացքում այդեզործ Խաղեան զիւղում ամբողջ աղջաբնակութեան մէջ հարուստ ընտանիքների թիւը $220/0$ -ից իջած և $180/0$ -ի. միջակ ընտանիքների թիւը $3250/0$ -ից իջած և $270/0$ -ի և ընդհակառակը, աղքատ ընտանիքների թիւը $450/0$ -ից բարձրացած է մինչև $550/0$ -ը: Միևնույն ժամանակ պարզ է որ թուով քչացած հարուստ ընտա-

*) 1889 թուին վերաբերեալ տեղեկութիւնները ստացած ենք պ. Ն. Քալաշեանից, որի համար չենք կարող չը բախտնել մեր խորին շնորհակառութիւնը:

**) «Ասպրը կամ շուանը» հաւասար է 100 քառ. սաժ. հոդի տարածութեան:

Նիքները 12 տարուայ ընթացքում աւելի հարստացած են: Դա ապացուցում է նրանով, որ 60 «կապ» տարածութիւնից ամենահարուստ ընտանիքի այդին հասած է 68 «կապի»:

Նոյն բանը մենք նկատում ենք և զուտ հայկական շըրջաններում, այն գիւղերում, որոնց գլխաւոր ասլրուստը հողագործութիւնն է: Երեսնեան նահանգի Քանաքեռ գիւղում հարկերը բաժանեւում են համբաւ-չարէքի սկզբունքով: Համեմտակալով 1887—91 թթ. ընտանիքների կարողութեան գասակարգերը այս գասակարգերի հետ, որ հաստատուած էն 1892-ից, մենք նոյնպէս համոզւում ենք, որ ժամանակի ընթացքում աղքատների թիւը աւելանում է, իսկ հարուստներինը պակասում:

Եւ ճիշտ, կարողութեան գանազան կարգերի ընտանիքների թիւը Քանաքեռում հաւասար էր.

Ինչ կարգի	1887—91 թիւ	1887—91 %	1892—96 թիւ	1892—96 %
4—3 չարէք	. 29	15%	29	12%
3—2 »	. 64	325	67	28
2—1/2 »	. 104	525	141	60
Ընդամենը .	197	100%	237	100%

Այսինքն Քանաքեռում 5 տարուայ ընթացքում ամբողջ ազգաբնակութիւնից՝

Ունեորների թիւնը 150%-ից իջնում է մինչև 120%-ի,

Միջակների » 325 » » 28 »

այն ժամանակ, երբ չքաւորների թիւը բարձրահում է 5250%-ից մինչև 600%-ը:

Հետաքրքրական է և այս, որ չքաւոր գասակարգի միջնական է գալիս նոր կարգ, ամենաչքաւորների ($1/2$ չարէքաւոր). որ 1887-ին չը կար...

Տնտեսական անհաւասարութեան զարդացումը նկատում է Կովկասի բոլոր անկիւններում, երկրում ապրող բոլոր տպգութիւնների մէջ, ազգաբնակութեան բոլոր խաւերում:

100, 50 տարի մեղամնից առաջ կովկասի քաղաքների ամենահարուստ տների կարողութիւնը հաշւում էր տասնեակ և իբրև բացառութիւն, հարիւր հազարներով: Այժմ ունենք հարիւրաւոր մարդիկ, որոնք չեն էլ ուզում նայել հարիւր հազարի վրայ, և անհատներ, որոնց կարողութիւնը հաշւում է տասնեակ միլիօններով: Եւ այդ հարստութեան կենտրոնալլ անհատների ձեռքին կատարւում է այն ժամանակ, երբ քաղաքացիների ստուար մասը մնում է նոյն աղքատութեան մէջ: ինչոր 50, 100 տարի առաջ:

Գիւղերում առաջ են եկել վաշխառուներ, որոնցից կախում ունեն ամբողջ շրջաններ. կան հարուստներ, որոնց այզինքի տարածութիւնը հասնում է հարիւրաւոր դեսեատինների, իսկ խոչոր անսառնները հաշում են հազարներով... Եւ այդ ուղղութիւնը քանի գնում աւելի ուժեղանում է, աւելի խոր արմատներ գցում կեանքի մէջ, աւելի մեծ գժբախտութիւնների պատճառ դառնում:

Ենորհիւ առաջ եկած ծայրայեղ անհաւասարութեան, չունելորները գարձել են ուներների պարտապան. ծախում են իրանց ունեցած-չունեցածը, գարձել են նրանց ծառաներն ու հու հպատակները: Միլիօնատէր աղէտ, երեկուայ չարչին իր շահերի պաշտպանութեան համար վարձում է, առնում է տառնեակ իրանից բարձր, իրանից խելօք, կրթուած անձնաւորութիւններ, հազարաւոր իրանից մաքուր բանուորներ:

Մի հարուստ վաշխառուի ձայնը զիւղերում աւելի լսելի է, քան տասնեակ աշխատասէր, մաքուր, խելօք, բայց աղքատ զիւղացինների: Անկիրթ միլիօնատէրը քաղաքներում աւելի աղցեցութիւն ունի, քան հարիւրաւոր միջակ վաճառականներ, հազարաւոր ազնիւ բանուորներ:

Կախուած լինելով հարուստի կամքից, աղքատ զիւղացին, բանուորը, գարձուող ինսելիգէնտը զգում են իրանց ստորագրեալ վիճակը, սկսում են մի առանձին ակնածութեամբ վերաբերել դէպի իրանց վարձող հարուստը:

Բնականաբար ամեն մէկի մէջ ցանկութիւն է առաջ գալիք գուրս զալ ստորագրեալ վիճակից, ձեռք բերել, «հարստանալ» տառը, հարիւր հազարամի: Նախանձը, համստանալու տենչը վառում է բոլորին, ստիպում է նպատակին համելու համար կանգ չառնել ոչ մի բանի առաջ: Ի՞նչ ասես որ զոհ չի բերում դրան՝ և՛ խազաղութիւն, և՛ կեանք, և՛ պատիւ...

Միթէ կարելի է կասկածել որ ներկայումս կատարուող յանցանքների տասից իննը առաջ է զալիս հարստանալու նախանձի տենչից... Սակայն չը նայած գործ դրուած բոլոր միշոցներին, մարդ անկարելի է լինում հասնել իր զինաւոր նպատակին—երջանկութեան: «Ապահովութիւնն» ու «հարստութիւնը» առածդական խօսքներ են: Դրանք նմոն են գեղեցիկ ծիածաննեն, որ գոյութիւն ունի միայն այն ժամանակ, երբ նրան նայում ես որոշ հեռաւորութիւնից: Տասը, հարիւր հազարը արժեք ունի այն մարդու համար, որ ոչինչ չունի, կամ միայն հազար առնի: Տասը սենեակից բնակարանը, չորս տեսակ կերակուրից ճաշը իդէալ է նրա համար, ուշ ապրում է 2—3 սենեակում,

ով ճաշում է 2 տեսակ կերակուրով: Երբ չունեսրը համնում է իր փափաղին և ձեռք է զցում իր երազած 10, 100 հազարը, երբ նա բնակութիւն է հաստատում հարուստ տան մէջ և ուտում նուրբ կերակուրներ,—արագ կերպով նա ընտելանում է, այդ 100 հազարին ու կենցաղավարութիւնը և նոյն տենչով ու անհանգստութեամբ ձգում է գէպի 1, 10, 100 միլիօններ, գէպի պալատներ, կուլուլոսի ճաշկերոյթներ:

Հարստանալով մարդս հանգստութիւն չի դանում, երջանկութիւն չի զցում:

Կուկուլոսի ճաշկերոյթները, չքեզ պալատները, զուարժութիւնները բաւականութիւն են տալիս նրան մի ամիս, մի տարի: Ամենայն դիւրութեամբ նա յագեցնում է և իր միւս անասնական հակումները: Կշտանալով այդ ամենից, նա բթանում է, ընկնում այն հոգեկան զրութեան մէջ, որի մէջ է չազացած ու ճահճների ցեխի մէջ թաւալուած գոմէշը... Երկուսի անասնական ու ֆիզիկական հակումներին էլ տըրւում է լիակատար բաւարարութիւն և երկուսն էլ կամաց-կամաց կորցնելով բնական կեանքի հոգեկան, աստուածային զգացումները, դառնում են... կենդանի մեռածներ: Խրուելով ֆիզիկական ու անասնական զուարժութիւնների մէջ, հարուստը չի հասկանում, որ իր ձեռք բերած ոյժի, հարստութեան աղգեցութիւնը կարող է տարածուել միմիայն ֆիզիկական բարիքների վրայ. Նա չը գիտէ, որ այդ ֆիզիկականից զուրս են մարդուս ամենամեծ բարիքները, խելական երջանկութիւնը, որ տալիս են հոգեկան ու մտաւոր հարստութիւնները—գիտութիւնը, գեղեցկութիւնը, սէրը գէպի եղբայրը, գէպի ժողովրդի բարօրութիւնը:

Դժբախտաբար այս հոգեկան զրութիւնը չի հասկանում հարուստի հետ և ամբոխը: Նա չը գիտէ, որ հարստութիւնը աղի ջուր է, որ խմելով կարելի է միայն աւելի ծարաւել: Ժողովուրդը զեկավարում է միայն արտաքին փայլով և հարստանալը բոլորի համար դարձած է մի տեսչ, որ հանգստութիւն չի տալիս ոչ ցերեկ, ոչ գիշեր, բայց որ տանում է գէպի հոգեկան մեռելութիւն:

Ուկին դարձել է մեր կեանքի միակ զեկավարը:

Նրա առաջ խոնարհւում է ժողովրդի զեկը ձեռքին ունեցող բարձր պաշտօնեան, նրա առաջ կորցրել են իրանց նշանակութիւնը բոլոր մինչև օրս ընդունուած առաքինութիւնները—վեհանձնութիւն, հայրենիք, կրօն, բարոյականութիւն, սէրաշխատասիրութիւն:

Մովսէսի պատուէրը՝ «Թափած քրտինքովդ աշխատիր կերած հացդ»—կորցրել է իր արդարացի և վեհ նշանակութիւնը:

Նազարէթի Քարոզչի ասածը, թէ աւելի հեշտ է պարանին անցնել ասղի ժակով, քան հարստին մտնել գրախափի դըռնով—համարւում է անախրօնիզմ: Այդ մտքին հեգնութեամբ են վերաբերւում ոչ միայն հարուստները, այլ և նրանք, որոնք իւրանց՝ Մեծ Քարոզչի աշակերտներ են համարւում:

Ստեղծուել է մի վտանգաւոր դրութիւն, որ սպառնում է ամեն ինչի—ե՛ ժողովրդի բարեկեցութեան, և՛ կրօնին, և՛ բարոյականութեան, և՛ պետութեան:

Ա. ԶԱԻԱՐԵԱՆՑ

(Վերջը յաջորդ համարում)

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արաստանի միացման նշանակութիւնը անբողջ կովկասի համար. — ռանձի, գոյքի ազահովութիւն և օրէնքի համահասատու պաշտպանութիւն. — Համեմատութիւն Կովկասի և նրա հարկան մահմելպական երկրների մէջ. — Խառըապալ և երուպականնածն կուսակալ. — Վարօնցովի և Մեծ Խշան Խիքայլի փոխարքակութիւնը. — Եւրոպական քաղաքակրթութեան նուաճած վարչեր Կովկասում. — Մոռացուած անկիսններ իրանց բնակիչներով. — Կովկասի յօրելիանական ցուցահանդէսի բնորոշ կողմր. — Գիւղատնուեսութիւն և զիւղացիական անտեսութիւն. — Գիւղատնուեսութիւն ուժական աշխատանքով և տնտեսութիւն վարծուած բանուորներով. — Խիքիրայում մասնաւոր անձանց արքունական հոգեր տալու օրէնքը. — Պոլոյեն օքն շելու օքրան. — Զեմստիօնների հրատարակչական իրատունքի սահմանափակումը. — Մատուկաբարութեան զորք և անբերրիութիւնը Ծուստատանում:

Ամբողջ Կովկասը տօնուած է Ռուսաստանի միացման հարիւրամեակը: Մեր ընթերցներին արդէն յայտնի է *) թէ Ե՞նչ պատմական հանգամանքներում 1801 թուի սեպեաւեմբրի 12-ին հրատարակուեց Ալեքսանդր Լի այն հրովարտակը, որով վերջնականապէս քայլքայուած Վրաստանը ընդունուեց հզօր Ռուսատանի թեաւատանի թեի տակ: Կայսրի հրովարտակի մէջ նշանաւոր են մասնւեանդ այն խօսքերը, որոնք բացատրում են այդ պատմական անցքի նպատակը. «Հիմնել Վրաստանում կառավարութիւն, որ կարողանայ հաստատել անձի, զոյքի ապահովութիւն և իրաքանչիւրին տալ օրէնքի համահաւատար պաշտպանութիւն»:

Այդ խօսքերի մէջ տամիսփուած են այն հիմնական պարմանները, առանց որոնց չի կարող ոչ մի երկրում զոյքութիւն ունենալ խաղաղ, կուլտուրական զարգացում: Այդ Տիգ զառ պարմաններից զուրկ էր ոչ միայն Վրաստանը, այլ և նրա բախտակից Հայաստանը, ինչպէս և տոհասարակ ասխական բոնութեան մատնուած ամեն մի երկիր: Այդ պարմաններից զուրկ են զեռ ևս այսօր մեր հարևան Թիւրքիան և Պարսկաս-

*) Փետրուարի №.

տանը և այդ է զլիսաւոր պատճառը գրանց ժողովուրդների թշուասութեան և յետամնացութեան:

Այդ մահմեդական տէրութիւնները կենդանի պատկեր են մեր մօսիկ անցեալի: Այդ երկրներում այժմ էլ շարունակւում են այնպիսի կարգեր, որոնք սովորական էին մի հարիւր տարի առաջ և Անդրկովկասում, երբ խաղաղ աշխատանքով ապրող ժողովուրդը մատնուած էր ոչ միայն աւաղակարարոյ ցեղերի մշտական արշաւանքներին, թէնամու սրի և կրտկի արհաւիրքներին, այլ և սեփական մանր-մունք իշխանների և պաշտօնեաների անսահման կամացականութեան: Երկրի մէջ գոյութիւն չունէր օրինաչափ, ուժեղ, կենարոնական իշխանութիւն. վրաց թագաւորակների և Գիօդակների անվերջ երկարուակութիւններից էին հարաւարեւմուտքից՝ թիւրքիան, հարաւարեւելքից՝ Պարսկաստանը, հիւսիսից՝ Կովկասի լեռնականները: Թէ վրաց իշխանները և թէ հայ մելքները չունէին կանոնաւոր սպասադինուած ու վարժուած գօրքեր, և թէնամու բանակների առաջ նրանք գուրս էին բերուամ վաս զինուած գիւղացիների և ճարտարի անկարգ խորեր, որոնք անկարող էին ուժեղ ընդդիմացրութիւն ցոյց տալ շատ աւելի սուուար թէնամուն: Թէ հայ և թէ վրացի իշխանները չունէին այնքան քաղաքական հասունութիւն, որ միանացին և դաշնակցութիւն կազմէին ընդհանուր թէնամու գէմ: Նեղ անձնական հաշիւններից գուրս գըրանք ոչինչ չէին տեսնում, և մտաւորապէս այնքան սառը էին, որ չէին կարող ընդունել ազգային միայնող զաղափարը: Դարերի ընթացքում անվերջ կոտորածներից ազատ էր մնացել մի բուռն հայ և վրացի ժողովուրդ, որ իր նուալ թուով ոչ մի ոյժ չէր ներկայացնում:

Սյա բոլորից յետոյ գժուար չէ տեսնել որ Ռուսաստանի մուտքը Անդրկովկասում մի փրկութիւն էր մահմեդական լոնութեան ծովի մէջ խեղուող այդ երկու բուռն ժողովուրդների համար: Ահա ինչո՞ւ Անդրկովկասի բուռն աշխատող քրիստոնեայ ժողովուրդները անհուն բերկանքով էին զիմաւորում ուսու զօրքերին, և եթէ կային վրաստանի միացման հակառակողներ, զրանք զանազան խաներ էին և թագաւորագներ և ոչ զրանց ճորտերը...

Վրաց իշխաններից և հայ մելքներից շատերը գեռ մի քանի զար առաջ զիմումներ էին անում Ռուսաստանին և նրա պաշտպանութիւնը խնդրում: Սակայն մինչեւ որ Ռուսաստանի սահմանները չը հասան կովկասեան լեռների վիթխարի պատճէշին՝ ուսուաց ցարերը առանձին նշանակութիւն չէին տալիս այդ զիմումներին: Անդրկովկասի միացումով

ոռւսաց քաղաքականութիւնը սկսեց լուրջ զբաղուել միայն այն ժամանակ, երբ նա դէմ առ դէմ կանգնեց Կովկասեան լեռնականների հրոսակների առաջ: Այնուհետև ժամանակի խնդիր դառնաւ Անդրկովկասին տիրելու հարցը, վրաց թագաւորի աղաջանը միայն արագացրեց պատմական անխուսափելի անցքը: Մանելով վրաստան, առանց մեծ արդեքների Ռուսաստանը հասաւ Արաքսի ջրերին: Այժմ նրա ձեռքում էր Կովկասեան լեռնաշղթայի չորս կողմն էլ. մնում էր նուաճել և այդ անմատչելի բարձրութիւնների վրայ բուն զբուած անկախ լեռնականներին, որոնք իրանց անընդհատ յարձակումներով և արշաւանքներով մշտական մի պատուհաս էին ամբողջ Կովկասեան Պարանոցի համար: Կոփւը երկարատև էր և ահեղ, անցած դարի աւելի քան կէսը դործ դրուեց նուաճելու համար այդ խիզախ լեռնականներին:

Ռուսաց բանակը շրջապատելով ահագին լեռնաշղթան, քայլ առ քայլ սեղմում էր իր պազարատէ բազուիններում կուստիկան լեռների ազատ որդիններին, մինչև որ 1855 թուի օգոստոսի 25-ին չընկաւ լեռնականների վերջին ընդդիմադրական կէտը—Շամիլի Գունիբը: Այնուհետև հեշտ էր ոչնչացնել և արեմտահան լեռնական ցեղերի թոյլ ընդդիմադրութիւնները: Եւ 1864 թուի մայիսի 21-ին, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի փոխարքայութեան ժամանակ, ոռւսաց բանակը վերջապէս կարողացաւ տօնել երկարատև կոփւների վախճանը: Խաղաղութիւնը ամբողջ Կովկասեան Պարանոցի վրայ հաստատուած էր և երկիրը կարող էր նուիրուել խաղաղ աշխատանքին և քաղաքացիական առաջադիմութեանն Ալեքսանդր Լի վերի բերած խօսքերն այժմ կարող էին ամբողջապէս իրականանալ: Բախտի բերմամբ այդ կարեոր մօմենտներում Կովկասի վարչական զեկը գտնուում էր աշնալիսի լուսաւոր, մարդասէր և աշխարհաշէն անձանց ձեռքում, ինչպէս էին նախ Վօրօնցօվը և ապա Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչը: Այդ երկու փոխարքայութիւնների ժամանակի սկսեց վերածնուել արեկեխան բռնակալութիւնների օրօք աւելուած և ամեյացած երկիրը: Ազգաբնակութիւնը աճեց, տնտեսական կեանքը կենդանացաւ, քաղաքացիական կարգեր ներմուծուեցին մշտական խոսպութիւնների և արիւնհեղութիւնների երկրում: Դարեհի և Լանկթէմուրների ժամանակներից սկսած բռնակալ սատրապների և սարգարների անսանձ քմահաճացքներին վարժուած ասիացիները՝ սկսում էին նոր-նոր դաղափար կազմել երկրի իսկական կուսականների մասին. ամեն օր կեանքի, գոյքի և պատուի համար

դոգացող թշուառ վրացին և հայը վերջապէս համոզիստ շունչ
քաշեցին եւրոպականաձն կառավարութեան ներքոյ:

Գաղափար կազմելու համար թէ ինչ առաջադիմութիւն
արաւ նոր կարգերի չնորհիւ կովկասը, մենք չը պէտք է նրան
համեմատենք Արեմտեան Եւրոպայի հետ, այլ՝ մեր հարեւան
թիւրքիայի և Պարսկաստանի, սրովհետեւ մի հարիւր տարի ա-
ռաջ մեր երկիրը այդ երկրների հարազատ կտորն էր, եւ այժմ
համեմատեցէք Անդրկովկասի նախկին թիւրքական կամ նախկին
պարսկական նահանգները՝ դրանց կից երկրների հետ, որոնք
մնացին մահմեղական բռնակալութեան ներքոյ: Տարբերութիւնը
ահազին է, Այժմ էլ, ինչպէս և հարիւր տարի առաջ այդ երկըր-
ներում գեռ գոյութիւն չունեն անձի, գոյքի ապահովութիւն և
օրէնքների համահաւասար պաշտպանութիւն: Քաղաքակրթու-
թեան այդ հիմնական բարիքներից զուրկ են այդ երկրների ոչ
միայն քրիստոնեաները—որոնց մահմեղական Փանատիկոսութիւ-
նը լիակատար մարդիկ չէ համարում, այլ միայն մարդկացին
հօտ—այլև Մահմեղի հարազատ ժողովուրդը, մուսուլման մաս-
սան: Այդ է դաժան իրականութիւնը, և ինչո՞ւ զարմանալ որ
այդ երկրների քրիստոնեայ ժողովուրդները ձգտում են Ռու-
սաստանին: Մասսան բէալիստ է. նա չի սիրում վերացական
դատողութիւններ, նա տեսնում է իր թշուառ երկրի սահմանի
միւս կողմում մի բարեկարգ կացութիւն, որ իր համար մի
տենչ, մի ցնորք է թւում. նա տեսնում է այնտեղ իր եղբայր-
ների խաղաղ կեանքը, բայց ինքն իր սեփական ոյժերով յոյս
չունի ձեռք բերել գոյութեան այդպիսի պայմաններ, ուստի
դալթում է իր եղիպատական զերութիւնից գէափի այդ աւետեաց
երկիրը: Այս կէտը պէտք է ի նկատի ունենալ, հասկանալու
համար բուն ժողովրդի հոգեբանութիւնը, որ տարբեր է ին-
տելիքենյիշայի վերացական դատողութիւններից:

Անշուշտ կովկասում հասարակական կեանքը իր շատ կող-
մերով դեռ շատ հեռու է ոչ միայն եւրոպականից, այլ նոյն
իսկ չունի կենտրոնական Ռուսաստանի քաղաքացիական շատ
բարիքներ (երդուեալ դատաւորներ, բարձրագոյն դպրոց,
զեմստոլ ևայլն), սակայն, ինչպէս ասացինք մի քիչ առաջ,
պէտք է համեմատութեան համար վերցնել հարեւան ասիական
երկրները: Ամենաթռուցիկ համեմատութիւնը անգամ այն ժա-
մանակ ակնյայտնի կը դարձնի, որ կովկասը այժմ զանւում է
եւրոպական քաղաքակրթութեան շաւզի վրայ, և քանի գնում
աւելի է հեռանում իր նախկին բախտակից ասիական երկըր-
ներից: Այդ էվոլուցիայի մէջ բնականաբար նախ մեծ ու
պստիկ քաղաքները, ապա կանոնաւոր ճանապարհներով մեծ

քաղաքների հետ կապած վայրերն են փոխում հին կեանքը և ընդունում եւրոպական քաղաքակրթութիւնը, իր թէ լուսաւոր և թէ խաւար կողմներով։ Եւ որովհետեւ մեր երկրում գեռ շատ անկիւններ կամ, որոնք նախաջրհնեղիւեան հաղորդակցութեան մէջ են դրախ աշխարհի հետ, ուստի հին, նահապետական կեանքը գեռ պահպանում է անփոխի շատ մռացուած անկիւններում, որոնք, ինչ ասել կ'ուզէ, զիւղացիներով են բնակուած... Այս վերջինների թուի մասին զաղափար է տալիս 1897 թուի յանուարի 28-ին կատարուած ժողովրդագրութիւնը, որից երեսում էր որ երկու մեսի 9,248,695 հոգոց միայն 996,248 հազի են ապրում քաղաքներում։ Այդպէս ուրիմն ազգաբնակութեան զիւղական մասը շարունակում է իր թուով գերիշխող լինել մեր երկրում։ Այդ ի նկատի ունենալը և ազագանակ կովկասի յօրելեանական ցուցահանդէսին, որ պէտք է ցոյց տայ մեր առաջադիմութիւնը այս հարիւր տարուայ ընթացքում։

Այդ ցուցահանդէսի հետ մեր ընթերցողները կը ծանօթանան առանձին յօդուածներում, այժմ մենք միայն ուղում ենք մատնանիշ անել նրա մի բնորոշ կողմը։ Մենք վերև ասացինք, որ եւրոպական կեանքը հոսանքը չօշափելի արդիւնք առւել է միայն քաղաքներում և կանոնաւոր հազորդակցութեան ճանապարհների վրայ։ Ցուցահանդէսը ապացուցանում է այդ միաբը։ Դուք այդտեղ տեսնում էք կապիտալիստական արդիւնագործութեան, բուրժուական կօժիրափի, գրքոցական հաստատութիւնների պատրաստած բարձրակարգութիւնը, անսմուռմ էք նաև քաղաքային արհեստաւորների ձևուագործների, սակայն զիւղացիների սննդաստութիւնը միանգամայն բացակայում է։ Անշուշտ զիւղատնտեսնական արդիւնքներ ի ցոյց են դրուած, բայց դրանք կապիտալիստական, խոշոր կամ վարձով աշխատանքի վրայ հիմնուած, կալուածատիրուական անտեսութեան արտադրութիւններ են և ոչ զիւղացու սեփական աշխատանքով, իր մի կտոր հողից ստացած արդիւնքներ։ Գիւղատնտեսութիւնը, իրարև կապիտալիստական արդիւնագործութիւն, ներկայացրած է, իսկ զիւղացու անտեսութիւնը—ոչ։ Եւ զա հասկանալի է։ Կթէ զործարանատէրը, կալուածատէրը, քաղաքայի արհեստաւորը ինքնարերաբար մասնակցելու թէ միջոց ունեն և թէ օգուտ նոյնը չի կարելի ասել զիւղացու մասին. ուստի ցուցահանդէսի կարգադրիչների ամենամեծ ջանքերը և հագաւարութիւնը պէտք է ուղղուած լինէին՝ դրանց ոչ միայն մասնակից անելու համակասեան յօրելեանական ցուցահանդէսին, այլ և ներկայա-

յնել ցուցահանդէսում մեր գիւղացիներին իրանց ամբողջ նիստ ու կացով: Ցուցահանդէսը ամենալաւ առիթ էր հասարակութեան ու շաղրաւթեան ներկայացնել ազգարնակութեան այդ ահազին մեծամասնութեան թշուառ գրութիւնը, նրա հողացին, ու հարկացին պայմանների պատկերը, նրա մտաւոր, առողջապահական վիճակը, նրա զործիքները, նրա անտեսութիւնը ևայլն Եւրոպական ցուցահանդէսներում զուք կը տեսնէք տիպիկական գիւղական խրճիթներ իրանց բնակիչներով, նիստ ու կացով, զործիքներով, տնային անասուններով, և, բայց այդ, բազմաթիւ ցուցակներ, քարտէջներ, գիւղաբաններ, որոնք լիակատար կերպով ծանօթացնում են գիւղացիների զրութեան հետ ընդհանրապէս: Եւ մեզ թւում է որ եթէ մեր կարգադրիչ պարմնները կամ Գիւղատնաեսական Ընկերութիւնը մի քիչ աւելի եռանգ և սրտազին վերաբերունք ցոյց տային գէպի մեր գիւղացիները—գէտուար չեր լինի ցուցահանդէսում շնչական տնտեսութեան համար էլ այնպիսի բազմակողմանի լուսաբանութիւն ստեղծել, ինչպէս այդ արել է Բազուի նաւթափորձների ժողովի Խորհուրդը իր ճիւղի վերաբերեալ: Սակայն... Շատուրութեան խօսքը մեր բարեկեցիկ բուրժուանների և բիւրօկատաների համար միայն մի գատարկ հնչիւն է, և, շատ-շատ, լոկ պլատոնական զգացմունքներ է կարողանում զարթեցնել... Այդպիսով յօթելեանական ցուցահանդէսը միջոց չի տալիս իւմանալ թէ ինչ առաջադիմութիւն է արել Կովկասի ազգաբնակութեան գիւղական մասը, ինչ զրութեան մէջ է մեր երկրում ոչխոչոր կամ վարձու աշխատանքի վրայ հիմնուած տընտեսութիւնը, որ ներկայացրած է, այդ՝ մանր, գիւղացիական տնտեսութիւնը, որ հիմնուած է մանր հողատէրի սեփական աշխատանքի վրայ: Մեր հայեացքը այդ հարցի վրայ յայտնի է (Մարա) արդէն, մենք կողմնակից ենք այն սկզբունքին, որ հողը պատկանի նրան մշակողին և ոչ սպեկուլեանաներին կամ զանազան խաներին, բէդերին հայնք: Այդ աեսակէտով ցանկալի էինք համարում, որ մեր երկրում ևս ստեղծուելին գիւղութիւններ, որ հողերը անցնեին գիւղացիների ձեռքը, ինչպէս այդ անուում է կենարունական Ռուսաստանում:

Այդ տեսակէտից ուշագրութեան արժանի է մի նոր կարգադրութիւն, որ Բարձրագոյն հաստատուած է յուլիսի 8-ին: Մեր խօսքը մասնաւոր անձանց Սիբիրում արքունական հողեր սպառ օրէնքի մասին է:

Նոր օրէնքով թոյլարուամ է Արքիրի որոշ նահանգներում ծախիել արքունական հողերը մասնաւոր անձանց, որպէս զի այգանդ կազմուեն խոչոր (Յ հաղար գեսեատին) մասնաւոր

տնտեսութիւններ։ Մուսա աղնուականներին շատ ձեռնաու պայմաններով երկարատև (մինչև 99 տարի) ժամանակով արուելու են հողեր նաև կապալտով։ Կապալտուն կարող է ապագայուր՝ իր մշակուած հողերի սեփականատէրը դասնալ։ Այդպիսով անշուշտ պակասում են այն հողերը, որոնք ուսւ զիւղացի գաղթականների պէտքերի համար էին պահուած։ Խոչպէս փորձը ցոյց է տուել, մասնաւոր կալուածատէրերը, կենտրոնական Ռուսաստանում, ոչ մի տեղ կանոնաւոր տնաեսութիւններ չեն կարողացել հիմնել և, մեծ մասամբ, իրանց հողերը կամ վաճառել են սպեկուլանտներին կամ թանգ զներով ծախու են ու կապալով տուել զիւղացիններին։ Ասլագան ի հարկէ կր ցոյց տայ թէ աղնուականնութիւնը արգեօք կարող կը լինի Սիրիբիայում այլ կերպ վարուել, քան կենտրոնական Ռուսաստանում։

Այժմ թուենք մի քանի նշանաւոր կարգադրութիւններ ևաթարարուած է յունիսի 29-ին Բարձրագոյն հաստառուած մինիստրների կօմիտէտի որոշումը։ 1) Ս. Պետերբուրգի, Մոսկուայի, Խարկովի, Եկատերինոսլավի, Կիևի, Պոգոլի, Վոլնի նահանգներում, Շոստով, Տականրօգ, Նախիջևան քաղաքներում, Կասարօվկա գիւղում, Խերսոննան նահանգի Բոգուեավլենսկ, Կալինօվկա և Վարչարօվկա գիւղաքաղաքներում, ինչպէս և Պետերբուրգի, Օդեսայի և Նիկոլաևսկի քաղաքապետութիւններում և Կրօնչտատի զինուորական նահանգամետի կառավարութեան ենթակայ տեղերում, շարունակել 1901 թ. սեպտեմբերի 4-ից ևս մի տարի ժամանակով զօրեղացրած պահպանութեան կանոնադրութիւնը (ուղարկեած ոօն յսկանոյ օքրանի)։ 2) Նոյն ժամանակամիջնորդով զօրեղացրած պահպանութեան գրութեան մէջ է յայտարարուած նաև Թիֆլիս քաղաքը և Բագուն իր գաւառով, Պօկրօվսկեան և Շուշակեան գաւառները, Վլադիմիրեան նահանգում Խվանօվօ-Վօզնեսենսկ քաղաքը, Ելիզավետգրադ քաղաքը և Խերսոննան նահանգում Վուկուսենսկ արուարձանը և Կրիվոյ Ռոգ վայրը։

Ցունիսի 21-ին հրատարակուած է ներքին գործերի մինիստրի շրջաբերականը, որով սահմանափակւում է զեմստվօնների հրատարակական իրաւունքը. թոյլատրում է բացի զնմսովոյի գործունէսւթեան վերաբերեալ մասնագիտական կամ պարբերական հրատարակութիւններից նաև հրատարակել ժողովրդական ընթերցանութեան միայն այնպիսի դրքեր, որոնք մտած են ժողովրդական գրադարանների, ընթերցարանների դպրոցների ցուցակներում։

Մի տարի առաջ, 1900 թուի յունիսի 12-ին հրատարա-

կած օրէնքով, հայահատիկների շահմարանների կամ մատակարարութեան գործը (քրութեան գործը) նոյնպէս խլուածէր զիմստվոյի ձեռքից և յանձնուած վարչութեան։ Վարչութիւնը գեռ չէր կարողացել նոր օրէնքի համեմատ կազմակերպել մատակարարութեան գործը, որ վրայ հասաւ նոր անբերրիութիւն 12 նահանգներում, որոնք կազմում են Եւրոպական Ռուսաստանի տարածութեան քասորդ մասը։ Խնչպէս երեսում է ներքին գործերի մինիստրի օգոստոսի 17-ին յայտարարած շըրջաբերականից, մատակարարական գործի նոր կազմակերպութիւնը 1900 թուի յունիսի 12-ի օրէնքով բաւարար չէ, ուստի Բարձրագոյն խնդրուում է մի քանի էական յաւելումներ, որոնց գով դարձեալ կարեոր է համարւում զեմստվոյի որոշ մասնակցութիւնը ժողովրդական պատուհասի դէմ մաքառելու վեհ աշխատանքի մէջ։

ԼԵՒԻՆ ՍԱՐԳԱԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԱՐԴԻՒՆԱ- ԲԵՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍ

Լ. Ցուցահանդէսի նպատակը, կազմակերպութիւնը և բաժինները. — Այլ բաժինների ընդհանուր տեսութիւնը, գիտական և պատմական տեսակէտների բացակալութիւնը, նրա անհամապատասխան լինելը չունեու դասակարգի համար:

Երեք տարի սրամից տուաջ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը մտածում էր՝ ինչ ձևով ներկայացնել մեր փոքրիկ երկրի արդիւնաբերութիւնը Պարիզի համաշխարհային ցուցահանդէսում: Ընկերութեան անդամներից մի քանիսը առաջարկում էին Գիւղատնտեսական ընկերութեան յիսնտմեակի առթիւ, որ զալիս էր 1899-ին, կազմակերպել ցուցահանդէս, որ և (անհրաժեշտ կրճատումներով) կարելի կը լինէր փոխագրել Պարիզի և նկատի ունենալով, սակայն, ժամանակի ու միջոցների սղութիւնը, աւելի բարեւք համարուեց յետաձգել ընկերութեան յօթելիանի ցուցահանդէսի բացումը մինչև 1901-ը երբ լրանում էր և կովկասի միացման սկզբի հարիւրամեակը Ռուսաստանի հետ ։ Շատ արդարացի կերպով ենթագրուում էր որ միացման հարիւրամեակի տօնելու ամենանպատակայարմար միջոցը ցուցահանդէսն է: Վերջինս ակնելու կերպով կը պարզէր այն փոփոխութիւնը, որ կրած է Կովկասը XIX տարուայ ընթացքում, ներկայացնելով մինոյն ժամանակ այն զրութիւնը, որի մէջ գտնուում է մեր երկիրը և որ գարի չէ մքում: Բացի երկրի արդիւնաբերական սլատոյըների հանդէսից որոշուեց կազմակերպել և ողողավեր երկրագործութեան զանազան ճիւղերով պարագներից և հրատարակել մի հաւաքածու գիւղատնտեսական ընկերութեան յիսնամեսակի առիթով:

1900 թուի ամառուայ վերջը, ևթէ չենք սխալում, առնուեց մասնաւոր կերպով երկրագործութեան մինհստրի հաւանութիւնը, աշնան ու ձմռուան ամիսներին կազմուեց ծրագիրը,

առնուեց զանազան քաղաքների համաձայնութիւնը՝ մասնակցել ու նպաստել նիւթապէս կազմուելիք ցուցահանդէսին:

Երբ գարնան սկզբին հաստատուեց ծրագիրը և պարզուեց որ կարելի էր լինի գտնել ցուցահանդէսի կազմակերպութեան համար անհրաժեշտ 80-90 հազ. ոռոբլին, ձեռնարկուեց հանդէսի կազմակերպութիւնը:

Գործի աջողութիւնը ապահովելու համար ժողովների կազմակերպութիւնը թողնուեց Գիւղատ. Բնկ. խորհրդին, ժողովածուի կազմելով յանձնուեց լնկերութեան քարտուղարին, իսկ ցուցահանդէսի համար բացի ընդհանուր կարգադրիչից նշանակուեցին նաև յատուկ կարգադրիչներ ամեն մի զիսաւոր բաժնի համար:

Համապատասխան ցուցահանդէսի «Գիւղատնտեսական և Արդիւնարերական» անուան, ցուցահանդէսը պիտի ունենար հետեւալ զիսաւոր բաժինները՝ հողագործութիւն, գինեգործութիւն, այգեգործութիւն, անտառապահութիւն, ընտանի կենդանիներ, կաթնատնտեսութիւն, շերամապահութիւն և մեղուաբածութիւն, որս և ձենորսութիւն, զիւղատ. գործիքներ և մեքենաներ, տնայնագործութիւն և արհեստներ, գործարանական արդիւնարերութիւն, բաժիններ հանրային, արհեստագիտական, մանկագրժական, գիտական-լիբրակագրական, գեղարուեստական:

Սեպտեմբերի 2-ին ցուցահանդէսը բացուեց պաշտօնապէս: Նորանոր իրեր շարունակուում են ստացուել ամեն օր, թէև եքսպոնատների աւելանալը գժուար թէ շօշափելի կերպով կարողանայ փոխել այն տպաւորութիւնը, որ ստանում է յաճախորդը հէնց հիմա:

Ցուցահանդէսը կազմակերպուած է այգեգործական դպրոցի հոգի գրայ և բռնուած է մի քանի գիսեատին տարածութիւն: Բացի լնդարձակ զիսաւոր շնութիւնից, մասնաւոր էքսպոնատները շինել են իրանց համար և մոտ 20 աւելի մանր պաւիլիոններ, որոնցից մի քանիսը բաւականին գեղեցիկ են:

Մեր ընդհանուր տեսութիւնից դուրս է մանրամասնորէն յիշել այստեղ՝ ինչ է ներկացացրած հանդէսի այս կամ այն բաժնուած, մասնաւոնդ որ այդ տեսակ նկարագրութիւն գժուար էլ է կատարել զեռ ևս չը տպագրուած ուղեցոյցների բայցակայութեան պատճառով: Բաւական է ասել որ ցուցահանդէսը պարունակուած է իր մէջ համարեա այն բոլորը, ինչ որ ցրուած է կովկասի բազմակողմանի ու հեռաւոր անկիւններուամ:

Հողագործական բաժնուած նահանգ-նահանգ գետեղուած են

այն բոլոր հացահատիկներն ու բոյսերը, որոնցով ապրում է մեր երկրի ազգաբնակութեան 800/0-ը:

Ուշադրութեան արժանի է գիւղատեսութեան վերատեսուչ հանգուցեալ Գէեվսկու ժողովածուն Կովկասում մշակուող բոլոր հացահատիկների տեսակների (հատիկների և հասկերի): Գիւղատեսական գործիքների բաժնում, օտար ֆիրմաներին կից, ներկայացրած են և պ. պ. Տէր-Զաքարեանցի և Մամաջանեանի կասելու մեքենաները: Եթէ հնարագէտ պարոնների աշխատանքը—ստեղծել մի մեքենայ, որ բացի ցորենը բաժանելուց ծղնոտից և մանրացնէր վերջինս դարձնելով գիւրամարսյարդ, յաջողուի—դա կը ներկայանայ գիւղացի ազգաբնակութեան համար ահազին բարիք: Բաւականին հարուստ գինեգործական բաժնում առաջնակարգ տեղ է բռնում Ուգէլի (կայսերական ընտանիքի) վարչութիւնը: Ուգէլի Կովկասեան վարչութիւնը ներկայացրել է ոչ միայն խաղողի տեսակներ (տեղական և արտասահմանի) գինիների հետ միաժն, այլ և խաղողի տեսակների կենդանի որդեր առանձին կտոր հողի վրայ: Նոյն վարչութեան բաժնում կարելի է տեսնել և թէյի թփեր (Բաթումի մօտից) և անուշանոտ իւղ, Կախէթում բոււցրած վարդից ստացուած, և բամի անուանեալ նոր բոյսը իր հիանալի թելերով: Կարկտի դէմ կռուելու համար գործածուող մօրտիր թընդանօթները մուցրած են արդէն Ուգէլի Կախէթի այգում և այս տարուայ յաջող փորձերը իրաւունք են տուել բերել այդ թնդանօթները ցուցահանդէս:

Այգեգործական բաժնի մասն են համարուելու և մի քանի առանձին շինուած պաւիլիոններ, որոնց մէջ Սարաջեվի ու Սողոմոնովների կօնեակի գործարանները ու Ֆրիդոնովի տնտեսութիւնները թողնում են բաւականին լաւ տպաւորութիւն:

Այդ բաժինները յաճախողը անցնում է անտառայինը զանազան տեսակ ծառերի նմուշներով, շերամապահականը՝ իր շքեղ գործուածքներով, մեղուարուծականը, մրգեղեններինը:

Կաթնատնտեսական բաժնում ուշադրութիւն է գրաւում տարէց տարի աւելի և աւելի զարգանող պանրագործութիւնը շվեյցարական ձևով:

Շաղինովի և Մելիք-Բախտամենանի պաւիլիոններում ցանկացողը կարող է տեսնել, որ արժէքաւոր արտասահմանեան պանիրների պատրաստելը այնքան էլ դժուար չէ...

Բաւականին մեծ տեղ են բռնում տնայնագործական և արդիւնաբերական բաժինները: Դրանք շատ բազմակողմանի են

և ներկայացնում են այն ամենը, ինչ որ այդ ճիւղերից արժանի է ուշադրութեան և և է տեսակէտից:

Համբերի, կոյրերի, անշափահաս ոճրագործների դպրոց-ների շինուածքներն ու զործուածքները բոնում են այդ բաժիններում աչքի ընկնող տեղու Մարդ որու չափ հանդստանում է, անհնելով թէ ինչպէս մեր մրցման ու անհատական չափ գարում առաջ է դնում և ընութիւնից հալածուածների օգնութեան դորձը:

Հանգային բաժնում աչքի ընկնող տեղ է բոնում կովկասի հանկային վարչութիւնը: Վերջինիս կազմած աղիւսակը ամենս մէկին շօշափելի կերպով ցոյց է տալիս, թէ որքան արագ կերպով գարգանում է, մելու նաւթի, մանգանէդի (սե քարի) և պղնձի արդիւնաբերութիւնները: Բաղուայ նաւթարդիւնաբերողների առանձին շինութիւնը արդարացի կերպով համարուելու է ամենաաջնողակ և ամենախելացի կերպով՝ կազմածը ամբողջ ցուցահանդէսում:

Արդիւնաբերական բաժնի վերջի մասը՝ նուիրուած է կիսով չափ գեղարուեստական բնաւորութիւն կրող ճիւղերին՝ չեղեղ կահ-կարասիթին, պարկչաներին և այլն:

Իտալացի Անդրօլեստիֆ տեղական մարմարիններից և քարերից պատրաստած էքսպոնատները ցոյց են տալիս, թէ ինչ զեղեցիկ և չքեզ քանդակակործութիւններ կարելի է ստանալ մեր լեռներում թագնուած հարստութիւններից:

Այս բաժնին կից է գեղարուեստական բաժինը, ուր ամենից շատ ուշադրութիւն են դրաւում պ. պ. Սուրէննեանցը և Դաբայեվը: Վերջինիս «Դրօշակակիրը» և առաջինի «Աւերումից յետոյ» պատկերները տպաւորութիւն են թողնում և ոչ զգայուն մարդկանց վրայ:

Մեծ շինութիւնից գուրս են թիգլիսի և Բագու քաղաքների մանկավարժական և զիտական բաժինները: Դրանցից ամեն մէկում յաճախողը կը գտնէ հետաքրքիր տեղեկութիւններ՝ վերաբերեալ այդ քաղաքների անտեսութեան, երկրի կրթական ու այլ կարիքների մասին:

Մի քանի օրուայ ընթացքում ցուցահանդէս յաճախողը կը անմնէ համարեա այն ամենը, ինչ արժանի է ուշադրութեան: Բայց այդ չի նշանակում որ աւեմնելով, յաճախողը և հեշտ դաշտաբար կը կազմէ երկրի արդիւնաբերութեան մասին:

1886 թուին (թէ 1887-ին լաւ չենք յիշում) Խարկով քաղաքում կազմակերպուած էր համառուսական զիւղատնտեսական ցուցահանդէս Բացի հարաւային Ռուսաստանի միլիօնա-

տէրերից և խոշոր կալուածատէրերից յուցահանդէսին մասնակցում էին և մի քանի սեփական կալուածքներ ունեցող «գիւղացիներ», որոնց ոչխարի հօտերը հաշում էին տասնեակ հազարներով և ձիերի երամսիները հազարներով։ Զիերի եքսպերտիզայի ժամանակ ներկայ էր ի միջի այլոց և մի բարձրաստիճան տիկին, իր երիտասարդ բաց գևս կեանքին անծանօթ աղջկայ հետ երբ հերթը հասաւ «գիւղացու» հազարներ արժէք ունեցող ձիուն, միամիտ օրիորդը բարձր ձայնով դիմեց տիկնոջ. «Մայրիկ, տես, ինչպէս դեղնցիկ է «գիւղացու» ձին, հապա ինչու են ասում թէ ոռու գիւղացիք աղքատ են, միթէ աղքատը կարող է այդպիսի ձի ունենալ»:

Ի՞նչ պատասխանեց տիկինը միամիտ աղջկան, մնաք չը լսեցինք, բայց օրիորդի այդ մի քանի խօսքը պարզեց երիտասարդ ուսանողներիս, թէ ինչ սխալմունքներ կարող են առաջանալ անհամապատասխան կնրանով կազմակերպուած ցուցահանդէսները։ Մինչև օրս կազմակերպուած բոլոր ցուցահանդէսները իրանց գոյութեան հէնց առաջին օրուանից ունեցել են երկու նպատակ՝ կրթական-գիտական և րեկլամային, որոնց համեմատ կրել են և այս կամ այն դոյնը: Կրթական-գիտական նպատակը խազացել է դրանց մէջ անկասկած տառջնակարդ տեղ: Յոյց տալ ժողովրդին այս կամ այն անյայտ կամ նոր արդիւնաբերութեան ձեւը, ծանօթացնել գիւղացուն այս կամ այն օդտակար և ձեռնտու աշխատանքի միջոցի հետ, ժողովրդի ուշադրութիւնը դարձնել այս կամ այն հասարակական բնաւորութիւն ունեցող լուրջ հարցի վրայ,—եղել է նպատակ ինչպէս վերջերս Ռուսաստանում կազմակերպուող շարժական ցուցահանդէս դասիասութիւնների (մեղուաբուծական, կաթնասնտեսական և այլն), նոյնպէս և Պարիզի անցիալ տարրուայ ցուցահանդէսի սոցիալական, գեղարուեստական բաժինների: Գիտական բնաւորութիւն կրել են ցուցահանդէսները, ինչպէս XVII դարում Կոլբէրի ժամանակ, նոյնպէս և մեր օրերում բացուած համանդիմական Փլասդօֆ և համաամերիկական Բուֆալօյի ցուցահանդէսներում: Կրթական գիտական նպատակի հետ միասին առաջ է գնացել ցուցահանդէսում բեկլամն ու մրցումն միևնույն ձիւղում աշխատողների մէջ: Փայլել ցուցահանդէսում, խօսել տալ իր մասին, ստանալ մրցանակ, տպադրուել յայտարարութիւններում ի գիտութիւն «մուշտարիների»—ահա այն նպատակը, որ միծամասնութեանը մզում է դէպի ցուցահանդէսները բեկլամն է որ ստիպում է հազարներ ծախսել և մասնակցել ցուցահանդէսներում ոչ միայն այս կամ այն կալուածատէրին,

գործարանատէրին, այլ և ամբողջ ազգերին ու պետութիւններին:

Եւ զա հասկանալի է:

Որ և է առեւտրական կամ արդիւնաբերական ֆիրմա մասնակցելով ու մրցանակներ ստանալով ցուցահանդէսներում, անուն է հանոււմ, խօսել է տալիս իր մասին հազարներին, արագւորում է տասնեակ հազարների մաքի մէջ և բնականարար (թէն կարծես անդիտակցարար), քաշում է դէպի իրան այն ֆիրմաների մուշտարիներին, որոնք անխոհեմութիւն են սննեցել չը փայլել ցուցահանդէսում:

Պարիզի վերջի միջազգային ցուցահանդէսի քիմիական և ներկերի բաժնում փայլում էր Գերմանիան: Այդ տեսան այն 50 միլիոն այցելողները, որ զնացել էին ցուցահանդէս, զրամասին գրեցին ամենաբարձր բոլոր լրագիրները: Ի՞նչ տսել կ'ուզէ որ Գերմանիան այդ տեսակ յայտարարութիւններից յետոյ կամաց-կամաց զուրս կը մղէ այդ ճիշդից բոլոր իր մրցակիցներին, թէկուզ դրանցից մի մասը լինի և շատ արժանաւոր: Բայց ծագում է մի շատ լուրջ հարց, արդեօք ցուցահանդէսները հանդիսանում են մի առարկա, ուր յազմողը հանդիսանում է առելի կատարելագործաւածն ու յառաջազէմը:

Դժբախտաբար ոչ:

Ցուցահանդէսներում մասնակցել կարող են միմիայն նիւթապէս աւելի ուժեղները:

Հազար, տասը հազար ծախսելը ոչինչ է մի խոշոր կալուածալիրոջ, զարծարանատիրոջ համար, թէկուզ զրանց կալուածքը կամ զործարանը տեխնիկական զիտական տեսակէտից ոչ մի հետաքրքրութիւնը չը ներկայացնեն: Բայց ինչպէս մասնակցէ ցուցահանդէսին մի աղքատ, թէն շատ արժանաւոր ու առաջարէմ գիւղացիք: Պարզ է որ բեկլամի բնաւորութիւն ունեցող ցուցահանդէսը հանդիսանում է այսպիսով մի նոր միջոց, որով աւելի ճարագիկն ու ունեորը ասպարէցից զուրս է նետում աւելի թոյլ, չունեոր մրցակիցին: Ահա ինչու ուշագրութեան արժանի են այն ցուցահանդէսները, որոնք ունեն զիտական-կրթական նշանակութիւն, կամ որոնց մէջ մրցում են միատեսակ գոյն և բնաւորութիւն ունեցող ոյժերը (զիւղացին զիւղացու հեա, մեղաւաբոյժը մնալաբուծի և այլն): Գալով ներկայումս բացուած կովիասեան ցուցահանդէսին, չի կարելի չը խոստովանուել որ զիտական-կրթական մասը նրա մէջ շատ թոյլ է ներկայացրած, բայց մի քանի արհետաւորաց դըպ-բոցներից և երկու կոնեակի ու երկու կաթնատնտեսական ֆիրմաներից, որոնք աշխատում են. միւս ճիւղերը և էքսպո-

նէնտները համարեա զուրկ ևն զիտական բնաւորութիւնից:
Յուցահանդէսում զեաեղուած է զլսաւորապէս այն, ինչ որ
բերել են էքսպօնէնտները: Բայց որովհետե էքսպօնէնտները մնա
մասամբ խոշոր կալուածատէրերը և մանաւանդ դործարանատէ-
րերն են, ուստի ամբողջ ցուցահանդէսի տպաւորութիւնը այնքան
զիւզատնտեսական չէ, ինչքան արդիւնաբերական: Բայց յրանից
և ներկայացրածի մէջ յաճախորդը տեսնում է ոչ թէ այն, ինչ որ
կայ մեր զիւզացի միլիօնաւոր աղջաբնակութեան իրական
կեանքի մէջ, այլ միմիայն այն, և մեծ մասամբ լաւը, որ բերել
է այս կամ այն անհատը:

Այս սխալը արժանի է ափսոսանքի մանաւանդ այն պատ-
ճառով, որ իրականութիւն ներկայացնելը այնքան էլ գուար
չէր, ևթէ ցուցահանդէս կազմակերպողները օգտակար գտան
հասարակութեան առաջ դնել մի քիւրդ ընտանիք իր նիստ ու
կացով (թէն ոչ այնքան ընորոշ քրգերի համար), միթէ աւելի
հետաքրքրական չէր լինի և աւելի զիտական նշանակութիւն
չէր ունենալ ներկայացնել մի-մի տիպիկական ընտանիք հայե-
րից, թուրքերից, վրացիներից, լեռնականներից: Իսկ հիմա
ցուցահանդէսով գաղափար կազմողները երկրի ներկայ վիճակի
մասին կարող են ընկնել նոյն տեսակ սխալմունքի մէջ, որ բնա-
կան էր մեր բերած բարձրաստիճան օրիորդի համար Խարկովի
ցուցահանդէսում Բայց գրանից զեաեղուած իրերի գասաւորու-
թիւնը ցուցահանդէսում չի համանում ոչ մի զիտական պահան-
ջի: Գիւղատնտեսական բաժնում, օրինակ, բոլոր նահանգներից
դրած են զատ-զատ պատկերով բոլոր հացահատիկներից, առանց
որ և է ձեռվ նշանակելու կամ ցոյց ատալու, թէ որ հատիկը աւելի
նշանակութիւն կամ արժէք ունի երկրի համար, որ բոյսը կեն-
սական հայն է զիւզացու, և որն է խաղում միայն համեմի
գեր, ինչո՞ւ են տարբերւում, բայց արտաքինից մինոյն բոյսի
զանազան տեսակները հայլն:

Եզիպտացորենը (օիմինդը) մշակւում է և՛ թիֆլիսի, և՛ Քու-
թայիսի, և՛ Երեանի, և՛ Երկրի միւս նահանգներում: Այդ մասին
խօսում են ամեն մի նահանգի բաժնում զրուած եզիպտացո-
րենի պատկերը: Բայց ցուցահանդէս կազմակերպողները լուսում
են թէ արդեօք ամբողջ հայրի որ մասն է կազմում այդ հացահա-
տիկը: Իսկ զա անհետաքրքիր չէ, որովհետեւ Քութայիսի նահան-
գում սիմինդը կարող է կազմել հացահատիկների: 90%/
Թիֆլիսի նահանգում 20 »
Երեանի նահանգում 1 »
Նոյն տեսակ թերութիւն մենք տեսնում ենք և՛ անտառա-

պահական, և՝ կաթնատնտեսական, և՝ այգեգործական, և՝ շերամապահական, և՝ համարեա միւս բոլոր բաժիններում...

Բացակայում է ներկայ ցուցահանդիտում և պատմական աեսակէտը: Ներկայ ցուցահանդէսը ունի յօրեկեանական նշանակութիւն: Նա կազմակերպուած է Կովկասեան Գիւղատ. Ընկերութեան լինուամեակի և Վրաստանի ու Կովկասի միացման հարիւրեամեակի առիթով: Ուստի կարելի էր սպասել որ ցուցահանդէսի գոնէ զլխաւոր բաժիններում ուշադրութիւն դարձրած կը լինէին պատմական կողմի վրայ, աշխատած կը լինէին ցոյց տալ, թէ ինչ փոփոխութիւն է կրած մեր երկիրը վերջի 50, 100 տարուայ ընթացքում: Դժբախտաբար, համարեա ոչ մի բաժնում հարցի այդ կողմի վրայ ուշադրութիւն չի դարձրած և ներկայ ցուցահանդէսը ոչինչով չի տարբերուում 1889 թ. հասարակ ցուցահանդէսից: Հարկաւոր է առանձնապէս աշխատել, քրքրել այլևայլ նիւթեր, որպէս զի այս տեսակէտից կարելի լինի մի եզրակացութեան հանգել:

Մամուլի տակ են այժմ մի քանի զրքեր, որ հրատարակւում են ներկայ պատմական բոպէի առիթով:—Այդ զրքերում անշուշտ կը լինեն նիւթեր անցեալի մասին և մենք, հաւանական է, կարող կը լինենք վերադառնալ մեր չօշափած նիւթին, թէ ինչ տնտեսական փոփոխութիւն է կրած Կովկասը վերջին 100 կամ գոնէ: 50 տարուայ ընթացքում:

Յամենայն դէպս, ցուցահանդէսը մի այնքան հետաքրքիր և ուշադրութեան արժանի ժողովածու է, որի տեսնելը անհրաժեշտ է ամեն մէկի համար: Այդ տեսակէտից չի կարելի չափսուալ որ ցուցահանդէսի յաճախելը մեր հասարակութեան մեծամասնութեան համար սահմանափակուած է այլիայլ դժուարութիւններով: Նախ՝ անհամապատասխան չեն մեր հասարակութեան համար այն գները, որ նշանակուած են մուտքի համար: Կիրակի օրերը մուտքի արժէնքն է 10 կոպ., հինգշաբթի օրերը 50 կ., մեացած օրերը—20 կ.: Բացի դրանից, երեկոյեան ժամը 6-ից սկսած կիրակի և լի (հասարակ) օրերը մուտքի գինը 20 և 30 կ. է: Ցուցահանդէսի սեղանատանը դժուար է գտնել բաժինը 60 կոպէկից աժամ կերակուր. իսկ ներկայացումներն ու համերգները իրանց մուտքի թանգութեամբ մրցում են օպերային թատրոնների հետ:

Մեր բանուորներն ու գիւղադիները օրական ստանում են 40—60 կ. և շատ-շատ 1 ոուրլի: 30 կոպէկ մուտքի վճարը (հաշուելով և ձիաքարչի արժէնքը մինչև ցուցահանդէս) կազմում է նրանց օրավարձի $\frac{1}{2}$ և $\frac{1}{3}$ -ը: Ճաշելը և ներկայացում յաճախելը կը նստի նրանց մէկ կամ երկու օրուայ աշխատանքի գինը,

որ համարելու է շատ զդալի: Ցուցահանդէս կաղմակերպողները, հաւանական է, այս բանը ի նկատի չեն ունեցել և ժողովրդի ոյժը չափել են իրանց կամ իրանց շրջանի մարդկանց արշխոփ: Նրանք պաշտօնեայ մարդիկ են, կամ ապահով գասակարգից: Իրանց օրական ստացածը 5—10 ռուբլի է և աւելի, որի հետ համեմատած ցուցահանդէսի մուսափի արժեքը, ճաշելը կամ ներկայացում յաճախելը նրանց համար ոչինչ է, այդ ծախսը հաւասար է նրանց ստացուածքի $1/2$, $10/0$ և շատ-շատ $50/0$ -ին:

Եթէ այդ գասակարգի մարդիկն էլ բանուորի համեմատ վճարելու լինէին իրանց օրական ստացուածքի կէսը կամ երրորդ մասը (2—5, 10 ռուբլի), հաւատացած ենք որ դժուար թէ յաճախէին ցուցահանդէս մի-երկու անդամից աւելի: Այդ բարձր գներով բացատրւում է, կարծում ենք, ցուցահանդէսը յաճախողների թուի պակասութիւնը, ինչպէս և այն, որ դրանց թւում շատ չնշին են բանուորներն ու գիւղացիք, այսինքն այն դասակարգը, որ տմնից կարօտ է այդ տեսակ ձեռնարկութիւնների:

Որպէս զի ցուցահանդէսը քաղաքացի ապահով գասակարգի համար «թամաշայի» տեղ չը դառնույ, հարկաւոր է որ մուտքի, ճաշի և ներկայացումների գները իջեցուեն, կամ գննէ աշակերտների, զինուորների և բանուորների ու գիւղացիների համար առանձնապէս նշանակուեն աւելի ցած գներ: Դա պահանջում է նոյնիսկ ցուցահանդէսի նիւթական շահը:

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՓ

Կովկասեան ցուցահանդէս,—Արդիւնագործական տաղնապ Բագւում.—Երեւանի թեմական դպրոցը,—Միմիթարեանների տօնը զաւառներում:

Ներկայ սեպտեմբեր ամիսը մի հազուաղէպ, նոյնիսկ բաղասիկ կերպարանք տնի. Թիֆլիսում բացուեց ընդհանուր կովկասեան ցուցահանդէս և մեր զաւառները նրա մէջ հանդէս բերին իրանց ամբողջ կուլտուրական կեանքը: Դա մի մեծ տօն է մեր երկրի համար:

Մեր նպատակը չէ նկարագրել ցուցահանդէսի այն մասերը, ուր երեան է հանուած մեր զաւառի տնտեսական և կուլտուրական կեանքը: Գաւառական կեանքի քրօնիկագիրը կարող է միայն երեսյթն արձանագրել և նրա թողած ընդհանուր տպաւորութիւնը լուսաբանել: Ցուցահանդէսը, ինչպէս յայտնի է, բացուած է մի մեծ պատմական դէպքի յօթելեանի առիթով. գիտենք որ այս սեպտեմբերին լրացել է հարիւր տարի այն օրից, երբ Կովկասի մի մասը—Վրաստանը, մտաւ ոռւսաց տիրապետութեան տակ, բայց անելով մի գուռ, որով Անդրկովկասի միւս մասերն էլ հետզհետէ մտան նոյն տիրապետութեան տակ: Տօնում է այդ յօթելեանը. և այդ տօներին պէտք էր ցոյց տալ թէ մեր երկրի ազգաբնակութիւնը այդ հարիւր տարիների ընթացքում ինչ առաջապիմութիւն է արել խաղաղ կուլտուրական զարգացման ասպարէզում: Ահա այդ հարցն էլ հետաքրքրում է ցուցահանդէս մանողին:

Առաջադիմութիւն, ի հարկէ, կայ եթէ 1801 թուականին մի մեռած մարդ յառութիւն առնէր և զնար տեսնելու Կովկասեան ցուցահանդէսը, նա կը տեսնէր շատ ու շատ այնպիսի բաներ, որոնց մասին չեն էլ կարող մտածել նրա ժամանակակիցները: Այժմ երկաթուղիներ, այժմ ելեքտրականութիւն, ահագին գործարաններ, նաւթի, քարածուիի, մետալների շահագործութիւն մեծ չափերով, կատարելագործուած միջոցներով—ահա ինչքան մեծ նորութիւններ կը տեսնէր նա: Նոյնիսկ

պապենական կաթի ու պանրի գործն էլ ահազին յեղափոխութեան է ենթարկուել Զրհեղեղեան ինսցիների և այլ նահապետական գործիքների հետ երեան են եկել ինչ-որ մեքենաներ, ինչ-որ ուրիշ տեսակ պատրաստութիւններ՝ իւզ, պանիր և այլ մթերքներ պատրաստելու համար: Օղեհանութիւնը, պարախզպանութիւնը, մրդաբուծութիւնը, անամսապահութիւնը կրում են իրանց վրայ յեղափոխութեան կնիք: Նկատում է որ ինչ-որ նոր հոսանքներ, նոր աշխատողներ են մաել գործերի մէջ, կերպարանափոյնել են նրանց, հեռացրել իրանց նախատիպերից Նահապետական ծանրաշարժ գութանն էլ տեղի է տուել նորամուտ, թեթև մեքենաներին...

Կասկած չը կայ որ երկիրը երկար ժամանակ հանգստութիւն և հնարաւորութիւն է ունեցել մտածելու իր պահաստիւնների մասին. կասկած չը կայ որ մի շինարար ձեռք նրան առաջ է մղել, ուսուցել է, կրթել, հասկացնելով չարն ու բարին: Ասիական խաւարից, արեւան և արտասուբների լծից աղատուելը տեղի է ունեցել անընդհատ:—գա շօշափելի, շատ խոշոր փաստ է:

Բայց հարց է.—ինչպէս է այդ նոր, կուլտուրական հզօր ոյժը զիակել մեր երկրին: Մենք առաջադիմել ենք. բայց տրգուք մեզանից ամենն մէկն է առաջադիմել, արդեօք մեր երկրի ամբողջ ազգաբնակութիւնն է մտել այդ նոր հոսանքների մէջ և մեր տնտեսական կեսանքում ամենքն են արդեօք հնից ապատուելու և նորին հետեւելու արամազրութիւն ցոյց տալիս:

Դիտելով ցուցահանգէսը, դիտելով մեր կուլտուրական առաջադիմութեան նշանները, մենք չենք կարող զրական պատասխան տալ վերոյիշեալ հարցերին: Նորութեան, կատարելութեան ոգին մեր ամբողջ երկրի մէջ չէ տարածուել, այլ տեղ է հաստատուել, կազմելով բախուաւոր ովազիմներ, փոքրիկ կուլտուրական գաղութիւններ: Եթէ վերցնենք մեր յոզովրի միապազալ բազմութիւնը, կը տեսնենք որ նա իր երկիրը մշկելու, իր բնութեան հարստութիւնները շահագործելու միջոցների մէջ համարեա բոլորովին միենայն է, ինչ էր մի դար առաջ: Հասկացողութիւնները մասսայի մէջ գետ չեն յեղաշրջուել, գետ գործիքները և գործերու եղանակը հին նահապետական ևն առաջադիմուցին առանձին անհատներ, առանձին դասակարգեր, բայց բազմութիւնը, մասսան անշարժ է մնացել: Որովհետ այդ բազմութիւնը հարիւր տարիների ընթացքում կամ շատ քիչ կրթուեց կամ բոլորովին չը կրթուեց:

Եւ ահա մեզանում նկատում է մի այսպիսի տեսարան: Մի կողմից անշարժ ժողովրդի ահազին մասսան, որ նստած

է հողի վրայ, ապրում է ձեռքի աշխատանքով. նա չէ առաջա-
դիմում, ձեռք չէ բերում աջող կոսուելու և իր գոյութիւնը ա-
պահովելու միջոցներ։ Իսկ միւս կողմից բայն հոսանքներով
ներս է մասնում արդիւնաբերական առաջադիմութիւնը և խլում
ժողովրդից նրա արհեստները, նրա երկրագործական, անտե-
սական պարապմունքները։ Նկատում է, հէնց այդ պատճառով,
ոչ թէ առաջադիմութիւն ժողովրդի անտեսական կեսնկի մէջ,
այլ նոյնիսկ անկում, յետաղիմութիւն, համեմատած այն գրու-
թեան հետ, որ գոյութիւն ունէր հարիւր տարի առաջ։ Այսպէս
որ անտեսական և արդիւնաբերական նոր ոգին ոչ թէ գալիս է
ժողովրդին օգնելու, այլ հանդիսանում է նրա թշնամին, նրան
վրկող, հարսաահարող։ Գոնէ այսպէս է իրերի այժմեան գրու-
թիւնը։

Եւ դա հասկանալի է։ Երկու կողմերի մէջ տեղի ունի
մրցութիւն, բայց զիմագրելու, յաղթաղ հանդիսանալու միջոց-
ները անհաւասար են։ Երեակայեցէք մի ժողովուրդ, որ տգէտ
է, անպատրասա, իր հին հասկացողութիւնների մէջ խրուած,
անօգնական։ Այդպիսի ժողովրդի մէջ է մտնում գիտութեան
բոլոր միջոցներով զինուած ախոյեանը և, ի հարկէ, դա ինքը
պիտի յաղթէ։ Գիւղացին չունի զրամագլուխ, ոչ էլ էժան
վարկ, իր կաթնային անտեսութիւնը նա չէ կարող արդիւնա-
ւորել նոր միջոցներով, որովհետեւ տգէտ է, որովհետեւ սովորել
չէ կարողանում և սովորելուց յետոյ էլ անկարող է զործ կազ-
մակերպել, յոյսը դնելով անկուշտ վաշխառու-վամպիրների վրայ։
Ահա այդ միջնավայրում երեան է գալիս զիտութեամբ զինուած
կաթնասմասնութը. նա ունի կատարելագործուած գործիքներ, ունի
ձեռնուու պայմաններով զրամ վերցնելու հնարաւորութիւն։ Եւ,
ի հարկէ, գիւղացին կը մնայ իր նահապեսական մածնի, իր
տեղական պանրի հետ, որ միայն տեղական կարիքներին կարող
է բաւարարութիւն տալ, իսկ նրա աչքի առաջ, նրա հողի
վրայ կը գոյանան մեծ կաթնասմասնութեական գործարաններ, ո-
րոնք ահազին ջահեր կը տան իրանց տէրերին։

Արհեստաւորը, անայնագործը նոյն այդ գրութեան մէջ են։
Նահապեսական միջոցներով զործ կատարելը շատ թանգ է նըս-
տում, որովհետեւ խլում է շատ մեծ ժամանակ, որ կարելի էր
օգտակար կերպով զործ ածել ուրիշ կարիքների համար։ Վար
ձատրել գորդագործի աշխատանքը բաւարար կերպով չէ կարե-
լի, քանի որ նոր ձեի կատարելագործուած գործարանը առա-
ջարկում է նոյն ապրանքը աւելի էժան զնով։ Եւ մեզանում
գորդագործը կամ պէտք է բոլորովին թողնէ իր արհեստը
կամ պակասեցնէ իր ծախսերը և նոյնովէս էժանացնէ իր ձեռ-

քի աշխատանքը։ Այսպէս առաջ է զալիս արհեստի մնանկում, այսպէս ոչչանում է ժողովրդի զոյութեան միջոցներից մէկը։ Վերջնենք միւս արհեստներն ու պարագմոնքները. միևնույն և րեյլը կը նկատենք ամեն տեղ, ուր մի կողմում կանգնած է տգէտ ու անօգնական ժողովրդը, իսկ նրա զիմաց ժամանակակից արդիւնագործութիւնը։

Սյժմից իսկ կարելի է նկատել մօտիկ ապագայի պատկերը։ Եւրոպական կուլտուրան աւելի և աւելի ովագիմներ կը դրաւեն մեր երկրում, առանձին-առանձին անհամաներ, ընկերութիւններ, գաաակարգիր տիրապետող զիրք կը բռնեն, իսկ ժողովրդական մասսան, մեր երկրի ազգաբնակչութեան ահազին մեծամասնութիւնը կը մնայ նոյնքան անօգնական, անկարող մրցելու նորեկ ոյժի գէմ և պարաւարուած կը լինի ստրկանալ սպառելով իր ոյժերը անհաւասար կոտորի մէջ։

Ահա ինչ է ցոյց տալիս Կովկասեան ցուցահանդէսը։ Արդեօք նա հանդէս բերել է և այնպիսի նմուշներ, որոնք վկայէին թէ մեր ժողովրդի մէջ էլ զարգանում է սեփական շահերը ճանաչելու գիտակցութիւնը։ Շատ թոյլ չափերով, հայլու նկատելի կերպով եւ դա իրականութեան ճշմարիտ հայելին է, կեանքի մէջ չը կայ այդ գիտակցութիւնը, հետևաբար նա չ կարող լինել և ցուցահանդէսում։ Եթէ տնայնագործական բաժնում դուք կը հետաքրքրուէք մի փարբիկ զործով, ձեր առջի կը բացուի մի լայն հորիզոն և գուք կ'իմանաք թէ ինչ ճանապարհ պիսի անցնէ մեր ժողովուրդը իր տնտեսական անկախութիւնը պահպանելու համար։ Քութայիսի նահանգում զոյութիւն ունի մետաքսագործների մի ընկերութիւն, որի անդամների թիւ հասնում է 9000-ի։ Ի՞նչ նպատակներ ունի այդ ընկերութիւնը։ — Զարգացնել արհեստը ժողովրդի մէջ, ստեղծել ձեռնուու պահմաններ արդիւնաբերութիւնը արտօնանելու և վաճառելու համար և այլ այդպիսի կարեոր հոգածութիւններ—ահա ինչի ձգտում այդ ընկերութիւնը։ Ո՞վ փաքր ի շատէ ծանօթ է եւրոպական կեանքին, նա հեշտ կ'ըբանէ որ ժողովրդի ինքնազարդացացման և տնտեսական առաջադիմութեան ամենահզօր գործներից մէկը աշխատանքի այս տեսակ ընկերակցական կազմակերպութիւնն է։

Մենք պէտք է խոստովանենք որ այդ տեսակ կազմակերպութիւնները ընդհանուր երեսյթ չէ մեր երկրի համար։ Եւ դա, ի հարկէ, շատ ցաւալի է։ Հաճութեամբ արձանագրում ենք և այն փաստը որ լայնատարած և բազմալեզու։ Անդրկովկասի մէջ միայն վրաց ազգն է, որ հասկացել է զիւղատեսական տնայնագործական ընկերակցութիւնների գաղափարը։ Դժբախ-

տարար, մեր ձեռքում չը կան առատ փաստեր այդ կազմակերպութիւնների մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ տալու համար։ Բայց իրեն նմուշ, կարող ենք բերել հետևեալ փաստը։

Նորերում «Գուրիական «Միջնորդ» գիւղատնտեսական ընկերութիւնը ներկայացրել է պատշաճաւոր իշխանութեան իր կանոնադրութեան նախադիմք, որ չօշափում է հետեւեալ նպատակները։ 1) Աջակցել տեղական գիւղատնտեսներին ձեռք բերելու իրանց անհրաժեշտ գործածական նիւթերը և առհասարակ գիւղական տնտեսութեան մէջ անհրաժեշտ առարկաները, նոյնպէս և շահաւեէտ կերպով վաճառ հանելու իրանց տնտեսութիւնների արտադրութիւնները, հում կամ մշակուած գրութեան մէջ, այդ վերջին նպատակով ընկերութիւնը հիմնում է գիւղատնտեսական—տեխնիկական հիմնարկութիւններ՝ տեղական հում նիւթերը մշակելու համար։ 2) Տեղական գիւղատնտեսներից զնել կամ կօմիսիայով վերցնել վաճառելու համար տեղական բերքերը և դրա հետ տալ տէրերին փոխառութիւն, ապահովուած նոյն ասլրանքների արժողութեամբ։ ապրանքները գրաւ դնելով փոխառութիւն ստանալ տէրերի համար զանազան կրեղիտային հիմնարկութիւններից և առհասարակ կատարել գիւղատնտեսների ամեն տեսակ յանձնարարութիւնները, որոնք վերաբերում են նրանց պարապմունքներին։

Ահա մի ժողովուրդ, որ խելացի կերպով ըմբռնել է իր հարստութեան և բարեկեցութեան զաղանիքը։ Կը գայ ժամանակ, երբ այդ ողին աւելի զարգացած, աւելի լայն տարածուած կը լինի, ժողովրդի ոյժերը մի տեղ հաւաքած, փոխադարձ աջակցութեան և ընկերական սկզբունքի վրայ համախմբուած։ Եւ այդ տեսակ ժողովրդը չի վախենայ կապիտալի և գործարանի մրցութիւնից։ այն ինչ այն ժողովուրդները, որոնք տղէտ ու անպատրաստ են, մեծ պատիճ կը կրեն իրանց անշարժութեան համար և բոլորովին կը կորցնեն իրանց հարցատութիւնն ու ոյժերը, կը գառնան ուժեղի սարուկ։

Հայերը այդպիսի անպատրաստ և անշարժ ժողովուրդներից են։ Այդպէս է ցոյց տալիս ներկան։

* *

Բագւում նաւթային կրիզիսը շարունակւում է։ Կարծում էին թէ այդ գրութիւնը երկար չի տեի. բայց ահա անցել են ամիսներ և տաղնապը աւելի ու աւելի մեծ չափեր է ընդունում. այլ ես չեն հաւատում թէ կը վերադառնան այն ժամանակները, երբ նաւթը առասպելական օգուտներ էր տալիս Ուս-

մի և սկսուել է մի նոր շրջան նաւթային արդիւնաբերութեան մէջ. դա խնայողութիւնների, կրծատումների շրջանն է:

Բագուն—մեր գաւառների մի հաւաքածուն է: Նաւթային արդիւնագործութիւնը գարձրեց նրան մի խոշոր կենարոն, որ իր մէջ հաւաքեց մեր գաւառների բալոր աչքի ընկնող ոյժերը: Այսուել էին զիմում ահազին քանակութեամբ մարդիկ՝ աշխատանք զնելու համար. այստեղ էին տանուում մեր գաւառների պրամական խնայողութիւնները՝ շահագործուելու համար և այժմ արդիւնաբերական տագնապը հարուածում է ոչ միայն Բագուն, այլ և մեր գաւառները: Հաղարաւոր բանուորներ անգործ են մնացել, պաշտօնից զրկւում են և ուրիշ ժառայողներ, իսկ նրանք, որոնք մնում են իրանց աեղերում, հարկազրուած են այժմ ծառայել աւելի քիչ ոռնիկով:

Ահա այս աշխատաւոր դասակարգերի գրութիւնն է, որ արժանի է ուշադրութեան և կարեկցութեան: Հասարակ բանուորների ահազին մեծամասնութիւնը գեռ այնքան անելանելի գրութեան մէջ չէ. նրոնք կարող են վերադասնալ իրանց զիւղերը, զբաղուել իրանց հողով ու տնտեսութեամբ. այդ կողմից կրիզիսը նոյնին բարերար ազգեցութիւն արած կը մնի, սովորեցնելով մարդկանց որ անցաւոր են ուկու հեղեղները, անցաւոր չ միայն այն հարստութիւնը, որ տալիս է հողը: Վերջին տարիներում մեղ մօտ շատ էր նկատուում այն ցաւալի իրողութիւնը, որ հողագործը անմշակ թողնելով իր դաշտը, վագում էր Բագուշ՝ արագ ու հեշտ հարստանալու համար: Այժմ դառն իրականութիւնը կը վերադարձնէ այդ մարդկանց դէպի իրանց գութանն ու գոմը:

Այլ է այն մարդկանց դրութիւնը, որոնք հող ու վար չունեն, որոնք հասարակ բանուոր չեն, այլ ապրում են միայն իրանց ծառայութեամբ: Այզսիսի մարդկանց մի ահազին բաղմութիւն կայ Բագուում և ահա զրանք են մնացել նեղ զրութեան մէջ: Գործատէրերը խնայողութիւն են պահանջում իրանց կառավարիչներից, իսկ գրանք, ինչու վկայում են շատ տեղեղեկութիւններ, անխնայ կրծատում են ոռնիկները, զրկանքների են ենթարկում ծառայողներին: Հեշտ է երեսակայել թէ որքան անտանելի պայմաններ են ստեղծւում այդ տեսակ աշխատաւոր ների համար: Մեծ մասը ծանրաբեռնուած է ընտանիքներով: Հաղիւ է կարողանուած պահապաննել իր ընտանիքի գոյութիւնը: Եւ այժմ, անխնայ կրծատումների և խնայողութիւնների շրջանում, այդ դասակարգը չէ կարող նոյն իսկ դժգոհութիւն յայտնել. պարագ մնացած աշխատող ձեռքերի քանակութիւնը մնի է, այդ զրութիւնից օգուտ են քաղում կառավարիչները և առ

ուանց խեղճահարուելու, առանց աջ ու ձախ նայելու, աշխատում են գործատէրերի օգախն:

Պէտք է աւելացնել որ այդպիսի քաջակործութիւններ կասարող կառավարիչները ինտելիդէնա մարդիկ են, բարձրագոյն ուսում ստացած: Մենք երեք չենք կարող վեհ առաջինութիւններ սպասել արդիւնաբերական աշխարհից, ուր հարիւրաւոր մարդկանց շահերը զսհւում են մի անհատի համար. բայց մենք իրաւունք պիտի ունենայինք սպասել այդ աշխարհից փոքր ի շատէ կարեկցութիւն, մարդկային զգացմունք: Կրծատել ծախսերը միմիայն ի հաշիւ այն ծառայողների սոճիի, որոնք չեն կարող խօսել, որոնք նոյն իսկ արդիւնաբերական երջանիկ ժամանակներում միայն քրտնող ու աշխատող են եղել, երբեք չեն վայելել մեծամենծ ոռնքիներ և ամեն տեսակ յարմարութիւններ,—այդ անարդարութիւնը մեկ հրեշտոր է թւում: Կրծատաւումը եթէ անհրաժեշտ է, պէտք է կատարուի տնտեսութեան բոլոր ձիւզերից. իրանք, գործատէրերը, նրանց կառավարիչները նոյնպէս պիտի խնայողութեան չափի տակ մանեն: Միայն դայլի բարոյադիտութիւնը կարող է հաշտուել այնպիսի գրութեան հետ, երբ թոյցն ու խեղճը պիտի հարստանարուեն՝ մեծերի և ուժեղների բարեկեցութիւնը չը խանգարելու համար:

Մարդկային զգացմունքների, կարեկցութեան մտախն յիշեցնելը աւելորդ չէ, թէ ե արդիւնաբերողները վաղուց են թքել այդպիսի բաների վրայ: Աւելորդ կը լինէր քարոզը միայն այն դէպքում, եթէ բազմաթիւ աշխատաւորները վազօրօք մտածած լինէին իրանց մասին և ինքնօգնութեան գաղափարից առաջնորդուելով, կազմակերպած լինէին իրանց համար միութիւններ, խնայողական, թոշակատու զանձարաններ և այլ այդպիսի հիմնարկութիւններ: Համեմատաբար բարեկեցիկ ժամանակներում նրանք չը մտածեցին «սև օրուայ» մասին և ահա այժմ, երբ եկել է այդ սև օրը, երբ կրիզիսի ահաւոր լծի տակ ընկած գործատէրը նրանց զրկելու, պլոկելու միջոցով է ուղում հաւասարակութիւն մտցնել իր բիւջէի մէջ,—արիշ ճար չէ մնում այդ անօգնական աշխատաւորների համար, բայց միայն դիմել մարդկային խղճին և արդարութեան:

Թոյլ զէնք է զա զոյութեան կոռու գաշտում: Բայց ինչ արած, երբ չը կան աւելի լաւ, իրական զէնքեր: Աշխատաւոր մարդիկ անհոգ են եղել իրանց ապաղայի վերաբերմամբ: Գոնէ խղճան նրանց...

* *

Նաւթային կրիզիսից բնական է անցնել այն սուր կրիզի-

սին, որի մէջ այժմ տառապում է երևանի թեմական գպրոցը։ Սա արդէն հայրենի անկարգութեան առաջացրած աղէտներից մէկն է և ունի իր ցաւալի, բնորոշ պատմութիւնը։

Անցեալ տեսութիւնների մէջ մենք, խօսելով երեցփոխանակսն հարցի մասին, բացատրում էինք տեղի ունեցող ընդհարութները, զէճերը այն հսնակամներով, որ ժողովուրդը իւրացրել է օրինականութեան զգացմունքը, իսկ հողեսոր իշխանութիւնը գեռ չարունակում է կամայականութիւնները օրէնքի տեղ գործադրել Սա մի ընդհանուր հիւանդութիւն է, մի քաղցկեղ, որ առաջացրել է կատարեալ անիշխանութիւն մեր եկեղեցական գործերի մէջ։ Դրութիւնը միշտ երնուն է, միշտ խախուտ։ միմեանց հակասող կարգադրութիւնները հրապարակ են նետում մի շշմեցնող առատութեամբ, բացարձակ, օրը ցերեկով։ Հասկանալի է որ մի այսպիսի զրութեան մէջ խանոն ու շփոթ վիճակ կարող են ունենալ մեր հիմնարկութիւնները. պատահանատութեան զգացմունք չէ մնացել, իւրաքանչիւր անհատ կարող է իրան ինքնազլուխ համարել, աւելի ևս խառնել արորել գոյութիւն ունեցող վարչական քաօսը։

Այդ քաօսի մէջ, ստկայն, աջի է ընկնում մի տենդենցիա, որ հետևողականութեան բոլոր կանոններով առաջ է մղում և արդէն շատ խոչը նուածումներ է արել։ Դա կղերական այն սկզբունքն է, որ զրօյի է հաւասարեցնում ժողովրդի նշանակութիւնն ու իրաւունքը։ Ոչ մի բան ներկայումն այնքան արհամարհուած, ծաղրի ու հեղնութեան առարկայ չէ գարձած մեղանում, ինչպէս ընարողական սկզբունքը։ Հազարաւոր տարիներով պրագործուած այն կարգը, որով եկեղեցական լույր պաշտօնները ժողովրդի ընարութեամբ էին կարգաւորում և սահմանում, այժմ մի գատարկ ձայն է գարձել։ Ծնարողը հիմա ոչինչ իրաւունք չունի. նա միայն քուէ տուող մի մեղնեայ է, նա հարկաւոր է մի ձեւականութիւնն կատարելու. համար Շուտով այդ ձեւական նշանակութիւնն էլ կը վերացուի և «նշանակելը»—այժմեան հոգեսրականութեան այց պաշտած գաղափարը —յաղթող կը հանդիսանայ ամեն ինչի մէջ։ Եւ ձակատազրին հաճոյ էր կարգադրել այնպէս որ այս բոլորը կատարուի մի այնպիսի ժամանակ, երբ մեր եկեղեցու զուուխ է մի հողեսորական, որ գեռ 1860-ական թուականների սահմանազրական կարգերի ջերմ պաշտպանն էր և ասում էր. «Մրիմեան սահմանազրական ծնած է»։

Կղերական ողին, ինչպէս առացինք, առաջ է տանում իր յաղթական արշաւանքը անսայթաք, լու ծրագրած հետևողականութեամբ։ Մնացել են չորս հատ թեմական գպրոցներ և ահա

այդտեղ են այժմ տառապանքներ ստեղծում կղերականութեան ճիգերը։ Մի ժամանակ ոչնչացրած էր ժողովրդական ներկայացուցութիւնը զպրոցական գործերի մէջ։ Շուշու թեմական դպրոցը կառավարում էր նշանակութի հոգաբարձուներով։ Բայց անցեալ տարուայ ամսուր յանկարծ, անսսասելի կերպով, վերանորոգուեց հին կարգը, հոգաբարձուներ ընարուեցան թէ ծուլում, թէ Երեանում և թէ Թիֆլիսում։ Այդ կարգադրութիւնը ողերեց շատերին, որոնք չէին ուզում հաւատալ թէ մեր հոգեոր իշխանութիւնը վճռել է երես գարձնել ժողովրդից։ Սակայն անժամանակ էր այդ հրձուանքը, ժողովրդին, ճիշտ է, վերադարձին նրա ընարողական իրաւունքը, բայց միենոյն ժամանակ զաման գաման գեղահատեր էլ մասուցին, պարաւաւորական հրատարակուեց հոգաբարձութիւնների մէջ երկու-երկու քահանաներ մտնցնելը։ Երեանը իր ընարութիւնների ժամանակ ցոյց տուեց որ ժողովրդական ակրատնքի տեսակէափ այգսիմի պարաւաւորութիւնները ազատութեան ստեմանափակումն են նշանակում և չընարեց քահանաներ։ Այդ զամից իրաւա առաւ Թիֆլիսի առաջնորդ (այժմ պաշտօնից հեռացրած) Սուրէննեան արքակիսկոպոսը, որի առաջարկութեամբ քահանայական զամը բաժնուեց ժողովրդից, մի առանձին կաստա զարձաւ ու առանձնացած ժողով կազմելով, երկու քահանայ-հոգաբարձու ընարեց։ Այդ կարգը միայն Թիֆլիսում մնաց, Երեանում և Շուշում քահանաներ չը մտան հոգաբարձութիւնների մէջ։ Մի բնդհանուր օրէնք, կանոն մացնել անկարող եղաւ հոգեոր իշխանութիւնը։

Երեանի հոգաբարձութիւնը անցեալ տարուանից գործի մէջ մտաւ և զպրոցի տեսչութիւնը յանձնեց բժիշկ Տատեանին։ Աւստրիական տարուայ վերջում հոգաբարձութիւնն արձակեց եօթը ուսուցիչներ, որոնք տղմուկ բարձրացրին և մտան Առքիաս աղքեպիսկոպոս Պարզեանի թիի տակ։ Թէի արքեպիսկոպոսը համաձայն է եղել հոգաբարձութեան հետ, բայց մի քանի օրից յետոյ յայսում է թէ ինքը սխալուած է եղել ստորագրելով հոգաբարձական սրոշումք։ Սուրբիաս արքեպիսկոպոսը այնքան լաւ յայտնի է մեր մէջ, որ հազիւ թէ հարկաւոր լինի նրա մասին տեղեկութիւններ հազորգելը։ Սկսում են ինարիգները. հոգաբարձուները, ի հարկէ, հաստատ են իրանց վճռի վրայ, հրաւիրում են նոր ուսուցիչներ։ Բայց Էջմիածինը միջամտում է, ոչնչացնում է ժողովրդի ներկայացուցիչների նշանակութիւնն ու իրաւունքները և Պարզեանը կատարեալ յաղթանակ է տանում։ Հրատարակում է կարգադրութիւն որ բոլոր թեմական դպրոցների տեսուչները լիներուեն հոգեորականներից։ Երեանի հոգաբարձութիւնը հպատակւում է այդ կարգադրութեան և զոհ այն

հանդամանկրից որ գոնէ արձակուած եօթը ուսուցիչների վերաբերմամբ իր կայացրած վճիռը մնում է անխախտ, տեսչական պաշտօնի համար ընարում է Մեսրոպ վարդապետ Տէր-Մոլսիսեանին և Մատթէոս վարդապետ Մատթէոսեանին, ինզրելով իջմիածնից որ դրանցից մէկը հաստատուի տեսուչ։ Սակայն փոխանակ հաստատելու, իջմիածնը մի նոր կարդաղրութիւն է հանում, որով ժամանակաւոր տեսուչ է նեանակում գպրոցի ուսուցիչներից մէկին և բացի դրանից կարգավորում է որ արձակուած ուսուցիչները նորից իրանց պաշտօնին հրաւիրուեն։ Հոգաբարձութիւնը բողոք է ուղարկում. իջմիածնից գալիս է մի վարդապետ, որ աշխատում է համաձայնութիւն կայացնել հոգաբարձութեան և Սուքիաս արքեպիսկոպոսի մէջ։ Ի՞նչ պայմանով, իջմիածնը որոշում է որ արձակուած ուսուցիչներից մի քանիսը իրանց կամքով հրաժարուեն պաշտօնից և հոգաբարձութիւնը դրանով բաւականանաց։ Կազմուում է ժողով իջմիածնից եկած վարդապետի ներկայութեամբ։ Սուքիաս արքեպիսկոպոսը զրական կերպով, երգումով հաւատացնում է թէ ինքը կը համոզէ ուսուցիչներին հրաժարուել. բայց միւս օրը բոլոր այդ եօթը ուսուցիչներին հրաւիրում է պաշտօնի։

Առ այժմ գործը այս զրութեան մէջ է։ Հոգաբարձութիւնը զեռ սպասում է կարգադրութեան իջմիածնից և պատրաստում է հրաժարական առաջ Անա Երևանի կրիզիսի պատմութիւնը։ Զեղ նա կարող է թուալ «Հաղար ու մէկ դիշերներից» վերցրած մի կտոր, բայց իրողութիւնը այս է, ինչ ուզում էք, կարող էք համարել։ Երեւանի գպրոցի այս սղիսականը առաջինն ու վերջինը չէ մեղանում։ Շուշու գպրոցը նոյն անկերպարան զրութեան մէջ է, Թիֆլիսի Ներսիսեան գպրոցն էլ շուատվ նոյն հարսանիքը» կը սկսէ։

Ե՞րբ կը լինի այս բալորի վերջը։ Թէև մենք ասում ենք կղերական ոգին, թէև մենք դէմ ենք և միշտ պիտի դէմ լինենք կղերական տիրապետութեան, բայց զպրոցների համար աւելի լաւ կը լինէր տեսնել միանդամից կղերականութեան կատարեալ թագաւորութիւնը, քան ականատես լինել այսպիսի երերումներին ու խաղերին։ Մի օրէնք, մի հաստատուն, անխախտ կարգ... Ուր է նա։

* *

Այս անդամ էլ ուրախութեամբ արձանադրում են մի ուրախալի փաստ մեր դաւանմերի կեանքից։ Օդոստոսի 26-ին Վեհետիկում տօնուեց Միսիթարեան միաբանութեան երկու հարիւրամակի յօբելեանը։ Այդ զրական տօնախմբութիւնը

արծագանք դժուաւ մեր գաւառներում։ Կարսում և Ալեքսանդրա-
պօլում յատուկ երեկոյթներ սարքուեցան ի պատիւ Մխիթա-
րեանների։ Սբամաթումանում կայացաւ զրական երաժշտական
երեկոյթ։ շատ տեղերից չորհաւորական հեռագիրներ ուղար-
կուեցան Մխիթարեաններին։ Խոկ Բագւում, հայոց եկեղեցում,
հոգեհանողիստ կատարուեց Մխիթարեանների համար և Եղիշէ
վարդապետ Մուրագեանը քարոզ ասաց։ Այդ առիթով տիրացուա-
կան մամուլի մէջ վայնասուն բարձրացաւ, բայց անցել են այն
ժամանակները, երբ այդպիսի ազաղակները որ և է տպաւորու-
թիւն էին թողնում։

Գաւառը այդպիսի սրտագին ցոյցերով վիրաբերուեց հայոց
զրականութեան հաղուազիւս տօնին։ Խոկ Բնչ արաւ մայրա-
քաղաք համարուող Թիֆլիսը—Ոչինչ։ Ամօթ չը ասելը...

Ա.

ԱՐՏԱՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ֆրանս-ռուսական դաշնակցութիւն,—նրա գերը թէ՛ Հեռաւոր և թէ Մեր-ձաւոր Արևելքում.—Քիւրքիայի և Ֆրանսիայի մէջ ծագած տարածայնութիւնները.—Մակ-Կինլիի մահը

Տասը տարի առաջ Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ կապած դաշնակցութիւնը երեք անգամ ֆրանսիական ազգի բուռն համակրական ցոյցերի առիթ եղաւ. նախ՝ Կարնօյի նախադահութեան ժամանակ, Տուլօնում, 1893 թուին, ապա՝ Ֆօրի օրօք Շերբուրգում, Շալօնում և Պարիզում, 1896 թուին, և, վերջապէս, այս աշնան սկզբում, Դիւնկերխէնում, Ռէյմսում, Կոմպիէնում և Բետինիում: Դաշնակցից ազգի բոլոր այդ համակրական ցոյցերի ժամանակ ուսւաց կայսրները իրանց ճառերում ոչ մի ակնարկով ցոյց չեն տուել որ հաւանութիւն են տալիս ֆրանսիայի շօվինիսանների տենչին—վերապարձնել կորցրած ելզաս-Լոտարինզիան, և միշտ շեշտել են այդ դաշնակցութեան խաղաղասիրական նպատակը: Այս անգամ էլ ոսւսաց Կայսերական Զոյզը, նախ քան ներկայ գտնուելը ֆրանսիական նաւատորմղի և զօրքի մանեօվրներին, բարեհաճեց հանդիսատես լինել գերմանական կայսրի այնքան փայփայած նաւատորմղի խաղերին: Այդ բաւականաշափ ընդդուռ էր Ռուսաստանի խաղաղասէր վերաբերմունքը գէպի իր դաշնակցի հակառակորդը Բայց այդ, Բետինիում Ցարը պատասխաննելով Լուբէին, ի մէջ այլոց ասաց թէ ամենախաղաղասէր միտումներով ոգեսրուած երկու մեծ պետութիւնների դաշնակցութիւնը թանկազին տարր է հանդիսանում ամբողջ մարդկութեան խաղաղացման գործում:

Այդպիսով, երկպետեան դաշնակցութիւնը գառնալով եւրոպական հաւասարակշռութեան հզօր գործոն, ոչ միայն առն է տալիս զուտ եւրոպական միջազգային գործերին, այլ և իր ձեռքում է պահում Հեռաւոր և Մերձաւոր Արևելքում ծագած և ծագող բարդութիւնների լուծումը: Երկպետեան դաշնակցու-

թեան ոյժը այդ հեռաւոր երկրներում աւելի ևս աճեց Անգլիայի դժբախտ պատերազմի շնորհիւ. կարծես իմպերիալիստական զառացանքը Անգլիայի մօտալուս ծանր հիւանդութեան մի նշան լինէր: Մեծ Բրիտանիան քանի գնում աւելի է խճճւում այն թակարգների մէջ, որ նրա անհեռատես վարիչները պատրաստել էին խեղճ բօէրների համար:

Անգլիան հիմա իրան չափազանց կաչկանդուած է զգում, ուստի խօսում է մեծ պետութիւնների կոնցէրտում թոյլ ձայնով ու զիջումներ է անում այնաեղ, ուր մի տարի առաջ կը լսուէր բրիտանական առիւծի ահեղ մոնչիւնը: Այդպէս խղճուկ էր նա չինական հարցում և երեխ այդպէս կը լինի նաև Մերձաւոր Արևելքի խնդիրներում, եթէ առիթ լինի մեծ պետութիւններին իրանց նուազահանդէսը իրդիզ-թեօշկի պատուհանների տակ սարգել... Եւ Թիւրքիան կարծես զիտամամբ զրգուում է մեծ կոնցերտանուների երկարաւու համբերութիւնը: Նա տեսնելով որ անպատճի անցաւ հայկական կոտորածը, մինոյն ժամանակ իրովսանալով Յանաստանի վրայ տարած իր յաղթութիւններով և գերմանական կայսրի հզօր բարեկամութեամբ—սկսել է աւելի համարձակ կերպով զանազան ոտնձգութիւններ փորձել եւրոպական խնամակալութեան դէմ: Այդպէս էր պօստի և օտար վարժուհիների հարցը, այդպէս ևն, հակառակ Բերլինի համաժողովի պահանջներին, Հին-Սերբիայի, Մակեդոնիայի և Հայաստանի մէջ օրէցօր կրկնուող թիւրքական խժդութիւնները: Եւ «լսազազակը» Եւրոպան մասերի արանքով է նայում թիւրքահպատակ քրիստոնեաների բազմաչարչար զլիններին թափուող այդ պատուհամների վրայ, համարելով այդ բորորը Թիւրքիայի սեփական՝ «Ներքին գործ», որ նա, բոռնցքի է-թիւրքով, իրաւունք ունի ըստ իր բարեհայեսպութեան կարգագրել Սական բաւական է որ Թիւրքիայի այս կամ այն քայլը մի գիտչ այս կամ այն մեծ պետութեան հպատակի շահերին՝ մի տկնթարթում կորչում է բարեհոգի վերաբերմունքը և «լսազազութիւն ամենեցունը» փոխում է պատերազմի աստուած Մարսի գոռոզ սպանալիքների:

Գաղափարը, սկզբունքը, ալտրուիստական սէրը անգօր ևն շարժել եւրոպական զիպլօմատների սրտի լարերը, մինչդեռ ոսկու շառաչիւնը իսկոյն զարթեցնում է նրանց հոգու թմրած ամբողջ կորովը: Թաղ բարոյակօս իդէալիստները կշամբեն այդ շահասիրութիւնը. մերկանսախիլ ողին տիրապետում է մեր դարում, իսկ գիպլօմատիան՝ տիրապետող հոսանքների ներկայացուցիչ է: Շահը՝ նախ և առաջ: Ուստի առաջ Հանուօյի մրանսիան էր ապշեցնող անտարբերութեամբ նայում թէ ինչ-

պէս զինուած թիւրքերը Պօլսի փողոցներում, եւրոպական դրահակիրների զիմաց, հաղարներով մորթում էին անզէն հայ կանանց, ծերերին և երեխաններին, Բոսֆորի ալիքներում էին խեղդում քրտինք աշխատանքով հեռու «վաթանում» ամբողջ զերդաստաններ պահող հայ համայներին, իսկ այժմ Դելկասսէի ֆրանսիան է անվրդով գիտում Հին-Սերբիայում, Մակեդոնիայում և Մուշում կաղմակերպուած կոտորածները։ Համրապետական Ֆրանսիան ոչ Հանուօյի ժամանակ և ոչ այժմ մատմատի չը խփեց, մի ճիշ չարձակեց կանգնեցնելու համար վայրագ գահին սուրը, իսկ երբ իր մի քանի դրամատէրերի և վաշխառուների հաշիւները պահանջեցին—նա խկոյն թողեց իր հաճոյախօսութիւնները և սկսեց Թիւրքիայի հետ խօսել բոլորովին այլ տոնով։

Թիւրքիայի և Ֆրանսիայի մէջ վերջերումս ծաղած տարածայնութիւնների ինդիրը երեխ յայտնի է ընթերցողին լրագիրներից։ Շատ բնորոշ է այդ ամբողջ գործը, ուստի աւելորդ չը համարուի այստեղ առաջ բերել նրա էական կողմերը։ Երկու ֆրանսիացի կապիտալիստ ձեռնարկուներ, Միշէլ-վաշա և Գրանէ (Գրանսիական պօստի նախկին մինիստր), օգտուելով թրքական բարձր պաշտօնեանների թուլութիւնից, գուցէ և կաշառասիրութիւնից, կարողացան շատ ձեռնատ պայմանագրութիւն կապել Թիւրքաց կառավարութեան հետ, որով Պօլսում ծովագարափի և գօկեր (Նաւարան) շնորհու գործը իրանց կազմած ընկերութեան ձեռքն է ընկնում։ Երբ ձեռնարկութիւնը իրագործւում է և ճարպիկ ֆրանսիացիք սկսում են շահագործել նրան ըստ պայմանագրի, միայն այն ժամանակ են գլխի ընկնում օսմանլինները, որ պայմանագրի բառացի գործադրութիւնը իրանց պետական դանձարանին մեծ վրանաներ է հասցնում։ Ակսուեց, ըստ Թրքական սովորութեան, սակարկութիւն, ձգձգում, բայց ֆրանսիայի կապիտալիստները հպատակ հայեր կամ ասորիներ չէին որ լուելեայն ամեն բան տանէին։ Նրանք բողոքեցին իրանց գեսպանին, պահանջելով որ Թիւրքիան կամ բառացի ճշտութեամբ կատարի պայմանագրի բոլոր կէտերը կամ յետ զնի ընկերութիւնից նրա ամբողջ ձեռնարկութիւնը, որ նստել էր 20 միլ. ֆրանկ, իսկ դնահատուում էր ոչ աւել և ոչ պակաս քան կրկին չափով։ Սակայն Թրքական գանձարանը վաղուց է գտնուում այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ են հիմա, «կրիզիսի» չնորհիւ, Բաղուի երբեմն երջանիկ «փողէլինների» մնդուինները...»

Սուլթանը ժամանակ է պահանջում խորհելու, բայց բնականաբար Կօնստանի կարճ պայմանաժամումը ոչ կարող էր լքցնել

թիւրքական գանձարանը, ոչ էլ մեղմացնել ֆրանսիացի կապիտալիստների չափազանց պահանջները։ Այդ գեռ բաւական չէր. Կօնստանը կցում է «Ճռվագարափի և զօկերի» ընկերութեան հաշուուն նաև ֆրանսիացի մի քանի վաշխառուների հին հաշխները իրանց բարդ տոկոսներով։ Երևան ևն գալիս ինչոր Տիւրքինի և Լօրանդո, որոնք մի ժամանակ ահազին տոկոսներով փող էին փոխ տուել Թիւրքիային։ Որոշած ժամանակին բաւարարութիւն չը ստանալով, Կօնստանը խցում է իր յարաբերութիւնները Բարձր Դուռն հետ և մեկնում Պօլսից։ Պարիզի Թիւրքաց զեսպանն էլ հրաման է ստանում իր կառավարութիւնից՝ չը վերադառնալ արձակուրդից (Շվեյցարիայում) իր պաշտօնավայրը։ Ֆրանսիական կառավարութիւնը ամեն կերպ աշխատում է Թիւրքային հասկացնել իր առասափելի գժգոհութիւնը։ Հանրապետական կառավարութիւնը առաջարկում է որ Պարիզից հեռանան և թրքական պօլիցիայի այն վաշտը, որ նրա հաւանութեամբ մի քանի տարի շարունակ ապրում էր Ֆրանսիայի մայրաքաղաքում, նպաստել ունենալով գաղտնի լրտեսել Թիւրք յեղափոխականներին։ Բետինիի գօրահանդէմներին չէր հրաւիրուած թիւրքաց զեսպանը... մի խօսքով մի քանի կապիտալիստների և վաշխառութիւնների շահերի պաշտպանութիւնը պատճառ բռնելով Հին-Աշխարհի ամենամեծ հանրապետութիւնը, Ֆրանսիան, բարոր է համարում հիմա դէպի Թիւրքիան վարուել ոչ առաջուայ պէս բարեկամական ձեւերով...

Այլ խնդիր էր յուղում ովկիանոսի միւս ափում տարածուած Նոր-Աշխարհի այն մեծ հանրապետութեան մէջ, որ հարիւր տարի առաջ այնքան ոգեսորեց Ֆրանսիայի մեծ յեղափոխութեան գործիչներին։

Մեր խօսքը Հիւս. Ամ. Միայեալ-Նահանգների մասին է։ Եանկինները Բուֆալոյում բացուած համամերիկական ցուցահանդէսում տօնում էին աշխարհիս ամենամեծ դիմոկրատիկական հանրապետութեան, Մ.-Նահանգների քաղաքական, տնտեսական և սօցիալական վիթխարի առաջադիմութեան հարիւրամեակը։ Բայց այդ առաջադիմութիւնը չի գոհացնում որոշ աշխարհայեցողութեան մարդկանց, որոնցից մէկը, մի անարխիստ, տօնական ուրախութիւնների ժամանակ մահացու հարուած հասցնելով հանրապետութեան յարգուած նախագահին, վշտի և սարսափի մէջ գցեց կեանքից զոհ եանկիններին։

Մակ-Կինլին տիպիկական եանկի էր. նա իր սեփական եռանդի, տոկունութեան և ընդունակութիւնների չնորհիւ. ճանապարհ հարթեց և կեանքի կուում չքաւոր և անյայտ զրութիւնից հասաւ հանրապետութեան նախագահի նշանաւոր պաշտօ-

Նին: Նա ծնուել էր 1844 թուին: Նրա ընտանիքը չօտալանգական ծագում ունէր, հայրը լեռնային արոգիւնագործութեամբ էր պարապում և միջաղղային առեարի մէջ կողմնակից էր հովանաւորող սիստէմին: Աւսուցչի, օֆիցիէրի և փաստաբանի, դատախազի զրագունքները յաջորդում էին իրար, մինչև որ 1876 թուին ընտրուեց ներկայացու ցիշների գանձակական պաշտի մէջ, ուր նա բոլորի ուշագրութիւնը դրաւեց երկրի տքնաւուական խնդիրների խոր հմտութեամբ: Նա չէր փայլում ճարտասանական ձևերով, ուակայն խօսում էր պարզ, տրամարանորէն, մեծ հմտութեամբ օգտուելով փակաերի այն ահազին պաշարով, որ տալիս էին՝ նրան կեանքի և հարցի ուսումնասիրութիւնը: Իր գաղափարները տարածելու համար նա պատում էր երկրի մէջ, միտինզներ էր կազմում և ժողովրդի հետ խօսում իր պարզ և համոզիչ լեզուով: 1896 թուի նախագահական ընտրութիւնների ժամանակ Մակ-Կինլին ստացաւ 7,123,234 ձայն, մինչդեռ նրա հակառակորդ Բրայանը 6,499,365 ձայն: Մակ-Կինլին կողմնակից էր Միացեալ-Նահանգների իշխանութեան ընդարձակման և արդիւնագործութեան հովանաւորող սիստէմին: Նրա իմպերիալիզմի հետեանք էր Սպանիայի հետ պատերազմը, որ միացրեց հանրապետութեան հողերին Կուլաս և Ֆիլիպինեան կղզիները: 1900 թուին ընտրութիւնները ցոյց տուին որ եանկինների մեծամասնութիւնը հաւանում է Մակ-Կինլիի ուղղութիւնը թէ արտաքին և թէ ներքին գործերում: Նրա վերջին ճառը որ նա արտասանեց Եռուֆալօյում, ցոյց է տալիս թէ զետեղանդանդ կար նրա մէջ և ինչ մեծ ծրագիրներ ունէր նա իրագործերու: Մակայն նրա յաջորդը փոխանակազան Ռուգվէլտը, կարող է համարուել իր նախորդի զործունէութեան իսկական շարունակող: Իր հիմնական հայեացքներով Ռուգվէլտը չի տարբերում Մակ-Կինլիից:

և. Ա.

† ԳԵՐԱԳ ԵԽԱՆԳՈՒԼԵԱՆ

Սեպտեմբերի 16-ին, Կրեկոյիան, Հերակլի բազանիքում,
յանկարծակի վախճանուեց Թիֆլիսի քաղաքագլուխ Գէորգ
Եւանգուլեանը, 57 տարեկան հասակում:

Հանգուցեալը Թիֆլիսեցի էր: Նա իր միջին կրթութիւնը
աւարտել էր Թիֆլիսի նահանգական գիմնազիայում, իսկ բարձր
կրթութիւնը Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական
բաժնում: Վերադառնալով հայրենիք նա հէնց առաջին տարի-
ներից սկսած (1867 թուից) վարում էր պետական զանազան
պաշտօններ, մասնակցելով միենոյն ժամանակ հասարակական
և ազգային գործերում: 1883 թուականից Գ. Եւանգուլեանը
թողարկում է պետական ծառայութիւնը և մտնում երգուեալ հա-
ւատարմատարների դասակարգի մէջ: Իրեն փաստարան հան-
գուցեալը բաւակած հռչակ ունէր: 1897 թուին Գ. Եւանգու-
լեանը ընտրուեց Թիֆլիսի քաղաքագլուխ: Թէ իրեն պետական
պաշտօնեայ, թէ իրեն փաստարան, քաղաքային իրաւասու-
ներսին և Գայիսնեան դպրոցների հոգաբարձու, Թիֆլիսի
Փոխազարձ Վարկի Ընկերութեան խորհրդի նախագահ և թէ
իրեն քաղաքագլուխ՝ Եւանգուլեանը ցոյց տուեց սովորական
մարդկանց ընդունակութիւններից բարձր ընդունակութիւն և
համոզմունքի ու կամքի հաստատութիւն: Գ. Եւանգուլեանը
Թիֆլիսի հնաելիգենցիայի նշանառոր դէմքերից էր:

Հանգուցեալը իր ազգային-կրօնական հայեացքներով
պատկանում էր մեր այն կուսակցութեան, որ յայտնի էր մեղ-
ուական անունով: Եւանգուլեանը այդ կուսակցութեան ամե-
նազդեցիկ և ասպանզաւոր պարագլուխներից մէկն էր: Մեր
մամուլի մէջ նա իր հայեացքները պաշտպանում էր «Մեղու» և
«Արձագանք» թերթերում և յամինայն դէպս մեր իսկական և
կրթուած պահպանողականներից էր:

ՊԱՐԵԲՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Կավկասի Ենտոնություն», օգոստա-
սուա Շաբունակում ենք քաղաքածք-
ներ բերել պ. Թամարշնանի յօ-
դուածից՝ Լուգովիկ զը Կոնտանտինի
«Քրիստոնեաներ և Սուսիլմաններ»
գրքի մասին («Ծուրճ» № 8):

Քնելով գիշերուայ ժամի 2-ին,
ճանապարհորդները զարթնում են
մի ազմկալի և խիստ վիճարանու-
թինից, որ աեղի ունէր նրանցից
ոչ հեռու, ազմուկը լեռոյ հանդար-
տուեց: «Ներ խոհարար, մի հայ,
հազորդեց մեզ թէ վէճը այն մասին
էր՝ պէտք էր մեզ կողոպտել թէ
ոչ! Մի քանիսների կարծիքով մենք
ճանապարհորդող վաճառականներ
չենք, այլ լրտեսներ, որոնք եկել
են երկիրը ուսումնասիրելու և որոնց
անպատճառ պէտք է ոչնչացնելու:
Բարերախտաբար, շափառը կար-
ծիքների ձախը լաղթող է հանդի-
սանում և ճանապարհորդներին չեն
կողոպտում:

Մենք մօտենում էինք Եղեսիաց-
ին ոչ առանց ծանր զգացմունքի:
Քիչ առաջ քաղաքը 8000 հայերի
կոտորածի թասորոն էր դարձել:
Անցնելով ամայի սարեւը, որոնք
տիրապետում են Եղեսիայի արևմց-
տեան կողմից, նեղ բնական դռնե-
րով մենք մասնք մի անձուկ կիրճի
մէջ, որ աստիճանաբար իջնում էր
դէպի այն հովիտը, որ տարածուած
է քաղաքը: Մինչեւ կոտորածները Ե-
ղեսիայի մէջ 21,000 հայեր կային:
Նրանք համարեա ամբողջովին կեն-
տրոնացած են մի առանձին թաղի
մէջ, որ բռնում է քաղաքի $\frac{1}{3}$ մա-

սր և երկու կողմից շրջապատուած
է պատերով, Թիւրք զինուորները,
որոնք կատարում են ոստիկանու-
թեան գերը, պահպանում են հալոց
թաղից դէպի թիւրքաց թաղը տա-
նող ճանապարհները: Հայերը պա-
տեղ պարապում էին մանր արդի-
նազորութիւնամբ: ունենալով քաղա-
քի շրջակայքում հողեր, նրանք
անձաւմբ մշակում էին նրանց կամ
փարձով տալիս էին հայ և թիւրք
գիւղացիներին: Թիւրք և արար հո-
վիւները ծախում էին հայ վաճա-
ռականներին իրանց ահազին հո-
տերից ստացած բուրդը: Հայէափ
վաճառականները բրդի բազմաթիւ
կարաւաններ էին ուղարկում Ալիք-
սանդրէտ: Թիւրքների հայերի մէջ
յարարերութիւնները բարեկամա-
կան էին, մասիման ընտանիքները
ալցերում էին հայերի տները: Թիւր-
քները և հայերը հաւասար չսփով
տանջուում էին պաշտօնեանների կա-
մայականութիւնից: Այդ բուրդից
այժմ միայն յիշողութիւն է մնացել:
շուկացում փակուած են մնում հայ-
երի կողոպտուած խանուոթները
Քրիստոնեաններն ու մօւսիլմանները
այլ ևս միմեանցից ոչնչ չեն գնում:
Ծանր աղքատութիւն է տիրուու քա-
ղաքում: վախեցած, կեղեցուած հայ-
երը չեն հեռանում իրանց տներից
և ընտանիքները ամբողջ ամիսնե-
րով փակուած են վարակուած ան-
բում: աստափիկ ցնցումները, որոնց
ենթարկուած էին նրանք, շատ հի-
ւանդութիւններ են զարգացնել
նրանց մէջ: Դժբախտ քաղաքը

այնքան մոռացուած էր Աստուծու և մարդկանց կողմից, որ վերջին 18 ամիսներում մենք համարեա միակ եւրոպացիներն էինք, որ այցելում էինք Եղեսիան Քրիստոնեաները առում էին որ մեր գալուստը մահմեղականների կասկածն է զրգաել: Դրանց համար իւրաքանչյուր եւրոպացի երեան է զալիս իրբե վրէժինդիր այն չարագործութիւնների համար, որ նրանք կատարեցին անպաշտան ազգաբնակութեան գրլին:

Եղեսիացում երկու անգամ եղաւ հայերի կոտորած. 1895 թուի հոկտեմբերին և նոյն տարուայ զեկոտեմբերի վերջում: Առաջին կոտորածը, ըստ թիւրքական հասկացողութեան, անշնորհ կերպով էր կազմակերպուած և այդ պատճառով իշխանութիւնները ջանք էին առում կոտորածի առաջն առնել: Աերով այն կոտորածների մասին, որոնք տեղի էին ունենում Զարսատանի զանազան կողմերում, շրջակայի քիւրդերն ու արարեները, գրաւուած աւարաւութեան մոռքով, մօտեցան քաղաքին, որի սպասելով մօտ երեք շարաթ և ձանձրանալով անդործութիւնից, վճռեցին մտնել քաղաք և սկսել թալանը. մօտ 60 հայեր սպանուեցան, բայց յափրշտակողները շուտով դաշտարեցին որ և է զանազանութիւն դնելուց հայի և մահմեղականի մէջ և սկսեցին կողոպտել նաև թիւրքերին: Կառավարութիւնը, տեսնելով որ գործը ցանկալի ընթացք չէ ստանում, կարգադրեց հեռացնել կողոպտողներին:

Անցաւ մօտ երկու ամիս. հայերը, համոզուած լինելով որ անկարգութիւններն ու կոտորածների պիտի կրկնուեն, չէին վաստահանում դուրս գալ առներից և պատրաստում էին ինքնապաշտառապանութեան: Ակասեղ թիւրք վարչութիւնը ամենավրդուցուցիչ և խարդական վարչութիւնը կամաց առաջ գործուած էր արձակուած նախարարութեան, մասերի բաժանուած և մասերի հայութեան, մասերի բաժանուեց և իւրաքանչիւր մասին յանձնաբարուեց կոտորել հայերին: Կէտարին մուէղզինները սկսեցին կանչել ժողովուրդը ալօթքի և մի և նոյն ժամանակ զօրքերը, բնակիչների հետ միասին, որոնք պիտի օգնեին նըրանց, խուժեցին հայոց թաղի վրայ: Խիստ հրաման էր արձակուած նախ կոտորել, որքան կարելի է շուտ և արագ. կողոպտուը և հարստահարութիւնը խոստացուած էին յետու: Երեք մալր մտնելուն պէս, զինուուրական փողը նշան տուեց զագարեցնել կոտորածը, որպէս զի նա վերանորոգուի միւս օրը նոր ոյժով:

պով վարուեց. հանդիսաւոր կերպով խոստանալով հայերին թէ նրանց այլ ևս անհանգատութիւն չեն պատճառի, վարչութիւնը պահանջում էր հայերից յանձնել իրանց զէնքերը և հայ եպիսկոպոսը հոգեորականութեան հետ հետ սկսեց անէ տուն շրջել: հաւաքելով իր հօտի զէնքերը՝ թիւրք իշխանութեան յանձնելու համար հայերը այնուամենայնիւ զգուշ էին. Դրանց համարում էին լորեր Դիարբեքիրի, Խարբերոտի, Սյնթարի, Մարաշի կոտորածների մասին և նրանք չէին վստահանում թողնել իրանց անեղբայր Թիւրք վարչութիւնը համոզում էր նրանց չը վախենալ թէ կը լինեն յարձակուածներ, հրամիրում էր նրանց ջուր վկրցնել հասարակուան աղբիւրներից և յայտարարեց թէ քրիստոնեաներին պաշտպանելու համար ինքը պահանջել է Հայէպից մի բաստակոն բեղիք զօրքայ Հայերը, ենթադրելով վերջապէս թէ փոթորիկն անցաւ, վճռեցին դորս գալ տներից: Հասա ղեկոտեմբերի 28-ը. Նոր տեղ հասած մի բաստակիօն զօրքը ակսեց շրջապատել հայերի թաղը և փակել միւս թաղերը տակարեցին որ և է զանազանութիւն դնելուց հայի և մահմեղականի մէջ և սկսեցին կողոպտել նաև թիւրքերին: Կառավարութիւնը, տեսնելով որ գործը ցանկալի ընթացք չէ ստանում, կարգադրեց հեռացնել կողոպտողներին:

Սարսափից խելքը կորցրած հայ ազգաբնակութիւնը սկսեց փրկութիւն որոնել մայր հկեղեցում. մեծ խըմբերով աշնոտեղ թափուեցան կանաք, երեխաներ, ծերեր և մօս 2000 մարդկանցով լցուեց եկեղեցին. բայց Խառուծուտաճարն էլ չը խնայուեց և միա օրը մահմեղականները թափուեցին այնտեղ. կշտանալով սպանոթիւններից, հարստահարութիւնց, կողոպուտից, նրանք ըսկեղեցին նաւթ ածել քրիստոնեաների վրայ և վասել նրանց. շոտով մարդկացին մալմինների մի սակալի խարոյի սկսեց այրուել մայր եկեղեցում:

Հեղինակը ուշադրութիւն է զարձնում որ կոտորածներից լեռոյ բողոքականութիւնը սկսել է սաստիկ տարածուել հայերի մէջ: Եղեսիացում 500 ընտանիք բողոքականութիւն են ընդունել քողոքականթեան զարգացումը ուժեղացնում է հայ ազգաբնակութեան մէջ մի տարր, որ ընդունակ է զատելու և հարկաւոր դէպքում գործել քաղաքական նպատակներով. նա զարգացնում է հայերի մէջ և մեզ, ֆրանահացիներին համար անձեռնուու անդիմականիցից:

Եղեսիակից որ Կծնուանուն ճանապարհուել է Բիբեջիկ. խօսելով նեստորականների և յակոբիտների մասին, նա ապա ցիշատակում է որ Բիբեջիկում կոտորուեցան 153 հայեր և կոտորածի ժամանակ զանազանութիւն չէր զնուում լուսասորչական, կաթողիկ և բողոքական հայերի մէջ: Կոտորողը մահմեղական ամբոխն էր, որին առաջնորդում էին երկու մօլլա. և գուցէ ոչ ոք չաղատուէր կոտորածից, ևիէ չը լինէին երկու թիւրք պաշտօնեաներ, որոնք թաղցրին քրիստոնեաներին իրանց տան և քարիւանսարապի մէջ: „Երբ ետ զրօնում էի քաղաքում, մի դժբախտ պառաւ ընկաւ իմ ոտները և սկսեց համբուրել նրանց: Իեզէ

կինը իր երկու սրդիներին կորցրել էր կոտորածի ժամանակ և կարծու էր թէ ես, իբրև եւրոպացի, ուզարկուած եմ օգնելու նրա հայրենակիցներին: Զմբւանիայի անդիլա կան հիւպատասարանում ծառալող անդիւցից Ֆրաց-Մորիս Բիբեջիկում մեծ օգնութիւն է հասցըրել հայերին. Նա էր որ լսեց թիւրքերից մզկիթ դարձրած հայոց եկեղեցին, չետու կանչեց Զերին, Խանքատի, Հեջիքի հայ տանուաէքերին (աղջիկերի հայերը հարկադրուած էին մահմեղականնայալ) և թիւրք իշխանութիւնների ներկայութեամբ պաշտօնապէս պահանջեց որ նըրանք չը համարձակուեն հալածել այն հայերին հայութիւն ունենալու իրանք կը համարձակուեն հալածել այն հայերին, որոնք նորից կը կամենան վերագրանալ իրանց եկեղեցու զիշկը: Անէշում մենք տեսանք 80 հայ ընտոնիթեներ. այս զիւը ըրջակայ մահմեղական հարմաններից պահանջման համար նշանակուած է մի զօրաբաժին: Սարսափելի է վշտի և տանձանքների այս թագաւորութիւնը, ցինհկական ոյժի, զոյր անդիմթեան թագաւորութիւնը, որ ոչնչացնում է մի ամբողջ յողովորդ արաստիելի է և այն, որ անհնարին է բուժել այն մեծ զժրախտութիւնը որ անպաշտական հայ ազգաբնականիւնը կութեան բաժին է գործել:

Քիբեջիկից Սկնմար իջնելիս, ճանապարհորդը եղել է մի քանի հայ զիւղերում: Ճայ ազգարնակութեան կրթութեան և ընդունակութիւնների միջին մակերեսովթը անհամեմատ բարձր է քան թիւրքերի և պատուանութիւնների մեջ: Եղանց ծերունիների և պատուանունց համար հայերին է խօսակցելը. նրանց կարծիքով քրանակացիները իրանց ուշադրութիւնը բացառապէս սիրացիների վրայ են դարձրել, չեն հետաքըր քըրում հայերով: Անդիւցիներին նրանք մասամբ մեղաքրուում են այն բանի համար, որ սկզբանում

իրախոսւեցին հայերին պահանջներ անել թիրք կառավարութիւնց, բայց կրիստոնէական բոպէին թողեցին հայերին առանց որ և է օգնութեան Սուլթանի բարեկամութիւնը Վիլհելմ կայսրի հետ հայերը անցողական բան են համարում. ինչ զերարերում է զերմանացիներին, նրանց զործոնէութեան մասին խօսելը գեռ վաղ է:

Մինչև կոսորածները՝ Այնթարի բարեկեցութիւնը առելանում էր, չը նարած թիրքաց բեմիմին, 3000 դազգահների վրայ (զվասորապէս հայերը) զործում էին բամբակէ կոսորներ, որոնք տալրածում էին ամբողջ ասիական Թիրքիայում. այժմ մնացել են միայն 800 զազգանները Անջակէս Եղեսիայում, այնպէս էլ ամբողջ Հայաստանում վաճառականները չեն վաստանում շրջանառութեան մէջ մտցնել իրանց զրամագլուխները. վարլը կորել է. Մօտ 18000 հայ այս տեղերում անդործ են մնացել և ապրում են երոսական բարիդործութեան հասցրած միջոցներով: Այնթարի կոսորածները տեղի ունեցան 1895 թուի նոյեմբերի 16-ին, մօտ 500 հայեր, զանազան զուանութիւններից, կոսորուեցան, հազար տներ թալանուեցան: 1895 թուի հոկտեմբերին ամբողջ Թիրքիայում տարածեցին լուրեր թէ Հայաստանի համար վազուց խոսնացուած թէ Փօրմները վերջապէս կ'իրականանան: Ամեն աել հայերի մէջ այդ նորութիւնը պատճառեց ուրախութիւն, մանաւանդ ազմկալի էր ցոյցը Այնթարի հայերի մէջ. հայ-ամերիկական կօլէջում լուսավառութիւն եղաւ, աշակերտները ազազակում էին. «Ակցէ՛ Վիկոօրիս թագուհին»: Թիրքերին շատ վասթացաց հայկական ցուցը: Խօֆթաները խորհրդակցութիւն ունեցան պատռաւոր մահմեղականների հետ և հետևանքն այն եղաւ, որ ֆանա-

տիկոս աղզաբնակութիւնը, կանոնադար զօրքերի մեծ մասի հետ, սկըսեց կոսորածը՝ զինուորական փողի տուած նշանով: Երջակայ բնակիչները և բրդերը շտագեցին համնել կողոպուտի տեղը, բայց նրանց յևս վանդեցին, որովհետև քաղաքի բնակիչները և զօրքերը աւելի լու համարեցին որ իրանք օգտուեն աւարփցա:

Այնուհետև պ. Կօնտանսոն նը-կարազրում է Մարաշի կոսորածը և Զէլիթոնի պաշարումը:

(Կը շարունակուի)

«Ենտունիք Եվրոպի», օգոստոս: Այս զրգում վերջանում է պ. Մարկովի ճանապարհորդական նկարագրութիւնը («Խորաց Հայաստան»), որի մասին մենք արդէն խօսել ենք («Մուրճ» № 7): Էջմիածնից պ. Մարկովը զնացել է Ալեքսանդրապոլ, Անի և Կարս. այդտեղից է զերջանում նրա ճանապարհորդութիւնը: Խօսելով այժմ պ. Մարկովի գրուածքի ամբողջովմեան մասին, մենք պարտաւոր ենք վկայել որ նա առհասարակ շատ հետաքրքրական զործ է, ընթերցանութեան մի գեղեցիկ նիթ: Ամբողջ ժամանակ հեղինակը աշքի առաջ ունի գլխառուալիս հայերին. նկարազրում է նրանց նիստուկացը, մտցնում է զիւրական հայ ընտանիքի մէջ: Մենք մեծ հետաքրքրութեամբ կարդացինք Երակի Բայրախտար հայ գիւղի մէջ, Յարութիւն Տէր-Մաթէսնեանի տանը ճանապարհորդի անցկացրած մի գիշերուայ նկարագրութիւնը: Նահապետական նիստուկացը, հայկական սիրալիր հիւրասիրութիւնը շատ գեղեցիկ տպաւութիւն են թողել հեղինակի վրայ և նա վկայում է որ հայ գիւրացին ուս գիւրացուց աւելի մաքրասէր է և կուտուրական: Այս վկայութիւնը, ի հարկէ, բոլոր հայ գիւրացիների վերաբերմամբ ճիշտ չէ: Բաւական է լիշել Զիրուխու գիւղը, որի նկա-

բագրութիւնը տուել է նոյն պ.
Մարկովը:

Նատ զնահատելի է պ. Մարկովի վերաբերմունքը դեսի հայկական հնութիւնները: Եւրաքանչիւր վանք, եկեղեցի հանապարհորդի մէջ վառում է հետաքրքրութիւն և երկար կանգ է առնում, նկարագրում է ներկայ զրութիւնը, իսկ եթէ հնար, է, պատմում է նաև նրա անցեալը: Մենք արդէն ասել ենք որ պ. Մարկովը առանց ուշադրութեան չէ թողնում իր տեսած տեղերի պատմական անցեալը: Այդպիսով նա իր աշխատութեան մէջ զրել է համարեա հայոց ամբողջ պատմութիւնը, բայց, ի հարկէ, համառօտ կերպով: Եւ որ ամենից նշանաւորն է, այդ պատմական տեսութեան մէջ մենք չը նկատեցինք կոպիտ ու խոշոր սիալներ. մի հանգամանք, որ ցոյց է տալիս թէ ճանապարհորդը բարեխղճութեամբ ուսումնասիրել է մեր անցեալը, որքան այդ հնարաւոր է հայերէն չի մացող մի օտարականի համար: Առանձին հետաքրքրութեամբ կարդացում է մանաւանդ Անիի աւերակների նկարագրութիւնը: Դա պ. Մարկովի գործի ամենազեղեցիկ կտորն է: Իազրատունեաց հոչակաւոր մայրաքաղաքից մնացած քարակոյտերն ու ամերակները պատկառանք և հիացում են ազգում ճանապարհորդին և նա աշխոց, համարեա բանաստեղծական ոճով նկարագրութիւն է աւերակների անցեալն ու ներկան: Դուք մի ամփոփ, ամբողջ աշխատութեամբ հասկացողութիւն է քազմում Անիի մասին. և պէտք է նկատենք, որ այդպիսի հասկացողութիւն առանձալու կամար մենք, հայերս, պիտի դիմենք օտար ազիւրներին. մեր լեզուվ գրուած մի լան նկարագրութիւն չը կայ: Ն չէ էլ կարող լինել, քանի որ մենք անտարբերութեամբ և սուկալի անհոգութեամբ ենք վերաբերում այդ գեղեցիկ աւե-

րակներին: Պ. Մարկովը դառն զանգառներ է անում. անինամ և անտէր մնացած աւերակները հալուան արագ, որովհետեւ շրջակայ աղդարնակութիւնը այսօր էլ գողանում տանում է աւերակների քարերը իր շինութիւնների համար. միայն Կարսի երկաթուղթու համար ո՞րքան քարեր են հանուալ Անիից... Հեղինակը ամենայն իրաւունքով ասում է որ աւերակների պահպանութիւնը էջմիածնի պարաւկանութիւնն է և սակայն ոչինչ խնամք ոչինչ ուշադրութիւն գէպի հարցատունեաց մայրաքաղաքի շինալ մնացորդները: Արժէր թարգմանի Անիի ամբողջ նկարագրութիւնը, որպէս զի քնած ու անբարեխիղ հայ տեսնէր թէ ինչպէս է վերաբերուի ինքը, հայը, իր կողքին փռուած, իր տոնների տակ տրորտուղ այդ մընացորդներին:

Ակեքսանդրոսովում պ. Մարկով ացնելի է հայոց եկեղեցին: Այսուզ նա զանում է որ հայոց և յունաց եկեղեցական արարողութիւնների մեծ տարրերութիւններ չը կան նա պատմում է թէ ինչպէս հայոց եկեղեցին բաժանուեց և առանձին զիրք բանեց, չիշում է հերէն Շնորհալու արած ջանքերը եկեղեցները միացնելու մասին և աւատում է իր զիտաղութիւնները այսպիսի խօսքերով: «Եւ ահա՛, այն կարդեցեալ իմաստունները, որոնք այնպիսի ինքնավտահութեամբ յանձն էին ասել համարձակութիւն ամենամանը նրբութիւններով վերլուծելու անտեսանելի և անիմանալի Աստուծու էտիթիւնը և Աստուծու մարգացման խորհուրդը, որ անմատչելի է մարզու հասկացողութեան, այն իմաստունները, որոնք անցուալի կերպով մոլորում էին իրանց կազմիստական սովորու-

թիւնների յարիւրինթոսում, թոյլ
էին սալիս իրանց, ճշմարտութիւ-
նը և սիրոյ ու խաղաղութիւնն աւե-
տարանավան վարդապետութիւնը
պահպանելու համար անիծել հրա-
պարակով, հեռացնել իրանց հա-
սարակութիւնից, աքսորել հայ-
րենիքից, բանաերի մէջ փակել
իրանց այն եղբայրակիցներին, ո-
րոնք այնախուի անկեղծութեամբ և
ինքնավսունութեամբ ձգուում էին
հասկանալ անհասկանալին, որոշել
անորոշելին, բայց զանազանուում
էին նրանցից մորի մի որ և է անրժ-
րանելի մանրամասնութեամբ, նա
շատ ճիշտ նկատուած մի պատմա-
կան իրովութիւն է: Բայց հեղինակը
չէ կարող ասել թէ միայն հայ հ-
կեղեցականութեան էր յատուկ այդ-

պիսի վարժունքը: Ո՞չ: Այդ բանի
մէջ հայերի ուսուցիչ են հանդիսացել
կաթոլիկ, լոյն եկեղեցիները իրանց
անէծքներով, հալածանքներով,
տանջանքներով, եթէ հեղինակի
յալոնած միավը մի ընդհանուր ճշշ-
մարտութիւն զարձած լինէր IV դա-
րից, այն ժամանակ տեղի չէին
ունենալ եկեղեցական ժողովները,
որոնք շատ անզամ ծեծով ու բռնու-
թիւններով էին ուզում քննել և
հասկանալ երկնքի գործերը, այլ
ամեն մէկին թոյլ կը արուէր պաշ-
տել իր նասուծուն այնպէս, ինչպէս
ինքն է հասկանում:

Վարսի բերդի նկարսգրութեամբ
պ. Մարկովը վերջացնում է իր հե-
տաքրքրական և ուշադրութեան
արժանի հանապարհորդութիւնը:

ԿՂԵՐԱԿԱՆ ՍՈՓԵՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Երկու խօսք «Արարատին»)

«Մուրճի» № 7-ի մէջ ես մի փոքրիկ մատենախօսութիւն էի գրել Ս. Մ.-ի թարգմանած «Ֆարբարի Քարոզներ» գրքի առիթով։ Բանից զուրս է զալիս որ ես յանցանք ևմ գործել, որովհետեւ այդ փոքրիկ յօդուածով զիսկել եմ իշմրածնի սիւներից և կուռքերից մէկին, «երեելի» մանկավարժ Ս. Մանդինեանցին։ Յօդուածը գրելիս՝ իմ աչքի առջև Ս. Մ. տասերը կացին և ինձ համար մի և նոյն էր թէ ինչ անուն է թագնուած այդ տառերի տակ, եթէ Ս. Մ.-ի փոխարէն չարուած լինէին հայոց այբուրենի բոլոր տառերը—զոյտ-զոյզ, թէ հաս-հատ, ես պիտի ատէի այն, ինչ ասել եմ, ինչ կարող էի ասել այդ անսակ մի զրքի մասին։ Էջմիածնի կրօնական «Արարատը» յուլիս-օպոստոս համարում՝ փրիուրը բերանին հրապարակ է նետուել իմ «յանցանցը» պատմելու համար։ և նրա առաջին աղաղակն այն է, թէ Ս. Մ.-ն Ս. Մանդինեանցն է։ Սրանից գրութիւնը, ի հարկէ, չէ փոխուեմ. եթէ ինձ սարսեցնելու համար է այդ անոնք յայտնագործուած,—իլուր է. իսկ եթէ միամիտներին մոլորդնելու համար է, այդ էլ աւելորդ է։ Պ. Մանդինեանը չէ կարող ոչ վախեցնել, ոչ էլ միամիտներ գտնել՝ մոլորեցնելու համար։ Ինչ և իցէ, «Արարատը» շատ է բարկացել Բարկացել է այն աստիճան, որ մոռացել է թէ փարաջայ ունի հատած և ծածկել է զլիսին ծաղրածուի թաղիքէ զլսարկ, տափակ սրախօսութիւններ է անում իմ անուան առիթով, անուանում է ինձ «Ալասակ» և այլն։ Ճիշտն ասած, ինչ շատ զուարձացրեց խեղկատակութիւններ կատարող փարաջան։ դա յամենայն գեղս նոր երեսյթ է։ Եւ որպէս զի «Արարատը» այդ զարմանալի զուարձացնող գերի մէջ շատ մնայ, ես կ'առաջարկէի նրան մի շարք անուններ հէնց նոյն իսկ էջմիածնից վերցրած. օրինակ կորիւն, կարապետ, Սեղբակ, Եղնիկ։ Երեակայել կարելի է թէ

որքան անսպառ սրախօսութիւններ կարելի է անել այդ անունների առիթով...

Բայց որն է իմ յանցանքը:

Ես տաել եմ որ մեղ քարոզագրքեր չեն հարկաւոր, ես ասել եմ որ նոյն խել ֆարրարի պէս կրօնական գրողը իր քարոզներով ոչինչ նոր բան չէ կարող սովորեցնել դարերից ի վեր կրօնական զրքերով կերակրուող հային. Ես ասել եմ որ մենք բաւականաշափ հոգևորական դրոգներ ունենք, և աշխարհական մարդիկ լու կ'անէին որ ուրիշ աեսակ զրքերի մասին մտածէին, ժողովրդի կարիքները պարզադ դրքերի մասին: Ես ասել եմ որ մենք շարունակ յետ ենք մնացել, քարացած մնալով կրօնամոլութեան մէջ, մինչդեռ մեր հարեանները շարունակ դնում են ժամանակի պահանջների ետևից:

«Արարատը» հակասութիւններ է գտնում իմ այդ խօսքերի մէջ: Անզլիայում, ասում է նա, հաղարաւոր մարդիկ կարդում և լուսում են Ֆարրարի քարոզները: Հրաշալի՛ համեմատութիւն: Դա նշանակում է որ հայոց ագէտ, աիրացու ժողովուրդը ճիշտ և ճիշտ անզլիական ազգն է: Ողորմելիներու Գրտէք դուք որ անզլիացին Ֆարրարի քարոզներից յետոյ կարող է կարգալ Դարվին, Սպենսէր: Խել հայը: Ֆարրարից յետոյ խեղճ հայը կարող էք աեսնել միմիայն ուրիշ աեսակ հարիւրաւոր Ֆարրարներ—Գրիգոր Տաթեացի, Գրիգոր Նարեկացի հային, հայըն: Ոչ, ես չեմ խղճում Ֆարրարի քարոզները կարգացող անզլիացուն, ինչպէս դուք էք կարծում, այլ համոզուած եմ որ Ֆարրարի քարոզները կարգացող անզլիացին է մեղ խղճում: Քանի որ մենք միայն Ֆարրարներով ենք կերակրուում, ոչինչ հասկացողութիւն չունենալով այն մատուր կերակրուերի մասին, որ նա վայելում է Ֆարրարից ասած և Ֆարրարից յետոյ: Հասկանալի՞ է:

Մի այլ հակասութիւն էլ է եղել իմ խօսքերի մէջ: Ես որպէս թէ չեմ իմացել որ «Ֆարրարի Քարոզները» կարող են հարկաւոր գալ հայ քահանաներին: «Արարատը» երկար ու ճիպ խորհրդածութիւններ է անում այս մասին: Ինչպէս է, ասում է նա, որ դուք յարձակւում էք քահանաների վրայ, ասելով թէ նրանք քարոզել չը զիտեն և յետոյ աւելորդ էք համարում որ քարոզագիրք թարգմանուի հայերէն լեզուով: Բայց իմ յօդուածի մէջ ես հայ քահանաներին չեմ մոռացել. ես ասել եմ թէ հայ աէրտէրներին էլ հարկաւոր չի լինի այդ զիրքը, քանի որ նրանք անզրագէտ են, չեն հասկանուում իրանց կարգացածը: Եւ ես այս փաստը ինքս չեմ գտել, այլ վերցրել եմ էջմիածնի պաշտօնական օրգան «Արարատից»: Անցեալ տարի էք, կարծեմ, որ «Արարատը» մի պահնչելի պարզամտութեամբ խոստովանեց թէ

ինքը չէ կարող այսպէս դրել որ հայ քահանաները հասկանան, որովհետև հայ քահանան տգէտ է: Եւ երբ այդպէս է, երբ նոյն իսկ «Արարատի» յօդուածներն անդամ հայ տէրտէրի համար անմատչելի կերակուր են, ինչ կասկած կարող է լինել որ աւելի անմատչելի, աւելի անհասկանալի կը լինեն Ֆարրարի քարոզները, մանաւանդ երբ նրանք թարգմանուած են պ. Մանդինեանի ձեռքով, պ. Մանդինեանի հայերէնով...

Այստեղ «Արարատը» դարձեալ ծամածոռութիւններ անողի կերպարանք է ընդունում և ասում է ինձ. իսկ եթէ ունենալի հասկացող քահանաներ, «Եթէ այն երանելի ժամանակը գայ, երբ բոլոր տէրտէրները «Քահանայական խնդրի» հեղինակի պահանջած ուսումն ու հասկացողութիւնն ունենան: Այն ժամանակ, կը պատասխանեմ ես, աւելորդ կը լինիք դուք, ողորմելի միջակութիւններդ, ձեր անմարսելի թարգմանութիւններով, այն ժամանակ քահանան ինքը իրանից քարոզներ կը յօրինէ և ոչ թէ ձեր բեցեպտով, թութակի պէս կը կրկնէ Ֆարրարի խօսքերը:

«Հակասութիւններից» յետոյ էջմիածնի օրգանը դալիս է ապացուցանելու որ «Առւտ է ու շինծու այն կարծիքը, իբր թէ մեր ժողովրդի ամենամեծ ու ստիպողական կարիքը արուեստի, գիւղատնտեսութեան ու առողջապահութեան վերաբերեալ հրահանգներ ստանաբն է»: Ոչ, ամենին այդ չէ. մեր ժողովուրդը շատ լաւ է, շատ առաջադէմ է, նրան պակասում է միայն հոգեորը, միայն կրօնականը:

Սա արգէն մի այնպիսի սովիեստութիւն է, որի դիմաց կարելի է միայն ուսերը թոթուել: Կղերականութիւնը միշտ այդպէս սպանող դեր է կատարել ժողովուրդների կեանքի մէջ: Փոխանակ իր հօտը առաջ մղելու, փոխանակ նրան քաղաքակարիքները սովորեցնելու, նա միշտ ասել է—զու չափազանց շատ ես սիրում աշխարհը, չափազանց շատ ես վայելում երկրաւոր բարիքները. թող ամեն ինչ և երկնքի մասին մտածիր: XX դարի էջմիածնը ժագի չափ չէ առաջացել այն միջնադարեան խաւար օրերից, երբ խաւար կղերը վայնասուն էր բարձրացնում աշխարհական առաջադիմութեան դէմ: Տէր Աստուած: Ներկայ ժամանակներում, ազգերի սրարշաւ առաջապահութեան, կուլտուրական մրցութիւնների ժամանակում, երբ մի օրով ուշացողը դատապարտուած է ուրիշների ոտների տակ տրորուել, հայոց խեղճ ժողովուրդը, աղիտութեան ճանկերի մէջ տանջուող այս նահատակը, ինչեր է լսում:

Եւ յետոյ զարմանում է «Արարատը» որ «որ հոգով տիրաց յու համարուող հայ ժողովուրդը ներկայումս ամենից քիչ եր-

հոգեոր պէտքերովն ու պարտականութիւններովն է հետաքըր-
քըրւում»։ Զարմանալի չէ այդ երեսյթը. հնագարեան մտքերով
տոգորուած, տգէտ, անպատրաստ հոգեորականութիւնը, որ
այդպիսի քննցնով, յետադէմ քարոզներ է տալիս, չէ կարող
ունենալ ուրիշ տեսակ ժողովուրդ։ Ֆարբարները չեն օգնի այդ
ժողովրդին, զրա համար հարկաւոր է մի լուսաւոր, եռամդուն,
ժամանակի ոգով տոգորուած զործունէութիւն, իսկ դուք ան-
ընդունակ եք հէնց այդպիսի զործունէութեան համար։ Դուք
կարող էլք զոյտութեան իրաւունք ունենալ մի ժողովրդի մէջ,
որ մեզանից 5—10 դար առաջ էր ապրում Աւազ. ոչ ոք չէ
կարող ձեզ համար այդպիսի մի հրաշք զործել. և դուք անխու-
սափելի կերպով պիտի ընկնէք, քանի որ այդպէս կը մնաք։

Ես չեմ կարող աշքաթող անել «Արարատի» մի վարմունքն
էլ. իբր թէ իր մեծ զիտութիւնը ցոյց տալու համար նա ինձ
մրցանակ է խոսանում, եթէ «Դիօգենէսի լավաերով չէ՝
Ծեօնտգէնեան ճառագայթներով» դանէի մի հատ հայրէն զիրք
ֆարբարի քարոզների նման։ Դիոգենէս և Ծեօնտգէն չեն հար-
կաւոր էջմիածնի անդիտութիւնը լուսաւորելու համար։ Թող-
նելով շատ շատերը, ևս ցոյց կը տամ «Արարատին» հէնց չորս-
հինգ տարի առաջ նոյն էջմիածնում տպուած «Պարզ քարոզներ»
անունով մի շարք անարակները, հեղինակութիւն է. քահանայ
նազարեանցի։ Ինձ խոստացած մրցանակը թողնում եմ «Արա-
րատի» զեկավարներին, որպէս զի նրանով լուժել տան իրանց
այդ «գիտնական տգիտութիւնը»։

Մի խօսք էլ: «Արարատը» իբր թէ հեկնելով գործ է ա-
ծում «խաւարամիտ» բառը։ Բայց ինչու հեղնել. խաւար մտքեր
ունեցողը խաւարամիտ է, ուրիշ ոչնչ. ինչպէս դուք կարող
եք յոյս ունենալ որ խաւար մտքեր ունեցողին լուսամիտ
անուանեն։ Իսկ որ դուք խաւարամիտ եք—միթէ դեռ պէտք
կայ ապացուցանելու...

Լ.

Ն Ա. Մ Ա. Կ Խ Մ Բ Ա. Գ Ր Ո Ւ Թ Ե Ա. Ն

Պաղարշապատ, 10 յուլիսի 1901թ.

Նաև հետաքրքրական հարց է դրել «Մուրնի» բժիշկների գաւառ զեալու կամ երանից խուսափելու մասին:

«Գաւառ զեալու» հարցը տասնեակ անգամներ լրագրութեան արծարծման առարկայ է եղել եւ ոչ մի անգամ վերջնական լուծում չէ ստացել: Յանկալի է, ուրեմն, ինչպէս եւ յայտն էր «Մուրնի» խմբագրութիւնը *), որ կարելոյն չափ շատ բժիշկներ երեւան հանեին իրանց կարծիքները, որպէս զի ժողովրդի համար այդ չափազանց կարեւոր հարցը իր ճիշտ ընթացքն ընդուներ: Աւելի եւս ցանկալի է, որ ինտելիգենց տարրին՝ պատկանող միւս մասնագետներն էլ (իրաւաբան, գիւղաբան, ինժեներ, բնագետ եւ այլն) նոյնպէս ասպարեզ զային այս հարցով, որպիսի ժողովրդի տնտեսական դրութիւնը բարեկաւելիք նոյն արժեքն ունի, ինչ եւ նրա ֆիզիկական առողջութիւն պահպանելու:

Խօսենք բժիշկների մասին:

Նախ եւ առաջ պէտք է ընդունել, որ «գաւառ զեալու» մասին խօսքը միայն զաղափարական իսկական ինտելիգենցի նկատմամբ կարող է լինել, որովհետեւ երեք կեղծ ինտելիգենցը զեալ էլ, միեւնոյն է պէտք է նոյնպէս կեղծներ ժողովրդին եւ դիմակաւորուելով կուլտուրայի հոլանդաւոր խօսք, օգտի փոխարեն միայն վնասէ...

Անցնենք այժմ խնդրի գործնական կողմին:

Ասում են, թէ գիւղերում բժիշկների կարիք շատ կայ, բայց այս վերջինները խոյս են տալիս գաւառից: Անդրկովլիասում ամեն մի գաւառ պարտադիր է ունենալ մի գաւառական եւ մի գիւղական բժիշկ: Վերջինը կառավարում է հիւանդանոցը: Ե՞րբ էլ լսել, որ այդ պատուիներից մեկն ու մեկը բախուր մնար: Իսկ դեպքեր, որ տեղացի բժիշկը մի քանի տարով մնում է սպասող պատուին եւ վերջը ելի մի եկուոր է նշանակուում—ի՞նչան ու-

*) „Մուրնի“, № 5, երես 314:

գեմ, ինչո՞վ է մեղաւոր այսեղ տեղացի բժիշկը։ Բայց բժիշկը կարող է զնալ եւ առանց պատճենապես նշանակուելու, իբրև մասնաւոր պրակտիկով ապրող բժիշկ։ Սակայն մեր գաւառներում շատ էին զիւդեալ կան, որոնք ունենան աւելի քան 700—1000 տուն, այն ինչ շատ էին զիւդեալ, որոնց բնակչների թիւը 50—120 տեսից չեւ անցնում։ Ոչ-պատճենով զնացող բժիշկն մնում է ընտել այն զիւդեալը, ուր գաւառնական կամ զիւդեալական բժիշկներ չը կան։ Սակայն մի հանգամանք չը պէտք է մոռանալ այս դէպենում։ Փոքր զիւդեալում բժիշկը պէտք է իբրև վարձատրութիւն ստանայ ամեն մի հիւանդի առողջացնելու համար մի հաւ կամ ծ ձու, կամ մի երկու աբասի։ Արդ, ցանկալի է այդպիսի պերապեկտիվ բժիշկ համար։ Դրան բացէ ի բաց կը պատասխանէինք, որ այդ կը նշանակէր ծաղրել զիւութիւնը, ստորացնել երան մինչեւ գուալյանութեան» ասինանը, իսկ բարոյականութեան գաղափարը ունակուս անել։

Եթէ յաւ բնենք, կը տեսնեմ որ բժշկի արդիւնաւոր գործունեութեան համար անհրաժեշտ էն նետեւեալ պայմանները։

Նախ՝ բժիշկը պէտք է անպատճան տնտեսապես ապահոված լինի, որպէս զի կարողանայ իր հեղինակութիւնը գործադրել։ հակառակ դէպենում, երբ սկսուեց սակարարութիւն պացիենի հետ—այդ արդեն դառնում է ստորացնող առեւտուր եւ ոչ բժշկութիւն։ Իսկ փոքրիկ զիւդը երբէք չէ կարող նիւթապես այնպէս ապահովել, որ բժիշկը չը մտածէր նիւթականի մասին եւ նուիրուեր միայն՝ մատուր զիւութեանը ծառայելու եւ մարդկութեան ցաւերը թերեւացնելու գործին։ Եթէ հացի խնդրի համար բժիշկը այդ դէպենում սիփողական միջոցների դիմի, պահանջի որ անպատճան վարձատրուի իր չարչարաններ, չայցելի հիւանդին մինչեւ գործադրումն չը տրուի իրան եւ առհասարակ ամեն միջոց ձեռք առնի հարստահարելու զիւդագուն երան կրիտիկական ռոպէին... այն ժամանակ բժիշկ կը լինի այդպիսի մարդը, թէ մարդասպան։

Երկրորդ՝ յայտնի է որ բժշկանութիւնը առաջ է գնում հոկայական խայլերով. ոչ թէ օրերն են տալիս նոր զիւտեր, այլ ժամերը եւ ամեն մի զիւտի հետ երեւան են գալիս նորանոր բժշկական գործիքներ եւ զրբեր։ Աղքատ զիւդացիների կամաւոր տուրբերից շնչին վաստակ ունեցող բժիշկը ի՞նչ միջոցներով ձեռք բերի այդ գործիքները եւ զրբերը, որոնք, ի դեպ է ասել, չափազանց բանգ են լինում։ Իսկ ձեռք բերել հարկաւոր է, որովհետեւ դա պահանջում է հենց ինքը, ծովովրդին ծառայելու գաղափարը։ Առանց գործիքների եւ զրբերի բժիշկը նոյն է, ինչ երկրագործը առանց զուրանի եւ եղների։

Երրորդ՝ մենք ասացինք, որ զաւառին պէտք են միայն զաղափարական ինտելիգենցիներ։ Մեր զաւառական կեանքը ներկայումս ամենակոպիս, եսական ու նեղ մքնողոր ունի։ Ժողովուրդը ասում է. «ձուկը ջրումը կը զարգանայ»։ Գաղափարն էլ նոյնպէս՝ միայն զաղափարին հապատոյ հանգամանեներում կարող է զարգանալ, իսկ նեղ եսական միջավայրում՝ պարզ է. որ պէտք է մեռնի։ Գաղափարական մարդը գիւղական հանգամանեների մէջ, լինելով առանց օգնականի, առանց բարոյական յենարանի և տնտեսական ապահովութեան, վերջապէս առանց մի անհատի, որ հասկանար, ընթոներ եւ օգներ նրան այդ ծանր գործում, կարող է միայն մի տարի տանել իր ծանր վիճակը, որից յետոյ, եթէ նա չէ ուզորմ բաժանուել իր փայփայած գաղափարներից, պէտք է հեռանայ գիւղից։ Իսկ եթէ բոլ է նսած նրա մէջ զաղափարը, նա կամաց-կամաց կ'ընկնի, կը մանրանայ եւ զաւառական կեանքի դատարկաբանութիւններով զբաղուող մի սովորական մարդ կը դառնայ։ Գաւառական մքնողորը կը սպանի նրան բարյապէս։

Այդպէս, ուրեմն, բժիշկների զաւառ չը զնալու պատճոր առելի ուու պէտք է փնտուել բնդիանուր տնտեսական-հասարակական պայմանների մէջ։

Բայց առաջ է զալիս մի հարց. այնուամենայնիւ. ի՞նչպէս օգնել գիւղի ժողովուրդին, ի նկատի առնելով յիշած բոլոր պայմանները եւ դրութիւնները։ Թո՞ղ ժողովուրդը լինի սգէս, աղքատ, խեղճ... մի՞քէ պէտք է արհամարհի եւ հեռանալ նրանից, հանգիս խղնով նայել, ինչպէս հարիւրները եւ հազարները կոտում են առանց խնամքի։ Ոչ եւ ոչ, կ'ասենք մենք. որովհետեւ նա, ժողովուրդը, չէ մեղաւոր իր ողորմելի դրութեան համար, այլ նրանից անկախ բնդիանուր հասարակական-տնտեսական հանգամանեները։ Իսկ մենք որ հասկանում ենք այդ հանգամանեների ոյժը, զօրութիւնը, պէտք է զործնական միջոցներ ցոյց տանք ժողովրդիմ՝ այդ բռուառ վիճակից ազատուելու համար։ Հիւանդուրիւնը, մեծ մասսմք, չբաւորութեան ծնունդ է. շատ իիշ գիւղեր կը գտնենք, ուր հարիւրներով չը լինեն հիւանդներ։ Ուրեմն պէտք է, եւ անպատճառ պէտք է, օգնել նրանց. Բայց ի՞նչպէս...

«Այլ բան կը լինեմ, եթէ ունենայլինք գեմատվոներ», ասում է յարգելի բժ. Գ. Սարգսեանը։ Անըոււս. Բայց որովհինեւ չունենք զեմսվօններ, ուստի պէտք է մասնել ներկայ պայմաններում հասարաւոր միջոցների մասին։ Իմ կարծիքով, ներկայումս միայն մի ելք կայ, այն է՝ որ ինքը, մեծ գիւղի հասարակութիւնը, կամ թէ մօսակայ Յ—Յ մանր գիւղերի հասարակութիւնները իրանց իրանց համախօսականներով որուեին տարեկան 1500—2000 ու.

յատկացնել բժեկական գործին։ Այդ զումարը կարելի էր գործադրել մօսաւորապէս այսպէս։ 1200 ո. բժեկին, 300 ո. ծառայի եւ բնակարանի։ Խսկ թէ ամեն մի գիւղական հասարակութիւն, կամ մի քանիս միացեալ ոյժերով կարող են 2000 ո. յատկացնել իրանց անդամների կեանքը պահովելու համար—այդ բանի մէջ ես համոզուած եմ, որովհետեւ երե անել դրութեան մէջ, հարկաւոր գեպում մի գիւղացի իր վերջին եզր ծախում եւ բոլոր հողն ու այզին շնչին գնով կապալով է տալիս, իր հիւանդորու կամ կենօ բժեկելու համար պարզ է որ ոչ արտակարգ գեպում նա կարող է դրա $\frac{1}{20}$ մասը գտնել։ Միշին բուով տարեկան մի տան վրայ կ'ընկնի Յ ռուբլի (Ենթադրելով որ հասարակութիւնը բաղկացած կը լինի ոչ պակաս 700 տիկց)։ Թո՞ղ գիւղացին այդ վճարը տայ ամսէ ամիս, ամեն մի ամսին կ'ընկնի 25 կոպէկ։ Դործը կազմակերպել կարելի է նաեւ այնպէս, որ ունեւոր մի քիչ աւելի կը տայ, աղքատը մի քիչ պակաս... մի խօսով հարկաւոր է իննօքնութեան սկզբունիքն դիմել։

Այդ սիստեմով բժիւկ ունենալը նոյնիսկ աւելի մեծ առաւելութիւն ունի, նաև նշանակովի բժիւկ ունենալը. նախ՝ որովհետեւ կը հրաւիրով տեղացի, որ ծանօթ կը լինի տեղական թէ՝ պայմաններին եւ թէ լեզուի հետ. երկրորդ՝ իրաւունքը իրան—ժողովրդին կը պատկանի. պարզ է որ երե նա տեսնի բժեկի անբարեխութիւնը, կը հեռացնի նրան եւ ուրիշին կը բերի։ Խսկ նշանակած «չինօվնիկ» բժեկի վերաբերմամբ ժողովուրդը չէ կարող այդ անել։

Մի հազր եւս. ամեն մի զաւառ իր 80—100 հազար ժողովրդով ունի այժմ 2 մշտական բժիւկ, յանախ եւ աւելի՝ 3—4։

Ի հարկէ, 40—50 հազար ժողովրդի բժեկութեան պահանջներին մի բժիւկը դժուար կը կարողանայ բաւականութիւն տալ, բայց ցաւալին այն է, որ դրանք բաւականութիւն չեն տալիս նոյնիսկ այն զաւառական հաղաքի կամ գիւղի ժողովողին, որտեղ ապրում են։ Եւ երե ուզում է, զանգատները աւելի շատ հեղեղում են այդտեղերից, նաև բժեկագուրկ գիւղերից։ Եւ հասկանալի է. բացի նրանից որ նշանակովի բժիւկները մեծ մասամբ բաւականանում են առ ի պատօննէ, ձեւական գործունեութեամբ, նրանք—լինելով ըստ մեծի մասին ոչ-տեղացի, չեն կարողանում ըմբոնել տեղական պայմանները եւ դրանով մեծ վիճա են հասցնում բժըկութեան գործին։ Ոչ միայն տեղական լեզու չիմանալն է խոչընդունակութեան, այլ եւ տեղական կենցաղավարութեան եւ սովորութիւնների հետ անձանօթ չը լինելը։ Չե՛ որ հիւանդութիւնը մեծ մասամբ տնտեսական եւ կենսական պայմանների հետեւանք է. ուստի անհատականացնել, ուսումնասիրել հիւանդ

օրգանիզմը անհրաժեշտ է կանոնաւոր բժշկութեան համար, իսկ այդ չէ կարող կատարուել, եթե բժիշկը անծանօք պայմաններում է սկսել զործել: Եւ վերջապէս ի՞նչպէս կարելի է կանոնաւոր բժշկութիւն անել, եթե բժիշկը օրեկան ստիպուած է լինում բնդունել 80—100 հիւանդ, ինչպէս այդ մեր գիւղական հիւանդացներում է կատարում:

Եթէ ուզում եք դրական օգնութիւն հասցնել ժողովրդին, բաց առել կենտրոնական գիւղերում մեծ հիւանդանոցներ մի քանի տասնեակ մահնակալներով, մի քանի բժիշկներով և բաւարար յարմարութիւններով: Այն ժամանակ քաղաքում դեգերող մեր բժիշկները կ'աղաչեն ու կը պաղատեն որ պաշտօն տաք իրանց այդ հիւանդանոցներում, բո՛դ լինեն դրանք թեկուզ Հազելարում կամ մի որեւէ Հայրադում...

ԲԺ. Վ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հ Ե Ւ 8 Ա Ւ

(Հրապարականութեան խոհեր)

Գիւն է ՅՕ ԿՈՊԵԿ

Ծախւում է Թիֆլիսում «Մուրճի» խմբագրատանը՝
Օտարաքաղաքացիները դիմում են. Տիֆլիս, Централь-
ная Книжная Торговля.

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿ

կրսներ դաստրաների համար

համառօտ բառգրքով:

կազմեցին

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ եւ Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

Գիւն է 70 ԿՈՊ.

Դիմել՝ Թիֆլիս, Կենտրոնական և «Գուտտենբէրգ»
գրավաճառանոցները:

«Մուրճի» խմբագրատանը, «Թիֆլիսի Կենտրոնական» և
«Գուտտենբէրգ» գրավաճառանոցներում ծախւում է
Խօզէ Էչեգարայի՝

„Մ Ա Ր Դ Ա Ն Ա“

գրաման, թարգ. Արսէն Կրասիլնիկեանի:

Գիւն է 1 ՌՈՒԲԼԻ

Հրատարակութեան վաճառման արդիւնքը յատկացուած է
«Եղբայրական օգնութեան»:

Լ Է Յ**ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**

Մեր կեաները, գրականութիւնը անցեալում

Հասոր առաջին:—XVI—XVII դար

ԳԻՆՆ Է 1 ԹԻՒՐԻ 50 ԿՊԵԿ

Ծախւում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը,

Օտարաքաղաքացիները դիմում են. Տիֆլիս, րедакցիա „Մշակ“ 2—5

Ա. ՇԱՑՈՒՐԵԱՆ**ԳՐՉԻ ՀԱՆԱՔՆԵՐ**

առխառութիւնը:

Դրքի երեսը զարդարուած է նկարիչ Վ. Սուրենեանցի նկարով:

ԳԻՆՆ Է 50 ԿՊԵԿԴիմել հեղինակին՝ Մոսկվա, Садовая-Каретная, մեճ.
կօմ. Խօսալսկաց, Ալ. Պատուան.ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ**„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“****Գ Ր Ա. Վ. Ա. Ճ Ա. Ռ Ա. Ն Ո Ց Ո Ւ Մ**

վաճառուում են ամեն տեսակ գրքեր, պատկերներ, ալբոմներ,
ատլասներ և այլ տեսակ հրատարակութիւններ: Վենետիկում,
Վիեննայում, Կ. Պոլտում և Զմիւռնիայում տպուած գրքերից
ցանկացողներին կարող ենք ուղարկել: Գումարով գնողներին
զիջումն կը լինի:

Գրականառանցը ընդունում է վաճառելու համար
գրեր:

Գրավաճառանոցի հետ գործ ունեցողները պէտք է դիմեն՝
Տիֆլիս, Книжный магазинъ «Гуттенбергъ», Галусту
Ղալուստանу.

3—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՑՈՒՄ

Վաճառում են հետևեալ հայերէն գրքեր.

Սարգսեան Լ., *Ժողովրդի կրթութեան գործը մեզանում*, Մոսկ.

գ. 20 կ.:

» Հին ցաւ (հրապարակախօսական խոհեր), Մոսկ.

գ. 30 կ.:

Սարգսեան սարկ., Աղուղիցոց բարբառը (զոկերի լեզուն), Մոսկ.

գ. 2 ռ.:

Սարգսեան Աղամ, Զուարձալի ժամեր, Ժողովածու հանելուկ-ների, բառախաղերի հայլն՝ իր բանալիով, 50 կ.:

» Օրթաճալու քէֆը, Փարս վողըլիլ 1 արար., Թիֆլ.

գ. 20 կ.:

Սեղրակիան Արիս. Եպիս., Քահանայական խնդիր, Մոսկ.,

գ. 1 ռ.:

» Ամուսնական խնդիրներ, Մոսկ. գ. 1 ռ.:

» Յովհաննէս Եպիս. Շահիսաթունեանցի կենսագրութիւնը, Պետք., գ. 1 ռ.:

Սերեսեան Եփ. վարդ., Պատմութիւն հին և նոր կտակարանի,

Վեցերորդ տպ., Վենետիկ, գ. 1 ռ. 50 կ.:

Սիւլիկ, Նոր-Նախիջանի հիմնարկութեան պատմութիւնը,

Թիֆլ. գ. 50 կ.:

Միքատեան Մես. Եպիս., Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ

գաւառի, Վաղարշապատ, գ. 2 ռ.:

» Նկարագիր Շամախւոյ թեմի, Տիֆիս, գ. 1 ռ.:

Սունդուկեան Գաբր., Ամուսիններ, կօմեղիա 5 արար., թ. տպ.

բարեփոխած, Թիֆլ. գ. 1 ռ.:

» Գիշերուան սաբրը խէր է, կատակերդ. 1 արար.,

թ. տպ. ուղղած, Թիֆլ. գ. 30 կ.:

» Օսկան Պետրօվիչն էն կինքումը, կատակերդ. 1 ա-

րար., Թիֆլ. գ. 30 կ.:

Սօլօվեան Կ., Կոտրուած սիրտ, վէպ, Մոսկ., գ. 40 կ.:

Ս. Ե. Ա., Յարութիւն Արարատեանի կեղծիքը, Բաղու, գ. 50 կ.:

Վրոյ Ա., Դ. Կ. Թուրեանի երեսնամեայ բնմական զործունէու-

թեան առթիւ, Թիֆլ. գ. 20 կ.:

Տաղաւարեան Ն. բժ., Ծագումն հայ տառից, Վիեննա, գ. 1 ռ.:

» Մանրէաբանութիւն—Միկրոբներ, Կ. Պոլիս, գ. 75 կ.:

» Առողջապահութիւն առանին, Կ. Պոլիս, գ. 2 ռ.:

» Ծննդական գործարանը, Կ. Պոլիս, գ. 60 կ.:

Տաղաւարեան Ն. բժ., Մարդկային սաղմնախօսութիւն, Կ. Պոլիս,
դ. 50 կ.:

» Բառացուցակ ախտանուանց ֆրանսերէնից հայերէն,
բ. տպ. դ. 30 կ.:

» Բառացուցակ գեղորէից ֆրանս. հայ. գ. 50 կ.:

» Դարուինականութիւն, Կ. Պոլիս, գ. 30 կ.:

Տեվկանց Արփս. վարդ., Հայ երգ, մեղեղիք, տաղք և երգք
թիֆլ. 60 կ.:

Տեր-Ասատրեան Պ., Հայ ազգի գործիչների ղեղարուեստական
ալբոմ, 32 պատկերով, թիֆլ. գ. 3 ռ.:

Տեր-Արիստակիսեան Են., Գաղթականի մը համառոտ կարծիքնե-
րը, Մոսկ. գ. 50 կ.:

Տեր-Աւետիսիսան Ն., Տեղագրական նամականի, թիֆլ. գ. 30 կ.
» Վերաճնութեան դար, թիֆլ. գ. 1 ռ.:

» Կովկասեան հանքային ջրեր, թիֆլ. գ. 10 կ.:

Տեր-Աւետիսիսան Սո., Իրլանդիայի դատը, Բագու, դ. 80 կ.:

» Նահատակը, թիֆլ. գ. 20 կ.:

» Սամիտարնի, թիֆլ. գ. 20 կ.:

» Ղեկավարներ.—ա. Կապ բռնողը, բ. Մեր տէրը
թիֆլ. գ. 40 կ.:

Տեր-Գասպարեան Աբր., Երկու մահ իրական կեանքից, Շուշի
գ. 30 կ.:

Տեր-Գրիգորեան Գր. բժ. Հանրամատչելի բժշկարան, Յ գիրք
առաջին երկուսը 70-ական կոպէկով, իսկ Յ-րդ վե-
ներական ախտերը 90 կ.:

Տեր-Գրիգորեան Եմին, Զարք կատակերգ. 1 արար. և սարսափե-
լի իրողութիւն, բեմական պատմութիւն, Երևան 1 ռ.

» Խէջօյի թուղը Փարս-վօդըվիլ 1 արար. բ. տպ. Ե-
րեան. գ. 50 կ.:

» Մօղա կօմեղիա 1 արար. բ. տպ. Երեան, գ. 50 կ.:

» Կոռուպատճառը ևս էի, կօմեղիա-վօդըվիլ 2 գողծող
բ. տպ. Երեան, գ. 50 կ.:

» Սէր կամ մահ, երգախառն պիէս 1 արար. բ. տպ.
Երեան, գ. 50 կ.:

» Վայրենի, կատակերգ. 1 գործողութեամբ, Երեան,
գ. 50 կ.:

» Ել չարէս ինչ կամ երկու սիրահար բ. տպ. Երեան,
գ. 50 կ.:

» Բարեգործութեան զիմակի տակ, դրամա հինգ դր-
ծող. Երեան, գ. 1 ռ.:

- Տեր-Գրիգորեան էմին, Դամոկլեան սուր, դրամա երեք արար.
բ. ուղղած տպ. Երևան, գ. 75 կ.։
- Տեր-Շաւիթեան Ա., Ծոցի երգարան, դուժածական երգեր, Թիֆլ. գ. 40 կ.։
- Տեր-Կարուպետեան Ներ., Խաչատուր Աբովյան, կենսագրութիւն,
Թիֆլ. գ. 60 կ.։
- Տեր-Մելիքիսեդեկան Սարիք., Տիրացու Մարկոս, վէպիկ Շիրա-
կայ կեանքից, Աղէքս. գ. 25 կ.։
- Տեր-Միքելեան Արշ., Գրիգոր Լուսաւորչի յաճախապատում ճառը
լուսաւորք, Վզրչ. գ. 1 ո.։
- » Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի պատ-
մագրաց, Վզրչ. գ. 1 ո. 20 կ.։
- » Հայաստանիայց առաք. ուղղափառ ս. եկեղեցին և
իր ս. կարգը. Վզրչ. գ. 60 կ.։
- » Հայաստանիայց եկեղեցին և Բիւզանդեան ժողովոյ
պարագայք, Մոսկ. 1 ո. 50 կ.։
- Տեր-Մովսիսեան Մես., Սոկրատայ պատմութիւն եկեղեցական
և վարք ս. Սեղբեստրոսսի, Վզրչ. գ. 60 կ.։
- Տիւսաք Մրգ., Աշխարհաբառ հայ լեզուն, Կ. Պօլիս, գ. 40 կ.։
- Տօնապետեան Պ., Քսան և հինգ ամենայ բեմական գործունէու-
թիւնը պ. Հ. Աղամենանի, Կ. Պօլիս. գ. 50 կ.։
- Տօնացոյց, Յորում նշանակին տօնք, պահք, ընթերցմունք և ա-
րարողութիւնք Հայաստ. ս. եկեղեցւոյ, Երուս. գ.
1 ո. 20 կ.։
- ԲաթՖի, Կայձեր, հատոր ա. բ. տպ. Թիֆլ. գ. 2 ո.։
- » Տաճկահայք, Թիֆլ. գ. 50 կ.։
- » Մինն այսպէս, միւսն այնպէս, պատկերազարդ վէպ,
Թիֆլ. գ. 1 ո.։
- » Զահրումար, Թիֆլիսի հայերի կեանքից, Թիֆլ.
գ. 2 ո.։
- Փաւայեան Կ. բժ., Աղջկան մը յիշատակաբանը, Կ. Պօլիս
գ. 50 կ.։
- Փառնակես, «200000», կատակերգ. 1 արար. Երևան գ. 30 կ.։
- » Բանաստեղծ, կատակերգ. 1 արար. Թիֆ. գ. 25 կ.։
- » Նիսիա, վոգրվիլ 1 արար. Երևան, գ. 40 կ.։
- Փափազեան Վ., Հայ-Բօշաներ (ազգագրական ուսումնասիրու-
թիւն), Թիֆ. գ. 50 կ.։
- » Սամնթօ (Հայ-Բօշաների կեանքից), Թիֆ. գ. 30 կ.։
- Փիլոյեան Ս., Կորած Մարգարիտ, Եորբայաղէթի վարք ու բարք,
Թիֆլ. գ. 50 կ.։

Փիլոյեան Ա., Համառօտ սովորք հայրենիաց գործքերի վրայ,
Թիֆլ. դ. 30 կ.

Փիրքուղաղեան Էմ., Մի քանի օգտակար խորհրդածութիւններ,
Բագու, դ. 20 կ.

Քալանքար Ա., Սասուն, աշխարհազրական քարտէզով բ. ա.
Թիֆլ. դ. 20 կ.

Քալանքար Ասկ., Ա. Գէորգայ ուխտատեղի Հայոց Ղզլարայ,
Թիֆլ. դ. 30 կ.

Քամաղեանց Սարգ., Խուլ Խաչիկ, պատմական վէպիկ, Թիֆ.
դ. 25 կ.

» Ծովինարհէքիաթ. բ. տպ. Թիֆլ. դ. 20 կ.

», Հէքիաթներ—30 կ., 2, Աստուած աղքատի կեր-
պում—20 կ., 3, Աստուած չճանաչող—10 կ.,
4, Գալօ Ափօ—10 կ., 5, Երկասիրութիւններ, ա.
կապուկ—50 կ.

Քիւմիթեան Ալ., Գրօջ և կրագի շուրջը, Թիֆլ. դ. 30 կ.

», Բոյսերի մեծարանքը, Թիֆլ. դ. 15 կ.

Քուչարեան Գր., Մեղապարտ փարիսեցիներ, գրամա 5 արար.
Թիֆլ. դ. 20 կ.

», Բանտերն ենոցա բնակիչները, Թիֆ. դ. 20 կ.

», Մեղապարտ հրէշներ գրա 4. գործող. Թիֆլ. դ.
30 կ.

», Միիթարանք և հանգիստ, չափարերական գրուած-
ներ. Թիֆլ. դ. 30 կ.

Գ. Ա. Ղարիբ մշեցին, պատկեր կ. Պոլսի հայ պանդուխտների
կեանքից, Թիֆլ. դ. 10 կ.:

Օդիսայի հայ ուսանողներ, Զօրջ Ստեֆէնսօն, Թիֆլ. դ. 1 ռ.
Ֆրդրի, Փառանձեմ, Կոմեղիա 4 արար. Թիֆլ. դ. 1 ռ.

Դիմել Տիֆլիս, Վե Պենտրալնյու Կնիժնյու Տօրգօվլյ.
Օտարաքաղաքացիներին ուղարկւում է և վերադիր վճարով, եթէ
պատուիրած գրքերի արժէքի 1/3 կանխիկ է ուղարկւում: Գրքե-
րի վերաբերեալ հարցերին պատասխան է տրում, եթէ դրա
համար մարկա է ուղարկուած:

սակալ. — Վերօնցովի և մեծ իշան Միհայլի փոխարքականութիւնը. — Երոպական քաղաքակրթութեան նուանան վայրէր՝ Կովկասում. — Մոռացուած անկիւններ իրանց բնակիչներով. — Կովկասի լորելեանական ցուցահանդէսի բնորոշ կողմը. — Գիտատնտեսութիւն և գիտացիական տնտեսութիւն. — Գիտատնտեսութիւն և վական աշխատանքով և տնտեսութիւն վարձուած բանուորներով. — Միքիրիայում մասնաւոր անձանց արքունական հողեր տալու օրէնքը. — Պոլոյեն օն շաւառոյ օքրան. — Զեմստվոնների հրառարակչական իրաւունքի սահմանափակումը. — Մատակարարութեան գործը և անրերբութիւնը Ռուսաստանում, Ա. Սարգսեան

218

14. ԿՈՎԿԱՆԱԿԱՆ ՅՈՒՅԵԼԵԱՆԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵԽԸԸ. —

I. Ցուցահանդէսի նպատակը, կազմակերպութիւնը և բաժինները. — Ալեալլ բաժինների ընդհանուր տեսութիւնը. զիտական և պատմական տեսակէտների բացակայութիւնը, նրա անհամապատասխան լինելը չունեոր դասակարդի համար, Ա. Զ.

226

15. ԳԱԻԱՆԻԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Կոմիտասի տաղանապ Բագրինագործական տաղնապ Բագրին. — Երեսնի թեմական դպրոցը. — Միսիթարեանների տօնը գաւառներում, Ա.

235

16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանս-ռուսական դաշնակցութիւն. — Նրա գերր թէ՛ Հեռաւոր և թէ Սերմաւոր Արևելքում. — Թիրքիակի և Ֆրանսիացի մէջ ծագած տարածայնութիւնները. — Մակ-Կինլիի մահը, և. Ա.

246

17. † ԳԵՈՐԳ ԵՒԱՆԴՈՒՆԵԱՆ

251

18. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

252

19. ԳՐԱԿԱՆ ՍՈՓԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ, Ա.

258

20. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

262

21. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

267

22. ՅԱՒՆԱՌՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Ա. Տօլստոյի, թարգ.

Տ. Յովհաննիսեանի 257—288

ՇԱՐՈՒՆԱԿԻԹԻՄ Է 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ Ա.Մ.Ս.Ա.Գ.Բ.Ի.

Խմբագրութեան անզամանակ են՝ պ.պ. Լեյն ԱԱՐԴԱՍԵԱՆ և կը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒՆԸ

Առասանանում տարեկան 10 առուր. Առասանանում 12 առուր.

"	կէս տարին	6	"	"	7	"
"	1 ամսաւան	1	"	"	1	" 50 կ.
"	«Մուրճ» ամսագրին կարելի է դրուել Թիվը խումանից—Խմբագրատանը (Գանովակարտա փողոց, № 21 տ. Զանջուղազովի):					

Խայածութեան այլ տեղերից պէտք է դիմել Տեֆլոն, և բարձրացնել աշխատանքում։

Առասանանանից՝ Tiflis, Rédition de la revue „Mourtch“.

Հասցէն վոխելու համար պէտք է ուղարկել 40 կ. -

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ զետեղելու համար պէտք է վճարել

Մի երես բռնուղ յակասարութեան համար .	15	ա.
1/2 " "	"	" . 8 "
1/4 " "	"	" . 4 "

Ա.Պ.Ա.Թ.Ի. կամ ԶԲԲ ոչ ոքի չեւ ուղարկում «Մուրճ»:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը խնդրում է յօդուածագիրներից՝ զրել պարզ մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:

2. Չընդունուած մեծ յօդուածները սպահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնում։ Չեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածուը։

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրծատելու իրաւունքը։

5. «Մուրճ» համարը չը առացուելու դէմքում պէտք է Խմբագրութիւնը տեղեկութիւն տալ մինչև լաջորդ համարի լուս տեսնելը։ Այդ տեղի կութեան անհրաժեշտ է կցել տեղական պօստալին գրասենեալի հաւատող զիրը (վճօտօնքը), որ ամսագրի համարը չի լանձնուած գաճապատաշը։